Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**


Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՄԻՔԱՅԵԼ ԲԵԳԼԱՐՅԱՆ

# ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ

Ստեփանակերտ-2007

63 3(2Հ) + 74.00
Բ-31

ՄԻՔԱՅԵԼ ԲԵԳԼԱՐՅԱՆ

# ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ

*(Հայրենագիտական նյութերի օգտագործումը պատմության դասերին)*

40.236

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ստեփանակերտ - 2007
«Դիզակ պլյուս» ՍՊԸ

ՀՏԴ 941 (479.25) : 37
ԳՄԴ 63.3 (2 Հ) + 74.00
Բ 312

**Նվիրում եմ արցախյան գոյամարտում զոհված ուսուցիչների հիշատակին**

***Հրատարակության է երաշխավորել Արցախի պետական համալսարանի պատմության ամբիոնը:***

Բեգլարյան Միքայել Գրիգորի
Բ 312 Հայրենագիտությունը սովորողներին. - Ստեփանակերտ: Դիզակ պլյուս, 2007. - 292 էջ:

Վաստակաշատ պատմության ուսուցիչ Միքայել Բեգլարյանի «Հայրենագիտությունը սովորողներին» ուշագրավ աշխատությունը երկար տարիների փորձի, հայրենագիտական ուսումնասիրությունների, իմացա-ճանաչողական հարուստ տեղեկատվությամբ, լավագույն մեթոդական ձեռնարկ-ուղեցույց է ընթերցող լայն շրջանների, մասնավորապես՝ հայոց կրթօջախների մասնագետ-պատմաբանների, պատմության ուսուցիչների համար: Աշխատությունն արժևորվում է գիտամեթոդական նշանակալի բովանդակությամբ, և ընթերցողի սեղանին է դրվում կրթության նորօրյա պահանջների գիտամեթոդական գրականության զինանոցը լրացնելու, հարստացնելու միտումով:

***Գրքի շապիկի երեսին դրոշմված նկարը Ամարասի վանք-եկեղեցին է:***

ԳՄԴ 63.3 (2 Հ) + 74.00

ISBN 978-9939-800-10-3

© Մ.Բեգլարյան, 2007թ.

# ՆԱԽԱԲԱՆ

***(Մեթոդական ուղեցույց)***

Պատմության ուսումնասիրման համար մեծ նշանակություն ունի տեղական հայրենագիտական նյութերի օգտագործումը, որը կարևոր է ինչպես ճանաչողական, այնպես էլ դաստիարակչական տեսակետից: Հայրենի երկրամասը՝ քաղաքը, գյուղը հանդիսանում են Հայրենիքի մի մասը, իսկ նրանց պատմությունը՝ հայրենի երկրի պատմության մի մասը:

Տեղական նյութերի օգտագործումը և հայրենի երկրի ուսումնասիրությունը աչքի ընկնող տեղ է գրավում սովորողների հայրենասիրության դաստիարակության գործում: Գիտենալ իր բնակավայրը, գիտենալ նրա պատմությունը քաղաքացու պատվավոր պարտականությունն է: Հասկանալի է, որ շատ ուսուցիչներ մեծ ուշադրություն են դարձնում աշակերտների հետ տարվող հայրենագիտական աշխատանքի հարցերին:[1]

Պատմության շատ ընդհանուր հարցեր այս կամ այն չափով արտահայտություն են գտնում հայրենի երկրի պատմության մեջ և դրա շնորհիվ աշակերտների համար դառնում են ավելի մոտ, ավելի հասկանալի և ավելի զգայական: Անցյալի շատ հուշարձաններ՝ անցյալի վկաները, պահպանվել են մինչև մեր օրերը: Դրանք տեսնելու հնարավորությունը, նրանց միջոցով անցյալը, այսպես ասած, շոշափելը, այն զգալը, մեծ նշանակություն ունի հայրենի երկրի պատմության նկատմամբ պատմական հետաքրքրություն ու սեր զարգացնելու համար: Որպեսզի ուսուցիչը աշակերտին օգնի անցյալն իմանալու գործում, պետք է իր ազգի պատմությունը կամ համաշխարհային պատմությունը շարադրելիս համապատասխան տեղերում հագեցնի ու պարզաբանի տեղական նյութերով:[2]

Սակայն համապետական նշանակություն ունեցող պատմական իրադարձությունները տեղի են ունեցել ոչ ամենուրեք, թեև տեղական պատմության փաստերը ամբողջ պատմության մեջ որոշակի դեր չեն խաղացել, բայց քանի որ դրանք արտահայտում են մեծ նշանակություն ունեցող այս կամ այն պատմական երևույթը, ուստի ուսուցչի կողմից պետք է դրանք հավաքվեն և օգտագործվեն: Օրինակ՝ Հայրենական մեծ պատերազմի մասին խոսելիս, այդ պատերազմի ժամանակ ԽՍՀՄ ժողովրդի դրսևորած բարոյա-քաղաքական միասնությունը և հերոսությունը բնութագրելիս անհրաժեշտ է օգտագործել տեղական նյութերը՝ օրինակ բերելով այդ պատերազմի հերոս հայրենակիցներին: Ուսուցչի պատմումի մեջ յուրաքանչյուր տեղ պետք է շաղկապվի իր երկրամասի ժողովրդի ոչ հեռավոր անցյալի այնպիսի կողմերին, որոնք վերաբերվում են երկրի շինարարությանը, խորհրդային կյանքի (հիարկե, պետության) բոլոր վայրուվերումներին, նրա ժամանակ կատարված այն որոշակի դեպքերին, որոնք

ունեցել են ստվերոտ շատ կողմեր ու զոհաբերություններ:

Արդյո՞ք աշակերտներին չի հետաքրքրի այն, թե ինչպես է ընթացել խորհրդայնացումը և քաղաքացիական պատերազմը իրենց հարազատ վայրերում (բռնի խորհրդայնացում, հակաբոլշևիկյան դիմադրություններ, ազգի բախտորոշումներ և այլն): Ազգացունց այս բոլոր իրադարձությունները, որ մասսայական բնույթ են կրել մեծ երկրի համար, աշակերտները կտեսնեն, իսկապես կհասկանան ու կզգան, որ դրանք ոչ միայն կատարվել են ինչ-որ մի տեղ, այլ ընդգրկել են յուրաքանչյուր մարդ, շրջան, ամեն մի քաղաք ու գյուղ, այդ թվում և իրենցը:

Առանձնապես լավ է, երբ ուսուցիչը ցույց է տալիս աշակերտներին հայրենի ծանոթ այն վայրերը, որոնց հետ կապված է այս կամ այն էպիզոդը, իրադարձությունները: «Ահա, օրինակ, այստեղ, այս տանը, 1905թ. ապրել է Բոգդան Կնունյանցը, որի համար էլ փողոցը նրա անունով էլ կոչվել է՝ «Կնունյանցի»»: Ընդհանրապես, տեղական հայրենագիտական նյութերը, այն դեպքում, երբ չեն կապակցվում համապետական նշանակություն ունեցող պատմական կոնկրետ իրադարձության հետ, շատ լավ կարող են օգտագործվել սոցիալ-կենցաղային երևույթների բնութագրման ժամանակ: Այսպես, ճորտատիրական իրավունքի ընդհանուր բնութագրությունն ավելի լավ է տալ տեղական նյութի օգտագործմամբ: Նրա օգնությամբ կարելի է ցույց տալ արդյունաբերության զարգացումը և առևտրի աճը 18-19-րդ դարերում՝ կապիտալիզմին անցնելու ժամանակ:

Գյուղական դպրոցներում, ճորտատիրական իրավունքի վերացումից հետո գյուղացիության դրության և նրա հիմնական մասի քայքայման ու շերտավորման առաջացման մասին խոսելիս հարկավոր է օգտագործել հայրենի գյուղի պատմությունից վերցված օրինակներ: Այստեղ աշակերտները լավ գիտեն յուրաքանչյուր վարելահող, արոտավայր: Եվ շատ հասկանալի կդառնա նրանց համար հին գյուղի պատկերը:

Ուսուցչի համար կարևոր տեղամաս է պատմական հուշարձանների մասին սովորողներին ծանոթացնելը: Պատմական հուշարձանները լինում են գրավոր և նյութական: Տեղական պատմության վերաբերյալ փաստական նյութեր միշտ կարելի է գտնել հայրենագիտական հրատարակություններում, որտեղ դրանք տրվում են կամ մշակված ձևով, կամ հրատարակվում են փաստաթղթերով: Այդ փաստաթղթերը պահվում են արխիվներում և նրանց վրա անմիջապես աշխատելու համար սովորողներին քիչ մատչելի են: Այդ պատճառով էլ միջնակարգ դպրոցի պայմաններում անցյալի նյութական հուշարձանները աշակերտների համար ավելի մատչելի և փաստորեն ավելի լայն կերպով են օգտագործվում:

Գրավոր, վավերագրական և գլխավորապես նյութական հուշարձաններից շատերը կենտրոնացվում են թանգարաններում և ցուցահանդեսներում:



Թանգարաններում ցուցադրված հուշանմուշների հիման վրա կարելի է վերաստեղծել անցյալի պատկերը: Անցյալի նյութական մշակույթի ուսումնասիրման ժամանակ առանձին նշանակություն ունեն աշխատանքի գործիքները: Դրանք ավելի ցայտուն կերպով են պատմում տնտեսության զարգացման մասին, ընդհակառակն, կենցաղային իրերն էլ ավելի ցայտուն կերպով են պատկերում սոցիալական հարաբերությունները: Ահա, օրինակ, թանգարանում ցուցադրված են, ասենք թե երկու տարբեր գերեզմաններից հանված իրեր: Մի գերեզմանից հանված են ոսկե փոքրիկ վահանակ, պղնձե կաթսա, ասորական արժեքավոր անոթներ, մետաղյա հայելի, գենքեր, իսկ նույն ժամանակի մյուս գերեզմանից՝ մեկ հատ դանակ, քարե երկանք, տեղական կոպիտ կճուճ- ահա և ամբողջ գույքը:

Սոցիալական անհավասարության ինչպիսի՜ ցայտուն պատկեր կա այստեղ: Այսպիսով, թանգարանները, որոնք անցյալը պատկերավոր կերպով նկարագրում են՝ իրերի լեզվով, պետք է լայնորեն օգտագործվեն ուսումնական աշխատանքներում՝ էքսկուրսիաներ կազմակերպելու, թանգարանային էքսպոնատներն ուսումնասիրելու գործում սովորողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպելու ճանապարհով և այլն: Սակայն թանգարաններում հավաքված են քիչ քանակությամբ հուշարձաններ, ըստ որում միայն տեղափոխման ենթակա իրերը, մինչդեռ բազմաթիվ պատմական հուշարձաններ և հիշարժան վայրեր բառացիորեն մեզ շրջապատում են ամենուրեք:

Հնագիտական հուշարձանների հետ աշակերտների ծանոթանալը ճանաչողական տեսակետից բացառիկ նշանակություն ունի: Դա անցյալը մոտեցնում է աշակերտներին: Իսկ դա անելն այնքան էլ դժվար չէ, որովհետև հնագետների մեջ տարածված արտահայտությամբ. «Հնագիտական հուշարձաններ չկան միայն այնտեղ, ուր մարդիկ չեն փնտրում դրանք»: Եվ, իսկապես, հազարամյակների ընթացքում մարդիկ բնակվել են իրենց երկրամասում: Ինչքա՜ն մարդկային սերունդներ են ապրել ու անցել այս ժամանակամիջոցում: Ինչպիսի հսկայական ժառանգություն են թողել նրանք:

Հնագիտական բոլոր համալիրային (կոմպլեքսային) հուշարձանները հաշվի են առնված տեղական հայրենագիտական թանգարանների կողմից: Տվյալ պարագայում Արցախինը՝ Ստեփանակերտի հանրապետական թանգարանում: Թանգարանների հետ մշտական կապ պահպանելով (իսկ այդ անպայման անհրաժեշտ է) ուսուցիչն այնտեղ կստանա տեղեկություններ հնագիտական այն հուշարձանների մասին, որոնք դպրոցին ամենից ավելի մոտ են գտնվում: Հնարավոր է, որ մի քանի թանգարաններում՝, որտեղ հնագիտական աշխատանքը թույլ է դրված, անհրաժեշտ տեղեկություններ չլինեն: Այդ դեպքում պետք է սովորողների հետ աշխատանք ծավալել հնագիտական հուշարձաններ հայտնաբերելու համար:

Հնագիտական հուշարձանների հիմնական տեսակներն են՝

1. ԿԱՅԱՆՆԵՐ -Դրանք հնագույն բնակավայրերն են և սովորաբար գտնվում են գետերի ու ջրավազանների ափերին: Այդ կայանատեղերում գետնի երեսին կառուցումների ոչ մի հետք չկա: Դրանք կարելի է որոշել միայն բացված զառիվերում, այսպես կոչված կուլտուրական շերտում, այսինքն՝ երկրի այն շերտում, որը այն ժամանակ եղել է մակերևույթ, երբ այդտեղ ապրել են մարդիկ:

2. ԱՎԵՐԱԿ ՔԱՂԱՔԱՎԱՅՐԵՐ -Դրանք հանդիսանում են հնագիտական հուշարձանների ամենից ավելի հետաքրքրական տեսակներից մեկը: Քաղաքավայրերը ամրացված ավաններ են: Դրանք առաջ են եկել միայն տոհմի քայքայման, անհավասարության առաջացման և թալանչիական ասպատակությունների ժամանակաշրջանից սկսած:

3. ԴԱՄԲԱՐԱՆԱԲԼՈՒՐՆԵՐ -Հնագիտական հուշարձանների տեսակետից ամենատարածվածը և հեշտությամբ գտնվողը դամբարանաբլուրներն են: Այդպես են կոչվում հնում գերեզմանի վրա արհեստականորեն առաջացած բլուրները: Ազգաբնակչությունը սովորաբար լավ է ճանաչում դամբարանաբլուրները: Բայց նա հաճախ դրանք վերագրում է ուշ ժամանակի:

4. ՔԱՐԱՅՐԵՐԸ - Հնագիտական հուշարձանների ավելի սակավ հանդիպող տեսակներից կարելի է համարել քարայրերը՝ մարդկանց կենցաղի հետքերով քարագրությունները, այսինքն՝ ժայռերի, քարերի, քարայրերի պատերի վրա փորագրված կամ ներկով նկարված հնագույն պատկերները: Հուշարձանները կարելի է մանրազնին դիտել, նրանց արտաքին տեսքը լուսանկարել, նկարագրել, նրանց մակերեսի վերին շերտից դուրս բերված զանազան առարկաների կոլեկցիա հավաքել, բայց, իհարկե, ինքնակամ, չի կարելի: Դա պարտադիր է իմանալ: Նյութական պատմական հուշարձաններից կարևոր են նաև ճարտարապետական հուշարձանները: Դրանց շարքին են պատկանում քաղաքացիական, ռազմական և եկեղեցական հուշարձանները: Դրանք կարող՝ են ուսուցչի կողմից օգտագործվել թե՛ ճարտարապետության պատմության մասին խոսելիս և թե՛ պատմակենցաղային տեսակետից: Պետք է գիտենալ, որ ազնվատոհմ իշխանների նախկին պալատները, աստիճանավորների և վաճառականների տները, հին ֆաբրիկաների և գործարանների շենքերը, և քաղքենիական չքավորության խախուտ տնակները մի պատմություն են ներկայացնում: Նրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է մեծ հետաքրքրություն պատմական պատկերացումների կոնկրետացման համար, պատկերում է այս կամ այն դարաշրջանի սոցիալական հարաբերություններն ու կենցաղը: Այնքան էլ մեծ ջանքեր պետք չէ գործադրել այն բանի համար, որպեսզի հասկանալ քաղաքային կառուցումների ճարտարապետական-կենցաղային կոմպլեքսները, այն հիանալի պատմա-կենցաղային թանգարանը, որի



դերը խաղում է յուրաքանչյուր քաղաք-բնակավայր:

Շատ կարևոր է տեղական պատմական հուշարձանների օգտագործումը անցյալի վերաստեղծման համար: Իմանալ է պետք, որ յուրաքանչյուր պատմական հուշարձան անցյալի «մեռած» վկան է: Նրան նայելով այնքան էլ հեշտ չէ պատկերացնել այն կյանքը, որը դրոշմվել է նրա վրա: Այդ պատճառով էլ պատմական անցյալի հուշարձանների օգտագործման ժամանակ հսկայական նշանակություն է ստանում ուսուցչի պատմումը, թե ինչպես է նրա կենդանի խոսքի մեջ մեռած անցյալը իր առանձին հետքերով վերաստեղծվում:

Հետաքրքիր էքսկուրսիա կազմակերպել դեպի հին քաղաքները՝ մեթոդապես հեշտ խնդիր չէ: Նման տիպի էքսկուրսիայի հիմքում պետք է դրված լինի ոչ այնքան նմուշների ցուցադրումը, որքան կենդանի և պատկերավոր պատմումը: Այստեղ, հենց պատմումի միջոցով, պետք է ներազդել ունկնդիրների զգացմունքների վրա: Չէ՞ որ մանկական և պատանեկան հասակի երեխաների ստեղծագործական երևակայությունը շատ հարուստ է, նրա համար կարևորը այն հիմքի ստեղծումն է, որից երևակայությամբ վերաստեղծելիք պատկերների կառուցման ընթացքում կարելի կլինի հեռանալ:

Երկրամասի հայրենի գյուղի անցյալի վերաբերյալ նյութերը կարևոր տեղ ունի պատմության դասավանդման ընթացքում: Գյուղական վայրերում հաճախ պահպանվել են դեռ ճորտատիրական ժամանակաշրջանից մնացած նախկին կալվածատերերի դաստակերտերը, նրանց համար տիպիկ բնակելի, պաշտոնական, տնտեսական շենքերով, տնտեսական բակերով, բանջարանոցներով, մեղվանոցով, մրգապտղատու այգիներով, գբոսայգով, լճակներով, տաղավարներով: Ճորտատերերի, մեր պայմաններում հողատեր-ունևորների, այս բոլոր հետքերի հետ ծանոթանալը թերևս կարելի կլինի անցկացնել նկարագրությունների համանման:

Տվյալ կալվածքի պատմությանը, վերաբերող փաստաթղթերի (եթե հաջողվի դրանք գտնել տեղական թանգարանում, արխիվում, այս կամ այն հրատարակության մեջ) հետ ծանոթանալուց բացի, սովորաբար կարելի է գրի առնել տեղական բնակիչների, առանձնապես ծերերի հիշողության մեջ պաշտպանված առանձին ավանդույթները ճորտատիրական իրավունքի և նրա վերացման մասին: Նրանց կարելի է հարցնել այն մասին, թե ի՞նչ են լսել նրանք իրենց ծնողներից և պապերից, ո՞ւմ է պատկանել տվյալ դաստակերտը և գյուղը գյուղացիների հետ միասին, ի՞նչ են հիշում կալվածատերերի կենցաղի ու նրանց համար գյուղացիների կատարած աշխատանքների մասին, կալվածատերերի կատարած բռնությունների կամ բարեմասնությունների մասին, կալվածատերերի դեմ տեղի ունեցած ելույթների մասին և այլն:

Հավաքված բոլոր տեղեկությունները հարկավոր է ուշադիր և մանրա-

մասն գրի առնել, ցույց տալով, թե ե՞րբ և ո՞վ է հավաքել, ո՞վ է նրանց հաղորդել (ցանկալի է նշել, թե հաղորդողն ինքը որտեղի՞ց գիտի այդ), միևնույն իրադարձությունների մասին ավանդությունները կարող են հաղորդվել տարբեր մարդկանց կողմից, տարբեր տարբերակներով: Նրանց հակասության դեպքում հարկավոր է համադրել, առանձնացնել նրանցից համընկնող և հետևաբար ամենից արժանահավատ տեղեկությունները:

Կապիտալիստական դարաշրջանի գյուղացիների և կալվածատերերի տնտեսության և կենցաղի ուսումնասիրությունը կատարվում է նույն միջոցներով ու մեթոդներով, ինչպես ծանոթացումն այն բանի հետ, թե ինչ է ներկայացրել իրենից իրենց ճորտատիրական գյուղը: Պետք է պարզել, թե ինչպիսի վարելահողեր, մարգագետիններ, անտառներ ու հանդակներ են պատկանել հարուստներին և ինչպիսիքը՝ գյուղացիներին: Պետք է պարզել նաև, թե ինչպես է կատարվել գյուղացիների շերտավորման պրոցեսը՝ կուլակներ, միջակներ, բատրակներ անվանումներով: Մոտավոր հաշվումներ կատարել տեխնիկայի և քարշող կենդանի ուժի շուրջը, իմանալու, թե որքան մեքենայական և որքան քարշող կենդանի ուժ է օգտագործվել գյուղում (երկաթյա գութաններ, երկաթյա տափաններ, փայտյա արորներ և այլն): Վերջապես, հարկավոր է հարկավ ուշադրություն դարձնել նաև ֆեոդալական Պարսկաստանի և ֆեոդալա-կապիտալիստական Ռուսաստանի պայմաններում ապրած մեր գյուղացիների կենցաղի, մշակույթի, և ապրելակերպի հարցերին: Աշակերտներին հաղորդել մուսուլմանական Իրան-Պարսկաստանի բիրտ ու դաժան օրենքների պայմաններում ապրած ու կրոնական հալածանքների ենթարկված ղարաբաղցու վիճակի մասին:

## Հայրենագիտական նյութերի օգտագործման մեթոդները

Պատմության դասերին հայրենագիտական նյութերի օգտագործումը հաճախ մոռացության է տրվում և մեթոդական գրականության մեջ գրեթե անտեսվում: Մինչդեռ դա աններելի է, քանզի դպրոցական ծրագրերում, որպես պարտադիր պահանջ, մտցված են երկրամասի պատմության ուսումնասիրման հարցերը:

Ասենք, որ դեռևս ԽՍՀՄ գոյության պայմաններում էլ լայն զարգացում էր ստացել պատմական հայրենագիտությունը, դառնալով մանկավարժական բարդ խնդիրների լուծման միջոցներից մեկը: Սակայն ԽՍՀՄ մենիշխանության տարիներին, որի ժամանակ մամլիչի դեր ունեին ՊԱԿ-ը և մյուս հետախուզական օրգանները, չէին թույլատրվում, որ վեր հանվեն փոքր ժողովուրդների արժանիքները՝ ի տես աշխարհի: Այն ժամանակներում դժվար էր մտահոգ լինել հայրենագիտության հարցերով, հատկապես, անցյալով: Բայց անկախ ժամանակի շնչից, մանկավարժական տեսությունը միշտ էլ կարևորել է մայր երկրամասի պատմության իմացությունը՝ անվանելով այն «թանկարժեք կապիտալ»:



Դպրոցական պատմական հայրենագիտությունը որոշակիորեն կարող է լինել աշակերտների կողմից նրա հեռավոր և ոչ հեռավոր անցյալի ու ներկայի ուսումնասիրությունը, որը աշակերտների շրջանում առաջ կբերի հպարտության զգացում իր հայրենի երկրամասի նկատմամբ: «Հայրենի երկրամաս» կոչվող տերիտորիան ոչ միանշանակ է հասկացվում. մի կողմից նա չի սահմանափակվում իր գյուղի կամ քաղաքի տարածքով, ուրիշ դեպքում՝ իր շրջանի վարչական սահմաններով և երրորդ՝ մարզի կամ հանրապետության: Հայրենագիտության ուսումնասիրության մասշտաբի, ինչպես և կոնկրետ օբյեկտի ընտրությունը մեծամասամբ կախված է նրանից, թե ինչ խնդիրներ են լուծվում ուսուցչի և աշակերտի կողմից այդ աշխատանքի ընթացքում:

Հայրենագիտության մեջ կարևորը նյութի ընտրության մեթոդիկան է: Դպրոցական պատմական հայրենագիտությունը իր գործնական առանձնահատկությամբ թե՛ մանկավարժի և թե նրա աշակերտներին դնում է հետազոտողի դերում: Դպրոցական ծրագրերում, որպես պարտադիր պայման, մտցված են երկրամասի պատմության հարցերը՝ հին ժամանակներից մինչև մեր օրերը: Ի դեպ, դա առավել լավ է հայրենագիտական նյութերը շաղկապում պատմության հետ:

Սկզբունքային նշանակություն ունի հայրենագիտական նյութի ընտրության պրոբլեմը: Նպատակահարմար է ամենից առաջ օգտագործել տեղական պատմության այնպիսի փաստերն ու դեպքերը, որոնք՝

ա) Հանդիսանում են ամենից ավելի կարևոր և տիպական իր երկրամասի պատմությանը և կարող են հասկանալի լինել սովորողներին՝ կապված ազգի կամ երկրի ընդհանուր պատմության ուսումնասիրման հարցերի հետ: Մեր պարագայում՝ Արցախ երկրամասի պատմության օրգանական կապը հայոց պատմությանը:

բ) Բավականաչափ պարզ, էմոցիոնալ հագեցված և ընդունակ ներազդելու ոչ միայն գիտակցության վրա, այլ նաև աշակերտների զգացմունքների վրա:

գ) Հնարավորության սահմաններում միջոցներ տալ աշակերտներին մասնակցելու թեկուզ ոչ շատ մեծ հետազոտությունների:

դ) Դպրոցականների մեջ շրջակա միջավայրի նկատմամբ ճիշտ կարողությունների ձևավորմանը և պրակտիկ գործունեության մեջ ընդգրկելուն:

ե) Հետաքրքրություններ արթնացնելու սովորողների մեջ դեպի հարազատ վայրերը, նրանց մեջ ամրապնդելու սիրո զգացմունքներ դեպի հայրենիքը:

Այդ ամենին հասնելու համար ուսուցիչը պետք է լավ տիրապետի դպրոցական հայրենագիտության էությանն ու մեթոդիկային, ունենա խոր

գիտելիքներ հարազատ վայրերի մասին, կարողանա հմտորեն ղեկավարել դպրոցականների գործունեությունը:

Որպես առավել նպատակասլաց թեմատիկ աշխատանքի բնագավառներ պետք է հանդես բերվեն նախ և առաջ երկրամասի հնագիտական, տնտեսական, ռազմահայրենասիրական, հեղափոխական անցյալի, մշակույթի, դաստիարակչական, առողջապահական, կրոնա-միստիկական և պատմական անհատներին վերաբերող հարցերը:

## Նյութերի մատուցման եղանակները

1. Դասապրոցեսում, այսպես կոչված, «Պահեստային ժամանակի» հաշվին, որը ուսուցիչը պետք է խնայի դասառեժիմի առաջին մասում (նախորդ թեմայի հարցման պրոցեսում):

2. Արտադասարանական խմբակի միջոցով (պատմության խմբակ, պետք է հատկացվի ուսուցչին (1 կամ 2 ժամանոց խմբակ), տնօրինության կողմից:

3. Պատմության խմբակի լույս ընծայած «Պատանի պատմաբան» բյուլետենի էջերում լուսաբանել լրացուցիչ նյութերը առանձին թեմաների շուրջ:

4. Աշակերտներին ռեֆերատներ կազմել տալու և այդ ռեֆերատներով նրանց հանդես գալու ընթացքով:

5. Նախասիրության ժամերի հաշվին, որը ցանկալի է տրամադրվի դպրոցի տնօրինության կողմից՝ կրթության շրջանային բաժնի թույլտվությամբ:

6. Էքսկուրսիաների կազմակերպման ճանապարհով՝ դեպի թանգարանները և հնության վայրերը (եկեղեցիներ, վանքեր), հուշարձաններ:

7. Դասերի վարում հուշահամալիրներում, կարևոր և վճռական ճակատամարտերի վայրերում:

8. Հանդիպումներ դեռևս ողջ մնացած 2-րդ աշխարհամարտի մասնակիցների և Արցախի պաշտպանների հետ:

9. Այցելություններ առանձին հերոսների հուշարձաններ:

10. Հանդիպումներ զոհված ազատամարտիկների ծնողների և մյուս հարազատների հետ:



# ԱՐՑԱԽԻ ԲՆԱՇԽԱՐՀԸ

*Նյութը առնչվում է V դասարանի հայոց պատմության «Հայկական բնաշխարհը» թեմայի հետ: Հայոց պատմություն V դ., էջ 7-ից 9 և IXդ. գլ.IV § 1, էջ 43*

Հին և միջնադարյան Արցախը պատմական Հայաստանի 10-րդ նահանգն է, այն տարբեր հարյուրամյակներ անվանվել է նաև Փոքր Սյունիք, Խաչեն, Ղարաբաղ: Իր ֆիզիկա-աշխարհագրական տեսակետից ունի ավելի մեծ հասկացություն, քան Լեռնային Ղարաբաղը: Արցախը, անկասկած, եղել է ավելի ընդարձակ և զբաղեցրել է Փոքր Կովկասի հարավարևելյան մասի տարածքը, ներառելով Մուխանք-Մուղանի հարթավայրի զգալի մասը: Նրա սահմանները տարածվում էր արևմուտքում մինչև Սևանա լիճը, հարավ-արևմուտքում՝ Աղվանո (Հագարա) գետը, Հարավում՝ Երասխ (Արաքս) գետի դաշտավայրից մինչև Մուղանի տափաստանը, իսկ հյուսիս-արևելքում եղել է հայկական Ուտիք նահանգի սահմանակիցը: Իր վարչա-տարածքային առումով բաժանված էր 12 (ժամանակով նաև 14) գավառների՝ 1. Մյուս Հաբանդ (Սիսական և Ռուստակ), 2.Կայկունիք, 3.Բերդաձոր, 4.Մեծիրանք, 5.Մեծկուանք, 6.Հարձլանք, 7.Մուխանք, 8.Պիանք, 9.Պարսկանք, 10.Քուստի, 11.Փառնես, 12.Կողթ: Բոլոր այդ մասերը միասին կազմում են ավելի քան 15500 քառ. կմ.:

Արցախ աշխարհը բնա-կլիմայական պայմանների տեսակետից աշխարհագրական-դրախտային մի միջավայր է, ուր գոյություն ունեն բոլոր պայմանները բարեկեցիկ և հարուստ կյանքի համար՝ կարծեք նախապես իմանալով, որ ճակատագիրը հային ավանդել է ողբերգական ու դրամատիկ դրվագներով հարուստ պատմություն:

Երկրաբանական առումով Արցախի լեռնային շրջանները հիմնականում կազմված են յուրայի և կավճի ժամանակների նստվածքային ապարներից, ավազա-քարային և կրաքարային կուտակումներով: Նրա լեռները ձևավորվել են Կայնազոյան դարաշրջանում: Լեռնա-գոյացման պրոցեսը շարունակվում է, այդ պատճառով էլ գոտին որոշ առումով սեյսմիկական է:

Արցախի մակերևույթը խիստ կտրտված է, տարածքի միջին բարձրությունը 1100մ է: Ունի 3 լեռնագոտի-լեռնաշղթաներ՝ Ղարաբաղի լեռնաշղթան՝ Մեծ ու Փոքր Քիրսեր, Քառասուն աղջիկ, Դիզափայտ բարձրություններով, Մռավի լեռնաշղթան՝ Գյամիշ և Մռավ գագաթներով և Քաշաթաղ-Սոդքի՝ Ոմբասար, Սպիտակ և Իծաքար գագաթներով: Այդ լեռները կտրտված տեսք ունեն և իրարից բաժանված են գետերով ու հովիտներով:

Գետերը հոսում են արևմուտքից-արևելք, դառնալով Քուր և Արաքս գե-

տերին սնող աղբյուրներ: Ամենամեծ գետը Թարթառն է (Տարտուն)՝ 200 կմ երկարությամբ, երկրորդը Խաչենը 119 կմ, երրորդը՝ Կարկառը՝ 115 կմ: Իրենց աննշան մեծություններով աչքի են ընկնում նաև Խոնաշեն, Վարանդա, Ամարաս, Մեղրագետ, Իշխանագետ, Իգակ, Ինջա, Քուրակ, Կավարտ գետերը:

Դաշտավայրերից գլխավորը Մուղանքի դաշտն է, որը բացառիկ բերրի մի տարածք է, լի ամենայն բարիքներով: Պակաս արգավանդ չեն նաև Մարտունու և Մարտակերտի շրջանների ցածրադիր մասերը:

Արցախի տարածքը գտնվում է Մերձարևադարձային կլիմայական գոտում, սակայն դիրքի պատճառով նրան բնորոշ է բարեխառն գոտու կլիմայական հատկանիշները: Հուլիսի միջին ջերմաստիճանը 24-26° է, հունվարյանը՝ +1-ից 0 c°, իսկ տարեկան միջին ջերմաստիճանը՝ +10 c°: Ամառանը լինում է նաև այնպիսի բարձր աստիճան, որ հասնում է նույնիսկ +38-40 C°:

Մթնոլորտային տեղումները տարվա ընթացքում տատանվում է 200-ից 900 մմ: Արցախի հողատեսակները պայմանավորված են երկրամասի գոտիական կառուցվածքով՝ կիսաանապատային, անապատա-տափաստանային (գորշ, բաց և մուգ շագանակագույն տեսակներով, լեռնային սևահողեր, մուգ դարչնագույն և այլն):

Բուսական աշխարհն առանձնանում է իր կուսական անտառներով (խառը՝ հաճարենու, կաղնու, բոխու, թխկու, թեղու, լորենու, հացու (երկու տեսակի), կեչու, ճապկու տեսակներով): Անտառները զբաղեցնում են Արցախի տարածքի 34-35%-ը: Մշակովի բուսատեսակներից աչքի են ընկնում ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, սոխը, ճակնդեղը: Կան կորիզավոր, ընդավոր, կերային, բանջարանոցային բուստեսակներ:

Երկրամասում գոտիները իրար են հաջորդում ցածրից մինչև բարձրը (300-ից 800 մետր, իսկ երբեմն էլ 1300-2300մ) ծովի մակարդակից:

Կենդանական աշխարհը բազմազան է: Նրա գոյության և զարգացման վրա ազդել են կիսաանապատներից բաղկացած բուսածածկը: Կան մորեխազգիների, սողունների, կրծողների, գիշատիչների, կաթնասունների, թռչունների բազմատեսակներ:

Արցախը հարուստ է բնական ռեսուրսներով՝ սկսած մարմարի հանքավայրերից (Հարավում, Քարագլուխում, Խրամորթում, Նորշենում, Ճարտարում, Շուշիում, Հադրութում, Քոլատակում), սև և սպիտակ տեսակի բազալտի (Վանքում, Գիշում, Չլդրանում), կրաքարեր (Մարտունում և Մարտակերտի շրջանում), հանքային ջրերով (Քարվաճառում և Շուշիում):



## ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Միջնադարյան Արցախը պատմական Հայաստանի որերորդ նահանգն էր և ի՞նչ անուններով էր հայտնի աշխարհին:
2. Պատմական քարտեզի վրա ցույց տվեք Արցախի 12 գավառները և մասշտաբի օգնությամբ որոշեցեք, թե քանի կմ է հարավից-հյուսիս և արևելքից դեպի արևմուտք:
3. Թվեք Արցախի լեռնաշղթաները, դաշտավայրերը, գետերը և քարտեզի վրա ցույց տվեք դրանք:
4. Կլիմայական ի՞նչ գոտիներում է գտնվում Արցախը: Տարեկան ո՞ր ջերմաստիճաններն են հատուկ նրան (հունվարյան և հուլիսյան):
5. Արցախի տարածքի ո՞ր տոկոսն են կազմում անտառները, թվե՛ք դրանցում առկա ծառատեսակները:
6. Բնական ի՞նչ ռեսուրսներ կան Արցախ աշխարհում, թվե՛ք դրանց տեսակները:

## ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ

***(Թեման ուսումնասիրել «Նախնադարյան հասարակությունը հայկական լեռնաշխարհում», ուսումնասիրելուն զուգընթաց: V դասարանի «Հայոց պատմություն», 2000թ., թեմա 2, էջ 12-17) IX դ. գլ. 2, § 1:***

Արցախի երկրաբանական ռելիեֆը ձևավորվել է ստորին և միջին Յուրայի դարաշրջանում: Այդ երկրամասի ռելիեֆի ձևավորման վրա զգալիորեն ազդել են հրաբխային խոշոր գործոնները, որի էպիկենտրոնը հանդիսացել են Շուշիի շրջանը, Հադրութը և Վանք գյուղը:[4]

Ղարաբաղի տերիտորիայում գտնված են պալեոնթոլոգիական մնացուկներ՝ քարացած բրածո կենդանիներ (Կարմիր գյուղ), Ծովային Աստղեր (Աստղաշեն), այլ կենդանիների կմախքներ և միաժամանակ քարացած փայտի մնացուկներ:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հադրութի շրջանի Պետրոսաշեն գյուղում 1965թ. հայտնաբերված քարացած արխեոպտերիկսի գլուխը:

Լեռնային Ղարաբաղի լեռնաշղթաները և գետահովիտները լավ պայմաններ են ստեղծել մարդու բնակության համար, օժանդակել հնեաբանական մշակույթի ստեղծմանը:

«Արցախի տարածքում կատարված մասնակի պեղումները, որի հետևանքով Երևան են հասել մշակութային կյանքի զանազան բնագավառների ամենատարբեր նյութեր, հնագիտական նույնիսկ ոչ բավարար ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարդն այստեղ շարունակա-

բար ապրել է հնագույն ժամանակներից ի վեր»:[5]

Ասենք, որ Արցախի տերիտորիայում առաջին խոշոր պեղումներ կատարողը եղել է Ոյոլերին:

«19-րդ դարի 90-ական թվականներին Շուշիի ռեալական ուսումնարանի ուսուցիչ, ազգությամբ գերմանացի Էմիլ Ոյոլերին դիմում է Պետերբուրգի հնագիտության հանձնաժողովին և իրավունք ստանում պեղումներ կատարել Արցախի տարածքում: Նա և նրա ազգակից, նույն ուսումնարանի ուսուցիչ Բերկարը 1894-1898թթ. բարձր դասարանցի մի խումբ աշակերտների հետ պեղումներ կատարեցին Արցախի Խաչենի Խոջալու, Վարանդայի Դարաբուլախ (Ակնաղբյուր) և Զանգեզուրի մի շարք բնակավայրերում: Նրանց հայտնաբերած իրեղեն ապացույցները վկայում էին այն մասին, որ Արցախի Թարթառ, Խաչեն, Կարկառ, Վարանդա և Իշխանագետ գետերի հովիտները եղել են հնագույն մարդկային բնակավայրեր»:[6]

Նշենք, որ ավելի հաճախակի ու մանրամասնորեն է ուսումնասիրվել Արցախը՝ հնաբանական նկատառումներով, «հնեաբաններ Վ. Վեյսենխոֆի, Խաչիկ Դադայանի, Վ.Ստրունի, Վ. Կ. Շիլեցկոյի, Ա.Ա. Իվանովսկիի, Ա. Տեր-Ավետիսյանի, Ա.Ս. Պասսեկի, Բ.Ա. Լատինինի, Ի. Մ. Զաֆարզադեի, Դ.Ժ. Ալեքսանդրովի, Ն.Վ. Մինկևիչ-Մուստաֆանայի, Ս.Մ. Կազիևի, Լ.Պ. Թաշչյանի, Գոմմելի, Կ.Խ.Կուշնարևի կողմից»:[7]

Նրանց հետազոտությունները վերաբերվել են Զրաբերդի, Խաչենի շրջանների հնություններին, Խոջալուի, Դաշբուլաղի, Մեհտիշենի, Դահրավի դամբարաններից և Ազոխի շրջակայքից գտնված իրերին ու նյութերին:

Հնեագիտությամբ զբաղվող դարաբաղցի գիտնական, Արցախի պետական համալսարանի դասախոս Յուրա Ասրյանը իր "Нагорный Карабах в эпоху позд. бронзы и раны железо" աշխատության մեջ ըստ շրջանների ցույց է տալիս հետևյալ հնէաբանական հուշարձանները: Նա Մարտակերտի շրջանը այդ տեսակետից առաջնային է համարում և նշում այն 15 դամբանաբլուրները, որոնք ընկած են Ստեփանակերտից-Մարտակերտ ձգված ճանապարհի այն հատվածում, որ մոտ է Բահմանլու գյուղին: Առանձնապես մեծ է այն դամբանաբլուրը, որ ներկայացնում է վաղեմի հայկական Տիգրանակերտ քաղաքի տարածքը: Հնեագետները բացահայտել են Թարթառ (Տարտու) և Խաչեն գետերին մերձ դամբանաբլուրները, նույնը և Առաջածորի, Ծմակահողի, Հաթերքի, Դրմբոնի, Մաղավուզի, Չլդրանի, Մաղաղիսի, Մեհմանայի, Ն.Հոռաթաղի և բուն Մարտակերտ բնակավայրերի տարածքներում: Հայտնի են «Մեհմանայի բլուր» (մոտ 30 դամբանաբլուրներ), Մարտակերտի «Օշափի բլուր» տեղանունները: Դրանք բոլորն էլ պատկանում են ուշ բրոնզի դարաշրջանին:

Իհարկե, Հադրութի շրջանին է վերագրվում Ղուրուչայի վտակներ Իշխանագետի, Տողի և Մեխակի տարածքներում գտնված հուշարձանները:



Հիշատակվում է Թաղլարի քարանձավը (ցից խաչ), որտեղ գտնվում է 10 դամբանաբլուր: Հենց «Իշխանագետի ափամոտ, Ազոխի քարանձավից դեպի հյուսիս-արևմուտք «գյունե արտ» տեղամասում կան մոտ հարյուր մանր դամբ անաբլուրներ: Այստեղ են գտնվել ուշ բրոնզե դարի և վաղ երկաթի դարաշրջանի հնէաբանական նյութեր: Նույն Իշխանագետի ակունքում, Տումի գյուղի մոտ՝ «Հանդեր» տեղամասում կարելի է տեսնել հին դիակներ՝ քարե արկղ-դագաղների մեջ: Գտնված են նաև կավե սափորներ (ընդորում շատ) բրոնզե կոճակներ, երկաթյա ապարանջան, մատանի, որ պատրաստված էր եղջերվի ոսկորից: Հադրութի բանավանի հարավ-արևելյան մասում կարելի է հանդիպել մի շարք դամբանաբլուրների, որ տեղացիները անվանում են «Օշափի գերեզման»:[8] Նմանատիպ հին դամբանաբլուրների կարելի է հանդիպել Արփագյադուկ, Խանձաձոր, Ցոր, Առաքել և հատկապես Դոլանլար գյուղում: Իսկ, ահա թե ինչ է իրենից ներկայացնում Դարաբաղում, և ինչու չէ աշխարհում արդեն հայտնի Ազոխի քարանձավը: Ազոխի քարանձավը հայտնի է նաև Որվան անունով, որը նշանակում է արևշատ, արևավառ, արևախանձ, այսինքն արտահայտում է տեղանքի բնույթը: Անցյալ դարի 60-ական թվականների հետազոտությունները Ազոխ քարանձավում հայտնաբերել են նախամարդու (նեանդերթալցու) ստորին ծնոտ և միջագետքյան եղջերուի, դյուսենբերգյան ձիու, ռնգեղջուրի, մերկանի, բրածո ոսկորներ:

«Դրանք նման են աշխարհի շատ հնավայրերում հայտնաբերված նյութերին: Եվ զուր չէ, որ Ֆրանսիայի հնագետ Անֆ դը Լյումլեյնը ասել է, թե Արցախում հայտնաբերվածը «հողագնդի վրա մարդկային հնագույն քաղաքակրթության օջախի» ապացույց է»:[9]

Ազոխի քարանձավով զբաղվում են նաև այժմ:

2004թ. օգոստոսի սկզբներին Լոնդոնից Ղարաբաղ մեկնած մոտ 10 հոգանոց խումբը, որը ղեկավարում էր հնագետ Իոլանդե Ֆերնանդեսը (Իսպանիա) հետազոտություններ է կատարում Ազոխի քարանձավում:

Այդ խմբի մեջ ընդգրկված Ղարաբաղի ներկայացուցիչ Արցախի պետական համալսարանի դասախոս հնագետ Վարդգես Սաֆարյանի տեղեկատվության համաձայն քարանձավում հայտնաբերվել են կենդանիների՝ մասնավորապես քարանձավային արջի ոսկորի մնացորդներ, քարե գործիքներ: Հայտնաբերված հնությունները տրված է Արցախի երկրագիտական թանգարանին: «Վերսկսված ուսումնասիրությունների գտնված իրերը կմնան Ղարաբաղում և ոչ թե կտարվեն մի այլ տեղ»:[10]

Հադրութի շրջանից գտած իրերի մեջ հատուկ է նաև նույն Ազոխի «Գյունե արտ» տեղամասում հայտնաբերված մեծ քանակությամբ բրոնզե զարդեր և շատ երկաթյա իրեր, առանձնապես երկաթե զենք և աշխատանքի գործիքներ: Հետաքրքիր է երկաթյա մանգաղը (կիսաշրջանաձև, շատ քիչ է տարբերվում ժամանակակից մանգաղից, երկարությունը 30սմ,

լայնությունը 4սմ): Հին հուշարձանների տեղակայման հարցում նշանակալից տեղ ունի Մարտունու շրջանը (նախկին անունը Հաբանդ): Հատկապես առանձնանում է Ամարասի հովիտը, որտեղ տեղաբաշխված են Սոս, Մաճկալաշեն, Քերթ, Հերհեր, Ծովատեղ, Խերխան, Քարահունջ և այլ գյուղեր: «Վաղ Բրոնզի հուշարձանները հանդիպում են Ղզղալա (Բերդաշեն) գյուղի հարավային մասում, Մարտունին Ղզղալային կապող ճանապարհն հատող տեղանքում: Այնտեղ հայտնաբերվել են տարբեր առարկաներ՝ աշխատանքի գործիքներ, զենքեր, զարդարանքներ, բրուտագործական սպասքներ»[11], որոնց հիմքի վրա ստեղծվել է դպրոցական երկրագիտական թանգարան (իմա-ուսուցչուհի Հայկուշ Ազարյանի ջանքերով):

«Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղի մոտով հոսող գետակի ափերով ձգվող դամբանաբլուրները վկայում են, որ այդ հովիտը Արաքսի հարթավայրից Լեռնային Ղարաբաղ շարժվող էթնիկ խմբերի համար եղել է անցման ուղի: Այդ պատկերը կրկնվում է Խաչենագետի, Ձինգյանակապ և Ինջա գետերի հովիտներում»:[12]

Հետաքրքիր նյութեր են հայտնաբերվել Ճարտարի «Ալի Բալի» տեղամասում, որտեղ 150 հա խաղողայգի հիմնադրելու ժամանակ բացահայտվել են բավականին մեծ բնակավայրեր, որտեղ լավ պահպանվել են տների հիմքերը, կենցաղային իրերը, աշխատանքի գործիքները, զարդերը, խոշոր կարասները: Հնէաբանական նյութեր են հայտնաբերվել նաև Թաղավարդ, Կարմիր Շուկա, Սխտորաշեն, Սպիտակաշեն, Ավդուռ, Մյուրիշեն, Քերթ և այլ գյուղերում:

Քերթ գյուղի «Հոստուն տեղ» նորաբնակ մի տեղամասում նոր տան հիմքեր դնողները հայտնաբերել են շենքեր, կենցաղային իրեր և աշխատանքի գործիքներ: Նման հնավայրեր են նաև Սարգսաշեն գյուղից 1 կմ արևմուտք գտնվող «Շինատեղ», «Եկեղեցու խութ», «Կոկու», «Խաչին խութ», «Խաչեն տակ», «Ժամ», «Տանձին աղբյուր», «Բուլուվանց ձոր», որոնք հիշատակվում են 1257 թվաժամանակում:

Ասկերանի շրջանի հնէաբանական հուշարձանները հիմնականում գտնվում են Կարկառ գետի հովտում և նրա վտակների ակունքների տարածքներում:

Վերը մենք հիշատակեցինք Խոջալուի դամբանաբլուրների մասին, նրանից հարավ՝ Ստեփանակերտ-Աղդամ ճանապարհի աջ ու ձախ մասերում են փռված ոչ մեծ դամբանաբլուրներ: Դրանք հասնում են շուրջ 100-ի: Այդպիսի դամբանաբլուրների ենք հանդիպում նաև Կրկժան, Խանածախ (Լեռնավան), Բալուջա (Այգեստան), Փահլուր գյուղերի մոտ: Նմանները կան նաև Մալիբեկլու, Արմենավան, Դաշուշեն գյուղերի շրջապատում: Դրանք երևի թե վաղ բրոնզե դարի ժամանակներից են: «Շատ դամբանաբլուրներ են հայտնաբերվել Մեհտիշեն, Դաշբուլաղ («Բլանց բաղ», «Մեժժիվարեն խութ», «Տանձատափ», «Դաղունց խմհատ», «Ղշլաղի



ջուր»), Դահրավ, Խանցք, Բաղարա գյուղերին մերձ տարածքներում:

Այդպիսի բլուրներ են հայտնաբերվել նաև Խանաբադում, Նորագյուղում, Սարդարաշենում, Հիլիսում, Խնձիրստանում, Ղշլաղում, Սեյդիշենում և Խաչեն գետի ուղղություններում«:[13]

Բրոնզե իրեր են գտնվել նաև Բալուջա գյուղի նոր դպրոցական շենքի հիմքում 1968թ., իսկ 1971թ. Ասկերանի արևմտյան մասում «Փիփերթաձոր» տեղամասում գտված երկու գերեզմանոցներում թաղված մարդկանց դիակները «նայում էին» դեպի հարավ-արևելք:

Խոջալուի տարածքում հայտնաբերված են երեք կարգի թաղումներ: Առաջինում՝ միայնակ դիակ, որը պառկած վիճակում է: Այն վերաբերում է մ.թ.ա. XIII-XI դարերին, երկրորդում՝ թաղումները կրել են դիակիզման վիճակ, որ ծագել է XI-IX դդ., մ.թ.ա., երրորդում՝ գերեզմաններ, որ քարե արկղների մեջ են դիակները ամփոփված՝ VIII-VII դդ., մ.թ.ա.:

Շուշվա շրջանի Քարին-տակ գյուղի տարածքներում գտնվող կարաններում հայտնաբերված են քարեդարյան շրջանի մարդու գործունեության հետքեր:

Արցախի տարածքում էմիլ Ռյուլերի կողմից հայտնաբերված ագաթե ուլունքը, որի վրա հիշատակված է Ասորեստանի Ադադնինարի I-ին ուլունքը (1310-1280թթ. մ.թ.ա.) արքայի անունը, տարվել է Պետերբուրգ: «Այդ փաստը վկայում է, որ Արցախը մ.թ.ա. III-II հազարամյակներում ներառված է եղել Առաջավոր Ասիայի քաղաքակրթության ոլորտը»:[14]

Արցախի տարածքներում պեղված ու հայտնաբերված նյութերն ու իրերը ցույց են տալիս, որ Արցախի հին ցեղերը զբաղվել են հողագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով և նույնիսկ մետաղամշակությամբ, բրուտագործությամբ, մանածագործությամբ, կաշվի արտադրությամբ, քարամշակությամբ և փայտամշակությամբ: Բայց բացառված չէ նաև այն, որ արցախցիները զբաղված լինեին նաև խաղողագործությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ: Հնավայրերից հայտնաբերված են կորեկի, ցորենի, գարու հատիկներ, խաղողի քարացած սերմեր, երկաթյուղ եղան, ուլունքներ, կացիններ, աստղներ, կավանոթներ, ապարանջաներ, նետասլաքներ, կարասներ, կճուճներ, սափորներ, ճենապակյա ափսեներ (արհեստ, բրուտագործություն), զենքերից՝ գուրզեր, դաշույններ (զինագործություն):

«Խոջալուի գտածոներից կարելի է պատկերել ծանր հետևազոր ռազմիկի արտաքին տեսքը: Որ իշխանի, հրամանատար ցեղապետի հետ թաղում էին շարքային մարդկանց, վկայում է մի ցեղապետի գերեզման՝ որի մոտ հայտնաբերվել են սաղավարթակիր երեք մարտիկների կմախքներ»:[15]

2004 և 2005թթ. ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը, պատմագիտու-

40. 236

թյան դոկտոր Համլետ Պետրոսյանի ղեկավարությամբ, հնագիտական պեղումներ է իրականացրել ԼՂՀ Նոր Շահումյանի շրջանի Հանդաբերդի վանքում, Շուշի քաղաքում ու նրա մերձակա տարածքում:

2005թ. դեկտեմբերի 24-ին պեղումների արդյունքները ամփոփվել են Արցախի պետական համալսարանում, որտեղ պեղողները եկան հետևյալ եզրակացության.

ա) որ Նոր Շահումյանի (Քյալբաջար) տարածքը բնիկ հայկական տարածք է, որտեղ մինչև 18-րդ դարը միատարր էթնիկ բնակչություն ուներ: Հայտնաբերված նմուշները ցույց են տալիս, որ Հանդաբերդի վանքը կառուցվել է 1276թ. Դավիթ Վարդապետի կողմից:

բ) որ հայերն այնտեղ ունեն պատմական գերեզմանոց: Սակայն տխուր է, որ ազերիները խորհրդային իշխանության օրոք համալիրի մեջտեղով անց են կացրել 4 մ լայնությամբ և 2 մ խորությամբ ավտոճանապարհ:

Նման ճանապարհ են բացել նաև գերեզմանոցի միջև, այդ պատճառով էլ մի քանի խաչքարեր գլորվել են ձորը, իսկ 80-ական թվականներին ազերիները ջարդուփշուր են արել բոլոր երևացող խաչքարերը և արձանագրությունները, հատկապես ոչնչացվել են 50 խաչքարեր, որոնք արվեստի գլուխգործոցներ են:

գ) Խաչքարերից 2-ի պատկերաքանդակները ներկայացնում են հեծյալ ռազմիկների, զինված թրով ու գուրզով, մի ձեռքում նիզակ, մյուսում գինու գավաթ: Մի պատկերի վրա երևում է ստնտու մորը՝ մանկանը կուրծք տալիս:

դ) գտնվել է մի մարմարյա սալաքար 1276թ. արձանագրությամբ:

Շուշիում պեղողները հայտնաբերել են մ.թ.ա. 1-ին հազարամյակի հնություն ունեցող գերեզմաններ: Հայ-հունական գերեզմանոցի պեղումները ցույց են տվել 12-13-րդ դարերի ժամանակի հնություններ, հայկական գերեզմանոց, որի խաչքարերը 19-րդ դարի կեսերին օգտագործվել են նոր թաղումների համար: 12-13-րդ դարերի 5 խաչքարերը վկայում են, որ Շուշիի սարահարթը հայերի կողմից բնակեցված էր Խաչենի հայկական իշխանության ամենածաղկուն դարաշրջանում:

Հունոտի կիրճի Ավանի Կարան կոչվող ամրացված քարանձավի մոտի ամրոցի հետախուզական պեղումների ժամանակ բացված թոնրի շրջակայքից և լիցքից գտնվել են 12-14-րդ դդ. վերաբերող նյութերի նմուշներ: Շուշիի տարածքում գտնվել են նաև մոնղոլական տիպի նետասլաք ու չինական Սելադոնի բեկորը, որոնք ոչ միայն ապացուցում են, որ Շուշիի սարահարթի արևելյան Հունոտի կիրճը բնակեցված էր այդ ժամանակ, այլև, որ այստեղ կար առևտրական ճանապարհ:

Այս էլ հնագետներին հիմք է տալիս հենց այստեղ տեղադրել պատմիչների հիշատակած Կարկառ ամրոցը, որը 17-րդ դարի վերջերին վերակառուցվել է և ստացել Աղվանի կամ Փոքր Սղնախ անունը: Հնագետները



եզրակացնում են, որ Շուշին բնակեցված էր դեռևս մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբից, որը մի լուրջ տվյալ է վերջ դնելու Շուշիի սարահարթն 1-ին անգամ Ֆանահի կողմից բնակեցնելու թրքական առասպելին:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Արցախի տարածքի ո՞ր բնակավայրերում են հայտնաբերվել դամբանաբլուրներ, թվարկել դրանք:
2. Արցախի ո՞ր գետերի հովիտներն են եղել հնագույն մարդկային բնակատեղեր:
3. Թվել մի քանի հնէաբանների, որոնք ավելի հաճախակի և մանրամասնորեն են ուսումնասիրել Արցախը հնէաբանական նկատառումներով:
4. Ի՞նչ գիտեք Ազոխի քարանձավի մասին:
5. Հնագույն ի՞նչ արհեստների հետքեր են նշմարվում Արցախի տարածքում:
6. Ֆանահի կողմից Շուշին բնակեցնելու թրքական առասպելը մերկացնելու ի՞նչ փաստեր կարող եք բերել:

## ԱՐՑԱԽԸ ՎԱՆԻ ԵՎ ՄՅՈՒՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

***(Հայոց պատմության դասագիրք, V դաս., թեմա 4 «Վանի թագավորությունը») էջ 24-31 և «Հայաստանը հզոր աշխարհակալ տերություն» էջ 44, 87-90), IX դ. գլ. IV , էջ 33 և 46:***

Այրարատ, Ուրարտու, Վանի, Նաիրի, Բիաինա տարբեր անվանումներով երկիրը հենց նույն հայերի բնակավայրն է, նրանց օրրանը: Այդ մասին ավելի քան հարյուր տարի առաջ նշել է Քերովբե Պատկանյանը:[18] Ճիշտ է, հատուկ տեղեկություններ չկան, թե Արարատ-Որարտու հայկական պետության մեջ մտնում էր Արցախը, թե ոչ: Միայն հայտնի է, որ Արգիշտի Ա թագավորը 728թ. մ.թ.ա. հասել է մինչև Գեղամա ծովի արևմտյան ափերը՝ տիրելով Արարատյան արգավանդ դաշտավայրերին և դեպի Գեղամա ծովը ծգվող բարձրադիր արոտավայրերին:

Եվ հայտնի է նաև այն, որ մ.թ.ա. 6-րդ դարի սկզբներին հայկական լեռնաշխարհի տարածքում Արարատյան տերությանը փոխարինելու եկավ հայկական թագավորությունը (նահապետ Պարույրի ղեկավարությամբ Ռուսա 2-րդի հաջորդներից հետո): Որոշ տեղեկությունների համաձայն ուրարտացիները առկա էին ոչ միայն Սևանա լճից այն կողմ, այլ նաև Կուրի աջափնյա հարթավայրերում:

Հայոց պատմության (V) դասագրքի 27-րդ էջում տպագրված այս պար-

բերությունը, թե Ռուսա 1-ին արքան (Ք.ա. 735-713թթ.) ժայռի վրա թողած մի արձանագրության մեջ հայտնում է Սևանից դեպի արևելք՝ մինչև Կուր և Արաքս գետերի խառնարանը ձգվող 19 երկրների նվաճման մասին, ապացույցն է այն բանի, որ Արցախի տարածքը իրոք մտնում էր Որարտու պետության կազմի մեջ:

Բայց ամենաստույգ տեղեկությունները գտնում ենք Մովսես Կաղանկատվացու մոտ, որը նշում է թե Սյունիքը, Արցախը, Ուտիքը Սևանա լճի կողմից ենթարկվել են հայկական ազդեցության: Նա նույնիսկ հայտնում է, թե ինչ իշխանական տոհմեր էր տիրում այդ հայկական երկրամասում՝ Գարդմանում (խոսքը առանշահիկների կամ եռանշահիկների մասին է):

Այն, որ Արցախ-Ուտիքի բնակիչները սերվել են հայկականից վկայում է նաև Մովսես Խորենացին.

«Այս Սիսակի սերնդից էր և այս անվանի քաջ Առանը, որ Պարթև Վաղարշակի կողմից բյուրավոր կողմնակալ նշանակվեց: Ասում են, որ սրա զավակներից էր սերվել Ուտեացոց ազգը և գարդամանացոց, ծավդեացոց և գուգարացոց իշխանությունները»:[17]

Այստեղ Ծավդեքը պետք է համարել Արցախը:

Կամ Ստեփան Բյուզանդացին հիմք ընդունելով 2-3-րդ դարերի մի հեղինակի հաղորդումները, գրել է.

«Կիր գետի շրջակայքում ապրում են օվարիները և օտիները (ուտիները), որոնք կազմում են Հայաստանի բնակչության զգալի մասը», իսկ աշխարհագետ Ստրաբոնը Արցախում ապրած բուն հայ բնակչության առնչությամբ գրել է.

«Բուն Հայաստանում շատ լեռներ ու բարձրավանդակներ կան: Այստեղ շատ կան նաև, հովիտներ... Օրինակ, Արաքսի դաշտավայրը, որտեղով Արաքս գետը հոսում է մինչև Աղվանքի սահմանները: Այս դաշտավայրից հետո գալիս է Սակասենը, որը նույնպես սահմանակցում է Աղվանքին և Կիր գետին»:[18]

Արցախը ամբողջական Հայաստանի մի մասը կազմելու վերաբերյալ կա նաև այս փաստը.

«Հնագիտական գրականության մեջ ընդունված է համադրել Լեռնային Ղարաբաղից, Գետաբեկից, Գանձակից, Սևանա լճի ավազանից, ինչպես նաև Հայաստանի հյուսիս-արևելյան հատվածից ծեռք բերված նյութերը: Ասել կուզի, հնագույն ժամանակներից վերոհիշյալ տարածքները հայկական են, հայերի բնօրանն ու հայրենիքը»:[19]

Հետևաբար, «Արցախի տարածքում հայտնաբերված հնագույն նյութերի կապը հայկական բարձրավանդակում գտածների հետ ևս հաստատում է Ղարաբաղի և Հայաստանի կապը»:

Մի փաստ էլ կա, որ հաստատում է Արդաղը, Ադախուն, Արցախը Հայաստանի մասը կազմելը.



Բորիս Պիետրովսկի հնեաբանը գտնում է, որ Ուելիկուխի աշխարհն զբաղեցրել է Սևանի արևմտյան ափը, իսկ Ադախունին՝ հարավային ափի արևելյան մասը: Հետևաբար Սարդուրին Սևանի հարավային ափով շարժվել է դեպի արևելք: «Լճի կողմից բնական ոչ մի արգելք չկա՝ շարժվելու համար դեպի արևելք, ընդհուպ մինչև Լեռնային Ղարաբաղը, որը կապված է եղել Հայաստանի հետ»:[20]

Իսկ, որ Բյուզանդիայի կայսրը, իր նամակը Խաչենի իշխանին հասցեագրել է «Հայաստան-Խաչենի իշխանին», այլ կերպ ինչպես հասկանալ:

«Հայաստանը հզոր աշխարհակալ տերություն» թեմայի առնչությամբ հարկ է, որ ուսուցիչը Տիգրան Մեծի անունով հիշատակվող քաղաքների շարքում հիշատակի նաև մերը՝ Արցախի Տիգրանակերտը, որը ժամանակակից օղուզ-թուրքերը ջնջելով պատմության արահետները, հանդգնել են կոչելու Շահ-Բուլաղ: Տեղին կլիներ, որ այստեղ նշվի Ադրբեջանի նորօրյա պետության իշխողներից մեկի՝ Աբուլֆազ Էլչիբեյի վնգստոցն այն մասին, թե «Հեյդար Ալիևը հավանական է տանուլ կտա նաև Շահ-Բուլաղը՝ հայկական Տիգրանակերտը»: Դրանից ուժեղ ոչ ոք չի ասի, որն ապացուցում է Տիգրանակերտը, հետևաբար և Արցախը հային պատկանելը: Դե, չէ, որ Էլչիբեյը պատմություն գիտի, պատմաբան է: Ի դեպ Տիգրանակերտ-Շահ-Բուլաղ տեղի ու անվանման ստուգաբանության մասին.

«Արցախ և Ուտիք նահանգների սահմանագլխին, Արցախի Մեծ-Առանք կամ Խաչեն գավառի տարածքում,- գրում է Վահրամ Բալայանը «ԼՂ Հանրապետություն» թերթում[21],- ներկայիս Աղդամ քաղաքից 8 կմ հյուսիս-արևմուտք, գտնվում է թուրքերի և պարսից կողմից Թառնագյուտ կամ Թառնակերտ կոչվող բնակատեղին, որին հայերը Թնգրնակերտ կամ Տուակերտ անունն էին տալիս: Բնակատեղի անվանումը, ինչպես նաև պատմական աղբյուրների տեղեկությունները վկայում են, որ Թառնագյուտ-Թնգրնակերտը պատմական ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՆ է (ներկայիս Շահ-Բուլաղը)»:

Գիտենք, որ պատմական Հայաստանի տարածքում կան մի շարք քաղաքներ ու սղնախներ, որոնց հիմնադրման հեղինակը հայոց Տիգրան Մեծ թագավորն է, որը թագավորել է մ.թ.ա. 95-55 թվականներին:

Նրա առաջին Տիգրանակերտը մեծածավալ Հայաստանի մայրաքաղաքն էր, որ կառուցված էր Աղձնիքում: Գալով Արցախի Տիգրանակերտին, արցախցի պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը գրում է .

«Տիգրան Մեծը այստեղ է կառուցել իր մեծազոր տերության Տիգրանակերտ կոչվող չորս մայրաքաղաքներից մեկը»:

Ուրիշ շատ ուսումնասիրող պատմաբաններ էլ հաստատում են Տիգրանակերտը Մեծ Տիգրանի կողմից կառուցված լինելու փաստը: Բայց կան նաև ժխտողներ, որոնք ասում են, թե այդ Արցախի Տիգրանակերտը կառուցվել է մ.թ.ա. 6-րդ դարում՝ Տիգրան Երվանդյանի կողմից: Օրինակ,

Մովսես Խորենացի պատմահայրը հաղորդում է, որ Մարական Աժդահակ թագավորը կնության է վերցնում Տիգրան Երվանդյանի քույր Տիգրանուհուն, որպեսզի դավի հայոց արքայի դեմ: Նա ձգտում էր դավադրության մեջ ներքաշել Տիգրանուհուն, որը հասկանալով ամուսնու նենգությունը, առերես համաձայնվում է, սակայն մտերիմների միջոցով եղբորը տեղեկացնում է պատրաստվող դավադրության մասին: Տիգրանը զգուշանում է, իսկ հետո մեծ բանակով, որոնց մեջ վրաց, աղվանից և կապադովկացվոց զորամասերը, արշավում է մարերի դեմ, վճռական ճակատամարտում սպանում Աժդահակին և հաղթանակ տանում: Պատերազմից հետո Տիգրան Երվանդյանը «Իր քույր Տիգրանուհուն մեծ բազմությամբ ուղարկում է թագավորավայել կերպով Տիգրանակերտ ավանը, որը Տիգրանը շինեց իր անունով և այն գավառները հրամայում է նրա ծառայության մեջ դնել»: Ուրեմն, Խորենացին Տիգրանակերտի կառուցումը վերագրում է Տիգրան Երվանդյանին: Այդ փաստը հաստատում է նաև պատմաբան Բ. Հարությունյանը:

Տիգրանակերտ անվան հիշատակությունը հայ մատենագրության մեջ եզակի չէ. նրա մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև Սեբեոսն ու Մ. Կաղանկատվացին: Պատմաբան Լեոն էլ է հաստատում Տիգրանակերտ անունով բնակատեղին, Մակար Բարխուդարյանը նույնպես, բայց չեն ասում թե դա որ Տիգրանինն է: Առանձին ուսումնասիրողներ ավելի հեռուն գնալով հակված են այն կարծիքին, որ ներկայիս ամրոցը կառուցել է Նադիր Շահը (1736-47թթ.) այստեղից էլ Շահբուլաղ, որից հետո ռուսները նորոգել, դարձրել են զորանոց, իսկ Միրզա Զամալը, Միրզա Ադիգոզալ բեկը, մեր օրերում Լ.Ավալովը, ամրոցը համարում են Ֆանահի խանի «Ստեղծագործություն», իսկ չէ՞ որ որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ ամրոցը եղել է Ֆանահից շատ ու շատ առաջ:

Ուսուցչի համար հարմար թեմա է նաև հայ Արշակունիների (Արշակ II, Պապ) թագավորության միջոցով վեր հանել Արցախի պատկանելիության հարցը և օտար պատմաբանների, հին ու նոր աշխարհի պատմիչների ու մտածողների նկարագրություններով հաստատող մեր հին ու նորօրյա պատմաբանների ճշմարտություններն այն մասին, որ Արցախը հայկական է, հայի բնօրրան: «Աղվանները տարածված են կովկասյան լեռների վրա և նրանց երկիրը ձգվում է մինչև Հայաստանի և Իբերիայի սահմանը հանդիսացող Կուր գետը»,- գրում է Պլինյոս Ավագը: «Կուրը, որը հոսում է ողջ Իբերիայով և Աղվանքով՝ նրանից անջատելով Հայաստանը»,- ասում է Պտղոմեոսը:[22] «Ալբանացիները ապրում են Կուրից վերև»,- Դիոնիս Կասիոս:[23] Ստեփանոս Բյուզանդացին էլ գրել է. «Օտինան (Ուտիքը) Հայաստանի նահանգն է»: Իսկ ահա թե որքան պարզորոշ է խոսում Աբաս-Կուլի Աղա Բաքի խանովը, որ ապրել է 19-րդ դարի 1-ին կեսին. «Դատելով զանազան հանգամանքներից ու աղբյուրներից... Կարելի է եզրակացնել,



Կուրի աջափնյակը մինչև Արաքսի հետ միախառնվելու տեղը կազմել է Հայաստանի մասը»:[24] Փաստեր կան այն մասին, որ երբ Արցախի Առանշահիկները ապստամբեցին հայոց թագավոր Արշակ II (350-368թթ.) դեմ և իրենց անկախ հայտարարեցին, բայց Պապը ճնշեց այդ ապստամբությունը և իր երկրի սահմանը համարեց կրկին Կուրը: Հենց նա Պապը, Արցախին կոչեց Փոքր Սյունիք: Մի ուրիշ փաստ ևս հաստատում է Արցախը Հայաստանի կազմի մեջ լինելը: Ըստ հայկական «Զորանամակի» Փայտակարանը կենտրոնական բանակին տալիս էր 300 զինվոր և նրանց նախարարը գրավում էր արքունիքի 70 բարձրերից 9-րդ տեղը, իսկ Ուտիքի իշխանը նույն բանակին տալիս էր 1000 զինվոր»:[25]

Ձարգացնելով իր միտքը, ուսուցիչ պատմաբանը նաև պետք է հեռանկարի ձևով ընդգծի Արցախի հետագա ճակատագրի մասին, այն մասին, որ պարսկա-բյուզանդական 387թ. դաշնագրի համաձայն ծվեն-ծվեն է արվել Հայաստանը. «Դեռ ավելին, հայ նախարարների դիմադրությունը լիովին կոտրելու համար հայկական ծայրամասային շատ գավառներ խուզվեցին ու մի փոքր մասը մնաց պարսկահպատակ և բյուզանդահպատակ թագավորներին»: Այդ ժամանակ Արցախն ու Ուտիքը, որ Պապի օրերում Հայաստանի անբաժան մասն էին կազմում, կրկին անջատվեցին: Անջատվեցին նաև «Մարացամատ աշխարհը», Գուգարքի հյուսիսը և Աղձնիքը, Կորդուքը, Նոր-Շինականը, իսկ հետագայում՝ Գուգարքը լիովին: Արցախն անջատվեց Վարդանանց ապստամբությունից հետո:

«Մի խոսքով անջատվեցին 103359 քառ. կմ տարածք, իսկ մնացած միջնաշխարհը կազմում էր 184916 քառ. կմ տարածք, որն էլի իր հերթին բաժանվում էր երկու մասի՝ արևելյան մեծագույն մասը՝ 73% (3/4-ից ավելին) 134341 քառ. կմ. տարածքով, որը ենթարկվում էր Սասանյան Իրանին, իսկ 27 %-ը 50575 քառ. կմ-ը հռոմեական կայսրությանը:[26] Շարունակելով մեր միտքը, ասենք, որ Արշակ III-ից հետո Արևմտյան Հայաստանում վերացավ թագավորությունը, իսկ Արևելյանում (Պարսկաստանում) կախյալ վիճակ ապրեց մարզպանական Հայաստանը: Դրա պատճառը կայանում է նրանում, որ Հայոց Արևելից կողմանց իշխանները, հատկապես Արցախի իշխանները ավելի պինդ դուրս եկան և պահպանեցին հայի ոգին, մինչև որ Մեսրոպ Մաշտոցի մտցրած գրերն ու դպրոցը կենդանի պահեց հենց այս աշխարհի հայությանը:

«Եզրակացվում է, որ 428 թվականից հետո, երբ այլևս գոյություն չուներ հայոց միասնական պետությունը, Արցախը և Ուտիքը հաջող պայքարեցին բոլոր արհավիրքների դեմ՝ միացած Հայաստանի մյուս շրջանների հետ (Վարդանանց պատերազմը, Վարդանանց ապստամբությունը, պայքար արաբների դեմ, պայքար ուծացման դեմ»:[27]

Պատմաբանի այս եզրակացությունը պետք է անվերապահորեն հասցվի աշակերտների գիտակցությանը, որպեսզի նրանք հպարտանան իրենց նախնի արցախցիների կողապնդության և դիմացկության համար՝ հիշելով

նաև արցախցի բանաստեղծի այս տողերը.[28]

Արցախցի եմ ես,
Դարերով փակված լեզվիս կապերը
Ես արձակում եմ:

Արցախցի եմ ես,
Կողս չբեկվող, անկեռ ադամանդ
Կողս ուրան է աշխարհով լցված:

Իսկ երբ խելոք աշակերտներից մեկը հանկարծ ուսուցչին հարցնի, թե բա մեր այս Արցախում ինչպե՞ս հայտնվեցին մուսուլմանական ցեղերը, այստեղ հարկ է, որ ուսուցիչը պարզաբանի, թե իր ժամանակին Արցախում տիրապետած Միհրանյանների իշխանական տոհմը, որ հակադրության մեջ էր Առանշահիկ իշխանական տոհմի հետ, թվական գերազանցություն ունենալու համար, վարեցին ծուլողական քաղաքականություն և 7-րդ դարում Պարսկաստանից 30.000 տուն պարսիկներ (ադրբեջանցիների ցեղ) 100-150 հազար բնակիչների թվով տեղափոխեցին Արցախ և Ուտիք և ձուլեցին տեղական ազգաբնակչության հետ, իսկ հետագայում այս քաղաքականությունը շարունակվեց Շահ-Աբասից մինչև «Հեյդար բաբան»:

Այդպիսի շրջահայաց աշակերտների նաև այն հարցին, թե ի՞նչ շարժառիթներն են «հիմք» տալիս ազերի պատմաբաններին՝ Արցախի հայերին աղվանական ցեղի խառնուրդ անվանելը, կամ այս տարածքները Հայաստանին չպատկանելը, ուսուցիչը չպետք է խույս տա այն փոքր ճշմարտությունից, որ «հիմք է» տալիս մեր հակառակորդներին Արցախը և Ուտիքը ալբանական անվանելու (և ոչ հայկական): Աշակերտներին պետք է ասել, որ ազերիներին այդ առիթը տվել է այն անհասկանալի և չարաբաստիկ դեպքը, որ երբ Պարսից արքունիքը ադմինստրատիվ (վարչական) նկատառումներով կամեցավ Աղվանքի մարզպանությունը մեծացնել Հայաստանի արևելյան մարզերի հաշվին, որի արդյունքում էլ նույն այդ Արցախը, Ուտիքը, Փայտակարանը կրեցին Աղվանք անունը: Այս խղճուկ դրվագը միակն է նրանց համար, որ մեր երկիրը և մեզ իրենցն անվանեն:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ փաստեր կան Արցախը Վանի թագավորության մեջ լինելու մասին, թվել դրանք: Հին պատմաբաններից ո՞վքեր են այդ մասին հիշատակել:
2. Վանի թագավորության սահմանները Հյուսիսում և արևելքում ո՞ւր էին հասնում:
3. Վանի թագավորներից որի՞ թողած արձանագրությունն է հիշատակում Քուռ և Արաքս գետերի միջև ընկած տարածքները Ուրարտուի մեջ գտնվելու մասին:
4. Արցախում հիմնված ո՞ր հին քաղաքի գոյությունն է ապացուցում, որ Արցախը կազմել է Հայաստանի մի մասը:



## ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԱՐՑԱԽՈՒՄ

***(Հայոց պատմության դասագիրք, 2000թ., V դասարան, թեմա՝ «Քրիստոնեության ընդունումը», էջ 80-83, և IX դ., գլ. 9, էջ 123)***

Նախ ասենք, որ աշակերտները պետք է իմանան, որ Արցախում էլ Քրիստոնեությունը հիմնավորվում և տարածվում էր հեթանոսության դեմ համառ պայքարի պայմաններում: Այդ կապակցությամբ հարկ է, որ ուսուցիչը աշակերտներին պատմի հեթանոսի ներկայացուցչի և Գրիգոր Լուսավորչի Ամարաս գալու ավանդական պատմությունը, որի բովանդակությունն այս է.

Ավանդությունը հուշում է, որ շատ հեռու անցյալում, երբ հայերը հեթանոս բազմաստված էին, իսկ Վահագն էլ նրանց աստվածներից մեկն էր, իր պատգամախոսին ուղարկում է Ամարաս՝ իր գովքն անելու: Ամարասի մարդիկ, սակայն, պատգամախոսի զորությունը փորձառության մեջ դնելով, նրան ոչ մի ուտելիք չեն տալիս և նա ստիպված սնվում էր միայն խազազով: Ջորակի հինգ գյուղերի՝ Քոչիզի, Քարահունջի, Արանժակի, Բրիտիսի և Քարավեժի (սրանք ներկայիս Ծովատեղի, Հերհերի, Քարահունջի, Սոսի, Կոլխոզաշենի և Քերթի նախագյուղերն են) բնակչությունը աստվածային պատգամախոսի անունը կոչեցին Խազազ և սարը նրա և ուտելի խոտի անունով անվանեցին Խազազ: Մյուս կողմից, երբ Գրիգոր Լուսավորիչը եկավ Արցախի Արևելից կողմը՝ քրիստոնեություն տարածելու, սկզբում արցախցիք նրան չհավատացին և ասացին. «Եթե դու կարողանաս յոթ օր ապրել միայն խազազ ուտելով և ծայնդ չկորցնես, մենք կհավատանք քեզ էլ, քո Աստծուն էլ»: Բայց Գրիգոր Լուսավորիչը չգիտեր, որ եթե մարդ միայն խազազ ուտի ծայնը կկտրվի: Նա խազազի մի քանի փնջեր ձեռքին, բարձրացավ Ամարասի ծախակողմյան սարը: Երկրորդ օրը գլխի ընկավ, որ իր ծայնը կտրվում է խազազ ուտելուց: Սակայն հնարագետ մարդ էր Գրիգոր Լուսավորիչը: Նա համտես արավ ծորակի մի քանի աղբյուրների ջուրը և գլխի ընկավ, որ դրանցից մեկն օգնում է իր ծայնը պահպանելուն: Եվ այդ աղբյուրի օգնությամբ հաղթեց, ու արցախցիները հավատացին Աստծուն: Այդ ժամանակից էլ սարը կոչվեց Լուսավորչի անունով:

«Հիմա դեմ-դիմաց են Խազազն ու Լուսավորիչը. մեկը հեթանոս է, մյուսը՝ քրիստոնյա: Եվ ճիշտ Ամարասի նման էլ արցախցին է. մի կողը հեթանոս է, մյուսը՝ քրիստոնյա: Յուրաքանչյուր արցախցի տասն անգամ երդվելիս հինգ անգամ ասում է Աստված վկա, հինգ անգամ էլ՝ արևս վկա («իմ արև», «խոցս արև» և այլն): Այնպես որ՝ ոչ հեթանոս Վահագն է հաղթում արցախցուն, ոչ էլ քրիստոնյա Հիսուս Քրիստոսը: Երկուսին էլ իր հոգում տեղ է տվել լայնասիրտ արցախցին: Նա կարող է աշխարհին ներկայանալ Քրիստոսի տեսքով, իսկ հետևախորշում պահել հեթանոսի էությունը»:[29]

Իհարկե, դասագրքում խոսք է գնում մեր եկեղեցին առաքելական կոչվելու, Թադևոս և Բարդուղեմիոս առաքյալների (Հ. Քրիստոսի 70 աշակերտներից) դեռևս առաջին դարում կատարած քարոզչության մասին, բայց խոսք չկա Արցախում քրիստոնեությունը տարածողների մասին:

Այդ բացը պետք է լրացնի ուսուցիչը, դիմելով պատմաբան Վահրամ Բալայանին, որն իր աշխատության մեջ համառոտակի ներկայացնում է Բարդուղեմիոս առաքյալին, որը քրիստոնեությունը տարածել է «Անձևացոց գավառում, Գողթանում, Աղբակ գավառում, ուր և նահատակվել է: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ նա Սյունիքում հաստատում է եպիսկոպոսական աթոռ»:[30]

Իսկ մեզանում Հայաստանի արևելյան կողմերում քրիստոնեությունը սկզբում տարածել է առաքյալ Թադևոսը, որի սպանությունից հետո (նրան սպանել են Կուտկաշենի շրջանի Բումեն, այժմ Բում գյուղում), նրա գործը շարունակել է իր աշակերտներից մեկ ուրիշը՝ Դադին կամ ինչպես անվանում են Դադոյին:

**Որպեսզի աշակերտները** վերստին իմանան, որ նոր կրոնը իր ճանապարհը հարթում էր մեծ մաքառումներով, հին հավատքի՝ հեթանոսության երկրպագուների հետ գոտեմարտելով ու զոհեր տալով, անհրաժեշտ է հիշատակել Եղիշեի աշակերտներ Դադոյին և մյուսներին, որոնց բաժին հասավ դաժան ճակատագրեր: Ասել, որ բոլոր քարոզիչ նահատակների գերեզմանների տեղում հետագայում կանգնեցվել են կոթող-հուշասյուներ, մատուռներ և ավելի ուշ՝ եկեղեցիներ:

«Հիշենք թեկուզ նահատակված Քահաղցիցիկի գերեզմանը Վարդաշենի մոտ, Գյումրատայինը՝ Ծերիկ գյուղում, Վլասինը՝ Նիժում, իսկ Գրիգոր Լուսավորչի թոռ Սբ. Գրիգորիսինը՝ Վատնյան դաշտում (այժմ Բիլիջի շրջան)»:[31] (Այստեղ, չգիտես ինչու, հեղինակը Գրիգորիսի գերեզմանը սպանության վայրն է համարում և ոչ Ամարասը, որտեղ թաղված է այդ սուրբը):

Սովորողներին հաղորդել, որ Կեսարիայում Հայոց երկրի քահանայապետ օծվելուց հետո Գրիգոր Լուսավորիչը ձեռնամուխ է եղել եկեղեցիների շինարարությանը, այդ թվում և առաջիններից, գուցե թե առաջինը, Ամարասում: Երբեմն մտածում ես՝ այդ ինչո՞ւ Արցախի Մյուս Հաբանդ այս գավառի ակելյան կողմում միայն կառուցվեց Ամարասի վանքը Գրիգոր Լուսավորչի և նրա թոռ Գրիգորիսի կողմից: Պատասխանը մեզ սպասել չի տալիս, քանզի գիտենք, որ հավանաբար Լուսավորիչը կռահում էր, որ հայոց արևը խավարեցնելու համար թշնամին ամենից շատ պիտի գրոհի արևելքից, հետևաբար, հայերը նախ և առաջ պետք է ամրապինդ դարձնեն հենց այդ եզրը: Եվ ահա եկեղեցու վրա իրոք, հարձակվել են բազում թշնամներ, որոնցից Լենկ-Թեմուրը 1387թ. եկեղեցու քարերը բյուր զինվորների ձեռքերով Արաքսը թափեց: Բայց դա չօգնեց թշնամուն հանգցնել Արցախում հավատը, քանզի նրանք իրենց հոգու մեջ զգում են Գրիգոր Լուսավորչի, նրա թոռ Գրիգորիսի և Մեսրոպ Մաշտոցի (Ամարասի առաջին դպրոցի հիմնադիր) շնչառությունը: Մերոնք միշտ զգում են, որ Ամարասից է սկսվել հայոց տառերի հոգեկրթիչ և հայակրթիչ արշավը Հայոց Արևելքից կողմանց բոլոր գավառներում: Եվ զուր չէ, որ պատմաբան Հայկ Խաչատրյանը գրել է, որ «Արցախն Արցախ պահելու համար Ամարասը եղել է ամենաբարձր դիտակետն ու ամենապայծառ փարոսը»:[32]

Ժամանակի շնչին ու ոգուն համապատասխան կլինի, եթե ուսուցիչը ասի, որ պահվեց այդ Ամարասի դիտակետը, պահվեց այդ փարոսը: Եվ, որ այդ հոգին ու հավատը, որ անթեղված պահել է հայը այս հովտում, նորովի արտահայտվեց արցախյան գոյամարտի դժնդակ օրերին: Այս ոգին միայնակ չմնաց, նրան գումարվեց ուժը, որին էլ այժմ ապավինում է հայը և ոչ միայն եկեղեցու հավատի գանձերին:

Ահա այս է մեր հաղթանակի աղբյուրը՝ ոգի և ուժ, որի տերը դարձավ հայը Ամարասում, այս կանաչ երկպռունկ ափսեի մեջ, որի աջ պռունկը Խազազի սարն է, ձախը՝ Լուսավորչի սարը: Բայց այս տեղանունների պատմությունը այնքան է հին, որ հասնում է մինչև հայոց ռազմի աստված Վահագնին և Գրիգոր Լուսավորչին:

Այսպիսով, փաստորեն քրիստոնեությունը Արցախում և Ուտիքում մինչև 5-րդ դարի առաջին կեսը հասարակության առանձին խմբերի հավատ լինելուց վերածվեց ամբողջ ժողովրդի կրոնի, շինելով բազմաթիվ մատուռներ, եկեղեցիներ Արցախ նահանգի տարբեր վայրերում (Գանձասար, Դադի վանք և այլն), որոնց թիվն ըստ Շահեն Մկրտչյանի, 600-ն են, իսկ կաթողիկոսները՝ երկուսը (Ամարասի և Գանձասարի): Փառավոր համբավ ուներ նաև Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին, որը կառուցվել է 20 տարում՝ 1868-1888թթ.: Պատմում են, որ այն ժամանակներում, երբ եկեղեցին պատրաստվում էր, այն չպետք է գերազանցեր ցար-կայսրի սահմանած չափանիշները, այսպես ասած Գայիսոնը: Սակայն այս եկեղեցին այդ չափանիշներից բարձր էր 17 մետրով, այսինքն՝ նրա բարձրությունը 52 մետր է (45-ի փոխարեն), երկարությունը՝ 37 մետր, լայնությունը 35 մետր:[33] Պատմում են նաև, որ այդ «անօրենության» համար շինարարները և նրանց ղեկավարը ցարի հրամանով աքսորվում են Սիբիրի խորքերը և որ միայն Հովհաննես Լազարև գեներալի միջամտությամբ նրանք ազատվում են տաժանակրությունից: Գեներալը որպես շուշեցի խնդրում է ցար Ալեքսանդր III-ին, վերացնելու իր հայրենակիցների պատիժը:

Մեծ համարում ունեին նաև Շուշիի սուրբ Աստվածածին և մյուս 3 եկեղեցիները, որոնք ակտիվ էին գործում բազմահազար հայերի, ռուսների և հույների համար: Բայց հետագայում այն վերանվանվեց «ռուս-հունական» եկեղեցի: Բայց թե ինչու է սբ. Աստվածածինը վերանվանվել, պատասխանը կարելի է գտնել Բակուր Կարապետյանի «Շուշի բերդաքաղաքը» գրքում, որը հրատարակվել է 2003թ.: Նա գրում է, որ «Երբ Շուշիի կենտրո-

նական թաղամասում եկեղեցու շուրջը բնակվող բնիկ հայերը, թաղամասի շուրջը հաստատված մահմեդականների հալածանքներից դրդված ստիպված են լինում թողնել իրենց եկեղեցին, նրա մոտ գտնվող Քամու խաչ արքատեղին, նախնիների գերեզմաններն ու իրենց տները, տեղափոխվել տարահարթի վերին մասերը (ղարաբաղցոց թաղ) և նոր եկեղեցի հիմնել (Կանաչ ժամ), ռուսական իշխանությունները մահմեդական շրջապատում հայտնված սբ. Աստվածածինը, որ կառուցվել էր 1428 թվականին, վեր են ածում ռուս-հունական եկեղեցու:

Ի դեպ, արժե նշել, որ «Բաքվի իշխանությունները, ձգտելով վերացնել հնուց ի վեր Շուշիի հայկական բնակավայր լինելը հաստատող բոլոր պատմաճարտարապետական հուշարձանները 1953-54թթ., քանդում են սբ. Աստվածածինը և տեղում կառուցում այլ շինություն»:[34]

Հարկ է, որ մեր աշակերտները, թեկուզև համառոտ, իմանան Արցախի եկեղեցու այս պատմությունը.

Վաղ միջնադարում հայ եկեղեցու իրավասության սահմանները տարածվում էին նաև երկրի հյուսիս-արևելյան նահանգների վարչա-քաղաքական ամբողջ տարածքում: Արցախ-Ուտիք նահանգների եպիսկոպոսությունների աթոռանիստ-կենտրոնները՝ Ամարասը, Մեծառանքը, Գարդմանը, Պարտավը միացած էին բուն Աղվանքի Կապահակու, Բակահակու, Շաքի և այլ եպիսկոպոսությունների հետ ու կազմում էին հայ եկեղեցու Աղվանից մարզպանության թեմը: Բայց քանի որ մարզպանության կենտրոնը 462-636թթ. եղել է Պարտավը, բնականաբար, նրա եպիսկոպոսությունն ստացել էր առանձնահատուկ կարգավիճակ և աստիճանաբար դարձել մարզպանության գլխավոր հոգևոր կենտրոն, սկզբում որպես եպիսկոպոսություն, իսկ VII դարի սկզբից, արդեն որպես կաթողիկոսություն: Այսպիսով՝ հայ առաքելական եկեղեցուց առանձնացվել և կազմակերպվել էր մի ինքնուրույն եկեղեցի, որը սակայն միշտ ենթարկվել է Ամենայն Հայոց կաթողիկոսին:

Մինչև 9-րդ դարի սկիզբը հայոց արևելից կողմանց հոգևոր կենտրոնը գտնվում էր Պարտավում: Այնուհետև քաղաքական բարդ իրավիճակից ելնելով տեղափոխվում է ԲԵՐԴԱԿ, ՁԱՐԵՔ, ՈՍՄԻՏ, ՔԱՐԱՀԵՐԹ, ՁԱԼԵԹ, իսկ 14-րդ դարից սկսած երկրամասի հոգևոր կենտրոնն էր ԳԱՆՁԱՍԱՐԸ: Այդ պատճառով էլ անվանվում էր ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ: Այն գոյություն է ունեցել մինչև 1836թ., այնուհետև ռուսական իշխանությունների միջամտությամբ բաժանվել է 3 թեմերի՝ Արցախի, Գանձակի և Շամախու, որոնք, ինչպես միշտ, ենթարկվում էին Էջմիածնի հայոց կաթողիկոսությանը:

«Հայ եկեղեցին Արցախ-Ղարաբաղում դադարել է գոյություն ունենալ 1932թ.: Այդ ժամանակ մարզում դեռ գործում էին 112 եկեղեցի և 18 վանք, որոնցում ծառայում էին 276 վանական: Ահա արդեն 60 տարի է, որ Արցախում չի գործում և ոչ մի եկեղեցի: Միայն շնորհիվ ղարաբաղյան հուժկու շարժման, հնարավոր եղավ՝ Արցախում նորից բացելու եկեղեցիների և վանքերի դռները: Հայ եկեղեցուն են վերադարձվել ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆՔԸ, ՀԱՂՐՈՒԹԻ, ՄԱՐՏԱԿԵՐՏԻ և ԱՍԿԵՐԱՆԻ շրջանների մի քանի եկեղեցիները»:[35]

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ առաքելական եկեղեցու առաքյալներից ովքե՞ր են Արցախում տարածել քրիստոնեական հավատը:
2. Ինչո՞ւ Գրիգոր Լուսավորչի և նրա թոռ Գրիգորիսի կոմից Արցախի Մյուս Հաբանդ գավառի Ամարաս տեղամասում կառուցվեց առաջին վանքը:
3. Ինչո՞ւ ենք ասում, որ «Ամարասից է սկսվել հայոց տաճարի հոգեկրթիչ և հայակրթիչ արշավը հայոց Արևելից կողմանց բոլոր գավառներում: Այստեղ ի՞նչն է հաշվի առնվում:
4. Ե՞րբ է դադարել գոյություն ունենալ հայոց Արցախ-Ղարաբաղի հայ եկեղեցին:

## ԱՐՑԱԽՑԻՔ ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՈՒՄ

***(«Հայոց պատմության դասագիրք», V դաս., Երևան, 2000թ. էջ 103)***
***Թեմա 14՝ «Ազատագրական պայքարը V դարում»***

Արցախցիների հերոսական անցյալի ակունքները մենք տեսնում ենք նույնիսկ Ավարայրի ճակատամարտում, որին զինվորագրված են եղել արցախցի շատ խիզախներ: «Սակայն պատմագիտության մեջ թյուր մտայնություն կա, թե Ավարայրի ճակատամարտին արցախահայությունը չի մասնակցել: Բայց մեզ հասած սկզբնաղբյուրները և, հատկապես, Եղիշե պատմիչի տեղեկությունները, քննությունը իրավացիորեն պնդում են, որ այդ ճակատամարտին մասնակցել են նաև արցախցիները»:[36]

Ինչպես հայտնի է Ավարայրի ճակատամարտին մասնակցել է 66 հազար հեծյալ և հետևակ զինվորներ, որոնց կազմում և Արցախի Բակ զորավարի գունդը:

«Արցախի քաջորդիները Բակ Առանշահիկ իշխանի գլխավորությամբ Վարդան զորավարի թև ու թիկունք դարձած մարտնչեցին իրենց նվիրական արյունը հեղելով ազատության դաշտում»:[37] Տեղեկություններ կան այն մասին, որ Արցախի հայոց գունդը Բակ զորավարի գլխավորությամբ, բազմաթիվ փախստականներով, ամրացել են Անգղ բերդում: Այստեղ էր նաև Հովսեփ կաթողիկոսը և մյուս քահանաները: Մուշկան Նիսալավուրտի պարսկական բանակը, Վասակ մարզպանի գնդի հետ միասին շրջա-

պատում է բերդը, գրոհում, բայց անզոր են գտնվում վերցնել այն: Թշնամին դիմում է նենգության, Վասակ Մարզպանը 2-3 անգամ երդվում է ավետարանով, փորձում է հավատացնել պաշարվածներին, որ եթե նրանք անձնատուր լինեն, ապա ոչ-ոքի նկատմամբ բռնություն չի գործադրի: Զորականների հիմնական մասը չի հավատում չարամիտ Վասակին:

«Հայոց քաջ զորավարներից մեկը Բակի անունով... Բարձրանալով պարսպի վրա, սկսեց նախատել անօրենին և հիշեցնում էր պարսից զորագլխի առաջ այն բոլոր չարիքները, որ նա հասցրել է հայոց աշխարհին: Բակ զորավարը նույն գիշերին 700 հոգով ճեղքում է պաշարման շղթան և հեռանում Արցախի անտառները, բերդում մնացածները՝ 213 զինվոր պարենի պակասության պատճառով գերի են հանձնվում: Անձնատուր եղածներին անմիջապես սպանեցին»:[38]

Բակի փրկված զորքի ճակատագիրն էլ այսպես է դասավորվում. ըստ պատմիչներ Եղիշեի և Ղազար Փարպեցու՝ արցախյան զորագունդը մասնակցում էր Վարդան Մամիկոնյանի զորքերի կազմում Ավարայրի ճակատամարտին՝ անտեսելով Սյունյաց հզոր իշխան Վասակի իր կողմն անցնելու հորդորները: Ճակատամարտից հետո արցախցիները Վայոց Ձորով վերադարձի ճամփա են բռնում, սակայն Մուշկան Նիսալավուրտի ուղարկած մեծաքանակ բանակը հետապնդում է նրան և շրջապատում ներկայիս Եղեգնաձոր քաղաքի տարածքում: Այստեղ անհավասար ճակատամարտ է տեղի ունենում և արցախցիները չկամենալով հանձնվել թշնամուն՝ զարկվում են: Լսելով այդ գործը՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գյուտը գալիս է ճակատամարտի վայրը և փառքով արցախցիների դիերը ամփոփում է եղբայրական գերեզմանում, որն մինչև այժմ էլ պահպանվում է Եղեգնաձոր քաղաքին հարող բլրի վրա:

Այնուհետև, ինչպես ասում են Եղիշեն և Ղ. Փարպեցին, հայերը շարունակում են պայքար մղել Հազկերտի դեմ, և ամենակատաղի դիմադրությունը ցուցաբերում է Արցախը, ուր պարսիկները այդպես էլ չեն կարողանում հաստատել իրենց գերիշխանությունը և ետ են վերադառնում հասցնելով ճանապարհին ավերել Ամարասի վանքը: Արցախցիների քաջագործությունների առթիվ խոսք է ասել նաև Ղևոնդ Ալիշանը:

«Վարդանանց օրերում,- գրել է Ղ.Ալիշանը,- փախստականներից շատերի համար ապահով եղան նրանց լեռները, որտեղից խաբեությամբ իջեցնելով Վասակը նրանց տալիս էր պարսիկների ձեռքը, բայց կային և այնպիսիները, որոնք սուրբ զորավարի նահատակությունից հետո «տիրեցին Արցախի բազում ամրոցների» և դիմադրում էին պարսիկներին»:[39]

Իսկ մեկ ուրիշն էլ այդ անցքերի առթիվ այսպես է գրել.

«Ավարայրից Արցախի անտառները նահանջող սյունեցի և արցախցի հայրենասեր ռազմիկները Անգեղաձորում, Ուտիքում, Արտաբոյնքում, Ձաղացքարում լուրջ կորուստներ են կրում պարսից հետապնդող զորքերից: Այս վայրերում էլ ի պատիվ նահատակվածների, սյունեցիները կառուցում են վկայարաններ»:[40]

Գիտենք, որ հանձին Ավարայրի ճակատամարտի, հայերը թեպետ չհաղթեցին (չհաղթեցին, նաև պարսիկները), բայց «չջախջախվեցին, պահպանեցին իրենց մարտական ոգին և լի էին պայքարը շարունակելու վճռականությամբ»:[41]

Չէ՞ որ արցախահայությունը բացի Ավարայրից իր մասնակցությունն էր բերել 5-րդ դարի հակապարսկական ապստամբություններին: Դրա ապացույցն այն է, որ Հազկերտ II-ը ինչպես Հայաստանի շատ մարզերից, այնպես էլ Արցախից հարկադրված իր զորքերը դուրս բերեց հոշոտված վիճակում և մեկուսացված: Որ Հազկերտ II-ին ոչնչով չօգնեց Վաչե թագավորին Տիգբոնում, Վարդանի հետ միասին, պատանդ պահելը, ինչպես և Վասակի 2 տղաներին, Վրաց Վազգենին, Գուգարաց Աշուշա Բդեշխին:

Որ Ծավդեքի (Արցախի), Ուտիքի և միաժամանակ Քուռի ձախափնյա որոշ տարածքների տեր Վաչեն, որ Հազկերտի քրոջ փեսան էր, կեղծ ուրացությամբ վերադարձավ հայրենիք և կազմակերպեց դիմադրությունը պարսից մոգերի նկատմամբ:

Վարդանանց պատերազմը հայոց պատմության հերոսական էջերից է: Հայոց եկեղեցին տրբացրել է Ավարայրում զոհված մարտիկներին և մինչև օրս էլ ամեն տարի նշում է նրանց հիշատակը:

«Ավարայրի ճակատամարտի առթիվ «Վարդանանց տոնը» տոնվել է նաև Գանձակում և Արցախի մյուս գյուղերում»:[42]

Աշխարհի բոլոր անկյուններում... Ավարայրի նահատակների (1036) անունները հավերժացնող բազմաթիվ սրբավայրեր է կառուցվել հայոց աշխարհի տարբեր վայրերում, այդ թվում նաև Արցախում: Պատմաբան Վահրամ Բալայանը այդ հիշատակի մեջ է ներառում Ավարայրի բոցաշունչ ոգու՝ Ղևոնդ Երեցի հիշատակը:

«Արցախի հայությունը սրբությամբ է պահպանել Ավարայրի բոցաշունչ ոգու՝ Ղ.Երեցի հիշատակը: Վարանդայի Ավետարանոց, Սարգսաշեն, Վերին Թաղավարդ և Մոշխմհատ գյուղերի կենտրոնում, բարձր սարի գագաթին վեր է խոյանում սուրբ Ղևոնդա անապատը կամ Ղևոնդիկ (Իմա Ղոնդեզ) վանքը: Եկեղեցում պահպանվում է Ղևոնդի պատկերը: Այս բնակավայրերի տարեց մարդիկ ասել են Սարգիս Եպիսկոպոս Ձալալյանին, թե Սբ. Ղ. Երեցի և մյուս նահատակ հայերի նշխարները բերել ամփոփել են այդտեղ ու կառուցել եկեղեցի: Եկեղեցում մի շարք մասունքների հետ պահպանվում է Ղևոնդաց մասունքները մի արծաթե միջակ խաչում»:[43] Ազգագրագետ Երվանդ Լալայանը իր գրքում քաղվածքներ է բերում եպիսկոպոս Սարգիս Ձալալայանի լսած ու գրի առած այն ավանդույթը, ըստ որի «Սուրբ Ղևոնդ Երեցի ազգականները Վարանդայում պտտվելով, նրա նշխարներից գտել են, բերել ամփոփել այդտեղ և կառուցել եկեղեցի»:

Վ. Բալայանի վկայությամբ՝ Հադրութի շրջանի Ամուտակ (այժմ Թեզխարաբ) գյուղի եկեղեցին կոչվում է Վարդան Զորավարի անունով: Այդ եկեղեցում, իբրև սրբություն, պահվում է սևագույն քար, որն իբրև թե ներկված է Սբ. Վարդանի արյամբ: «Սուրբ Վարդան» եկեղեցի կա նաև Տողի (Հադրութի շրջան) գերեզմանատան հյուսիսային կողմում Յուսնանց անապատ կոչված տեղում, որը թաղածածք է, փոքր, 17-րդ դարի կառույց:

Վարդան զորավարի անունով մեկ ուրիշ մատուռի ավերակներ գտնվում է Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղում: Սարգիս Ձալալյանը գրել է.

«Մուշկապատցիք ունեն Ձքարաշեն եկեղեցի, առ որով է մատուռն սուրբ Վարդան Նահատակի, ուր հաճախ են ուխտավորք բազումի»:[44]

Սուրբ Վարդանի եկեղեցի կա նաև Մարտունու շրջանի Շեխեր գյուղում, բայց ստուգաբանված չէ, թե ով է այդ Վարդանը, որի անունով էլ կոչվում է եկեղեցին:

Օգտագործելով մեր արցախցի նոր ժամանակի պատմաբաններից Բագրատ Ուլուբաբյանի, Հայկ Խաչատրյանի և մյուսների հիշատակություններն այն մասին, թե Զորավար Վարդանի սաղավարտը արցախցի իր ընկերները ռազմի դաշտում գտել ու բերել են Արցախ, ուսուցիչը դրանով իսկ փոքրիկ 5-րդ դասարանցիների աչքում բարձրացնում է արցախցի զինվորների դերը Ավարայրի ճակատամարտում՝ ընդհանրապես և սաղավարտի փրկված լինելու կարևորությունը հայերի համար՝ մասնավորապես: Ի դեպ, ոմանք էլ գտնում են, որ ոչ թե Վարդան զորավարի սաղավարտն են բերել Արցախ, այլ նրա մարմինը ու թաղել այստեղ: Դա իրողություն չպետք է համարել:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Արցախցի քաջորդիները ո՞ւմ գլխավորությամբ են մասնակցել Ավարայրի ճակատամարտին: Պատմիչներից ովքե՞ր են վկայում այդ մասին:

2. Հայ իշխաններից ո՞ւմ հորդորները չլսեցին արցախցիները և չանցան նրա կողմը՝ Վարդան զորավարի դեմ:

3. Ավարայրի զոհերի հիշատակը Արցախում ինչպե՞ս և ի՞նչ ձևերով հարգեցին ու նշեցին:

4. Բացի Ավարայրից արցախցիները Հայաստանում տեղի ունեցած էլ ո՞ր ապստամբություններին մասնակցեցին:



# ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐՑԱԽՈՒՄ

***(VI դասարան «Հայոց պատմություն», թեմա 1, «Հայաստանը 6-7դդ.»,«Արաբները»)***

Ազատագրական պայքարը եղել է հայ ժողովրդի և նրա օրգանական մասը կազմող արցախցու պատմության մշտական ուղեկիցը: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ հայոց գեղարվեստական գրականությունը, հոգևոր և նյութական բովանդակ մշակույթը լեցուն են ազատագրական պայքարն արտացոլող գործերով:

Այսօր Արցախում տեղի ունեցող խիզախների ազատամարտը հայ ժողովրդի ազատագրական մաքառումների տրամաբանական շարունակությունն է, նրա դարավոր պայքարի ամբողջական շղթայի օղակներից մեկը: Արցախցիների ազատագրական պայքարի նշաձողը Հյուսիսային Կովկասից՝ Ալանաց դռնով և Ճորա պահակով Այսրկովկաս թափանցած հոների կամ խազարների դեմ ելած պայքարն էր: Դա 7-րդ դարի սկզբներին էր, որը զուգակցված էր նաև պարսկա-բյուզանդական ավերիչ արշավանքներով: 602-622թթ. պարսկա-բյուզանդական փոփոխական կռիվների ժամանակ բյուզանդական զորքը հասավ Պարտավ, ամրացան Տրտու գետի մոտ՝ Գյուտականում:[45] Բայց Պարսկաստանի Շահ-Վարազ զորավարը Շարուր-Սյունիք-Գարդման-Սոդք գծով հասնում է Ուտիքի Տիգրանակերտ: Մյուս զորավար Շահենը իր զորքով հասնում է Խաչենագետ-Կարկառ գետի միջև գտնվող Արցախի Տիգրանակերտ ավանը: Նման պայմաններում Բյուզանդիայի կայսր Հերակլը 625թ. մտնում է Արցախի Բերդաձոր և անցնում Սյունիք-Նախիջևան: Բայց հետո հեռանում է տուն:

**Խազարների ավերիչ արշավանքի նկարագիրը՝** աշակերտներին, պետք է գտնվի ուսուցչի ուշադրության կենտրոնում: Այդ նկարագիրը տրված է պատմիչ Մովսես Կաղանկատվացու կողմից, որը բովանդակում է այսպես.

«Մարդիկ ստիպված էին ուտել ինչ-որ պատահի՝ սատկած անասունների միս, ծառերի ճյուղեր, հին կաշի, ծխաթակ կաշեպարկեր, կոշիկների հին կապիչներ, իսկ ով գտներ պտուղ ու կորիզ, կաղար և կուտեր, նույնիսկ մեռածների միսն էին ուտում: Հիվանդները երկու ամիս անգգա ընկնում էին, սևանում, կորցնում մարդկային տեսքն ու կերպարանքը: Սակայն կատարվեց և դրանից վատթարը. զարնան առաջին կանաչի հետ կենդանի մնացածները դաշտ էին դուրս գալիս՝ խոտով սնվելու: Եվ դրանից հետո էլ բազմապատկվում էր մահացողների թիվը: Աշխարհն ասես համատարած գերեզմանոց էր՝ անթաղ մեռելներով»:[46]

Փորձառու ուսուցիչը դա կարող է զուգահեռ անցկացնի միջնադարյան Եվրոպայում մոլեգնած տոմի և համաճարակների հետ, երբ նույնիսկ մայ-

ը չտիրապետելով իր մայրական զգացմունքներին՝ ուտում էր իր ծծկեր երեխային: Եվ որ հենց դա էլ Խաչակրաց արշավանքների պատճառներից մեկը դարձավ ու ծեռնարկվեց «Գրոհ դեպի Արևելք» արշավը: Պետք է գնահատական տրվի Հերակլի (Բյուզանդիայի կայսր) քաղաքականության էությանը հայ քրիստոնյաների նկատմամբ, որը միանալով խազարների (իմա-հոների) հետ իբր ընդդեմ պարսիկների, բայց նրանց միջոցով ավերեց Տփղիսը, հետո Շաթի զորավարի գլխավորությամբ ավերում արևելյան գավառները:

Աղվանցիները այս բազում թշնամիների դեմ կռվել չէին կարող, ուստի կիրառեցին տակտիկական քայլեր: Երկիրը ավերումից փրկեց երկու հանգամանք. **առաջինը**, որ Աղվանից աշխարհի կաթողիկոս Վիրոն, որ նոր էր վերադարձել 25-ամյա աքսորից (Պարսկաստանից) կաշառեց Շաթի զորավարին և փրկեց երկիրը ավերումից:[47]

**Երկրորդը**, որ խազարներ-հոներին էլ հայերը կաշառեցին ու սիրաշահեցին՝ նրանց մոտ տարածելով քրիստոնեական կրոնը: Արցախի վրա կախված էր մեկ ուրիշ թշնամու՝ սկյութների հաճախակի հարձակումների վտանգը: Արցախի վրա սկյութների հարձակման ժամանակ հալածված հայ ժողովրդի մի մասը Կուրի աջ մասից անցան ձախ մաս ու այնտեղ ապրեցին մինչև վերջերս՝ արցախյան շարժումը (Շաքիի, Վարդաշենի, Գանձակի, որին Շահաշեն էին ասում):

Ի հավելումն վերն ասածի, թե հայ առանձին երևելիներ, ինչպես ասենք կաթողիկոս Վիրոն, որ փրկել է իր ժողովրդին թշնամուց, համանման մի բան էլ կատարել է Պարտավի քահանա Զաքարիան, որը 610 թվականին Պարտավի հայ բնակիչներին և հրեաներին փրկեց Հերակլի կոտորածից: Նկատենք, որ Պարտավը նոր էր դարձել Աղվանքի հայրապետական աթոռատեղ, տեղափոխվելով այն Չոլ քաղաքից՝ հոների և մասքութների հարձակումներից հեռու մնալու համար: Բայց, եթե հոների և մասքութների, բյուզանդացիների և պարսիկների ու մյուս ավարառուների հարձակումների ժամանակ արցախցիները հարկադրված էին խուսանավելու, խաղաղ բանակցությունների ու սիրաշահումների ճանապարհով հարցերը լուծելու և մասամբ փրկվելու, սակայն արաբական ասպատակությունների դեմ Արցախը կռվեց ողջ ուժով և հաղթեց թշնամուն:

Ինչպես Հայաստանի արևմտյան մասերում, այնպես էլ արևելյան մասերում, որի մեջ մտնում է նաև Արցախը, արաբների հարկերը հյուծում էր բնակչությանը: Հենց այդ հարկերը թոթափելու համար 768թ. հայերը Պարտավում մի եկեղեցական ժողով են հրավիրում ընդդեմ նրանց: Ինչպես վկայում է արաբ պատմիչ Զահիշիրարին, այդ հարկերը ահռելի էին: Ըստ նրա պատմածի Արմինան խալիֆայությանը հարկեր էր տալիս 13 միլիոն դիրհեմ, 20 հազար գորգ, 580 հազար կտոր գործվածքեղեն, հարյուր հազար լիտր աղած ձուկ (մեկ լիտրը 3.5կգ էր), նույնքան տարեխ, 2000 ջորի,



300 բազե: Հակառաբական պայքարը 9-րդ դարում գլխավորում էր Արցախում Սահլ Սմբատյան Առանշահիկը: 821թ. արաբները Պարտավից մտան Ամարաս և գերեվարելով 1000 հոգի, մտան Շիկաքար բերդը: Մովսես Կաղանկատվացին գրում է.

«Այն ժամանակ քաջ ու շքեղատեսք Սահլ Սմբատյան Առանշահիկ իշխանը և իր քաջազոր եղբայրները իրենց զորքով լուսադեմին վրա տվին, նրանց բոլորին միասին, դիաթավալ արին, ցիրուցան դարձրին, ինչպես առյուծի ժանիքներից, գերիներին խլեցին»:[48]

Նա Մուղանքում էլ ջախջախեց արաբական 12 հազարանոց զորքը: Ժամանակագիրը վկայում է .

«Այստեղ էլ Սահլ Սմբատյանը, որ Զարմիհրական արքունի տոհմից էր, իրենց գործակից դարձնելով մեծ նահատակ Գեորգիոսին, թշնամիների վրա խոյացավ որպես արծիվը տկար թռչունների վրա, և դաշտում այս ու այնտեղ կոտորելով, մնացորդներին փախուստի մատնեց»:[49] Երբեմն հարց է առաջանում, իսկ ովքե՞ր են առաջ ազատագրվել արաբներից, Հայաստանի արևմո՞ւտքը, թե՞ արևելքը (այսինքն՝ Սյունիքը, Ուտիքը, Արցախը): Ըստ պատմաբան Վահրամ Բալայանի, իհարկե, արևելքը՝ «Սյունիքի, Ուտիքի և Արցախի նախարարական տները դարձել էին իրենց երկրամասի լիիրավ տերերը»:[50]

Բուղա Շարաբիի պարտությունը Կախեթիայում, նրա մտնելը Պարտավ, հետո Ուտիք-Արցախ, մեծ ավերածություններ առաջացրեց: «Նա գերեց Գարդմանի իշխան Կտրիճին, Խաչենի Ատրներսեհին իր հոր՝ Սահլ Սմբատյանի հետ, Լեռնային Ուտիքի Սևորդիների Ստեփանոս Կուն իշխանին»,[51] բայց «Բուղայի թափը կոտրվեց Դիզակում»:[52]

Դիզակի Ապու-Մուսե իշխանը հենվելով իր ժողովրդի և զորականների վրա, վճռեց դիմադրություն ցույց տալ Բուղային: Եվ լեռնային Քթիշ (Գտիչ)[53] ամրոցում հավաքված զորքը և շրջակա գյուղերի ժողովուրդը եռանդուն պատրաստություն է տեսնում: Բուղան պահանջում է, որ հայ իշխանները հնազանդվեն: Եսայի Ապու-Մուսեն նրան պատասխանում է այս նամակով.

«Աշխարհակալների սովորությունն է արքունի հոգածությամբ գնալ երկիրը, իբրև հնազանդների մոտ, վերցնել, թեթևացնել տառապյալների նեղությունները, իբրև խնամարկուներ, և ոչ թե ավազակաբար ավերել, սրածելով և գերավարությամբ ավերակ դարձնել երկիրը: Եվ եթե դու արքունիքից եկել էիր խաղաղությունը պահպանելու, շենություն պիտի պարգևեիր սրանց և ոչ թե ավերանք ու խառնակություն: Եվ այդ թող հայտնի լինի, որ ինչքան բավականանա իմ զորությունը և քանի դեռ կենդանի եմ կընդդիմակայեմ տեր աստծո ուժով ու զորությամբ և քեզ տեսնելու եմ ոչ թե սիրով ու խաղաղությամբ, այլ զենքով, աղեղով ու սրով, քաջ տղամարդկանցով և ընտիր երիվարներով: Եվ եթե դու ցանկանում ես ապրեցնել քեզ ու քո զորքը, արի ել այստեղից ու դուրս գնա իմ երկրի սահմաններից:

Ապա թե ջանաս զրկվել այս կյանքից՝ քո զայրույթի, կատաղության պատճառով և ոսկորներդ ցրես անապատում ու դառնաս երկրի գազանների, երկնքի թռչունների կերակուր, քո կամքը թող լինի, ես անպարտ եմ քո արյան համար, մանավանդ, որ մեծ բարեպաշտություն եմ համարում սպանել աստծո թշնամիներին, ինչպես Մովսեսն Ամաղեկին, Հեսուն քանանացիներին, Սամուելն Ագագին և Դավիթը Գողիաթին, նաև ինչպես իսրայելցիներն սպանեցին այլազգիներին: Եվ աստված սիրեց նրանց: Նույն կերպ կանեմ քեզ և քո զորքի հետ: Արդեն չեմ կամենում երկար խոսել քեզ հետ, ինչպես ասացի, հեռանաս ինձանից, խաղաղություն կլինի, իսկ եթե ոչ՝ պատերազմ, կռիվ ու ճակատամարտ: Դու կդառնաս թիրախ, իսկ իմ աղեղը՝ խոցոտող, դու՝ ախոյան, իմ զինվորները՝ հաղթանակող, դու՝ ոսոխ, իսկ իմ զորքը՝ քեզ դատապարտող, քո պատերազմը և մեր հաղթությունը, քո մարմինը և իմ նիզակը, քո պարանոցը և իմ սուրը, քո ստացվածքը՝ մենք նրա ժառանգորդ, քո ավարը՝ մենք ավարառուներ, դու ավազակ, մենք՝ կողոպտիչներ, դու՝ եղեգն, մենք՝ դյուրավառ կրակ, դու՝ հարդ, իսկ մենք դյուրությամբ փչող քամի, դու ծաղիկ, իսկ մենք թորշոմեցնող խորշակ, դու պարզալից հանդ, մենք ապականող կարկուտ, դու շինվածք առանց հիմա՝ իսկ ես հիմնիվեր տապալող հեղեղ, դու լեշ, իմ զորքը հոշոտող գազան, որ պատառոտում է քո սրտի առագաստը, դու խաղալիք, իսկ մենք մանուկներ, որ բռնելով քո զորությունը, խաղում, կատակում ենք քեզ հետ և քո այդ ողջ հպարտության ու անբարեհաճության հետ, դու վայրի երե, մենք՝ որսորդներ, դու թռչուն, իսկ մենք բարձրությունից ցած ենք իջեցնում և մղում որոգայթի մեջ, դու ծովի վիշապ, մենք կարթ, քո՝ քիմքից վեր ենք ձգում քեզ անդունդների խորքից, դու իբրև եղջերու առանց եղջյուրների, մենք արծիվներ քո վերևում, քո աչքերը կուրացնողներ, որ քո լեշը գցում ենք մեր ծագերին և խորշերում բնակվող աղվեսներին: Եվ մինչև որ քեզ վրա չվերցնես այն, ինչ խոսեցի քո պատգամավորների հետ ու ավելի ջանաս վտանգել մեզ՝ դու կընդունես վտանգավորը»:[54]

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. 7-րդ դարի սկզբներին Ալանաց դռով և Ճորա Պահակով հյուսիսային Կովկասից դեպի Արցախ ո՞ր թշնամիները ներխուժեցին:
2. Արցախի Հարավ-Արևմուտքից և Հյուսիս-Արևելքից զավթիչ ի՞նչ պետություններ հալածեցին Արցախին:
3. Պատմիչներից ո՞վ է նկարագրել Արցախում խազարների (հոների) ավերիչ արշավանքի մասին և ինչպե՞ս:
4. Եսայի Աբու-Մուսե իշխանը ինչպե՞ս է պատասխանում արաբ Բուղայի պահանջներին (մեջ բերել նամակը):



# ԱՐՑԱԽԸ ՍԵԼՋՈՒԿ ԹՈՒՐՔԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆՈՒՄ

*(VI դ., ՀԺՊ դասագիրք, Երևան, Լույս, 1998թ. գլ. 6, էջ 44-46)*

Սելջուկյան արշավանքը ուտիք-արցախյան նահանգների համար ողբերգությունների և դառնությունների մի ժամանակահատված էր, որ կազմում էր Տուղրիլ Բեկ սուլթանի (1025-1068թթ.), նրան շարունակած նոր սուլթան Ալփասլանի (1068-1072թթ.) և վերջամասը կազմող Մելիք շահի (1072-1092թթ.) արշավանքների մի հատվածը: Ի տարբերություն Տուղրիլի և Ալփասլանի, Մելիք շահը ինչ-որ չափով բարյացակամ էր վերաբերվել Արցախի և Սյունիքի ժողովուրդների նկատմամբ: Դա, իհարկե, չի բացատրվում նրա փափկասրտությամբ, այլ նրանով, որ նա ցանկանում էր նվաճված ժողովուրդների աշխատանքով լցնել կայսրության դատարկ գանձարանը: Հենց այդ հնարավորությունից էլ օգտվեցին Խաչենի իշխանությունները: Բայց Խաչենի իշխանության կյանքը Մելիք Շահի մահից հետո խիստ փոխվեց, որովհետև Սյունիքն ու Արցախը, ինչպես և Դվինն ու Անին հաճախակի ենթարկվում էին սելջուկների նոր ձևավորված էյտկուզյանների իշխանության հարձակումներին: Այս ամենին զումարվեց և բնության տարերքը՝ երկրաշարժը, որ պատճառեց 1139թ. սեպտեմբերի 30-ին:

«Երկրաշարժից բազում ավերածություններ են եղել Փառիտոսի և Խաչենի բազմաթիվ վայրերում, դաշտերում, լեռներում: Ընդորում Գանձակ մայրաքաղաքն առհասարակ անդունդների մեջ է խորտակվել, խորասույզ անելով իր բնակիչներին, քանի որ չորս կողմերից ամեն ինչ առել էր իր ծոցը: Եվ լեռնային մասում շատ դղյակներ ու գյուղեր տապալվեցին, վանքերի ու եկեղեցիների հետ միասին, որոնք էլ փլվել էին իրենց բնակիչների գլխներին»:[55]

Իսկ Կիրակոս Գանձակեցին էլ այսպես է գրել այդ երկրաշարժի առումով.

«Երկրաշարժից փլվեց Ալիարակ լեռը և փակեց իր միջով անցնող ձորակը և գոյացավ ծովակ»:[56] (Հավանական է խոսքը այժմյան Գոյ-գոլի մասին է):

Բնական այս աղետին հաջորդեց 1147թ. Գանձակի ամիրայի ասպատակությունը Թարթառի հովտի վրա, իսկ 1143թ. պարսկաստանցի Չոլի ամիրան գրավել էր Խաչենի հովիտը, քանդել ամրոցներն ու բերդերը, եկեղեցիներն ու վանքերը, կոտորել բնակչությանը: Չոլի 2-րդ արշավանքը նվաճում չբերեց նրան: Խաչենի իշխան Հասան Գեռաքարեցու փորձերը՝ համագործակցելու վրացիների հետ և փրկել թագավորությունը, չհաջողվեց և սելջուկների 1170թ. հարձակումը թագավորության վերջին հենակետի՝ Բաղաբերդի վրա, Խաչենի համար դարձավ կործանարար. «Բերդը

գրավվեց և թալանվեց, միայն 10 հազարի հասնող ձեռագրեր տարան, այսինքն՝ այնքան, որքան այսօր պահվում է Մատենադարանում»:[57]

Բայց Խաչենի իշխանությունը Սյունաց թագավորության նման չընկավ, այլ պահպանվեց, դժբախտաբար 3 մասի բաժանված՝ Խոխանաբերդը (Գանձասարի մոտ), Հաթերքի ամրոցը (Թարթառի ձախ ափին) և Հանդաբերդը (Ծար գավառում): Նման վիճակում էր Արցախը, երբ եկավ փրկարար ձեռքը՝ Հայ-վրացական զորքը Զաքարյանների գլխավորությամբ:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվել սելջուկ թուրքերի առավել կատաղի սուլթաններին:
2. Ինչո՞վ էր բացատրվում սուլթան Մելիք շահի բայրացկամ վերաբերմունքը Խաչենի իշխանության նկատմամբ:
3. Սելջուկներից բացի ուրիշ էլ ի՞նչ թշնամիների գիտեք, որոնք քարուքանդ էին անում Արցախը իրենց հաճախակի հարձակումներով:

## ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՓՐԿԱՐԱՐ ՁԵՌՔԸ ԱՐՑԱԽԻՆ

***(Հայոց պատմության դասագիրք, VI դ. , 1998թ. էջ 46-52, թեմա՝ «Ազատագրական պատերազմները Հայաստանում, Հայաստանը Զաքարյանների օրոք», «Մոնղոլները Հայաստանում» VI դ., թեմա 10, Երևան, 2004թ. էջ 83-90, IX դ., էջ 134-136, 2001թ. դասագիրք:)***

Դասանյութը խիստ առնչություն ունի թուրք-սելջուկների դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարը բնութագրող թեմայի հետ: Այստեղ ուսուցիչը, երբ նկարագրում է այդ շրջանը և նշում, թե «սելջուկ թուրքերի օրոք հալածված իշխանական տները վայելում էին Զաքարյանների հովանավորությունը», թե վերականգնվեցին նախկին իշխանական տների իրավունքները և հայտնի դարձան մի շարք նոր իշխանական տոհմեր, ինչպես օրինակ Սյունիքում ազդեցիկ դիրք էին ձեռք բերել Օրբելյանների, Վայոց Ձորում՝ Պռոշյանների, Արցախում՝ Հասան Ջալալյանների, Արագածոտնում՝ Վաչուտյանների իշխանական տները, պահանջ է առաջանում ներկայացնել Ջալալյաններին:[58]

Նախ, պետք է ասվի, որ մինչև Հասան-Ջալալ Դոլանի ասպարեզ գալը Ներքին Խաչենի տերն էր Վախթանգ-Տանգիկը, որի կինը վրաց-հայկական միացյալ զորքերի հրամանատար Սարգիս Զաքարյան մեծ իշխանի դուստր Խորիշահն է և սրանց որդին էլ՝ Հասան-Ջալալ Դոլանը: Եվ հենց այս «Հասանի անունով էլ նրանց շառավիղները սկսեցին հետագա դարերում կոչվել Հասան Ջալալյաններ»:[59]



Նշել, որ Վերին Խաչենի կամ Ծարի Հասան իշխանն էլ ամուսնական կապ ուներ Զաքարյանների հետ, քանզի նրա կին Դուփին Զաքարե և Իվանե Զաքարյանների մյուս քույրն էր: Ասվի, որ այս Դուփի հեղինակությունը ամուսնու մահից հետո այնքան է բարձրանում, որ նրա անունը ազգանվան է վերածվում՝ Դուփյան-Դուփյաններ, որոնց իշխանությունն այն ժամանակներում տարածված էր Սևանա լճի արևելյան և հարավային տարածքների վրա, որ նրանց մայրաքաղաքը Ծար գյուղաքաղաքն էր (ներկայիս Քարավաճառի շրջանի Ձառ գյուղի տեղում): Ասել է պետք, որ այդ իշխանական տները (Հասան Ջալալյանների, Վախտանգյանների, Դուփյանների) Արցախում ունեին իրենց իշխանությունները՝ Վերին Խաչեն կամ Ծար, Միջին Խաչենի (Հաթերքի Առանշահիկ ծագում ունեցող Վախթանգյանների և Ներքին Խաչեն): Այս իշխանություններից յուրաքանչյուրն էլ հայրենապահ ու մշակութային մեծ գործեր են կատարել, ինչպես երկիր ներխուժած թշնամիների դեմ վարած ազատագրական պատերազմներում, այնպես էլ եկեղեցիներ, վանքեր, խաչքարեր պատրաստելու առումով:

Այսպես. «Դուփը եռանդուն գործունեություն է ծավալում Վերին Խաչենի իշխանության ամրապնդման, հարևանների հաշվին իր տարածքների ամրապնդման, վանական համալիրների կառուցման ուղղությամբ... Հաթերքի Վախտանգյանների իշխան Հասանը 1142-1182թվականներին բազմաթիվ հաղթականներ տանելով թշնամիների նկատմամբ, խաղաղությամբ իշխում էր Հաթերքի, Հանդաբերդի, Խաչենաբերդի և Հավքախաղացի շրջակայքում»:[60]

Քանի որ մեր ժամանակակիցներին ավելի շատ է մոտ Հասան-Ջալալ-Դոլան, հարկ է, որ Ներքին Խաչենի այս տիրոջ անունը բացատրվի աշակերտներին, որպեսզի նրանք տարածված այս թրքական անունը այլ կերպ չհասկանան, քան այն, որ Ներքին Խաչենի տիրոջ այդ անունը արաբական ծագում ունի՝ «Հասան, նշանակում է գեղեցիկ, Ջալալ՝ փառք, մեծություն, իսկ Դոլան-Դավլա՝ հարստություն, պետություն»:[60] Նա երկիրը երկար ժամանակ պահեց-պահպանեց խաղաղությամբ, բայց վրա հասած թաթար-մոնղոլների հորդաները խախտեցին այդ խաղաղությունը:

Հենվելով հայոց պատմությունից աշակերտներին հայտնի այն փաստերի վրա, ուր խոսվում է թուրք սելջուկների, թաթար մոնղոլների, թուրք օսմանների և շահական Պարսկաստանի հարձակումների և նրանց դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարի մասին, արցախցի աշակերտը պետք է առավել խորը իմանա երկրամասի պատմության այդ էջը: Նա պետք է այդ թշնամիների վերաբերյալ իմանա հետևյալը.

Կուրի Հովիտը և նախալեռնային Արցախի տարածքը մտած սելջուկ թուրքերը և թաթար մոնղոլները ի տարբերություն պարսիկ նվաճողների, օսման թուրքերի, երկրի բնակչությանը սկզբում կրոնափոխ չէին անում և գրաված տերիտորիաները չէին վերաբնակեցնում, բացառությամբ նրան,

որ մոնղոլ-թաթարների ժամանակ որոշ թուրքմեններ (թուրքմեն ցեղեր) մնացին Կուրի ավազանում, որոնց Զաքարյանները վտարեցին: Բացառություն էր նաև այն, որ այդ մոնղոլ ու սելջուկ նվաճողները իրենց մահացած առաջնորդների համար մեհյաններ էին կառուցում նվաճած տերիտորիաներում: Սակայն 13-րդ դարի վերջին, երբ հեթանոս մոնղոլների վերնախավը մահմեդականություն էր ընդունել, քրիստոնյաների հալածանքները սովորական երևույթ դարձան: Ղազան խանի ժամանակ մոնղոլները պաշտոնապես ընդունեցին մահմեդականություն.

11-ից մինչև 14-րդ դարերի կեսերը Արցախ ներխուժած սելջուկների և մոնղոլների դեմ Արցախի մարդիկ «զենք էին կապում», այսինքն՝ մասսայական պայքարի էին ելնում երկիրը ազատելու համար: Գոյություն ունի մի ավանդական զրույց «այն մասին, որ թե ինչպես ամանորը մեկ օրով ուշ մտավ Արցախ» հենց այդ թշնամիների Արցախ ներխուժելու և նրանց դեմ արցախցիների պայքարելու պատճառով:

Ավանդական զրույցը մեջ բերող հեղինակները գրում են.[51]

«Ամեն նոր տարվա առաջին օրը Արցախի եկեղեցիների դողանջներին համահունչ պետք է աշխատեին նաև նրա 600 ջրաղացները: Բայց մի անգամ, նոր տարվա նախօրեին, թշնամին եկավ ու չոքեց արցախյան գետերի ակունքների մոտ (խոսքը մոնղոլ թաթարների մասին է), քարուքանդ արեց գետերի հունը, և շատ ջրաղացներ դադարեցին գործելուց: Հրաման եղավ չհնչեցնել Ամանորի զանգերը՝ մինչև թշնամին չվռնդվի հայրենի հողից, մինչև չզուլալվեն հայոց ջրերը: Եվ նոր տարվա 1-ին օրը արցախցիք գնացին, հաղթեցին ու քշեցին թշնամուն: Գետերը սկսեցին հոսել իրենց հունով: Եվ լսվեցին նաև արցախյան բոլոր ջրաղացների չախչախների չխկչխկոցները: Ահա այդ ժամանակ է, որ եկեղեցիների զանգերը հնչեցին հաջորդ օրը, և Ամանորը մի օրով ուշ մտավ Արցախ»:

Թեման կարելի է համեմատել բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանի «Խաչենաբերդ» բանաստեղծության այս տողերով (կրճատումներով).[52]

Չինգիս խանն ահեղ,
Աշխարհակործան,
Առած բանակն իր,
Հեղեղի նման
Գյուղեր, քաղաքներ
Ավերեց, անցավ
Եվ ուր ոտք դրեց
Մեռավ ամեն բան:
Անցավ խորշակն այդ
Լեռներ ու դաշտեր,
Եկավ դեմ առավ
Արցախի դռան,
Եվ Չինգիս խանը
Որ ահ չգիտեր,
Դարձավ մտախոհ,
Մռայլ ու լռին:
Անցել էր արդեն
Ուղիղ մի տարի
Եվ կուլ էր գնում
Ջորքն իր վիթխարի:
---



Նստած վրանում
Մռայլ ու ահեղ
Չինգիս խանը լուռ
Խոհեմ էր դատում
Եվ թույն էր կաթում
Նրա աչք-ունքից,
Եվ սիրտն էր տխուր,
Միթե իր բախտը
Շուռ եկավ այստեղ...
- Ո՛չ, ես դուրս կգամ
Անգամ դժոխքից,-
Որոտաց հանկարծ
Խանը մոլեգին
Ու ելավ ոտքի
- Ո՞վ է ուժ տալիս
Այս հայ քաջերին:
Որ կուռ են անգամ
Կուռ որձաքարից:
Ես բյուր թագեր եմ
Գլորել գահից:
---
Ապա մեծ խանը
Գուշակներ կանչեց,
Համհարզներ բազում
Իր հարց ու փորձով
Բոլորին տանջեց.
Հաղթության ելք էր
Չինգիս խանն ուզում:
Խոսեք՝ իմ մոգեր
Ինչո՞ւ հաղթության
Արևն իմ մարեց,
Ով մեզ խանգարեց:
- Օ, ներիր մեծ խան,
Լեռներում այս լուրթ
Ապրում է մի հին,
Մի կուռ ժողովուրդ:
Ավերել ենք մենք
Կեսը աշխարհի,
Գյուղեր, ավաններ
Ու բերդեր քանի,
Բայց կանգուն է դեռ
Բերդը Սմբատի:
---
Ավելի լավ է
Թողնենք ու գնանք,
Զուր են մեր թափած
Ամեն ճիգ ու ջանք:

Աշակերտներին կարդալ, հատկապես, Սմբատ իշխանի այս տողերը.

Կուզեք՝ հենց վաղը
Հանդիպենք մարտում
Եվ դու մեր թրի
Գինը իմացիր,
Մենք զինվոր հաղթող,
Դուք կռվում պարտվող,
Քո մարմինն թիրախ,
Մեր նետերը խոցող,
Քո զորքը մժեղ,
Մենք քանի ահեղ,
Քո զորքը արոտ
Մենք կարկուտ, որոտ:
Դուք աշխարհակալ
Մենք աշխարհագոր,
Մենք միշտ արարող
Դուք միշտ կործանող:
Ու կանգնեց այնտեղ
Կուռ վահաններով
Սմբատ իշխանի
Բանակը ահեղ.
Եվ նիզակները
Եվ նետերը սուր
Նվաճող ցեղի
Ասես թափվում են
Մոմերի նման:

Մեր աշակերտները այն էլ պետք է իմանան, որ թաթար-մոնղոլների դեմ ինչքան ճկուն ու խոհեմ գտնվեց Խաչենի իշխան Հասան Ջալալյանը: Նրա շնորհիվ Արցախը որոշ չափով զերծ մնաց ավերածություններից: Կիրակոս Գանձակեցի պատմիչը ներքին գոհունակությամբ է գրում Խաչենի իշխան Ջալալի մասին, որին ներկայացնում է որպես բարեպաշտ, աստվածասեր, հեզ ու հանգիստ, ողորմած ու աշխատասեր գործիչ: Նրան հա-

ջողվել է երկրի բնակիչներին ամրացնել Խաչեն գետի աջ ափին կառուցված Խոխանաբերդ ամրոցում և փրկել կոտորածից: Զալալ իշխանը իմաստաբար գոհացրեց մոնղոլների պահանջները: Նրան մեծարելով, մոնղոլները Խաչենը հանձնեցին իրեն և այն էլ մեծացնելով հանդերձ: Օգտվելով մոնղոլների հովանավորությունից Զալալ իշխանը խոհեմաբար կարգավորեց իր երկիրը: Հենց այդ ժամանակ նա կառուցեց հոյակապ Գանձասար վանքը (1216-1238թթ.): Այդ վանքի շնորհանդեսի մասին Կ.Գանձակեցին այս հիացմունքով է նկարագրել. «Երբ ավարտվեց բացման մեծահանդես տոն կատարեց եկեղեցին օրհնելու համար: Այնտեղ էր նաև Աղվանքի կաթողիկոս տեր Ներսեսը բազմաթիվ եպիսկոպոսներով, այլև մեծ վարդապետ Վանականը շատ ուսուցիչներով: Եկեղեցին օրհնեցին բազմաթիվ քահանաներով, որոնց թիվը հաշվում էին յոթ հարյուր: Եվ երբ եկեղեցին օծումով մկրտվեց, մեծ ճաշկերույթ սարքեց Զալալը, ինքն իր իսկ ձեռքով մատուցում էր նստածներին, և յուրաքանչյուրին նրա պատվի համապատասխան առատությամբ նվերներ տվեց ու ճամփու դրեց ամբոխին: Այս տեղի ունեցավ հայոց վեց հարյուր ութսունինը թվականին (1240թ.) Վարդավառի մեծ տոնի օրը»:

Հասան Դոլանի հայրենասիրության աստիճանը հասել էր նրան, որ նա անգամ մտածում էր Արցախից շատ հեռու գտնվող Կիլիկիայի հայկական թագավորությունը մոնղոլներից փրկելու մասին, որն արտահայտվեց նրա թագավոր Հեթում առաջինին Կարակորում՝ (1254թ.) Մանգու խանի մոտ ուղարկելու և նրանց միջև դաշինք կնքելու, մի բան, որ ինքն էլ էր կատարել Արցախը փրկելու առումով, երբ իր կին Մամքանի և միակ տղա Աթաբեկի հետ մեկնեց և 5 տարի ճանապարհ կտրելով հասավ նույն Մանգու խանի մոտ ու բարի խոստումներ՝ կորզելով նրանից, վերադարձավ տուն:

Սակայն Խաչենի և Մոնղոլիայի բարեկամությունը ընթանում էր վայրուվերումներով, քանի որ մոնղոլ զավթիչները մերթ, սաստկացնում են ճնշումը, և մերթ էլ նրբացնում ու խուսանավում, նայած թե ով է գլխավորում այդ արշավանքը, կամ թե ինչպես են հայերը մասնակցում նրանց արշավանքներին:

Եղել են դեպքեր, երբ ոչ այդ դաշինքը, ոչ Խաչենի իշխան Հասանի աղջիկ Ռուզուքանի ամուսնությունը Զարմաղանի որդի Բորա-նոյունի հետ և ոչ էլ մոնղոլներին հպատակություն հայտնած Արցախի իշխանների մասնակցությունը մոնղոլների արշավանքներին, չփրկեց Արցախը մոնղոլների ճնշումներից:

Փաստեր կան, որ «Կարինի գրավմանը մասնակցել էր նաև Հասան Զալալը, իսկ Տիգրանակերտի գրավման ժամանակ զոհվեց Վերին Խաչենի իշխան Գրիգորի որդի Սևադան»:[63]

Արցախում մոնղոլների դաժանությունները սաստկացան Բաչու զորավարի օրոք, որը սակայն առաջ բերեց խոր ատելություն նվաճողների դեմ:



Բայց այդ սկսված ապստամբությունները Բաչու զորավարի մեծաքանակ զորքով ճնշվեց և քարուքանդ արվեցին Խոխանաբերդ, Ղեզ, Ծիրանաքար ամրոցները: Հասան Զալալյանը նույնիսկ ավազանու առջև պատժի ենթարկվեց: «Միայն հայ իշխանը շատ ոսկի և արծաթ տալով հազիվ փրկվեց մահից»:[64] Մոնղոլների այդ կամայականությունների առաջն առնելու համար Հասան Դոլանը Բաթու խանի քրիստոնյա որդի Սարթուխի միջնորդությամբ Բաթու խանի մոտ գնալն էլ չօգնեց, քանի որ հարկահավաք Արղունը դրան քիչ նշանակություն տվեց:

Չպետք է կարծել, թե Արցախը չի դիմադրել մոնղոլ զավթիչներին: Հենց մոնղոլների առաջին հետախուզական արշավանքի ժամանակ (1222թ.) Արցախի հայերը Վահրամ Գագեցու ջոկատով, վրացիների հետ միասին, մասնակցում էին Կուրի ափին մոնղոլների հետ ունեցած ճակատամարտին:

Արցախցիք կռվեցին նաև Հյուսիսային Կովկասից Այսրկովկաս ներխուժած դփչաղների և Գանձակի ամիրայի զորքերի դեմ, որտեղ զոհվում են Խաչենի Խաղբակ իշխանի որդի Գրիգորը և թոռ Պապաքը (1123թ.):

Խորեզմի շահի որդի Զալալ ադ-դինի յոթնամյա արշավանքները (1125-31թթ.) չնայած «չանհանգստացրին» Արցախին, բայց հայկական շատ շրջաններ ավերվեցին:

Արցախը խիստ տուժեց մոնղոլների 2-րդ արշավանքից, որը ձեռնարկել էր Չինգիզ խանի կրտսեր որդի Ուգեդեյը դեպի Ռուսաստան և Այսրկովկաս: Այդ արշավանքների ժամանակ Ռուսաստանին »բաժին հասավ« Բաթու խանի հարձակումը, իսկ Այսրկովկասին՝ Չարմաղանինը: Կանխազգալով, որ ավերող թշնամուն անկարող են դիմադրել շատ հայ իշխաններ հպատակվում են Չարմաղանին: Բայց Արցախ հասած Զուղբուղայի զորքը մտավ Խաչեն ու գրավեց Հավքախաղաց բերդը և Սրախողող արեցին պաշտպաններին:

Ինչպես վկայում է Կ.Գանձակեցին «Արյունը առու դարձած ջրի պես գնում էր: Շատ ժամանակ անց չթաղված նահատակների ոսկորները քարե կույտերի տեսք ունեին»:[65] Չնայած Հասան Զալալը հնազանդվեց մոնղոլներին, բայց ժողովուրդը համառորեն դիմադրում էր (մինչև 1238թ.):

Մոնղոլների դեմ 1260-ական թվականներին բռնկված վրացական ապստամբությանը միացավ նաև Հասան Զալալը, որի ժամանակ էլ հենց նա շատ ղեկավարների հետ բռնվեց, բայց ազատվեց: Սակայն նա նորից բռնվեց ու տարվեց Ղազվին և Արղունի հրամանով հոդակոտոր անելով սպանվեց:

Մի սարսափելի արշավանք էր Լենկթեմուրի և Ջհան Շահի արշավանքները, որոնց ժամանակ ավերվում են գեղեցիկ Ուտիքն ու Արցախը:

Բայց պահպանվեցին հայկական իշխանությունները:

Իսկ, այ, ուրիշ էր օսմանցիների և պարսիկների պատերազմները, որոնք գրեթե ամայի են դարձնում Կուր գետի ավազանը:

Նրանցից Նադիր Շահը, որ մտել էր Հայաստան ու Վրաստան, այնտեղից քշում, Մուղանքի դաշտն է հասցնում 700 հազար գերիներ: Բայց բարեբախտաբար հայերը իրենց հավասարակշիռ ու քաղաքական մեծ փորձ ունեցող կաթողիկոս Աբրահամ Կրետացու խիզախությամբ հնարավոր է դառնում, որ հայ գերիների կեսը վերադարձնեն իրենց տները:

Այստեղ աշակերտները պետք է իմանան և արժանի գնահատական տան Ղարաբաղի մելիքների գործունեությանը, որոնցից, հատկապես Դիզակի մելիք Եգանի ծառայություններին, իհարկե, աչք չփակելով նաև որոշ մելիքների ազգակործան քաղաքականության հանդեպ:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր երկրում էին գտնվում Զաքարյանները և ի՞նչ դիրք էին զբաղեցնում:
2. Թվել իշխանական այն նոր տոհմերը, որոնք առաջացել են Զաքարյանների ազդեցությամբ՝ հայոց աշխարհում:
3. 11 և 12-րդ դարերում Արցախի իշխանական տները խաչենում ի՞նչ իշխանություններ էին ձևավորվել, թվել դրանք:
4. Զաքարյանները Արցախ ներխուժած ո՞ր թշնամիներին ջախջախեցին ու դուրս շպրտեցին:
5. Ինչո՞ւ սելջուկ թուրքերը և թաթար մոնղոլները ի տարբերություն պարսիկ և թուրք նվաճողների սկզբում կրոնափոխ չէին անում նվաճված ժողովուրդներին:

## ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻՆ ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ

***(թեմա «Հայաստանի ազատագրության հարցը և Իսրայել Օրին» («Հայոց պատմություն»), VII դ., Երևան, 2001, գլ. I, էջ 8-10)***

Հայ ժողովուրդը հայրենասեր իր առաջնեկ որդուն միշտ էլ իրավամբ համարել է Իսրայել Օրուն, որի սրտացավության մի մեծ բաժինն էլ կազմել է Ղարաբաղը: Լինելով Սյունիքի զավակ՝ Սյունիքի Մելիք Իսրայելի որդին՝ Յավրի տոհմական անունով (Օրի անունը նրա գերմանացի կնոջ հորջորջած անվանումն է, որը Յավրի ասել չկարողանալու համար, կոչել է նրան «յովրի, յովրի, Օրի», նրան տեսնում ենք Գանձասարում՝ Եսայի Հասան Ջալալյանի աթոռատեղին, նրա հետ Ռուսաստան մեկնելիս, որի նպատակը ռուս-ղարաբաղյան կապերի ստեղծումն էր, և որքան հնարավոր է ռուսական զորքերի արագ մուտքը Ղարաբաղ:

Հակառակ ժամանակակից որոշ պատմաբանների այն բյուր կարծիքի



(Ռաֆայել-Իշխանյան և այլոք), թե «Օրին մի աննշան անձնավորություն է եղել, մի արկածախնդիր, նույնիսկ չեղած մարդ», ասենք, որ նրա ջանքերով են ամրապնդվել հայ-վրացական (Արշիլի և այլոց հետ) կապերը, որոնք և հետագայում նպաստել են համատեղ ուժերով, ռուսների դաշնությամբ, Ղարաբաղն ազատագրել օտար բռնակալներից:

Հայաստանի և մասնավորապես Ղարաբաղի, որպես Ռուսաստանի հարավին ավելի մոտ տարածք, ազատագրելու գործում հանրահայտ են Ի.Օրու և նրա գործընկեր Մինաս Վարդապետի ծառայությունները: Ի դեպ նշենք, որ Մինաս Տիգրանյանը Արցախի Հակոբավանքից է, կոչումով արքեպիսկոպոս: Հենց Օրին և Մինասն են Պարսկաստանում Ռուսաստանի դեսպան Վոլինսկու, գեներալներ Ցիցիանովի, Գուդովիչի, վրաց թագավոր Վախտանգ 6-րդ-ի օժանդակությամբ ռուսական արքունիքի աչքի շոյանք դարձրել Ղարաբաղը: Իրավ է, որ ասել են, թե Մինաս վարդապետը հայի ականջն է ցարի արքունիքում:

Նկատենք, որ 7-րդ դասարանի «Հայոց պատմության» դասագրքի մի քանի սուղ մեկնաբանությունները բավական չեն ուսուցչի համար աշակերտների գիտակցությանը հասցնելու հայերի, այդ թվում և Ղարաբաղի հայերի ազատագրական ձգտումների ի կատար ածելը՝ սկզբում արևմտաեվրոպական երկրների, իսկ ապա ռուսական պետության միջոցով: Այլ աղբյուրներից քաղած նյութերի միջոցով հարստացնելով ուսուցչի գիտելիքների պաշարը, նշենք, որ արևմտաեվրոպական երկրների վրա նախկինում հայերի հույս դնելու պատճառն այն էր, որ Արևմտյան Եվրոպան և Հռոմի պապը ունեին այն ուժը, որը դեռևս չունեին ասիական արևելքի երկրները, այդ թվում և Ռուսաստանը: Սակայն դարեր շարունակ, որը սկսվել էր դեռևս 14-րդ դարից՝ Կիլիկյան թագավորների՝ արևմտաեվրոպական միապետներից օգնություն ստանալու ակնկալիքները չարդարացան:

Հիասթափված Հռոմի պապի և միապետների հետ շուրջ 3 դարյա անպտուղ բանակցություններից, հայ քաղաքական գործիչները արդեն հակվում են դեպի Ռուսաստան: Իսկ Ռուսաստանը այդժամ ունե՞ր այն ուժը, որով կարող էր սատար կանգնել Անդրկովկասի քրիստոնյաներին ընդհանրապես և հայ ժողովրդին՝ մասնավորապես: Այո՛, ուներ: 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին Ռուսաստան պետությունը մի միածույլ բազմազգ պետություն էր, որը Պյոտր 1-ին թագավորի և նրանից հետո Եկատերինա 2-րդի ժամանակներում վեր էր ածվել կայսրության, կանգնել իր երկրի հարավային և հյուսիսային թշնամիներին (շվեդների թուրքերի) դեմ-հանդիման, ծովերով «պատուհաններ» բացել դեպի Եվրոպա, ինչ-որ չափով հզորացել-տնտեսապես, շահել ռուս-շվեդական, ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմները: Եվ այդպիսի հզորացմանը զուգընթաց ռուսական կայսրությունը սկսեց հետաքրքրություն ցուցաբերել Այսր-

կովկասի նկատմամբ: Նրա ծավալապաշտական ծրագրի մեջ սկսեցին հայտնվել արշավանքները դեպի հարավ: Լինելով քրիստոնյա երկիր Ռուսաստանը շահագրգռվածություն է հանդես բերում Այսրկովկասի քրիստոնյա ժողովրդի նկատմամբ: Հաճախ է հարց առաջանում, թե ինչո՞ւ 17-րդ դարի 2-րդ կեսին հայ քաղաքական միտքը հակվում է դեպի Ռուսաստան և երես թեքում Արևմտյան Եվրոպայից: Մեր պատմաբաններից Վահրամ Բալայանը դա բացատրում է հետևյալ պատճառներով (իմա-իմ բերածին հավելելով).[86]

«1. Նախ և առաջ հայ գործիչները համոզվեցին, որ եվրոպական պետությունները լիովին հակված են դեպի Պարսկաստանն ու Թուրքիան:

2. 17-րդ դարի 2-րդ կեսին Ռուսաստանը դուրս եկավ միջազգային ասպարեզ:

3. Տվյալ ժամանակահատվածում Ռուսաստանը ընդարձակելով իր պետական սահմանները, մոտեցել էր Այսրկովկասին և ձգտում էր իր ազդեցությունը տարածելով այդ երկրների վրա՝ կայսրության համար ճանապարհ հարթել դեպի Հնդկաստան...

4. Այսրկովկասում Ռուսաստանին անհրաժեշտ էր քաղաքական մի ուժ, որի վրա հենվելով պիտի իրականացնի իր արևելյան քաղաքականությունը: Որպես այդպիսի ուժ Անդրկովկասում հանդես էին գալիս Վրաստանը, Սյունիքի և Արցախի մելիքները:

5. Չպիտի թերագնահատել նաև ցարական իշխանությունների, մանավանդ Պետրոս 1-ի հակաթուրքական տրամադրությունը...»

Նկատելի է, որ այդ ժամանակներում Հայաստանում և մասնավորապես Ղարաբաղում չկային քաղաքական այն ուժերը, որոնք կարող էին ծավալել հարաբերությունները Ռուսաստանի հետ և իրականացնել իրենց ազատագրական գործը: Այդ ուժերի փոխարեն գործում էին Արցախի մելիքները, «որոնց մոտ վառ էին մնացել հայկական պետության գաղափարները»:[87]

Լինելով այդ մելիքներից մեկի որդին, Իսրայել Օրին 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին 20 տարուց ավելին գտնվելով Հռոմի պապի, գերմանական իշխանի և ֆրանսիական թագավորի մոտ, համոզվեց, որ նրանց միջոցով չի կարող ազատագրության հայկական ծրագիրը ի կատար ածել, ուստի նա շեշտակի շրջադարձ կատարեց և ուղղություն վերցրեց դեպի Հյուսիսային Ռուսաստան: Նրա առաջին քայլը հանդիսացավ 1699թ. ապրիլի 29-ի Անգեղակոթի հայ մելիքների գաղտնի խորհրդակցությունը: Այդ խորհրդակցությունը հատուկ նամակ ձևակերպեց ուղղված Պետրոս 1-ին «խնդրանքով աջակցել հայերին ազատվելու անհավատների ծանր լծից»:[88]

Որ այդ փաստաթուղթը Արցախի մելիքների ձեռքի գործն էլ է, երևում է նրանից, որ «բոլոր թղթերի գրության տեղ է նշված Աղվանք գավառը, որը



նշանակում է Արցախ»:[89]

Իսրայել Օրին 1701թ. Մոսկվայում իշխան Գոլովինին զեկուցում է, որ Մեծ Հայքում կան հինգ նահանգապետներ, որոնք ռուսական զորքերի մոտենալու դեպքում 24 ժամից էլ պակաս ժամանակում կքշեն թշնամուն, իսկ 15 օրում կտիրեն ամբողջ երկրին: Որ Օրին մեծ վստահություն և լիազորություն է ունեցել մելիքների կողմից բանակցելու ռուս պաշտոնյաների հետ, երևում է նրա մոտ եղած այն թղթերից, որոնք մաքուր էին՝ չլրացված: Հետագայում Օրին այդ թղթերը օգտագործում է իր հայեցողությամբ՝ ի շահ Հայաստանի ազատագրության: Թե ինչու ռուսական կողմնորոշման գործում Ի. Օրին ավելի շատ է հենվում Ղարաբաղի մելիքների վրա, կարելի է դատել այն փաստից, որ ի ծնե Ղարաբաղի աշխարհիկ և հոգևոր տերերն իրենց երկրի ազատագրությունը կապել են ոչ թե Եվրոպայի, այլ Ռուսաստանի հետ: Ասենք, որ դեռ 1670-71 թվականներին Գանձասարի Պետրոս կաթողիկոսը հատուկ նամակ ուղարկելով խնդրել է ռուսական ցարին հայերին իր հովանու տակ վերցնելու:

Այդ երևում է նաև այն բանից, որ 1677թ. Հակոբ Զուղայեցու կողմից էջմիածնում հրավիրված դաշնաժողովին մասնակցել են Սյունաց և Արցախի մելիքների ներկայացուցիչները, կամ Զուղայեցին այդ հարցով ջերմ կապեր է ունեցել Գանձասարի կաթողիկոսի հետ:

Ռուս-արցախյան կապերի գործում մեծ էր նաև Պետրոս 1-ի բարյացակամ վերաբերմունքը, որ նա օգում պարզած չթողեց արցախցու խնդրող ձեռքը:

Նման հանգամանքներում Իսրայել Օրին մունետիկի դեր խաղաց և իր ռուսասեր քաղաքականությամբ նպաստեց այդ կապերի ամրապնդմանը: Դրա առհավատչյան Օրու ռուսական դեսպանության առաքելությունն էր դեպի Պարսկաստան և 1710թ. կաթողիկոս Եսայու հետ Ռուսաստան ուղեվորվելը: Բայց ավա՜ղ 1711թ. Օրու մահը, չբացահայտված հանգամանքներում, նույնիսկ չթուլացրեց այդ գործը: Արցախի մելիքները, Եսայի Հասան Զալալյանը և Մինաս Տիգրանյանը շարունակեցին սկսած գործը:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ծննդով որտեղացի էր Ի.Օրին և ինչո՞ւ էր սրտացավ վերաբերվում արցախցիների ազատագրության գործին:

2. Ո՞վ էր Ի. Օրու գործընկերը հայ-ռուսական կապերի ստեղծման ժամանակ:

3. Ինչո՞ւ Օրին իր գործունեության սկզբում հենվում էր արևմտաեվրոպական երկրների վրա:

4. Ինչո՞ւ 17-րդ դարի 2-րդ կեսին հայ քաղաքական միտքը հակվեց դեպի Ռուսաստան և երես թեքեց Արևմտյան Եվրոպայից:

5. Տալ ռուս-արցախյան կապերի գործում կայսր Պետրոս 1-ի դրական և բացասական գործունեության բնութագիրը:

# ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ 18-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

***(Հայոց պատմության դասագիրք, VII դասարան, Երևան 2000թ. գլ. 11 էջ 11-18)***

18-րդ դարի առաջին երկու տասնամյակներում Պարսկաստանում տիրած քաղաքական ու ռազմական խառնաշփոթությունները գրգռեցին նախ նրա իշխանության տակ գտնվող ժողովուրդներին՝ ազատագրվելու դարավոր ձնշումից (վրացիներին, հայերին, որոնց թվում և արցախցիներին), մյուս կողմից էլ Թուրքիային և Ռուսաստանին՝ խորանալու Պարսկական տարածքներում: Թուրքիան և Ռուսաստանը արդեն 1724թ. հուլիսի 12-ի պայմանագրով պարսկական տիրությունները իրար մեջ բաժանելու պլան էին մշակել: Սակայն այդ գաղտնի պայմանագրից անտեղյակ ժողովուրդները՝ վրացիներն ու հայերը զինակցվելու, մի միասնություն կազմելու և Ռուսաստանի կայսրի խոստումներով ոգևորված 1722թ. սեպտեմբերի 22-ին իրենց հավաքատեղը դարձրին Գանձակի Չոլակ գյուղը:

Այդ տասնամյակներում ազատագրական շարժման գործը գլխավորում էին Արցախի մելիքները իրենց կազմակերպած ստնախներով[70] (Շուշի, Գյուլիստանի, Քարագլխի և այլք):

Անդրկովկասին տիրելու իրենց նկրտումների մեջ վարպետացած Թուրքիան, որը Պարսկաստանի դարավոր թշնամին էր, նրան թուլացնելու համար հրահրեց Դաղստանի լեռնական լեզգիներին՝ հարձակվելու առանց այն էլ լեռնականների սարսափի տակ գտնվող Իրանի հյուսիսային նահանգների բնակիչների վրա: Այդ հարձակումից առավել շատ տուժեց Հայաստանը 1721-1722 թվականներին:

Լեզգիների ավերիչ արշավանքների մասին պահպանված մի տեղեկության մեջ ասված է, որ «խոթայ վանքը շատ զարմանալի շեն և հարուստ է եղել, բայց անիրավ լեզգիները թափուրղա արին: Դրանք աներեսի պես հենց որ կամ աղն էր պակաս լինում կամ մաղը, վազում էին մեր պապերի մոտ և նստում ամիսներով, ամեն ինչ պահանջում առոք-փառոք վայելում: Վերջը որ յուսահատում են, դրանց ձեռքից ազատվելու համար, խորհուրդ են անում հայ իշխաններն ու մեծամեծերը, այստեղ լինում է ամբողջ Զրաբերդի հայտնի ապիտակ երեցը, որ նրանց երկար խոսք ու զրույցը կտրում է հետևյալով. ամենից լավ հնարն է, վեր կացեք գիշեր ժամանակ ձեր տներում քնած շուն-լեզգիներին կոտորեցեք, որ մի անգամ աչքները վախենայ, մեր երկիր ոտք չկոխեն... Այդ պատուվները իսկույնեամբ կատարեց մեծ մասը, բացի մի քանի վախկոտներից: Լեզգիներին կոտորելու լուրը հասավ Դաղստան, անթիվ անհամար լեզգիք թափվեցին վանքի (հնա-դադի վանքի) մոտերքը, ժողովուրդն իվր ընտանիքն առած խոր ծնակներն ապավինեց, իսկ նրանց թողած տներն ու իրերը կրակի բոցերին մատնուեց»:[71]

1722թ. գարունը բացվելուն պես Դաղստանի այդ լեռնականները մեծ զորքով խուժեցին Շամախի, ավերեցին այն ու հետո մտան Արցախ: Այս անգամ լեռներում գտնվող կանոնավոր զորքը Զրաբերդի մոտերքում չախջախեց վայրագ թշնամուն:

Այդ տեղեկությունը զետեղված է Արցախի մելիքների այն նամակում, որ հղված է ռուսական կայսր Պետրոսին: Նրանք գրում են.

«Մեկ տարի է, որ երկիրս Աղուանից գերի է ձեռ լազգոց, նոքայ կոտորեցին և եսիրն տանեյին... Եվ մերումս անճար մնալով ծեռս տվաք միմեաց, ես ծառայից ծառայ Եսայիս և այր ոմն Շրվան անուն, ևս Սարգիս անուն, որ այս երկուքս ի Չարայպերտա (Զրաբերդ) են, ես Եսայի Պարտայու և Մելիք Յովսեփ ի գանձայու, միմեանց ձեռ արկաք ժ (10) և ԺԲՌ (12.000) մարդ ժողովեցանք, պատերազմ մտանք կամ թե լազկոյ հետ կամ թե տանս Աղուանից թուրքաց հետ ամուր ծայրս քարանց սըղնախ կապեցինք ի մեծի թագավորիդ սուրդ աղոթիվն շատ կոտորումն և յաղթութիվն ենք առեալ ի վերայ թուրքաց»:[72]

Վերոհիշյալ մելիքների զորքերը տեղաբաշխված էին Գյուլիստան և Զրաբերդ գավառներում, Մռովի ստորոտում: Այդ Մեծ Սղնախի ղեկավարն էր Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան Զալալյանը:

Զորքի մի մասը գտնվում էր Քիրսի ստորոտում՝ Վարանդա գավառի Ավետարանոց և Սղնախ գյուղերի տարածքում և ներկայիս Շուշիի շրջակայքում: Փոքր Սղնախը գլխավորում էր Ավան հայրուրապետը, որը մինչև 1717թ. Շամախու խանական զորքերի հայ զինվորականներից էր, որ Արցախի կանչով եկել էր հայրենիքը պաշտպանելու (այդ Արցախի կանչով եկողներին անվանում էին Շիրվանի տղաներ,- իմա):

Բայց Արցախի ուժերը միայն այդ ստնախները չէին: Նրանք կային շատ ուրիշ բերդերում ու պնդոցներում, որոնք վերանորոգում էին և ստեղծվում նորերը: Այդպիսի ստնախներ կային Բաղարա գյուղի շրջակայքում, Հերհեր ու Ծովատեղ գյուղերի թիկունքում՝ Քոշիզում, Տող և Տումի գյուղերում: Հարկ է նշել, որ արցախցիների մի բռունցք կազմելուն նույնիսկ դեմ չէին հակոտնյա ուժերը, ինչպես օրինակ իրար թշնամացած Գանձասարի Եսայի կաթողիկոսն ու Երիցմանկանց հակաաթոռ կաթողիկոս Ներսեսը:

Բայց այդ լեռնականների դեմ պայքարը միաժամանակ պայքար էր Պարսկական բռնակալության դեմ: Այսպես, 1723թ. նման մի ընբոստացում եղավ Հադրութում՝ Դիզակի մահալում, որի ժամանակ թշնամին կորցրեց 2000 մարդ: Արցախի ստնախները Ավան հարյուրապետի գլխավորությամբ օգնության գնացին (1724թ.) Սյունիքի ծանր մարտերում խիզախող Դավիթ-Բեկին: Սա էլ է հայերի միաբան լինելու խորհրդանիշ, ընդհանուր

թշնամու դեմ պայքարի միասնականության օրինակ: Այստեղ հարկ է մի հիշեցում այն մասին, որ Սյունաց զորավարներից մեկը՝ Տեր-Ավետիսը հարազատներ ուներ ԼՂ-ի Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղում: «Սարգսաշեն ուխտատեղին է հնադարյան գեղեցկաշեն տապանաքարերով հարուստ գերեզմանատունը: Այն իր բարվոք վիճակով հավասարը չունի լեռնոտ երկրամասում: Տեղացիները մի առանձնակի հպարտությամբ են պահում-պահպանում գերեզմանատան ամենաաչքի ընկնող տեղում թաղված «Սյունաց ազատամարտի զորավար Տեր-Ավետիկի թոռան՝ Պետրոս իշխանի» շքեղ տապանաքարը՝ 1814թ. արձանագրությամբ»:[73]

Սակայն Արցախի հայկական ինքնավարության ազատագրական պայքարը, որ համընկավ ռուսական կայսրության կասպիական արշավանքերի և Թուրքիայի ծավալապաշտական քաղաքականության հետ, դժվար իրավիճակի մեջ հայտնվեց: Այդ դժվարությունը բացատրվում է մի կողմից ռուսների դեպի հարավ արշավելու անզորության մեջ, որի պատճառները բազմաթիվ են (օբյեկտիվ՝ թե սուբյեկտիվ), իսկ մյուս կողմից էլ պարսիկներին հպատակ Վրաստանի թագավոր Վախթանգ 3-րդին փոխարինելը Կոնստանդին Իսլամամետով:

Այսպիսով, ի թիվ եկավ հայ-վրացական զինակցությունը, Պետրոս Մեծի կողմից Իվան Կարապետի միջոցով հայերին ուղարկված հրովարտակը, մթագնեցին Ավան, Շրվան, Շահնի և Սարուխան հարյուրապետների ձգտումները՝ Ռուսաստանի օգնությամբ Արցախը ազատագրելու մտադրությունները: Եվ գուր չէ, որ այս անցքերի վերլուծության մեջ, պատմաբան Վ.Բալայանը եզրակացնում է. «Անդրկովկասում դեպքերը զարգացան ի վնաս հայ-վրացական զինակցությանը» և որ «Արտաքին աշխարհից մեկուսացված հայ զինվորականությունը միայնակ կանգնեց՝ պարսիկների, թուրքերի և լեզգիների դեմ: Սակայն, այս վիճակում իսկ լիակատար հուսահատության չմատնվելով սղնախականները լարում էին իրենց ամբողջ կարողությունները՝ երկրի պաշտպանությունը ապահովելու համար»:[74]

1723թ. կործանարար եղավ Արցախի համար: Այս անգամ էլ թուրքերը հոկտեմբերին, 82 հազարանոց զորքով հարձակվեցին Գանձակի վրա՝ հրամանատար Իբրահիմ փաշայի գլխավորությամբ: Բայց պարտություն կրեցին ու նահանջեցին: Այստեղ գործում էր արցախյան բանակի մի մասը, որի ակտիվ գործողության շնորհիվ թուրքերը ազատ արձակեցին գերեվարված հայերի մի մասին: Թուրք հրամանատարի պահանջը Ավան հարյուրապետին՝ հակապարսկական և հակառուսական ճակատ կազմելու վերաբերյալ, մերժվեց: Այս հակասական պայմաններում Արցախի սղնախների առաջնորդները դաշնակիցներ էին որոնում Թուրքիայի դեմ: Այս դաշնակիցների մեջ հայտնվեցին Իրանը, վրաց և մահմեդական ֆեոդալների մի մասը և, իհարկե, Ռուսաստանը: Այդ ուժերը 1724թ. մարտի 24-ին



Գանձակում կնքեցին հակաթուրքական պայմանագիր: Այդ պայմանագիրն հայկական կողմից ստորագրեցին 13 հոգի՝ երկու կաթողիկոսներ (Ներսեսն ու Եսային), 6 հարյուրապետներ (Ավան, Միրզա, Թարխան, Բաղի, Սարգիս, Աբրահամ) 5 մելիքներ (Թամրազ, Բաղր, Գրիգոր, Եգան և Դանիել):

Պայմանագիրը դեռ ուժի մեջ նոր էր մտել, երբ թուրքերը 1724թ. հունիսին մտան Արարատյան դաշտը, գրավեցին Նախիջևանն ու Օրդուբադը, ապա Գողթն, Համադանը (Իրանում), ակցանի մեջ առվեց Երևանը և այնուհետև գրավեցին Թիֆլիսը, Ղազախը, Լոռին և մտան Գանձակ:

Ստեղծված պայմաններում Հայոց կաթողիկոս Աստվածատուրը խորհուրդ տվեց Ղարաբաղի մելիքներին՝ ընդունել թուրքական հպատակությունը և փրկել Ղարաբաղի հայերին: Բայց Ղարաբաղի քաղաքական և ռազմական ղեկավարները որոշեցին կռվել մինչև վերջ: Թուրքական 4700 հոգուց բաղկացած զորքը մտավ Վարանդա՝ տեղավորվելով գավառի 33 գյուղերում: Այդ գյուղերը առերես ընդունեցին նրանց, բայց հետո մի գիշերում կոտորեցին նրանց և միայն 150 ասկյարի հաջողվեց փախչել: Ղարաբաղցիք ազատագրեցին 200 հայ գերիներին և իրենց հերթին գերեցին թուրք Սալահ փաշային:

Ազատամիտ Ղարաբաղի պատմությունը չի մոռացել Վարանդայի քաջազունների շարքում գտնված կին հերոսներին նաև, հատկապես Վարանդայի մելիք Հյուսեինի կնոջը՝ Աննային, որը կազմակերպեց թուրքերի կոտորածը, նրա աղջիկ Գայանեին, որը սրով խառնեց ատելի թուրք «փեսացու» Սուլեյման բեկի սիրտը, իսկ հետո կուսանոց գնաց: Հայրենիքի սահմանները ամբողջական պահելու համար Արցախը շարունակում էր կռվել թշնամու դեմ: Պետրոս 1-ին կայսրի պատվիրակ Իվան Կարապետը կանցլեր Գոլովինին գրած իր զեկույցի մեջ հայերի հերոսությունների մասին հպարտությամբ գրում է.

«Էսպես կռվարար խալղ, որ էստեղ կայ, ոչ ինչ դեղ չկայ: Ղզլպաշի երկրում (այսինքն պարսկահպատակ Հայաստանում) էսօր ԺԲՈ (12.000) մարդ ձիով ողջ չախմախով թուֆանկ, ողջ թուրով հազիր են: Ու առանց ձիով էլ յենչանք, որ աստուածախպուր ու ողջին էլ թուֆանկ կայ: Ամեն օր Ժ (10) թուֆանկ այ շինում ու չախմախայ շինում: Էստեղ բան ան գտել արջիջի, երկաթի ու պղնձի»:[75]

Արցախի սղնախները 1726թ. աշնանը նորից հարձակվող թուրքերի 40 հազարանոց բանակին և նրանց օժանդակած լեզգիներին ջախջախեցին Շուշիի շրջակայքում, որտեղ սպանվեցին նրանց երկու հրամանատարները, իսկ մեծ հրամանատար Սարը Մուստաֆան էլ փախավ:

Այստեղ արժե, որ ուսուցիչը հիշեցնի Շուշիի բերդի մինչ ֆանահյան խանությունը կառուցված լինելու փաստը: Հայի գեներով Դոլգորուկովը և Մինաս վարդապետը այն արյունալի ամենօրյա ճակատամարտերի և հա-

յերի ուժեղ դիմադրությունների մասին իրենց զարմանքն էին արտացոլում ու գրում.

«Միայն աստված էր պահպանում հայերին, թե չէ մարդկային խելքից բարձր է հասկանալ, թե դեռ ինչպես են նրանք պահվում այդքան զորեղ թշնամու առաջ»:[75]

Թվով 3-րդ մեծ հարձակումը թուրքերը ձեռնարկեցին Արցախի հյուսիսային դարպասների վրա՝ Գյուլիստանի և Զրաբերդի: Չկարողանալով կոտրել հայերի դիմադրությունը, նրանք նույնիսկ Եսայի կաթողիկոսին կաշառքներ էին խոստանում: Հենց այս դաժան օրերին մահացավ կաթողիկոս Եսային (1728թ.): Թե կաթողիկոսի մահը և թե ռուսական պետության կեղծ խոստումները, նրա երկդիմի քաղաքականությունը (որ Թուրքիայի հետ գաղտնի դաշնագրի համաձայն հայերին չէին օգնի), հուսալքություն առաջ բերեցին հայ զորահրամանատարների և նրանց արբանյակների շրջանում, որի համար էլ նրանցից 137 հոգի լքեցին հայրենիքը ու 1730թ. օգոստոսի 18-ին անցան Դերբենդ:

Նրանց հետ էին հարյուրապետ Աբրահամը, Ալավերդին, Բաշիրը, Սիմեոնը, եպիսկոպոս Պետրոսը և գանձապետ Գրիգորը, իսկ Ավան հարյուրապետը դրանից առաջ անցել էր Ռուսաստան ու ծառայության մտել ռուսական բանակում: Սղնախների այս մեծամեծերի հեռանալը երկրամասից կորստաբեր հետևանքներ ունեցավ նրա բնակչության համար: Մի քանի ամսվա ընթացքում այս գավառը դատարկվեց, նրանք անցան Վրաստանի տարբեր բնակավայրեր: Դրանից հետո հայերի դիմադրությունը շարունակվեց միայն Գյուլիստանում՝ Աբրահամ սպարապետի գլխավորությամբ (1729-31թթ.): Եվ Գյուլիստանի այդ միայնակ դիմադրությունը աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայերի և Ռուսաստանի իշխանությունների գութը շարժեց և Արցախ եկան օգնական ուժեր՝ հանձին Լեհաստանից Ղարաբաղ վերադարձած հայ այն մարտիկների (իրենց հրամանատար Գրիգորի և Ստեփանի գլխավորությամբ), որոնք 1722թ. փախել էին երկրից, իսկ 1732թ. ռուսական կառավարությունը կաթողիկոս Ներսեսի նամակին ի պատասխան, որոշում ընդունեց գեներալ Վ. Լևաշովի միջոցով ազատագրել հայկական սղնախները:

Արցախցիների համար այս դաժան պայքարին համահունչ եղավ թուրք նվաճողների դեմ Պարսկաստանի պայքարը Նադիր Շահի գլխավորությամբ: Եվ այս զուգահեռներում էլ Արցախում Խամսայի մելիքությունների դերը այնքան բարձրացավ, որ դարձան Արցախի ազատագրական պայքարի նոր խարխխակայաններ ու հանգրվաններ:

**Մեթոդական ցուցում ուսուցչին.** հանգամանալից բացատրություն տալ աշակերտներին ներքոհիշյալ հարցերի շուրջ.

ա) Թե ինչպես հաջողվեց Ռուսաստանին ռուս-շվեդական երկարամյա ու հյուծիչ պատերազմի վերջին ձեռնարկել արշավանք դեպի հարավ՝ պարսկական տիրույթները գրավելու:

բ) Պարսկաստանի և Թուրքիայի դեմ ապստամբած ժողովուրդների (հայերի, վրացիների) նկատմամբ Պետրոս 1-ի երկդիմի քաղաքականության բացահայտումը:

գ) Թուրքերի Անդրկովկաս ներխուժելու դրդապատճառները.

**Առաջին** հարցի առումով հարկ է, որ ասվի թե դեպի հարավ արշավելու ռուսական կայսրության գլխավոր պատճառը մի կողմից այն նպաստավոր պայմանն է, որ 1721թ. սուլթան Հյուսեին շահի դեմ ապստամբած աֆղանացիները ներխուժել են Իրանի մայրաքաղաք Սպահան ու գահ բարձրացրել իրենց դրածոյին: Դրա պատճառով Պարսկաստանը ծվատվում է գահավեժ շահի որդի Թահմասպ 2-րդի ու աֆղանների ինքնակոչ շահ Միր Մահմեդի միջև: Մյուս կողմից՝ Պետրոս 1-ը իր ձեռքում ունենալով Թահմասպի խնդրանքը «խորանալու» դեպի հարավ և պատրվակ ունենալով 1722թ. օգոստոսին Շամախում ռուս վաճառականների կողոպուտը պարսիկների կողմից, մտնում է Դաղստան, գրավում Դերբենտը, զբաղեցնում Բաքուն, Սալյանը, Աստրաբադը...

**Երկրորդ՝** ռուսական պետության կողմից Անդրկովկասի ապստամբ ազգերի նկատմամբ կիրառած երկդիմի քաղաքականության առումով պետք է ասվի, որ երբ Պետրոսի կայսերական գրասենյակի հետ ունեցած գաղտնի պայմանավորվածության համաձայն հայկական 12 և վրացական 30 հազարանոց զորաջոկատները 1722թ. սեպտեմբերի 22-ին Գանձակի Չոլակ գյուղում սպասում էին ռուսական հրամանին՝ Շամախի շարժվելու, Պետրոս 1-ը հրամայում է կանցլեր Գոլովկինին ակտիվ բանակցություններ սկսել շահի հետ, որ ռուսները զավթած տարածքներից զուտ ոչ մի այլ շրջան չեն հավակնում: Ըստ էության, սա նշանակում է, որ ռուսները չեն գնա հայերին ու վրացիներին օգնելու:

**Երրորդ՝** Թուրքերի Անդրկովկաս ներխուժելու դրդապատճառները պետք է բացատրել մի կողմից Պարսկաստանի թուլությամբ, մյուս կողմից էլ ռուսների կողմից թուրքերին արված այն հավաստիացումներով, որ Ռուսաստանը պատրաստ է թուրքերին զիջելու Անդրկովկասի մեծ մասը, որի հիման վրա էլ կնքվեց ռուս-թուրքական գաղտնի պայմանագիրը:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ 18-րդ դարի առաջին քառորդում պարսկական տիրապետության տակ գտնվող ժողովուրդները (աղվաններ, վրացիներ, հայեր և այլոք) ազատագրական պայքար ծավալեցին, ըմբոստացան:

2. Ի՞նչպիսի՞ ռազմական հենակետեր ունեին արցախցիները և որտեղ էին տեղաբաշխված դրանք:

3. Ինչո՞ւ հայ-վրացական զորքերը չմիացան ռուսական զորքի հետ:

4. Բերել օսման թուրքերի դեմ արցախցիների հերոսական պայքարի մի դրվագ, որ ապացուցում է նրանց հնարամտության մասին:

5. Թվել անվանի մի քանի արցախցի հարյուրապետների անուններ, որոնք գլխավորում էին 1723-1730թթ. հակաթուրքական պայքարը:

## ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***«Հայոց պատմություն», VII դասարանի դասագիրք, Երևան, 2000թ. էջ 21-23՝ «Հայկական մելիքությունները» թեմայի:***

«Հայկական մելիքությունները» թեմայի ուսուցման մեջ կարևոր տեղ ունի «Խամսայի մելիքությունները» նյութը:

Հանրահայտ է, որ օտար նվաճողները մշտապես ձգտել են ոչնչացնել երկրի հայկական իշխանությունները: Այդպիսի պայմաններում հայ իշխանական տների որոշ ներկայացուցիչներ չդիմանալով ճնշումներին արտագաղթել են, իսկ որոշներն էլ սեփական կալվածքներն ու տիրույթները փրկելու համար այն հանձնել են եկեղեցուն ու դարձել եկեղեցու սպասավորներ: Չնայած դաժան պայմաններին հայկական իշխանությունների մի մասն, այնուամենայնիվ, կարողացել է գոյատևել, օգտագործել երկրամասի ինքնապաշտպանական հարմար դիրքերը ու պահպանել իր տիրությունը: Երբ դիմադրելն այլևս անհնարին է եղել, հայ որոշ ֆեոդալներ էլ հպատակվել են նվաճողներին և շարունակել իրենց գոյությունը, սպասելով հարմար առիթի, որ ազատվեն բռնակալներից: Հենց այդպես վարվեցին նաև Արցախ նահանգի իշխանավորները, որոնք իրենց վրա կրելով արաբական «Մելիք»[77] անունը դեռ շատ հնում, մինչև Շահ Աբասի մուտքը Արցախ, ստեղծել էին իրենց մեծ ու փոքր մելիքությունները:

Այդպիսի վաղեմի մելիքությունների գոյության փաստը իր հաստատումն է գտել Առաքել Դավրիժեցու մի տեղեկության մեջ, որտեղ ասված է. «Արցախի մի խումբ նշանավոր մարդիկ՝ Օղլան Քեշիշը և իր եղբայր Դալիբեկը՝ Հաթերքից՝ Ջալալ Բեկը և իր եղբոր որդիները՝ Խաչենից, Մելիք Սաջումը՝ Դիզակից, Մելիք Փաշիկը Քոչիզ գյուղից, Մելիք Բարեն Բրիտիս գյուղից գնում են Շահ Աբասի մոտ, իրենց ծառայությունները առաջարկում նրան»:[78] Մելիքությունները Արցախում վաղեմի պատմություն ունեն: Դեռ կարա-կոյունլու Ջհանշահի (1437-1467) հրովարտակը ճանաչում էր Արցախի տեր մելիքների իշխանությունը:

Իհարկե, պարսից Շահ Աբասը իր ժամանակին նպաստել է Արցախի մանր-մունր մելիքությունների միավորմանը և հաստատմանը, ինչպես օրինակ Մելիք Շահնազարյաններին Գեղարքունիքից, Մելիք Ավանին Լոռուց Արցախ բերելը և նրանց միջոցով Վարանդայի և Դիզակի մեծ մելիքությունների հիմնավորումը:

Ի դեպ ասենք, որ Արցախի 5 մելիքություններից 3-ի տերերը ներգաղթածներ են, ինչպես Գյուլիստանինը (Բեգլարյանները՝ Շաքիից), Դիզակինը՝ (Եգանյան-Ավանյաններ) և Վարանդայինը (Մելիք Շահնազարյաններ):[79] Խամսայի մելիքություններից երկուսի տերերն են նստակյացներ՝ Ջրաբերդինը և Խաչենինը: Սակայն այդ ներգաղթած մելիքների տոհմերի վերաբերյալ կան շատ իրարամերժություններ, առանձնապես Մելիք Եգանյան Ավանյանների վերաբերմամբ: ԵՊ համալսարանի դասախոս Ա.Մաղալյանը, անդրադառնալով հատկապես Եգանյաններին, մեջ է բերում ստորև բերվող տեղեկությունները.[80]

Այսպես, 19-րդ դարի պատմագիր Միրզա-Յուսուֆ Ներսեսովը (Հովսեփ Ներսիսյանցը) գտնում է, որ «այստեղի մելիքները հնում Թուրքիայից են եկել»: Գտչավանքի վանահայր Առաքել վարդապետ Կոստանյանցի և Ռաֆֆու ասելով «Դիզակի մելիքները Ղարաբաղ են գաղթել Լոռուց»: Ռաֆֆին նրանց սերված է համարում Լորիս Մելիքյաններից: Արցախցի պատմաբան Լեոն գրում է. «Մինչդեռ ավանդույթների մի ճյուղը Դիզակի մելիքներին համարում է Պարսկաստանի Ուրմիա քաղաքից գաղթած, մյուսը պնդում է, թե նրանք եկել են Լոռուց, իսկ մի 3-րդ ճյուղն ուղղում է այս երկրորդ պատմվածքը՝ ասելով, թե նրանք բնիկ լոռեցի չէին, այլ գաղթել են Լոռի Դիզակի երկրից»:

Ավանդույթները պատմում են, թե Ղուկաս վարդապետի որդի Եգանը՝ Ավանը (1718-1744թթ) հալածվելով իր տոհմակից Լոռվա Մելիք Էլիզբարից, իր հոր ու հարազատների հետ Լոռուց գաղթում է Դիզակի Տող գյուղը: Եգանն երբեմն անվանում են եկան: Տոհմի անդամները կոչվել են Մելիք-Եգանյաններ կամ Մելիք-Ավանյաններ:

«Հակաթուրքական անվեհեր սխրանքներով պսակած» Մելիք Եգան կամ Ավան, այդպես էր անվանում ժողովուրդը Եգանին:

Եգանյանների շատ փառավոր կենսագրության կողքին կան նաև տոհմը նվաստացնող այն օրինակը, թե ինչպես է Եգանի ծոռ Աբասը (Եգան-Արամ-Բախտամ-Աբաս) Իբրահիմ խանի կողմից սպանվել և թաղվել թուրքական գերեզմանոցում ու դրանով իսկ մելիքատոհմը վերագրվել թուրքին: Ողբալի փաստն էլ այն է, որ Աբասի որդի Բաղրը (Ղահրամանը)՝ Բաղրբեկը այն ժամանակների՝ սովից և ժանտախտից իր ժառանգներին փրկելու համար քաշվում է Վրաստան: Բայց մի փառավոր գործ է նա կատարել, երբ 1806թ. Մինաս Լազարյանին ուղարկած մելիքների դիմումի տակ, որ վերաբերվում էր Ռուսաստանի հետ Ղարաբաղի միացմանը, ինքն էլ է ստորագրել:

Լեոն Տողի մահմեդականացած հայերի մասին այսպես է գրել.

«Այդ մահմեդականացած հայերն այժմ Տող գյուղի բնակիչներն են և

կրում են Մելիք-Ալանով և Մելիք-Եգանով հայկական ազգանունները: Բայց կրոնը մոռացնել է տվել հայ մելիքների այդ հեռավոր ժառանգների ամեն մի ազգային պարտականություն, թեև նրանք շատ լավ գիտեն, որ հայեր են... Բայց ծուլվել են թաթար մահմեդականների հետ՝ հաճախ իրենց ազգակից հայերի դեմ գնալու համար»:

Նրանցից առանձնապես Մելիք-Ալանովները հետագայում դարձան տիպիկ մուսավաթներ և հայերի արյունը հեղելու համար ոչինչ չէին խնայում 1904-1906 և 1918-20 թվականներին:

Իրարամերժություն և հակասություններ կա նաև Մելիք-Շահնազարյանների կենսագրության առումով: Այսպես, եթե Ռաֆֆին նրանց համարում է Գեղամա մասերից եկածներ, ապա պատմաբան Վահրամ Բալայանը գրում է թե. «15-րդ դարի վերջերին և 16-րդ դարի սկզբին Դոփյան իշխանական տունը բաժանվեց 3 ճյուղի՝ Շահանշենք, Աղբուղենք և Ջհանշենք: Նրանցից էլ հետո սերվեց Մելիք-Շահնազարյան հայտնի գերդաստանը, որն իր գործունեությունը ծավալեց Վարանդայի գավառում»:[81]

Պատմական քարտեզի վրա պետք է ցույց տալ Խամսայի[82] վաղեմի տարածքները ըստ մելիքությունների.

Որ «Արցախի հյուսիսային հատվածներում տարածված էր **Գյուլիստանի մելիքությունը**՝ Քուրակ և Թարթառ գետերի միջև: Այստեղ իշխում էին Մելիք Բեգլարյանները, որոնց նստավայրն էր Թալիշ ավանը և ռազմական հենակետը՝ Գյուլիստանի անառիկ ամրոցը:

Սրանից հարավ **Զրաբերդի մելիքությունն** էր, որը ընդգրկում էր Թարթառից մինչև Խաչենագետ ընկած տարածքը, գավառի տերը Մելիք Իսրայելյաններն էին, որոնց նստավայրը Զրաբերդ ավանն էր:

**Խաչենի մելիքությունը** տարածված էր Խաչենագետից մինչև Կարկառ ընկած հողերը: Այստեղ էլ բուն Հասան-Ջալալյաններն էին իշխում և նստում էին Խոխանաբերդում, իսկ հետագայում՝ Խնձրիստանում: Գավառի բերդերից հայտնի էին Կաչաղակաբերդը, Քարագլուխը, Ուլուպապա բերդը:

**Վարանդայի մելիքությունը** բռնում էր Կարկառ գետից մինչև մեծ Քիրսի հարավային փեշերը ընկած տարածքը: Սրա տեր Մելիք-Շահնազարյանների նստավայրն էր Ավետարանոց բերդավանը: Վտանգի ժամանակ մելիքության հպատակները պաշտպանվում էին Շուշվա բերդում և Հերրիեր ու Ծովատեղ գյուղերի միջև ընկած Քոչիզ ամրոցում, Աղջկաբերդում, Գիշու Ղլեն խութ բերդում:

**Դիզակի տեր Մելիք-Եգանյան-Ավանյանների** տիրույթները ձգվում էր Դիզափայտ-Քիրս լեռնագագաթից մինչև Արաքս գետի հովիտները: Մելիքները նստում էին Տող ավանում: Գավառի նշանավոր բերդերը գտնվում էին Ցոր գյուղում և Վնեսա սարում»:[83]

Այդ հինգ մելիքություններն էլ ունեին իրենց զինանշան-խորհրդանիշ-



ները, որոնցից մեզ վերջերս հայտնի է դարձել Վարանդայի խորհրդանիշը: Օգտվելով 1960թ. ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում հրատարակված «Պայքար» հանդեսի 322-րդ էջում բացատրված նյութից, պատմագիտության դոկտոր-պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանը[84] մեզ է ներկայացնում այդ ամսագրի կազմի վրա դրոշմված մի խորհրդանիշ-պատկեր, որը Վարանդայի մելիքությանն է պատկանում.

Ամսագրի մեջբերումով պրոֆեսորը մեզ ներկայացնում է այն, որ «ԱՄՆ-ում ապրող նկարիչ Զավեն Մելիքը իր հոր Եֆրեմ մելիք Շահնազարյանի ռուսերեն ձեռագրերի մեջ է հայտնաբերել խորհրդանիշը»:

*Վարանդայի խորհրդանիշը*

Գրում են, թե այդ խորհրդանիշը իրենց գրասենյակներում պահում էին Ռուսաստանի թագավոր Պետրոս 1-ը և Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Բոնապարտը «իբրև խորհրդանշական գլուխգործոց մը, որ կը ներկայացնե իր ազգային շահերուն, բարորության և ապահովության նուիրուած հայկական հարուստութիվն մի (արքայատոհմ մը)»:

Ամսագրի հոդվածագիրը ներկայացնում է այն հանգամանքները որոնց պայմաններում հնարավոր է դարձնել, որ խորհրդանիշը հասնի Ռուսաստան և Ֆրանսիա: Այնուհետև նա խորհրդանիշի բովանդակության մասին այսպես է գրում.

Այն աչքի էր ընկնում «բացորոշությամբ, պարզությամբ և սերտությամբ»:

Խորհրդանիշը, ըստ Պետրոս 1-ի և Նապոլեոնի արտահայտում է «առաջնորդություն և քաջություն»:

Խորհրդանիշի ուշադիր զննումից պարզվում է, որ

ա) գագաթի վրա թագի տեղ կանգնած է հայկական մայր եկեղեցու զանգակատունը, որի գագաթնակետը խաչ է:

բ) թավշյա կտորով եզերված արծիվը հանդիսանում է Ղարաբաղի գերեզմանաքարերի վրա կերտած տիպիկ արծիվների կերպարը, մանավանդ Ավետարանոցի շուրջը:

գ) արծիվը իր ձախ մագիլների մեջ բռնել է հայկական տիպիկ վահան, որի կենտրոնում ճառագայթում է հավերժական Արարատը, որի շուրջը երևում են «Վ-Մ-Շ-Ն» տառերը:

«ՎՄՇՆ տառերը ներկայացնում են «Վարանդայի մելիք Շահնազար»:

դ) խորհրդանիշը եզերված է ծիթենու ճյուղերի պսակով իբրև նշան խաղաղության:

ե) գագաթի ճերմակ հատակի վրա «Հ» տառը կնշանակի՝ Հայաստան:

Ասում են, որ հետագայում այդ զինանշանի մի օրինակը գեղեցիկ շրջանակի մեջ պահում էր Լորիս Մելիքովը: Նույնը արել են նաև զորավարներ Խոսրով Տոլուխանովը, Մադաթովը, Լազարևը և Տեր-Ղուկասովը:

Այս վերջին 3-ը նույն հարստության շառավիղներն են:

Կա տեղեկություն, որ Ռաֆֆին երազում էր իր 3 գրքերը՝ «Խամսայը», «Ղարաբաղի աստղագետը» և «Ղարաբաղի գաղտնիքը» տեղավորել մի գրքում և կազմի վրա զետեղել Վարանդայի խորհրդանիշը: Բայց...

Այդ Խամսայի մելիքություններից իրենց նվիրվածությամբ աչքի էին ընկնում Դիզակի, Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքությունները, որոնց համար հայրենիքը, նրա հողն ու ջուրը ամեն ինչ էր: Պատմական աղբյուրները վկայում են, որ դարեր շարունակ Արցախի հզորության համար անկոտրում կամք ու պայքար են դրսևորել Արցախի մելիքները: Հայտնի են, հատկապես, Դիզակի մելիք Ավանի մեծագործությունները: Նրա ձեռնակումները ռուս թագավորների հետ, այն ժամանակվա իմաստով, մի առանձին երանգ էին հայ-ռուսական կապերի գործընթացում: Զուր չէ, որ տեսնելով նրա առաքինությունները ռուսական պետությունը նրան գեներալի կոչում շնորհեց: Հմուտ դիվանագետը աշխատում էր հավասարակշիռ վիճակում պահել Ղարաբաղի հարաբերությունները թե Արևելքի և թե Հյուսիսի հետ: Նա ասում էր. մենք հիմա երկու ձեռք ենք բռնել՝ Հյուսիսի և Արևելքի, գուցե թե երկուսն էլ բարեկամ լինեն մեզ: Գերագահը, որին կոչում էին այն ժամանակներում, մինչև 1744 թվականը գլխավորեց Խամսայը: Նա ուղղակի ենթարկվում էր Նադիրի եղբայր Իբրահիմին: Նադիրը նրան հոր տեղ էր ընդունում և առաջնորդվում նրա խորհուրդներով: Մելիք Ավանը



ստեղծված միջազգային իրադրությունը զգաստ էր ընդունում: Նրա այն խոսքերը, թե «Ցամաքել է սերը աշխարհի տերերի միջից, ուժեղացել է անգթությունը, որից և ազգեր են դառնահամ լինում», նույնիսկ այսօրվա առումով էլ ճշմարտության մեծ խոստում ունեն: Եղվարդի ճակատամարտի հերոսը (1735թ.) ձգտում էր թուրքական վտանգը հայերից բացառել՝ պարսիկների օգնությամբ: Կրկին ռազմավարի և դիվանագետի արվեստ, որ նա ուներ բնատուր, իսկ ահավասիկ, Վարանդայի Մելիք Շահնազար II-ի և նրա դաշնակից Խաչենի նորընծա Մելիք Միրզախանի որոգայթները մյուս մելիքների դեմ և ջերմ կապը Շուշիի հորջորջված խան Ֆանահի հետ, մի մեծ սեպ էր Ղարաբաղի սրտում: Նրանց դավաճանությունը անարգանքի էր գամվում հենց իրենց ցեղակիցների և հարևան խաների կողմից:

Հանրահայտ է Գանձակից Ջավադ խանի անեծքը Մելիքին (Շահնազար), «Նզովյալ լինի Մելիք Շահնազարը, որ կյանք տվեց այդ սառած օձին (Ֆանահին), իր կրծքի վրա ջերմացնելով նրան»:[85]

Մեր պատմության մեջ ստվար են այն տխուր երևույթների թիվը, երբ հայրենիքի տագնապալի և օրհասական ժամանակներում, մի խոսքով, ամեն մի բախտավոր կամ դժբախտ րոպեի ծագել են կրոնական վեճեր, որը և ժողովրդին շեղել է իր կենսական խնդրից: Իհարկե, բացառված չեն բարենորոգիչ ու հայրենանվեր կաթողիկոսներն ու կրոնական այլ մեծադիրները, որոնք նպաստում էին հայրենիքի ամրապնդմանը: Եվ ինչպես մեծ վիպասանը կասեր. «Չի կարելի հերքել, որ կաթողիկոսների մեջ կային և օրինավոր մարդիկ, ինչպես Եսային և Ներսեսը, որոնք մելիքների հետ միացած գործում էին հայրենիքը փրկելու համար: Բայց մի օրինավորի շինածը մյուս անպիտանները ոչնչացնում էին»:[86] Օրինակ, ինչ կարիք կար, որ այդ խառնակ ժամանակներում, որպիսինը մելիքների տիրապետության շրջանում էր, Ղարաբաղը ունենար երկու կաթողիկոսներ Երիցմանկանցում և Գանձասարում, որ հակամարտության առիթ ստեղծվեր և նրանցից Իսրայելը սպանել տար Հովհաննեսին:

Բայց այդ դավաճանությունները, որ կատարվում էին հիշյալ մելիքների կամ կրոնավորների կողմից, ժամանակին արգահատվել են և վերականգնվել լավն ու բարին Վարանդայում և Խաչենում՝ հենց այդ տոհմերի նորամելիքների կողմից: Ահավասիկ, Մելիք Շահնազար II-ի տղա Մելիք Ջումշուդը: Թերևս Ղարաբաղի հանրահայտ մելիքների անդաստանում, որի սկզբնաղբյուրները Մելիք-Ավանից սկսվելով, ավարտվում էր Մելիք-Մեժլումով, իրենց մեջ ներառելով Եգանին, Մեժլումին, Բախտամին, Աբովին, Հաթամին... Նրա ներդրումը շատ ծանրակշիռ էր, քանզի նա իր հոր Մելիք Շահնազարի կողմից Ղարաբաղի մեջ մտցրած օտարի ցեղը շպրտել էր ուզում: «Այն հաստատուն շենքի հիմքերը, որ քանդվել էին հոր կողմից, տղան մտածում էր վերականգնել, ձգտում էր վերջ տալ հայ մելիքների

երկպառակությանը, նորոգել միաբանության խզված կապերը մելիքների միջև»:[87]

Ընդգծելով ազգի դավաճանությունները, ուսուցիչը պետք է ստորև բերվող մի շարք օրինակների միջոցով, աշակերտներին ցույց տա, որ եթե հայոց պատմությունը արձանագրած է շատ ազգային դավաճանություններ, ապա մյուս ազգերն ու ժողովուրդներն էլ անմասն չեն դրանցից: Հասկացնել նրանց, որ դավաճանության հարցում հայերը միայնակ չեն, որ ուրիշ ազգերի ու ժողովուրդների պատմություններին տեղյակ ամեն ոք կհանգի նրան, որ չարն ու բարին, դավաճանությունն ու նվիրվածությունը ազգային չի համարի և կելնի համամարդկային հոգեբանության օրենքներից:

Ռուս պատմաբաններ Կարամզինի, Սոլովյովի, Տատիշչևի, Կարպինսկու, Տարլեի, Պոկրովսկու և մի շարք գրողների մեմուարներում և վեպերում ռուս և ուկրաինացի բազում հերոսների դրվատանքի կողքին սարկազմի հասնող տողեր կան այն դավաճանների հասցեին, որոնք դավաճանել են ռուսական զենքի փառավորներ Ալ. Նևսկուն, Սուվորովին, Կուտուզովին, Նախիմովին, Ուշակովին և Ռուսական երկիրը ընդարձակողներ Իվան 4-րդին ու Պյոտր 1-ին:

Միթե հնարավոր բան էր, որ հայ իշխանը կամ թագավորը սպաներ իր 12 եղբայրներին՝ գահակալության ընչաքաղցության ճանապարհին, որպիսինը արել է մոնղոլ խան Բերդիբեկը: Նա Չինգիսխաներից առաջինը չէր, որ իշխանության է հասնում արյունոտ ճանապարհով: Սրանք այլազգի դավաճանների սակավ օրինակներից են, մի բան, որ գուցե հայերի մեջ իրենց մասշտաբներով աներևակայելի է: Չէ՞ որ հայ թագավորները կամ հերոսները դավաճանաբար սպանվել են օտարների ձեռքով (Արտավազդ II, Պապ, Արշակ II, Գագիկ և այլոք):

Հիշենք Թուրքիայի սուլթան Սելիմ Յավուզին (Ահեղին), որ իր գահը 1512թ. ստացավ հորը, 3 երեք եղբայրներին և 10 ազգականներին սպանելու ճանապարհով: Ասենք, որ թուրքիո 36 սուլթաններից 14-ը սպանված են յուրայինների կողմից:

Մեր դրկից վրաց ժողովրդի պատմության սև էջերից մեկում պատմվում է, որ թե ինչպես հայ-վրացական մեծ դաշինքի նախաձեռնող Վախտանգ թագավորը դեմ է առել հայրենակից դավադիրների աղետալից դեպքերին, այն ժամանակ, երբ նա խաբված լինելով Պետրոս Մեծի խոստումներից, հայ և վրաց զորքի հետ, տխուր ու սրտաբեկ, հույսը կորցրած Շամախուց վերադարձավ Թիֆլիս, հենց այդ ժամանակ վրաց Հերակլ I-ի որդի Կոնստանդին I-ը, որն իր հոր ու եղբայր Դավիթ 3-րդի նման մահմեդականություն ընդունելով ստացել էր պարսից շահից Կախեթիայի իշխանությունը, այդ չարագործը դիմեց լեզգիների գլխավոր Ալի սուլթանին, խոստանալով նրա բանակի յուրաքանչյուր զինվորին 3 թուման վարձ տալ, եթե նրանք օգնեն իրեն՝ Թիֆլիսին տիրելու և Վախտանգին սպանելու գործում: Լեզգիները կատարեցին նրա խնդրանքը, բայց Վախտանգը փախավ ու չսպանվեց: Կոնստանտինը, որը Պարսկաստանից ստացել էր Մահմուդ Ղուլի խան օտարոտի անունը, չկարողացավ վճարել իր խոստացած վարձատրությունը, թույլ տվեց, որ լեզգիները դրա փոխարեն Թիֆլիս քաղաքը ավարառության զոհ դարձնեն:

Վրաց թագավորներից ոմանք, ինչպիսինն էր Հերակլը, նույնպես վարեց հակաղարաբաղյան քաղաքականություն, փոխանակ կատարելու Ղարաբաղի մելիքներին օգնելու Եկատերինա II-ի հանձնարարականները, միացավ Իբրահիմ խանին և իր մոտ օգնության խնդրանքով ներկայացած Գյուլիստանի և Զրաբերդի մելիքներ Մեջլումին և Աբով 2-րդին ուզում էր թունավորել և սպանել: Դրացի դավաճանը շատ շուտ մոռացավ Թիֆլիսը լեզգիների միջոցով ավերելու Իբրահիմ խանի կատարածը: Ի պատասխան Հերակլի այդ մթին և ստոր գործերի, Մելիք Մեջլումը ապսպրել է Հերակլին՝ «գնացեք և հայտնեցեք ձեր իշխանին, որ Մելիք Մեջլումը չի մոռացել նրա հյուրասիրությունը»: Վրաց իշխանի նենգավորությունը սաստիկ վիրավորեց Ղարաբաղի մելիքի զգայուն սիրտը: Վրեժխնդրությունն առկա դարձավ, նրա «սարքած ճաշը», մի քանի տարուց հետո Թիֆլիսի կործանման պատճառ դարձավ: Հերակլը չմտածեց, որ Իբրահիմը իր համար Հուսո ճրագ չէր կարող լինել: Երբ Աղա Մամեդ Կաջարը հրո ճրագ դարձրեց Թիֆլիսը, Հերակլը իր կողքին Իբրահիմին չտեսավ և մի ջրեպանի միջոցով ճարահատյալ փախավ:

Այդ նույն Հերակլը կրկին չխրատվեց դրանից և նորից միացավ Իբրահիմին՝ 1796թ.: Դրանից առաջ ոչ պակաս դավաճանություն կատարեց Հերակլի հայր Թեյմուրազը, որն Ավետարանոց բերդում բռնված Ֆանահին, Շահնազարին և Միրզախանին առավ իր հովանու տակ և մեծ կաշառքով ազատեց գերությունից: Ներկայի առումով չափազանց մեծ են Վրաստանի նորօրյա ղեկավարներից Գամսախուրդիայի հարուցած վնասները, որն ապերախտ գտնվեց նույնիսկ իր նեղ օրերին հայերի մատուցած ծառայությունների հանդեպ:

Ընդհանրապես դավաճանության գնահատականը մինչ այժմ ոչ ոք իսպառ չի տվել: Հոգեբանները դավաճանության պատճառները որոնում են թուլության և վախի ստվերում, երբեմն էլ վերագրում տվյալ անձի հոգեբանական մոմենտներին, նրա հատուկ բնույթին, իսկ սոցիոլոգները այն որակում են որպես շահամոլության և անձնական հարստացման դիմագիծ, պատմաբանները՝ պատմական ստեղծված իրավիճակից տվյալ անձի դուրս գալու ելքի որոնում և կամ տվյալ ժամանակաշրջանի ծնունդ:

Մելիքությունների գնահատականը տալիս, ուսուցիչը պետք է հաշվի առնի այն պատմական ժամանակաշրջանը, որում գործել են նրանք: Վայրիվերումներով, իսկ երբեմն էլ ժամանակի շնչով առաջնորդվելով, որ հաճախ ստիպված էին միայն «մլավել», մելիքությունները քարշ տվին իրենց

ողորմելի կյանքը խանության պայմաններում և ներսի թշնամիների հյուսած որոգայթների ցանցում, մինչև որ պարսկական լուծը փոխարինվեց ռուսականով, որը սակայն ինչ-որ թեթևություն բերեց արցախցիներին՝ թե տնտեսական և թե կրոնա-էթիկական առումով: Այստեղ հարկ է, որ սովորողները ընբռնեն այն ժամանակներում ապրող հայերի, հատկապես արցախցիների պայքարի եղանակները՝ հայ պարսկական դաշինք ընդդեմ օսման թուրքերի (Նադիրի ժամանակներում), հայ-ռուսական դաշինք՝ ընդդեմ շահական Պարսկաստանի: Եվ ժամանակը իրոք արցախցուն հաջողությամբ անց էր կացնում «քանի-քանի վարար գետերով», վշտերի բեռը երբեմն թողնելով մերթ այս գետի, մերթ մյուս գետի ափերին, բայց միշտ էլ դեմ առնում մի նոր կործանարար գետի հանդիման: Ինչպես մեծ Թումանյանը կասեր, «միշտ մի աղետ, մի վնաս, գալիս է մեզ անպակաս»: Իմանան, որ կյանքի բոլոր այս որոգայթներում արցախցու անկոտրում կամքը և հայրենասիրությունը միշտ է առաջնորդել նրան:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվել այն մի քանի փոքր մելիքությունները, որոնք ընդունեցին Շահ Աբասի իշխանությունը և պարտավորվեցին հարկ վճարել նրան:
2. Ցույց տալ Ղարաբաղի 5 մելիքությունների տոհմական ծագումը:
3. Որո՞նք են Տոդի հայերի մի մասի մահմեդականացման պատճառները:
4. Նկարագրել Վարանդայի մելիքության խորհրդանիշը:
5. Պատմական քարտեզի վրա ցույց տալ 5 մելիքությունների սահմանները:

## ԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

***Թեմա «Ղարաբաղի խանության սկզբնավորումը»***
***(VII դաս. Հայոց պատմության դասագիրք, Երևան, 1998թ. էջ 22-23)***

Թեման, որ առնչվում է Ղարաբաղի մելիքների հակոտնյա հարաբերությունների պայմաններին և Պարսկաստանում գահակալական պայքարի ժամանակաշրջանին, շատ կարևոր անցքերի ու դեպքերի նախապայմաններ էին Ղարաբաղում:

Շահական Պարսկաստանի և Օսմանական Թուրքիայի հարյուրամյա պատերազմների միջոցով երկու անգամ մաս-մաս դարձած Այսրկովկասը (1555 և 1639թթ.), Պարսկաստանի տիրույթների առումով մի շարք խանությունների ու մելիքությունների, իսկ Թուրքիայի առումով՝ փաշայությունների և սանջակների էին վերածվել:



Ղարաբաղում առաջ եկած խանության դրդապատճառները նախ և առաջ պետք է որոնել բուն Ղարաբաղի մելիքների իրարամերժ պայքարի մեջ, որի շարժառիթը Վարանդայի նորընծա Մելիք Շահնազար II-ի անբարո գործողություններն էին, երբ նա հայր Հուսեինի մահից հետո ժառանգության կարգով Մելիք դարձած Հովսեփին սպանեց ու ինքը բազմեց նրա տեղը (1751թ.): Հենց այդ «Դավադրաբար Վարանդայի[88] Մելիք դարձած Շահնազարը կործանարար դերակատարություն ունեցավ արցախահայության համար»:[89] Շահնազար II-ի այդ եղեռնագործությունը սվիններով ընդունվեց Ղարաբաղի մյուս չորս մելիքների կողմից, որոնք էլ միաբանվեցին նրա դեմ (բա չէ՞, որ Հովսեփը զավակ ուներ, որ կարող էր նստել սպանված հոր տեղ): Շահնազար եղբայրասպանին այլ միջոց չէր մնում, քան դաշինքի մեջ մտնելը քոչվոր ցեղերի առաջնորդ, նենգադավ, Ղարաբաղի դաշտավայրային տարածքներում թափառող Ֆանահի հետ: Բայց Ֆանահի առաջխաղացմանը և Արցախի լեռնային մասին տիրելու նրա ցանկություններին միամտաբար օժանդակեց նաև Զրաբերդի Ալլահ-Ղուլի Սուլթանը, որը մի ինչ-որ տարածք տրամադրեց նրան՝ «Ոչխարները արածացնելու համար»: Մելիքի անհեռատես այդ քայլն էլ էր գործում Ֆանահի օգտին: Բայց ո՞վ էր Ֆանահը իր էությամբ,- Ֆանահը Նադիրի ջուռչին էր՝ մունետիկը, որ փողոցներում բարձր հայտարարում էր կառավարության որոշումները: Հետագայում նա հեռանում է արքունիքից և թափառական կյանք վարում Ղարաբաղի դաշտային մասերում: Նրան ձերբակալելու վտանգ էր սպառնում:

Բայց իր հայրենիքում ո՞ր իրադարձությունները ուժ տվին նրան:

**Առաջինը**՝ բռնակալ Նադիրի 1747թ. դավադրաբար սպանությունը, որը արձակեց նրա հակառակորդների թևերը, այդ թվում և շիա աղանդի քոչվոր այն թուրքերի, որոնք Նադիրի կողմից արտաքսվել էին Խորասան:

Այժմ «Օգտվելով Նադիրի մահից և իրանում ստեղծված անիշխանությունից, այդ ցեղերը նորից վերահաստատվեցին Այսրկովկասում, հատկապես Կուր-Արաքսյան միջագետքում և անհանգիստ կացություն ստեղծեցին Խամսայի սահմանով մեկ»:[90] Հենց այդ ցեղերի առաջնորդը դարձավ Զիվանշիր ցեղի Սարուջալլու տոհմի առաջնորդ Ֆանահը:

**Երկրորդ,** որ Ֆանահին հաջողվեց խարդախ ճանապարհով Ադիլ շահից ստանալ խանի տիտղոս:

**Երրորդ,** որ Իրանում ստեղծված անիշխանությունը թուլացրեց նաև Խամսան (իմա-Ղարաբաղը), և որի պետականությունը քայքայելու համար բավական էր դրսից մի հրում, որը և իրականացրեց Ֆանահը:

Մի պատմիչ ասել է. «Շահական (Պարսկական) երերուն վիճակից օգուտ քաղելով, աննշան և ստորին մարդիկ, Պարսկաստանից գնում են Բաքու, Շաքի և Արցախ և ապօրինի ձեռք բերում խանի տիտղոսը: Դրանից մեկն է լինում Նադիր Շահի մունետիկ, զուռչի Ֆանահն, որ ոչ եթե բռ-

նությամբ ձեռք բերած է խանությունը, այլ ձեռնատվությամբ Մելիք Շահնազար Բ-ի»:

1752թ. ջորեպան Ֆանահը խցկվեց Շուշի: Այս վկայությունը տալիս է նաև թուրք ժամանակակից տարեգիր Միրզա Ադիգոզալը:

**Չորրորդ,**- որ Ֆանահը կարողացավ կառուցել ամրոցներ (բայաթը), վերանորոգել հները (Տիգրանակերտը), ստեղծել բանակ, հաղթել իր հակառակորդ Շիրվանի խանին:

Բայց Խամսայի մելիքություններին տիրելու Ֆանահի փորձերն լուրջ դիմադրության հանդիպեց Խաչենի և Ջրաբերդի մելիքների կողմից: Նրան միայն օգնեց Վարանդայի Մելիք Շահնազարի դավաճանական քայլը, որ նրան տրամադրեց անմատչելի բարձունքը՝ իր հին բերդով, որը Ֆանահի կողմից վերանորոգվեց ու դարձավ ավելի անառիկ Արցախի տրտում: Այդ առթիվ պատմաբան Լեոն գրել է. «Բնությունը երեք կողմից սեպացած ժայռերով շրջապատել էր այդ տեղը, դարձնելով նրան այդ կողմից միանգամայն անմատչելի: Միայն մի կողմից էր, որ բերդն ուներ մուտքի տեղեր, թեև դարձյալ շատ դժվարակոխ: Այդ չորրորդ կողմը Ֆանահ խանը ամրացրեց արհեստական պատվարներով, պարիսպներ քաշելով և աշտարակներ բարձրացնելով»:[91]

Ֆանահը նոր բնակատեղը Ֆանահաբադ անվանել ցանկանալով ուզում էր հավերժանալ Արցախում, բայց տոհմիկ հայությունը չընդունեց դա և շարունակեց բնակավայրն անվանել Շուշի, երբեմն Շուշվա Ղալա (Շուշիի բերդ): Նա միայն բավարարվեց բերդից մի քանի վերստ հեռու գտնվող Վարարակն բնակատեղը Խանքենդի վերանվանելով, իսկ իր համար տոհմային գերագմանատուն ընտրեց Խաչենի իշխանից գնած Ադդամը:[92]

Ի դեպ Շուշի քաղաքը իր անունը ստացել է մոտիկ Շոշ գյուղից, տեղը նրա հանդերն էր ու նրա բերդը: Եկվոր ցեղերի ասպատակություններից Շոշի շրջակա գյուղերի հայերը այստեղ են ամրանում և ապաստանում: Շուշի անունը առաջին անգամ մեր մատենագրության մեջ հիշատակվում է 1428թ. (ՊՀԵ թ.)՝ «Աշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասա ի գեղս Շուշա կոչեցեալ»: Ֆանահը իր դիրքերը ամրապնդելու համար որոշեց ինչ գնով էլ ուզում է լինի փոխել Ղարաբաղի ազգագրությունը՝ հոգուտ թուրքերի, և նա այդ նպատակով Վրաստանից և Միլի Մուղանից մի շարք թրքախոս ցեղեր բերեց և բնակեցրեց Ղարաբաղում (Կարաչաղլի, Ջինլի, Դամիրլի-Հասանլի, Ղզզլ-Հաջիլի, Սաֆի-Քյուրդ, Քոյահմեդլի, Սահաթլի, Քենգերլի և այլն թափառական ցեղեր): Նա դրանց բնակեցրեց Շուշիի շրջակայքում և դաշտային Ղարաբաղի Շուշի տանող ճանապարհների երկայնքով: Ստեղծվեցին թուրքաբնակ գյուղեր, իսկ Շուշիում ստեղծվեց թուրքաբնակ թաղամաս:

Ֆանահը Ղարաբաղի գյուղերի բնակչությունը Շուշիում բնակեցնել չկարողանալու պատճառով, ասպատակեց Նախիջևանի Շահակերտ, Ա-



գուլիս, Հին Ջուղա, Մեղրի և այստեղից հայերին տեղափոխեց Շուշի: Այսպես, Շուշիում առաջացան տեղաբնակ հայերի՝ ղարաբաղցոց, ինչպես նաև ղազանչեցոց (Շահակերտ), ագուլեցոց և մեղրեցոց թաղերը՝ հակառակ թրքական մեկի:

Բայց հայ մելիքներն անխոով, գլխիկոր ու խոնարհաբար չենթարկվեցին ոչ Ֆանահին, ոչ նրա տղա՝ խան Իբրահիմին և ոչ էլ նրա թոռ Խան Մեհթիին: Խաները ևս չէին զիջում իրենց դիրքերը և ձգտում էին կոտրել մելիքների դիմադրությունը: Ֆանահ խանը իր կատարածու մելիքներ Շահնազար II-ի և Միրզախանի միջոցով Ղարաբաղը երկատեց. Դիզակը կտրվեց Խաչենից, Ջրաբերդից և Գյուլիստանից, իսկ Վարանդան էլ խանի պատվարն էր: Թե Ֆանահի և թե Իբրահիմի օրոք հաճախացան խան-մելիքներ կռիվները, որոնք փոփոխական հաջողություններով շարունակվեցին մինչև Ղարաբաղը ռուսական տիրապետության տակ անցնելը: Առաջին պատերազմը խանի և Խաչենի միջև էր, որում հաղթեց խանը և Մելիք Ալավերդի Հասան Ջալալյանը տեղի տվեց և իշխանությունն անցավ Խնձրիստանի գյուղապետ, խանամետ Միրզախանին:

Հաջորդ զոհը դարձավ Ջրաբերդի մելիքությունը, չնայած Խաչենի նման սկզբում հաղթում էր խանին, բայց նենգությունն ու խարդավանքը ի վերջո հաղթեց և միամիտ ու անզգուշ մելիք Ալլահ-Ղուլի Սուլթանը տեղի տվեց ու հետագայում բանտում մահախեղդ արվեց: Բայց նոր մելիք Հաթամը (Ադամ), որ միացել էր Գյուլիստանի մելիքի հետ, երկար կռվեցին Ֆանահի և նրա տղա Իբրահիմի խանության տարիներին:

Չորրորդ կռիվը խանի և Դիզակի մելիքության միջև ընթացավ, բայց հաշտվեցին մելիք Եսայու առաջարկությամբ: Հայ մելիքների վիճակը հատկապես անհուսալի դարձավ այն ժամանակ, երբ Իբրահիմ խանին հաջողվեց ընդլայնել իր սահմանները, անգամ մի կարճ ժամանակով իրեն ենթարկեց Շաքիի, Շիրվանի խանությունները, գրավեց Ռեշտն ու Թավրիզը: Նման պայմաններում ընդհանուր ու խռովահույզ Գյուլիստանի ու Ջրաբերդի մելիքները աստանդական դարձան և հանգրվանեցին Գանձակում և Վրաստանում: «Շուրջ ութ հազար հայ ընտանիքներ նոր բնակավայրեր ստեղծեցին Լոռու, Շուլավերի կողմերում, որտեղ առայսօր պահպանվում է Ղարաբաղյան բարբառը և բազմաթիվ բարքեր ու սովորություններ: Այս ամենի հետևանքով արագ հայաթափվեց հյուսիսային Ղարաբաղը: Ստեղծված պարպը լցվում էր մահմեդական խառնամբոխով»:[93] Սակայն այդ աղետների պայմաններում անգամ Ղարաբաղի հայ բնակչությունը հասնում էր 60 հազար ընտանիքի կամ կես միլիոն մարդու: Բայց Գյուլիստանն ու Ջրաբերդը չլռեցին, նրանք ոխակալ եղան Իբրահիմից, հարձակվեցին «նրա տիրույթների» վրա, որն էլ ստիպեց Իբրահիմին հաշտվելու ու «տուն հրավիրելու» մելիքներին:

Իբրահիմի որոգայթները եկեղեցու առումով էլ քիչ չէին, որոնք ոչ պա-

կաս զոհերի առիթ են տվել հայերի շրջանում (Կաթողիկոս Հովհաննեսի սպանությունը), բայց այդ էլ չօգնեց նրան: Իբրահիմ խանը ուզում էր արմատախիլ անել ռուսամետ դարձած մելիքներին և կաթողիկոսներին, սակայն օրհասական դարձած ռուսների մուտքը խանգարեց նրան ու պատռեց նրա դիմագիծը: Ռուսներին դավաճանելու համար նա սպանվեց, հետագայում իր անունով «Խանեն բաղ» կոչված տեղամասում ընտանյոք հանդերձ, Պարսկաստան ճողոպրելու ժամանակ: Միակ բանը, որ ազգի համար շահեց խանը, դա Դիզակի մելիք - Ավանյանների տոհմակիցների մի մասին ուծացնելն էր:

Ղարաբաղի խանության ճակատագիրը 19-րդ դարի սկզբին արտահայտվեց նրա որոշ տարիների գոյությամբ (մինչև 1822թ.) և ոչ վերացմամբ ու Ղարաբաղում անկախ, խանությունից դուրս, պետություն ունենալու մեջ: Խանության երկարածգմանը նպաստեցին երկու հանգամանք մեկը արտաքին, իսկ մյուսը ներքին:

Արտաքին հանգամանք ասելով պետք է նկատի ունենալ ռուսական կայսրության քաղաքականությունը, որը հովանավորում էր Իբրահիմին և քայլեր կատարում հետին պլան մղելու հայոց ազատագրության հարցը, այդ այն դեպքում, երբ Իբրահիմի պատվիրակները «Լործաշուրթն հավատարմագրերով միաժամանակ թակում էին ռուսական, թուրքական և պարսկական արքունիքների դռները»:[94]

Ռուսների խանամետ քաղաքականության մի կատարյալ դրսևորում էր 1805թ. մայիսի 14-ին Գանձակից 30 վերստ հեռավորության վրա գտնվող Քյուրակչայ գետի մոտ ռուս գեներալ Ցիցիանովի և Իբրահիմ խանի միջև ստորագրված պայմանագիրը, որով ռուսական կայսրությունը «Ցարի և նրա հաջորդների անունից շնորհն ու բարեխնամությունը Շուշու և Ղարաբաղի Իբրահիմ խանից ու նրա ժառանգներից, ինչպես և իրեն հավատարիմ հպատակից երբեք չեն խլվի..., նորին բարձրաստիճանության ու նրա ժառանգների ներկա կալվածների ամբողջականությունը պահպանված կլինի»:[95]

Եվ դեռ ավելին, Իբրահիմ խանի սպանությունից հետո ռուսաց կայսեր անունից խանի հետնորդ հայտարարվեց նրա ավագ որդի Մեհտի-Ղուլի խանը:

Ներքին իմաստով էլ խանության գոյությունը մի որոշ ժամանակ պայմանավորված էր այդ տարիներին (1805թ. Իբրահիմի սպանությունից հետո) Ղարաբաղում միակ պահպանված Ջրաբերդի մելիք-Ռուստամի դավաճանությամբ, որը խան դարձած Իբրահիմի եղբորորդի Մամեդ-բեկի առաջարկը Ղարաբաղի իշխանությունը խանի և մելիքի միջև կիսելու վերաբերյալ, չընդունեց և ընդհակառակը Շուշի եկած Իբրահիմի որդի Մեհտի խանին սրտանց ընդունեց, տարավ հոր պալատը, իսկ Մամեդ բեկին կալանեց:

Նկատենք, որ Արցախի համար դժվարին ժամանակաշրջանում դավաճանական շատ դեպքերին գումարվեց նաև Արցախ ժամանած Հովսեփ Էմինի հորդորները մելիքների կողմից չընդունվելը և նրան Արցախից հեռացնելը: Մելիքների հենց այդ անխոհեմ վերաբերմունքն էլ պատճառ դարձավ, որ Հովսեփ Էմինը հետագայում գրի. «Աշխարհում եղած ամեն բան ունի Ղարաբաղը, բացի մեկից, որը բոլորի թագուհին է խոհեմ ղեկավարություն, որն ասես հրաժեշտ է տվել Ղարաբաղի բնակիչներին»:[96]

Ընդհանրապես դավաճանի կերպարը ուսուցչի կողմից պետք է այնպես ներկայացվի, որ աշակերտները ատելության և սարկազմի հակում ու թշնամանք դրսևորեն նմանների նկատմամբ: Այս տեսակետից խիստ տիպական է դավաճան Մելիք-Միրզախանի նկատմամբ Դիզակի մելիք Եսայու դատաստանի օրինակը, որ մեջ է բերված մեծ վիպասանի կողմից:

«Հատկանշական է դավաճան Միրզախանի վերջը: Խաչենի և Վարանդայի մեկ կողմից և Դիզակի՝ մյուս կողմից մի քանի տարվա պատերազմի վերջում Մելիք Միրզախանը գերի ընկավ: Մելիք Եսային, որ գերեվարողն էր, սուրը բռնելով նրա գլխի վրա նրան դիմեց հետևյալ խոսքերով. «Դու Միրզախան, շատ նման ես այն դավաճանին, որին կոչում էին Մերուժան: Նա ուրացավ մեր կրոնը, նա պարսից ծեռքում գործիք եղավ և սկսեց մեր հայրենիքը ավերակ դարձնել: Նրան որպես վարձատրություն իր կատարած չարագործությունների, խոստացել էին Հայաստանի թագը: Մի ճակատամարտի ժամանակ նա ևս քեզ նման գերի ընկավ հայերի ձեռքը: Այդ միջոցին հայոց զորավարներից մեկը, որին կոչում էին Սմբատ Բագրատունի, կրակի մեջ շիկացած շամփուրին պսակի ձև տվեց և դնելով նրա գագաթի վրա ասաց. «Դու ցանկանում էիր հայոց թագավոր լինել, ահա, ես իբրև ասպետ և թագադիր, պսակում եմ քեզ...»: Բայց դու գոնե Մերուժանի չափ փառասիրություն չունեիր, դու միայն մի ցած դավաճան էիր, որ առայսօր չնչին փառքի համար թուրք խանի և Մելիք Շահնազար չարագործի արբանյակը դարձար: Քեզ հետ պետք է վարվել ինչպես մի կատաղած շան հետ, որին սպանում են, որպեսզի մյուս արարածները նրան կծոտելուց չվարակվեն:[97]

Աշակերտներին պատմել նաև այն մասին, որ դավաճան Ռուստամն էլ նույն արժանի հատուցումը ստացավ, երբ սպանվեց Գյանջայի Ջավադ խանի կողմից ռազմի դաշտում, որի մարմինը հարազատները հետ ստացան և գլուխը թաղեցին եկեղեցու դռան մոտ, իսկ մարմինը՝ Գյուլ-Յաթաղի գերեզմանոցում:

Եվ այս պատմում-նկարագրի անմիջական պրոցեսում էլ ուսուցիչը զուգահեռաբար, ներկա պահի առումով, պետք է վեր հանի այն արցախցի հերոս հրամանատարներին, որոնք ծնունդով Միրզախանի հայրենի գյուղ խնծրիստանցի Աշոտ Ղուլյան-Բեկորն է, իսկ Գյուլ-Յաթաղինը՝ Նորայր Դանիելյան հրամանատարը, որոնք իրենց քաջագործություններով փակել են հայրենակից տմարդիների սև հաշիվները:

## ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվել Ղարաբաղում խանության առաջացման պայմանները:
2. Տալ Ֆանահ խանի անձնական բնութագրությունը և նշել, թե ո՞ր պայմանների առկայությունը հնարավոր դարձրին նրան իրեն հայտարարելու Ղարաբաղի ինքնակոչ խան:
3. Ղարաբաղի մելիքներից ովքեր նպաստեցին Ֆանահին դառնալու Ղարաբաղի խան:
4. Թվել Ղարաբաղի այն մելիքներին, որոնք հակոտնյա վերաբերմունք ունեին Ֆանահ և Իբրահիմ խաների նկատմամբ:
5. Ինչպիսի՞նն էր ռուսական կայսրության վերաբերմունքը Ղարաբաղի խանության նկատմամբ:

## ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

***Թեմա՝ «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» (Հայոց պատմություն, VIII դ., Եր., 1998թ., «Լույս» հրատարակչություն, գլ. 5, էջ 34-50)***

1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմում արցախահայերի կողմից ռուսական բանակին թև ու թիկունք կանգնելու շատ դրսևորումներ են հայտնի պատմությանը: Այսպես, երբ 1805թ. հունվարին պարսկական մեծաքանակ մի զորագունդ է ուղարկվում Ղարաբաղ՝ ռուսների առաջխաղացումը կանգնեցնելու, դեռ Շուշի չհասած Դիզակի հայ կամավորների կողմից խայտառակ պարտություն են կրում ու նահանջում: Կամ, երբ ռուս գնդապետ Կարյագինի հրամանատարությամբ 500 հոգանոց մի ջոկատ Ասկերանի մոտ շրջափակվում է պարսկական Փիր-Ղուլի խանի 10 հազարանոց բանակի կողմից, իսկ այդ պահին Ասկերանին էր մոտենում Աբաս Միրզայի պարսկական 30 հազարանոց բանակը և անհուսալի է դառնում ռուսական ջոկատի վիճակը, կուսապատցի Վանի (Հովհաննես) Աթաբեկյանը գումարտակի ծանր վիճակի մասին տեղյակ է դարձնում Շուշիի ռուսական կայազորին և ինքն էլ գումարտակը գիշերով գաղտնի հանում է շրջափակումից և հասցնում Շահբուլաղ բերդը:

Վանու նվիրվածությունը հասնում է գագաթնակետին. նա այժմ էլ Աբաս Միրզայի կողմից շրջափակված նույն ռուսական գումարտակը սնդամթերքով ապահովելու և նրան այդ վիճակից հանելու հարցերն էր լուծում իր եղբայր Հակոբի և գեներալ Ցիցիանովի միջոցով: Վանու ջանքերի շնորհիվ գիշերը Կարյագինի ջոկատը դուրս է բերվում 2-րդ շրջափակումից ու տարվում Մոխրաթաղ գյուղը: Եվ զուր չէ, որ ռուսական Կովկասյան



զորքերի գլխավոր հրամանատարի քաղաքական գծով տեղակալ գեներալ լեյտենանտ Վասիլի Պոտտոյի «Ղարաբաղի առաջին կամավորները» աշխատության ամեն մի էջ նվիրված է կուսապատցի մելիք Վանի Աթաբեկյանին և նրա նման քաջերին:[98] Արիեստավոր Թունիի զավակ Մելիք Վանին Ղարաբաղի ազատագրման համար մղված ճակատամարտերի մասնակիցն էր 1805-1813թթ: Նրա արյունը եռ էր գալիս, երբ լսում էր զենքի շառաչյուն: Ծնողներից անտեղյակ դարձավ հեծելազորային յուզբաշի: Նա մոտ կապերով կապվեց գեներալ Կարյագինի հետ (հմա-նախկինում գնդապետ): Երբ պետք է գրավվեր Շուշին, հենց Վանի յուզբաշու հեծելախումբը վճռեց ելքը: Նա իր հոր և համագյուղացիների միջոցներով մի քանի ամիս կերակրեց ռուսական բանակը: Այնուհետև Վանու ռազմական հետքերը երևում են Ալանդուզի (Հորադիզից այն կողմ), 1812թ. Աբաս Միրզայի դեմ Երասխի ափին մղված ճակատամարտում: Նա Ռուսաստանի կողմից պարգևատրվեց մեդալներով և ստացավ մշտական թոշակ, իսկ ռուսական զորքերի հրամանատար «Ցիցիանովը Վանուն նվիրեց իր արծաթե ժամացույցը»: Մելիք Վանիի ջանքերով է, որ գսպվեց Աբաս Միրզայի բարկությունը՝ տեսակցություն ունենալով նրա հետ: Հերոսը տեղի տվեց, հետո պատժվեց գեներալ Մադաթովի կողմից, բայց քիչ հետո արդարացվեց երկերեսանության մեծ խաղի համար, որ խաղացել էր Աբաս Միրզայի հետ՝ իբր ռուսների դեմ: Այդ նույն Վանին իր ջանքերով Զրաբերդ մահալում բնակեցնում է յոթ հայկական գյուղեր, որտեղ պարսկական արշավանքների ժամանակ բոլորովին ոչնչացվել էին երկրամասում երբեմնի եղած քաղաքակրթության բոլոր հետքերը:

Իր մելիքությունը խաղաղ պահելու համար, ժողովուրդը մելիք Վանուն հռչակեց «խաղաղ մելիք»: Նրա մահից հետո իր՝ Աթաբեկյանների սերունդը ավելի նշանավորվեց Ղարաբաղում:

Վանու ռուսասեր լինելու մասին շատ դրվագներ կան, որոնցից արժե մեջբերել մեկը, որ նկարագրել է ռուս ռազմական պատմաբանը:

Ասենք, որ «Երբ Պարսկաստանի թագաժառանգ Աբաս-Միրզան, անհանգստացած 1826թ. հուլիսին Շուշիի ամրոց-քաղաքի ուժեղ դիմադրությունից, հատուկ հետախույզների միջոցով գերի վերցրեց Աղվանից վերջին կաթողիկոս Սարգսին, Հովսեփ Բեգլարյանին և Վանուն ու բոլորին էլ բանտ նետեց, նրանց և թագաժառանգի միջև տեղի ունեցավ գրույց, որը վերաբերվում էր ղարաբաղցիների ռուսական և պարսկական կողմնորոշմանը: Աբաս-Միրզայի այն հարցին, թե ի՞նչ շահ ունեն հայերը, որ սիրում են ռուսական հպատակությունը և ոչ պարսկականը, Վանին սրամտորեն է պատասխանում՝ ասելով. «Եթե Ղարաբաղը քոնն է, ապա ինչու՞ են ձեր պարսիկները մորթոտում այդ ղարաբաղցի ենթականերին: Չէ՞ որ այդպես կվերաբերվեն միայն խորթ ու թշնամական երկրի նկատմամբ: Ռուսական ցարը և նրա կամակատարները այդպես չեն վերաբերում իրենց ենթակա-

ների նկատմամբ և ընդհակառակը՝ ձգտում են բազմապատկել նրանց թիվը, քանզի ինչքան շատ լինեն հպատակները, այնքան հզոր ու փառավոր կլինի թագավորությունը»:[99]

Աբաս-Միրզան ոչինչ չպատասխանելով, ժամ առաջ, Վանու ձեռքից վերցրած ռուսական նվեր-մեդալները, որ կախել էր շան վզից, հանեց և հետ տվեց Վանուն:

Ուսուցիչը այս մեջբերումը կարող է օգտագործել նորօրյա Արցախյան շարժման պարագայում, երբ նմանօրինակ մի սարկազմիկ միտք էլ արտահայտել է մեր հանրապետության նախկին ԱԳ նախարար Արկադի Ղուկասյանը (այժմ նախագահ), որը ադրբեջանական պատվիրակության հետ ունեցած մի զրույցի ժամանակ ասել է. «Եթե որ Ղարաբաղը ձերն է, նրանում ապրող հայերն էլ ձերն են, ապա ինչո՞ւ եք թնդանոթի բերանը տալիս նրանց, ինքնաթիռներից ռմբակոծում ու ոչնչացնում գյուղերն ու քաղաքները, գերեվարում ու բանտերը ձգում նրանց, թալանում ու դեպորտացնում Ղարաբաղի հայերին»:[100]

Արցախի հայությունը, նրա մելիքական ուժերը երկիրը ազատագրելու նպատակով կռվում էին ոչ միայն հայրենիքի սահմաններում, այլ ուր որ ռուսական հրամանատարությունը հարմար գտներ: Օրինակ՝ երբ 1804թ. ռուսական զորքը պաշարում էր Երևանը, այնտեղ էր Գյուլիստանի մելիք-Աբովի որդի Ռուստամ-Բեկի հեծյալ ջոկատը, որը անձնազոհության շատ օրինակներ դրսևորեց Բոլնիսում, Փամբակի և Ապարանի մարտերում: Հենց այդ մարտերում ընկան շատ արցախցիներ, իսկ Ռուստամը գերի ընկավ ու Թավրիզի բանտում սպանվեց: Նրա հայրը՝ ծերունի Մելիք-Աբովը վրեժխնդիր լինելով պարսիկներից, գլխավորեց տղայի ջոկատը: Պարսկական զորքերի դեմ մղված մարտերին ակտիվ մասնակցություն բերեց և Մելիք-Զումշուդ-Շահնազարյանը իր հեծյալ ջոկատով, և որին ռուսները 1806թ. փոխգնդապետի աստիճան շնորհեցին: Ի դեպ, Շահնազարյան տոհմի խարդավանքների կողքին արժե դնել և այն անձնուրաց ռազմական գործիչներին, որոնք բարձր են պահել Արցախի հեղինակությունը:

Բավական է նշել, որ միայն մելիք-Շահնազարյանները տվել են 50 բարձրաստիճան սպաներ, ծագել են 5 գեներալներ, դիվանագետներ և քաղաքական գործիչներ: Այդ 5 գեներալներն են՝

**- Անդրեաս (Անդրեյ) Պավելի Մելիք-Շահնազարյան,** գեներալ-լեյտենանտ, որ առաջին աշխարհամարտում եղել է դիվիզիայի հրամանատար, 1918-20թթ. Խորհրդային Հայաստանի բանակում գնդի հրամանատար, 1937թ. բռնադատված ու գնդակահարված:

**- Պավել Զումշուդի Մելիք-Շահնազարով**՝ գեներալ-լեյտենանտ, ծնվել է Շուշիում, 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակից:

**- Նիկիտա (Մկրտիչ) Գրիգորիի Մելիք-Շահնազարով**՝ գեներալ-լեյտենանտ, 1854-56թթ. Ղրիմի պատերազմի մասնակից, դիվիզիայի հրամանատար:



**Նիկոլայ Մեժլումի Մելիք-Շահնազարով**՝ գեներալ-լեյտենանտ՝ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմում դիվիզիայի հրամանատար:

-Սոկրատ-բեկ Շահնազարով՝ 1918-20թթ. Ղարաբաղի ժամանակավոր կառավարության զորքերի հրամանատար:

Ռուս գրող, դիվանագետ Գրիբոյեդովի թարգմանիչն էլ Պարսկաստանում եղել է այդ տոհմից՝ **Նարիման Մելիք-Շահնազարովը,** որը Գրիբոյեդովի հետ սպանվել է Թեհրանում:

Տեղեկություն կա նաև այն մասին, որ այդ տոհմի տղամարդ Սամսոն Բեկը 1920թ. Շուշիի հրդեհի ժամանակ ընդհարվել է թուրքերի հետ, վիրավորվել և երբ մոտ էր մահը, իր մոտ է կանչել հարևան հայ երաժիշտին և նրա «Ղլե յաման» երգ-երաժշտության հնչյունների տակ էլ ավանդել իր հոգին:

Մելիք-Շահնազարյաններից մեկն էլ արժանացել է Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի կոչման:

Փաստվում է նաև այն, որ Տմբլաչի Խաչանը նույնպես այդ տոհմի երևելիներից է՝ Կոնստանտին Կարապետի Մելիք-Շահնազարյան անվանումով:

Այժմ խոսք է գնում այն մասին, որ Արցախյան շարժման նախօրերին, երբ ղարաբաղցի 13 կտրիճներ Մոսկվա են գնում բողոք-դիմումով, Երևանում հանգրվանեցին Շահնազարյանների շառավիղին պատկանող Զարեհ Մելիք-Շահնազարյանի տանը: Ի դեպ, հենց այդ Զարեհի մասնակցությամբ Թիֆլիսի «Պետրոս Մեծի» փողոցում սպանվեց հայոց եղեռնի կազմակերպիչներից Զեմալ փաշան:

Վերջերս մահացավ այդ տոհմից սերված մի հանրահայտ դիվանագետ՝ Աշոտ Մելիք-Շահնազարյանը, որը դիվանագետ էր խորհրդային իշխանության տարիներին և նորաստեղծ հայկական պետության դիվանագիտության հիմքերի ստեղծման գործում մեծ ծառայություններ է մատուցել: Ասենք, որ հենց նրանից է քաղված վերոհիշյալ տեղեկությունները, և նաև այն, որ նա դժվար էր ընդունում այն գնահատականը, որ Շահնազարյան տոհմի հասցեին տարածված է Ղարաբաղում՝ «դավաճան»: Նա գրում է. «Աշխարհի բոլոր դինաստիաներին են հատուկ խարդավանքները»:[101]

Ղարաբաղցիների քաջագործություններն առավել դրսևորվեցին 1826-28թթ., երբ Պարսկաստանի թագաժառանգ Աբաս-Միրզան հանկարծակի հարձակվեց Շուշվա-բերդ քաղաքի վրա (1826թ. հուլիս): Քաղաքում ընդամենը 6 վաշտ ունեցող ռուսական պաշտպանները 48 օր շրջափակված վիճակում դիմադրում էին թշնամու 60 հազարանոց զորքին: Ռեուտի գունդը, որ սկզբում գտնվում էր Ղարաբաղի Ավետարանոց (Չանախչի) գյուղում, իսկ հետո Շուշիի ամրոցում, կարողացավ դիմադրել թշնամուն միայն հայերի օգնությամբ:

1500 հոգուց բաղկացած հայ աշխարհազորայինները ռուսների հետ վճռականորեն պաշտպանեցին բերդաքաղաքը և շրջակա 22 գյուղերից Շուշիում պաշտպանություն գտած հայ բնակչությանը: Հայերի հերոսական դիմագծի վերաբերյալ արժե կարդալ Շուշիի ռուսական կայազորի հրամանատար Ռեուտի նամակը գեներալ Երմոլովին. «Բերդը պաշտպանող հայերի վերաբերյալ պարտքս եմ համարում բացատրել, որ նրանց ծառայությունը արժանի է ուշադրության, որովհետև նրանք բոլորը գործում էին գերազանց քաջությամբ: Դիմացան բազմաթիվ գրոհների և ետ մղեցին թշնամուն խոշոր կորուստներով, արհամարհում էին պարենի պակասը և բնավ չէին մտածում բերդը հանձնելու մասին, թեև վրա էր հասել կատարյալ սովը»:[102]

Այդ օրերին ի հայտ էին եկած անձնական քաջությունների բազմապիսի օրինակներ, որոնց մեջ փայլատակում են Բարութչի Պողոսը, որ օրական պատրաստում էր 20-30 ֆունտ վառոդ կամ հայ մեծահարուստներ Հախումյանները, Մելիք-Շահնազարյանները, Զոհրաբ աղա-Թառումյանը, որոնք իրենց ողջ ունեցվածքը ի սպաս դրեցին հաղթանակին: Բանակը և ժողովուրդը սովից փրկելու համար թշնամու շրջապատման պայմաններում հատուկ մարդիկ գիշերները՝ իրենց ուսերի վրա հացահատիկը իջեցնում էին Հունոտ և Շոշ գյուղերի ջրաղացները և այուրը հասցնում պաշտպաններին:

Հայերի հերոսական դիմադրությունը այդ ժամանակներում ղեկավարում էին Սաֆար և Ռոստոմ Թարխանյան եղբայրները, Շուշվա անօրինակ պաշտպաններից էին սուրհանդակ Հ. Ալթունյանը, կապիտան Մաղաթովը և ուրիշներ:

Բերդի հայ կանայք և երեխաները զինամթերք էին մատակարարում զինվորներին, խնամում վիրավորներին: Հանրահայտ է Խաթունի հայ կնոջ կերպարը, որը մեծարվել է վիպասան Ռաֆֆու գրչով: Հերոսական շատ դեպքեր են գրանցված նաև Մելիք-Ռուստամի որդի Մելիք-Ռովշանի հաշվին, որն իր ջոկատով փրկել է ռուսական զորքերին շրջափակումից Թառնագյուլ (Շահբուլաղ) բերդի շրջանում: Վասիլի Պոտտո գեներալ-գրողը վկայում է, որ հետագայում հայ կամավորներից շատերը արժանացան պարգևների և արտոնությունների, ինչպես Ռոստոմ Թարխանյանը, որ ստացավ ռուսական պրապորշչիկի զինվորական կոչում և ցմահ թոշակ, իսկ Սաֆար Թարխանյանի մահից հետո նրա ընտանիքի անդամներին նշանակեցին նպաստներ:[103]

Ղարաբաղի հայերի ծառայությունն այնքան մեծ էր ռուսներին, որ 1826թ. պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան ներխուժելով Հայաստանի Արցախ աշխարհը Ռուսաստանի դեմ իր զորքին հայտարարեց, որ ինքը հայի մեկ գլխի համար տալիս է մեկ թուման դրամ:

Վասիլի Պոտտոն ռուսներին հայերի նվիրվածության մասին գրել է. «Իհարկե, եթե հայերն էլ պարսիկներին դիմավորեին խոնարհաբար, աղուհացով... ինչպես այդ արեցին թաթարները, նրանք կարող էին պահպանել իրենց կյանքն ու ինչքը: Սակայն հայերի մեջ դավաճաններ չգտնվեցին (Ռուսաստանին) և նրանք բոլորն էլ դատապարտված էին կործանման:[104]

Մի այլ ռուս ականատեսի պատմածից իմանում ենք. «Հիշում եմ, թե ինչպես ամրոցում ապաստան գտած հայ գյուղացիներն իրենց բոլոր անասունները տվեցին ամրոցի կայազորին՝ կերակրման համար»:

## ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1.1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի արցախյան հատվածում ռուսական բանակի հայերի օգնելու ո՞ր փաստերին եք ծանոթ:

2.Ո՞վ է Մելիք Վանի Աթաբեկյանը և ի՞նչ քաջագործությունների հեղինակ է նա:

3.Ո՞վ է ղարաբաղցի այն զորավարը, որը վճռողական դեր է ունեցել 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմում:

4.Ինչպե՞ս դրսևորվեցին ղարաբաղցիների ուժերը 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմում, բերել օրինակներ:

5.Ինչպիսի՞ նվիրվածություն հանդես բերեցին հայերը Շուշիի 1826թ. պաշարման ժամանակ: Թվել հայրենասերներից մի քանիսի անունները:

## ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

***(«Նոր պատմություն, VII դ.») դաս.28՝ «Ռուսաստանը 19-րդ դ. երկրորդ կեսին» և դաս. 44, 45-րդ՝ «Ռուսաստանի կայսրության ժողովուրդները»***

Ցարական Ռուսաստանը Անդրկովկասում, այդ թվում և Ղարաբաղում իրագործում էր գաղութային քաղաքականություն: Ղարաբաղը Ռուսաստանին միացվելու հենց սկզբից այստեղ հաստատվեց ռազմա-ավատատիրական կարգ:

«Արցախի ժողովուրդը տրտնջում, բողոքում և նույնիսկ ապստամբություն է բարձրացնում հողատերերի դեմ, ինչպես, ասենք Դիզակի շրջանի Բանաձոր (անցյալում Բանազուր) գյուղի բնակիչները, որոնք ոտքի ելան գնդապետ Զաֆար Ղուլի աղայի դեմ»:[105]

Տվյալները ցույց են տալիս, որ Ռուսաստանում ամենաքիչ հող ունեցողները Արցախ-Ղարաբաղի լեռնային շրջանների գյուղացիներն էին, Զեբրայիլի, Զանգեզուրի, Շուշիի և Ջիվանշիրի գավառներում մեկ շնչին հասնում էր ընդամենը 0,6 դեսյատին հող: Այդ գավառներում զգալիորեն

բարձր էր հողի փրկագինը: Գյուղացիները 500 դեսյատին հող փրկագնելու համար կալվածատիրոջը պետք է վճարեին 10 հազար ռուբլի:

Արցախ-Ղարաբաղի բոլոր արգավանդ հողերը, արոտավայրերը և այգիները գտնվում էին կալվածատերերի ձեռքին՝ Շուշիի գավառից Սաֆարալիբեկովը, Ձիվանշիրբեկովը, Ռուստամբեկովը, Մեհթիբեկովը և այլ կալվածատերերից յուրաքանչյուրն ուներ մինչև 12 հազար դեսյատին հող: 20-րդ դարի սկզբին Արցախ-Ղարաբաղի գավառների ազնվականների 75 տոկոսը մուսուլմաններ էին: Ղարաբաղում գյուղացիության մեծամասնությունն ապրում էր խանական, բեկական և մելիքական հողերի վրա: Օրինակ՝ Գանձասարի և Խաչենի 35 գյուղերից 3-ը պետական էր, 4-ը՝ վանքապատկան, իսկ մնացածը՝ բեկապատկան և մելիքապատկան:

Բեկերն ու մելիքներն անխնա շահագործում էին գյուղացիներին, նրանց ուժասպառ անում, գյուղացին պարտավոր էր Բեկին կամ Մելիքին տալ բերքի 1/10-րդ մասը և յուրաքանչյուր դեսյատին հողի համար 30 կոպեկ: Գյուղացիներին խաբում-թալանում էին նաև վաշխառուները: Կյանքի այդ ծանր պայմանները շատերին ստիպում էր աշխատանք որոնել երկրամասի սահմաններից դուրս: Ոմանք բռնում էին քաղաքի, մանավանդ՝ Բաքվի ճանապարհը, ուր հնարավոր էր աշխատանք գտնել: Այդ առթիվ պատմաբան Լեոն (արցախցի Առաքել Բաբախանյանը) գրել է. «Բաքուն... իրեն էր քաշում գավառները և առանձնապես Շուշին... Ղարաբաղի գյուղերը բռնել էին քայքայման ճամփան, մարդկային հորձանքներ էին ուղարկում Բաքու»:[106]

Այնուամենայնիվ, անկախ այդ ամենից Արցախ-Ղարաբաղի միացումը Ռուսաստանին, ունեցավ պատմական կարևոր նշանակություն: Նախ՝ ժողովուրդը, փրկվեց ֆիզիկական ոչնչացումից և երկրորդ՝ կապվելով ռուս ժողովրդի հետ, զարգացրին իրենց տնտեսությունը, մշակույթն ու գիտությունը: Անդրկովկասի վարչական բազմաքանակ բաժանումներից հետո ցարական Ռուսաստանը ձեռնամուխ եղավ նրա տնտեսական յուրացմանը:

«Դրան հասնելու համար ցարական կառավարությունը իրականացրեց մի շարք միջոցառումներ, որոնք շատ թե քիչ սկսեցին աշխուժացնել տնտեսական կյանքը: Առաջին հերթին անհրաժեշտ եղավ պարզել և ճշտել, թե ինչ եկամուտներ էր ստանում խանը Ղարաբաղից, որոնք հետագայում պետք է մտնեին պետական գանձարան: Այդ նպատակով 1822-23թթ. երկրամասում անցկացվեց աշխարհագիր, ցուցակագրվեցին բոլոր բնակավայրերը, ընտանիքի անդամները, հավաքվելիք հնարավոր տուրքերի չափը»:[107]

1861թ. փետրվարի 19-ի կանոնադրությամբ ճորտատիրական իրավունքի վերացումից հետո, 1870թ. մայիսի 14-ի օրենքով գյուղացիական բարեփոխումներ անցկացվեց Հայաստանում, այդ թվում և Ղարաբաղում: Նոր օրենքով Ղարաբաղում վերացվեց հողի օգտագործման համայնա-



կան եղանակը և այն փոխարինվեց անհատական եղանակով: Բնատուրքերից շատերը վերածվեցին դրամականի: Այդ ամենը նպաստեց ապրանք-դրամական հարաբերությունների զարգացմանը: Չնայած դրան Ղարաբաղը մնում էր որպես հետամնաց ագրարային երկիր, որտեղ արտադրության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր: Այն զարգանում էր իր ցանքատարածությունների ընդարձակման և բերքատվության բարձրացման միջոցով: Այսպես «1883 թվականից մինչև 1896 թվականը Ելիզավետպոլի նահանգում հացահատիկայինների ցանքատարածությունն ու բերքատվությունը ավելացավ 2-ից մինչև 2,5 անգամ»:[108]

Մասնագիտանում էր գյուղատնտեսությունը: «Շուշվա գավառում ավելի շատ զարգացած էր շերամապահությունը... Ձիվանշիրի գավառում բամբակագործությունը և խաղողագործությունը: Շուշվա գավառում 1890թ. ստացվել էր 2138 փութ բոժոժ, իսկ 1894թ. 17 հազար փութ»:[109]

«Անասնապահությունը արցախցիների գլխավոր զբաղմունքներից էր: Օրինակ 1891թ. Շուշվա գավառում պահում էին 69 161 գլուխ խոշոր և 144865 գլուխ մանր եղջերավոր անասուն, իսկ 1895թ. համապատասխանաբար 76180 և 164080»:[110] Քայլեր ձեռնարկվեցին գյուղմթերքների արտադրանքի մշակման գործում: Գինեգործական կենտրոններ դարձան Գիշի և Ղզղալա (Բերդաշեն) գյուղերը: Շուշու գավառում 1884-1894թթ. գինու արտադրությունը 95406 դույլից հասավ 186000 դույլի: Ստեղծվեցին օղու թորման գործարաններ, որոնցում արտադրվում էին 300 հազար դույլ օղի (1895թ. տվյալներով), որոնց դրամական արժեքը կազմում էր մեկ միլիոն 323 հազար 270 ռուբլի: Սպիրտ էին ուղարկում Կովկասի տարբեր շրջաններ և Եվրոպա: Բարձր էին գնահատվում Վարանդայի Բերդաշեն, Գիշի, Մուշկապատ, Աշան, Ճարտար գյուղերի գինիները:

Արցախցիները տնտեսական կապեր ստեղծեցին ոչ միայն Ռուսաստանի տարբեր շրջանների, այլև աշխարհի շատ երկրների հետ: «Հանդես եկան կազմակերպություններ, որոնք արտասահմանից ներ էին մուծում բարձորակ սերմեր՝ խաղողի և բամբակի, Բրազիլիայից Հս. Ամերիկայից, Եգիպտոսից, Հնդկաստանից, տեխնիկական մշակաբույսերի վերամշակման համար մեքենաներ՝ Հս. Ամերիկայից, Ֆրանսիայից»:[111]

19-րդ դարի վերջերին Անդրկովկասում շերամի հունդի աճեցման և տարածման գործը կենտրոնացված էին երեք ընտանիքների ձեռքում, որոնցից մեկը՝ Տեր-Գրիգորյանները ղարաբաղցիներ էին: «1882թ. Մոսկվայում կազմակերպված տոնավաճառում Հոնաշեն-Հադրութի մետաքսը արժանացել է բրոնզե մեդալի, իսկ Ֆիլադելֆիայում՝ ոսկե: Հադրութի մետաքսից են պատրաստվել Փարիզի Ելիսեյան պալատի վարագույրները»:[112]

1868թ. Շուշու գավառում կար 490 մետաքսակարժական արհեստանոցներ (Քարին տակ և այլն), որտեղ թողարկվում էր 76 հազար ռուբլու

արտադրանք: Միայն Վարանդայի գավառում (Զարդանաշեն, Ննգի և այլն), 1895թ. արտադրվեց 9 հազար փութ բոժոժ: Ժամանակակցի վկայությամբ 1888թ. Արցախում կար 18 մետաքսագործարան, որոնք պատկանում էին հայերին և տեղադրված էին Շուշիում, Ստեփանակերտում, Կրկժանում, Քարին տակում, Սղնախում, Չանախչում, Ղարաբուլաղում, Ղշլաղում, Թաղուտում, Տողում, Հաղրութում, Շոշում, Բալուջայում, Խանածախում, Գիշում:

Մետաքսի արտադրության մեջ Ռուսաստանում Ղարաբաղը բռնում էր 2-րդ տեղը, սակայն 1-ին աշխարհամարտը ընդհատեց այդ թափով զարգացումը հաղորդակցության ուղիների խանգարման պատճառով:

Երկրամասը զարգացավ նաև արհեստներով՝ գորգագործությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը, պղնձագործությունը, բրուտագործությունը, դարբնությունը, հյուսնությունը, քարտաշությունը, կոշկակարությունը, ներկարարությունը, դերձակությունը: Շուշիի գավառում հազար բնակչից 22-ը արհեստավորներ էին, միայն քաղաքում կային 500 տեսակ արհեստ:

Առևտրականները հիմնականում հայեր էին: Նրանցից հայտնի էին Շուշեցի Թառումյաններն ու Հախումյանները: «Եվ զուր չէ, որ գերմանական» Ալգեմայն ցայտունգ» թերթը 1846թ. նոյեմբերի 15-ի իր համարում գրել է. «Ղարաբաղի գլխավոր քաղաքը՝ Շուշին առանց չափազանցության կարելի է համարել Կովկասյան Ձիբրալթար»»:[113]

Շուշիի մեծահարուստները կառուցեցին և խճապատեցին Շուշի-Եվլախ, Շուշի-Գորիս-Նախիջևան-Երևան ճանապարհները: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ Ադրբեջանի, հատկապես Բաքվի առևտրական և արդյունաբերական կապիտալի գերակշիռ մասը գտնվում էր ղարաբաղցի և արևելահայ մեծահարուստների ձեռքին: «...Հայերն էին տնօրինում գինեգործական, ծխախոտագործական արդյունաբերությունը: Բաքվի նահանգի արդյունաբերական ձեռնարկությունների 29 %-ը պատկանում էր հայերին, 27 %-ը՝ ռուսներին, 18%-ը՝ ադրբեջանցիներին, 13%-ը՝ օտարերկրացիներին»:[114]

Իսկ ու՞մ չէ հայտնի, որ Բաքուն զարդարող կառույցների տերերն ու հեղինակները հիմնականում հայերն էին (Մանթաշեվ, Միրզոյան, Արամյան, Մաիլով և այլք):

Ռուսաստանի գերիշխանության պայմաններում Ղարաբաղում առաջանում էին նաև արդյունաբերական ձեռնարկություններ: Արդյունաբերական եղանակով մետաքսաթելի արտադրության առաջին փորձերն Արցախում կատարվել են 19-րդ դարի կեսերին: «1856-57թթ. Արցախի Աղաբաբա և Գրիգոր Խաչատրյանները, Կարապետ-Շահնազարյանցը, Վարարակն բնակավայրում հիմնադրեցին մետաքսագործական առաջին ֆաբրիկան: Դ.Հարությունյանցի արհեստանոցում Ռուսաստանում առաջին



անգամ կիրառվեց շերամը չորացնելու հատուկ մեքենայական սարքավորում: 19-րդ դարի վերջին Արցախում կային 20-ից ավելի մետաքսագործական ֆաբրիկաներ, որը 1913թ. հասել էր 46-ի, որոնցում գործարկվում էր 1574 մետաքսակարժական թասեր և 8888 իլիկներ»:[115] Հայտնի էին Զրաբերդի, ջրաղացաքարերը, որը Ադրբեջանում եզակի արտադրություն էր: Այն արտահանվում էր Իրան, Թուրքիա և Եվրոպա:

Արցախ-Ղարաբաղի առանց այն էլ թույլ տնտեսությանը մեծ հարված հասցրեց առաջին համաշխարհային պատերազմը, չէ՞ որ երկրամասի բնակչության մի զգալի մասը զինվորագրվեց, ինչպես, օրինակ, «Միայն 1916թ. բանակ զորակոչվեցին 7728 հոգի, որը կազմում էր աշխատունակ մարդկանց 50%-ը: Կրճատվեցին ցանքատարածությունները և անասնագլխաքանակը Արցախում, աշխատողներ չլինելու պատճառով: Օրինակ՝ եթե պատերազմից առաջ Շուշվա գավառում տարեկան կատարվում էր 20 հազար 321 դեսյատին ցանքս, ապա 1916թ. այն իջել էր 8772 դեսյատինի»:[116]

## ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ու՞մ էր պատկանում Ղարաբաղի հողային տարածքները ռուսական կայսրության տիրապետության պայմաններում և ինչպիսի՞ն էր գյուղացիների վիճակը այդ ժամանակներում:
2. Ի՞նչ նշանակություն ունեցավ Արցախ-Ղարաբաղի միացումը Ռուսաստանին, բերել փաստեր:
3. Գյուղատնտեսության ո՞ր ճյուղերն առավել զարգացան Ղարաբաղում:
4. Արդյունաբերության ո՞ր ճյուղերը հիմնադրվեցին Ղարաբաղում և ի՞նչ արտադրանք տվեցին դրանք:

## ԱՐՑԱԽԸ ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

***(«Հայոց պատմություն VII» եր., 2005թ., էջ 113-116)***

1905-1907թթ. ռուսական առաջին հեղափոխության առաջին ամսիներից ցարական արքունիքը, բարձրաստիճան պաշտոնյաները, միջոցներ էին որոնում ժողովրդի ուժերը մասնատելու համար:

Իշխանությունները չէին խորշում դիմելու ոճրագործության, ինչպիսին տարբեր ժողովուրդների միջև կրոնական և ազգային թշնամանք բորբոքելն էր: Անդրկովկասում այդ քաղաքականությունն ուղղվում էր հայերի և ադրբեջանցիների (թաթարների) դեմ: Նման թշնամության արդյունքները արտահայտվեցին հատկապես 1905թ. փետրվարի 6-ի Բաքվի, Սյունիքի,

Թիֆլիսի, Ելիզավետպոլի հայաշատ շրջաններում, իսկ Շուշիում կրկնակի անգամ:

Այս թեմայի հաղորդման ժամանակ հարկ է, որ ուսուցիչը բացի ցարիզմի քաղաքականությունը բացատրելուց, անդրադառնա նաև այն հարցերին, թե ինչու հենց հայերի ու թաթարների միջև պետք է տեղի ունենային այդ ընդհարումները:

Ասվի, որ այդ ընդհարումները նախնառաջ հետևանք էին պատմա-քաղաքական, ազգային-էթնիկական, սոցիալ-տնտեսական, կրոնա-մշակութային և այլ պատճառների: Այն ժամանակվա և հետագա ուսումնասիրողները հաճախ ծանրացել են այս կամ այն պատճառի վրա, դրանք մեկ ամբողջության դիտարկելու փոխարեն: Մասնավորապես, առանձնացվում էին հայերի և թուրքերի (թաթարների) սոցիալ-տնտեսական, լեզվա-ցեղային յուրահատկությունները, կրոնական անհանդուրժողականությունը, հասարակական-քաղաքական հակոտնյա հայացքների անհամատեղելիությունը և այլն:

Աշակերտներին, իհարկե, կարելի է այդ պատճառների մասին շեշտել, բայց հարկ է, որ ամենից առաջ ասվի թուրքերի ազգային-ցեղային հոգեբանության, մահմեդական արմատական գաղափարախոսությունների մասին:

Հարցի առումով խորհուրդ կտայինք, որ ուսուցիչներն իրենց ձեռքի տակ ունենան կարկառուն այնպիսի փաստեր, որոնց հեղինակներն օտար մարդիկ են:

Այդպիսի մի քանի փաստերից են Լոնդոնի մի լրագրի այն հոդվածը, որ վերնագրված է «Թաթարների գիշատիչ բնազդների մասին» (1905թ. սեպտեմբերի 25-ին), կամ «Ռուսական կառավարության ոճրագործ քաղաքականությունը եղել է աղետների գլխավոր պատճառները» վերտառությամբ թղթակցությունը:

Բերել Գասթն թղթակցի այս խոսքերը, որ գրել է 1905թ. սեպտեմբերի 2-ին մի կռվի մասին: «Անդունդ է բաժանում երկու ցեղեր... հակադիր ազգություններ, ներհակ բնազդներ և քաղաքակրթության մի իդեալ, որին մեկը հետապնդում է, իսկ մյուսը ետ է մղում»:[117]

«Ռուսական այն ժամանակվա թերթերը ևս կռվի պատճառները տեսնում էին մտավոր, հոգեբանական, ցեղային-մշակութային պատճառների մեջ, որ ռուս հասարակությունը միամտաբար թուրքերի անցյալն անդարձ էր համարել, բայց հիմա, երբ Կովկասի մի ծայրից մյուսը հեղեղված է սարսափներով, նա զարհուրանքով տեսնում էր, որ ողջ ծավալով զարթնել են նրանց անցյալի բնազդները, թևեր առել ավարառության տենչը»,[118] -եզրակացնում է մեր նորօրյա պատմաբանը:

Մի հեղինակ իր «Կ ՏՐԱՊԻՑՅԱՎՏՐՈՒ ԻՈՄՂՍՈՂՈՍԷՏ ՎՈՐԱՊԱՎՈՒ» հոդվածի մեջ (որը հրատարակվել էր «ՀՈՒՍՈՂՈՍՈՒ ԱԴՈՒՏՍ» N121, 1906թ.)



գրում է, թե «Քաղաքակրթական ցածր աստիճանի վրա գտնվող Անդրկովկասյան թաթարը, վրեժխնդրության հոգի վրա կատարած սպանությունը ոչ միայն չի համարում ոճրագործություն, այլև դիտում է որպես առաքինություն»:

Կամ, Կովկասի ոստիկանության պետ գեներալ Շիրինկինը:

1906թ. Պետերբուրգ՝ ոստիկանական դեպարտամենտի պետին հասցեագրված հույժ գաղտնի մի գրության մեջ նշում է, որ Անդրկովկասյան թաթարների կամ ավելի ճիշտ, թուրքերի մուսուլմանական ընդհանուր մոլեռանդությունն ընդդեմ քրիստոնյաների, ընդհանրապես, բարդանում էր դեպի հայերն ունեցած յուրահատուկ ատելությամբ: Գեներալը դա բացատրում է մի կողմից ռուսների կազմում հայերի թիկունք լինելու, մյուս կողմից իսլամի ստորացման համար վրեժը հայերից առնելու մեջ:

Մոլեռանդները Ղուրանի պատվիրանները կատարում են ապշեցուցիչ ճշտությամբ «Յա. Մուհամմեդ Յա Ալի» ճիչերով:

Այս համատեքստում պետք է դիտարկել նաև բոլշևիկ Վորովսկու ներքոհիշյալ բնութագրությունը. «Կովկասի պրոլետարիատի շարքերում ամենագիտակից տարրերը հայ բանվորներն էին: Այդ հեղափոխության ուժի դեմ պայքարելու համար մոբիլիզացվում են թաթարները (ադրբեջանցիները), որոնք իրենց սոցիալական իրավիճակով և իրենց կրոնական հավատալիքներով շատ են տարբերվում հայերից. թաթարներին լրիվ ազատություն է ընձեռվում սպանելու, բռնանալու, թալանելու»:[119]

Հայ-թաթարական ընդհարումների պատճառները բնութագրելիս պետք է քննադատական խոսք ուղղել նաև Բաքվի և մյուս նահանգները կառավարած այլազգի իշխանավորներին, որոնցից հատկապես առանձնանում է Բաքվի նահանգապետ Նակաշիձեն, որի առիթով նույն Բաքվի քաղաքագլուխ Ալեքսանդր Նովիկովը ասել է. «Ես կճանաչեմ հանցավորին և սրբազան պարտքս կհամարեմ ասել նրա անունը: Կոտորածի հեղինակը դուք եք: Դուք Կայենից էլ վատ եք: Կայենը մեկ եղբայր սպանեց, իսկ դուք թաթախեցիք ձեր ձեռքերը հարյուրավոր անմեղ եղբայրների արյան մեջ: ...Դուք Հուդայից էլ վատ եք, որովհետև Հուդան զարհուրելի գործը նյութելուց հետո զղջաց ու գնաց խեղդվելու, իսկ դուք հնարավոր եք գտնում ապրել ձեր բոլոր արածներից հետո... Դուք անպատվեցիք հրաշագեղ Վրաստանը, դուք անարգեցիք Ռուսաստանը, որի դեմ կարող էին տրտնջալ աղետի զոհերը և անգիտակից ոճրագործները, կարծելով, թե ձեր և Ռուսաստանի միջև կա որևէ ընդհանուր բան, թող ձեր անունը հավիտենապես անիծված լինի»:[120] Նակաշիդզեին տրված Ա. Նովիկովի այդ բնութագրությունը գալիս է արդարացնելու Դրաստամատ Կանայանի (Դրոյի) կողմից Նակաշիձեին սպանելու արարքը, որ կատարվել է Բաքվում:

Իսկ թե ինչ վերաբերմունք ունեին ցարական իշխանություններն այդ

գործում վկայում են բազմաթիվ փաստերով ապացուցված այն գործողությունները, որոնք կատարվել են այն տարիներին.

Նախ՝ Կովկասի կառավարության թուրքամետ քաղաքականությունն է համապատասխան մթնոլորտ ստեղծել:

Երկրորդ՝ նրանց ավելի վստահելի են համարում, քան հայերին: Եվ հետևաբար այդ «անվստահելի հայերին», ուզում էին տկարացնել, երես տալով մահմեդականներին, ինչպես Թուրքիան էր հայերին դուրս մղելու համար օգտագործում քրդերին: Հենց հայերին թուլացնելու մի որոգայթ էր նաև 1903թ. հունիսի 12-ի օրենքը, որով բռնագրավեցին հայկական եկեղեցու սեփականությունը:

Դառնալով հարցի հեռանկարին, անհրաժեշտ կլինի, որ այդ հայ-թաթարական կռիվների շարունակություն համարել նաև Տաճկահայաստանում կատարված 1915թ. ցեղասպանությունը, 1918-20թթ. կոտորածները Բաքվում և Ղարաբաղում, որոնց տարբեր թեմաների կոնտեքստում անդրադառնալու է ուսուցիչը: Սա միաժամանակ կլինի և ներառարկայական կապի մեթոդա-մանկավարժական պահանջի կատարում: Բայց սոսկ հայ-թուրքական ընդհարումների պատճառների բացակայություններով չպետք է բավարարվի ուսուցիչը, այլ պետք է նաև նկարագրվի դրա հետևանքները և առանձնապես հայերի ինքնապաշտպանության դրվագները:

Ասվի, որ Ղարաբաղի ինքնապաշտպանության ղեկավարներ Վարդանը (Խանասորի) և Համազասպը արժանապատվորեն էին կազմակերպում հայերի պաշտպանությունը: Հենց նրանց հմուտ գործողություններով ապահովվեցին թուրքերի ջարդը 1906թ. օգոստոսի 19-ին Խրամորթում, Սոս գյուղում, որտեղ հայերը սպանեցին Թուրքիայից օգնության եկած խանին:

Երբ Աղդամից երկու հազար զորքով թուրքերը փորձում էին ներխուժել Արցախ, Վարանդայի և Խաչենի հայերը փակում են Ասկերանի կիրճը և Համազասպի ու Վարդանի գլխավորությամբ ջախջախում թուրքերին, այդ ժամանակ Շուշիից նահանջող մի զորաջոկատ Ասկերանի և Խոջալուի արանքում ջախջախվում է և երկու հարյուր ասկյարներից փրկվում են միայն 6-ը:

Կամ, երբ 1906թ. հուլիսի 13-ին Դայբալուի ծորից թուրք-քրդական հրոսակները փորձում են Երևանյան դռներից ներխուժել Շուշի, քարինտակեցիների և դայբալիշենցիների հուժկու հարվածի տակ ստիպված ետ նահանջեցին:

Ուսուցչի համար հրատապ է, որ զուգահեռաբար տրվի նաև Արցախյան ազատագրական պայքարի պատճառների ու հետևանքների մասին, ընդգծվի ազերի-թուրքերի նախահարձակման և նրա պարտության ընթացքը, արցախցիների հերոսական դիմագիծը:



# ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1918-20ԹԹ.

*Թեմաներ՝ ա/ «Պայքար Լոռու, Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի համար» (Հայոց պատմության դասագիրք 8-րդ դ., 2000թ. «Լույս» հրատ., Եր., էջ 48-53)*

*բ/ «Միջպետական հարաբերությունները Հայաստանում» և «Խորհրդային Հայաստանի տարածքային խնդիրները» (10-րդ դաս. պատմության դասագիրք, Եր., 2001թ., էջ 195-197):*

Ի լրացումն 8-րդ և 10-րդ դասարանների դասագրքերում շարադրված նյութերի, հարկ է, աշակերտներին լրացուցիչ նյութեր հաղորդվեն Արցախի վերաբերյալ: Պատմել Ռուսաստանի բուրժուական ժամանակավոր կառավարության քաղաքականությունից մինչև Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականության շրջանի այն իրադարձությունների մասին, որոնք կապված են Արցախի պատմության հետ: Ասվի, որ «1917թ. Փետրվարյան-բուրժուադեմոկրատական հեղափոխությունից հետո հավանություն տրվեց հայության նվազագույն պահանջներին: Ժամանակավոր կառավարությունն արդարացի գտավ Անդրկովկասի նախագծված վարչական նոր բաժանումը, ըստ որի՝ Արցախը (որ այն ժամանակ գավառի հայերի թիվը հասնում էր 300 000-ի և կազմում էր բացարձակ մեծամասնություն - Մ.Բ.), Գանձակը, Ախալքալաքը և Շարուր Նախիջևանը ճանաչվեցին որպես հայկական տարածքներ»:[121]

Եվ ժամանակավոր կառավարության 1917թ. մարտի 9-ին ստեղծված Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (Օզակոմ) կարգադրությամբ մարտի 13-ին կազմակերպվեց 40 հոգուց բաղկացած Ղարաբաղի գործերի կոմիտե՝ տարածքի կյանքը ղեկավարելու համար: Սակայն 1918թ. գարնանից սկսած թուրքական նվաճողները, որ ձգտում էին Բաքու՝ խեղդելու անդրկովկասյան հեղափոխության կենտրոնը, Ադրբեջանի մուսավաթների կառավարության խնդրանքով Հայաստանի դաշնակցական կառավարությանը ստիպեց Ելիզավետպոլի (նախկին Գյանջայի) նահանգը ճանաչելու մուսավաթների տարածք և Զանգեզուրը, Արցախն ու Գանձակի հայկական գավառները հայտարարվեցին մուսավաթական Ադրբեջանի մաս:

Եվ մուսավաթներն այդ պլանը ցանկանում էին կատարել հայ ժողովրդի դահիճ էնվեր փաշայի եղբոր՝ Նուրի փաշայի միջոցով, որը Գանձակ ժամանեց 1918թ. մայիսի 25-ին: Նրան օգնում էր ցարական Ռուսաստանի գեներալ-լեյտենանտ Ալի աղա Շիխլինսկին: 1918թ. մայիսից սկսած Ղարաբաղում տեր ու տնօրինության ձգտող տաջիկ սպաները Ադրբեջանի անունից վերջնագրեր էին ներկայացնում Ղարաբաղի հայությանը պահանջելով հպատակություն հայտնել և հանձնել զենքը: Այդ ամենին զու-

գակցվում էին բարբարոսություններն ու դաժանությունները, սպանություններն ու ավերումները: Նրանք քանդեցին Ամարասի վանքը, խոնաշենում (Մարտունում) ավերվեցին հարյուրավոր տներ:

«Ահա այդպիսի պայմաններում, Ղարաբաղում գործող քաղաքական կուսակցությունների նախաձեռնությամբ 1918թ. հուլիսի 22-ից 26-ին Շուշիում անցկացվեց Ղարաբաղի հայության 1-ին համագումարը, որին յուրաքանչյուր գյուղից մասնակցում էր մեկական պատգամավոր»:[122]

Համագումարն ընտրեց Հայոց Ազգային խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած ժողովրդական կառավարություն կրթված հեղափոխական Ալեքսանդր Ծատուրյանի (Ռուբենի) գլխավորությամբ:

Համագումարը մերժեց Ադրբեջանի պահանջը: Սակայն Արցախի հայությունը Բաքվի Կոմունայի անկումից հետո դժվար կացության մեջ ընկավ: Ղարաբաղի և Զանգեզուրի հայերը իրենց պաշտպանությունը կազմակերպելու համար ստեղծեցին միություն և նախագահ ընտրեցին Լեոյին՝ Առաքել Բաբախանյան պատմաբանին:

«Բայց այս միությունն անձեռներեց և վախկոտ դուրս եկավ թեև գլուխ ուներ մի մեծ պատմաբանի»:[123]

Ամռանը օսման-թուրքերը Գանձակ բերին վեց դիվիզիա: Նրանց միացավ մուսավաթների «Իսլամի բանակ» կոչված զորքը: Թուրքական էմիսար Նուրի փաշան պահանջեց հայկական կառավարության ղեկավար Ալ. Ծատուրյան-Ռուբենից անհապաղ ենթարկվել իրեն և հանձնել Ղարաբաղը, բայց մերժում ստացավ: Ղարաբաղը կռվեց Նուրի փաշայի դեմ, դիմադրեց թուրքերին: Թուրքերը սեպտեմբերի 15-ին գնացին Բաքու՝ հայերին կոտորելու և միայն մի դիվիզիա Զեմալ-Զեվադ բեյի գլխավորությամբ մնաց, որը պահանջեց հայերից՝ իրեն ճամփա տալ դեպի Շուշի: Նրա պահանջն էլ մերժվեց և կռվեց հայերի դեմ: Հայերը դիմադրեցին նրան: Սակայն Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը հավատաց ու հնազանդվեց Զեվադ բեյին, նրանից խոստում առնելով, որ կոտորած չի լինի: Վահան եպիսկոպոսը չվստահեց և, կարելի է ասել, արհամարհեց Ղարաբաղի այն ժամանակվա պաշտպանական շրջանների ուժերը, որ բերում ենք ստորև տրված գծագրում:



**Անդրանիկի զորքը (թիկունք)**




1918թ. սեպտեմբերի 25-ին Վահան եպիսկոպոսի թույլտվությամբ թուրքերը մտան Շուշի և «իրենց ստոր բնույթին հնազանդ»[124] այրեցին առաջնորդարան Ղազանչեցոց եկեղեցին, լուծարեցին Ազգային խորհուրդը:

Այդ աղետի մասին շատ դիպուկ է գրել խորհրդայինն ղեկավարներից Սերգո Օրջոնիկիձեն՝ «Հիշեցեք հարյուրավոր այրված գյուղերը...»: Հայտնի են Նուրի փաշայի կեղծավոր նամակները Ղարաբաղի բնակչությանը: «Նա անամոթաբար շարունակում է շաղակրատել, թե «Թուրքիո շատ պաշտոններում հայեր են, նրանք՝ հայերը, մեր երկրում բոլորից լավ են ապրում»: Հետո հայերից ու ադրբեջանցիներից կազմված պատվիրակություն է ուղարկում հայերի մոտ և առաջին անգամ պաշտոնական ձևով Ղարաբաղը համարում Ադրբեջանի մաս»: Բայց ինչպե՞ս թե «Ղարաբաղը կազմում է Ադրբեջանի Հանրապետության անքակտելի մասը», այդ ո՞ր օրվանից, ի՞նչ հիմունքներով, իսկ ո՞վ էր հարցրել ղարաբաղցիների կամքը»:[125]

Այդ հարցերին պատասխանելու համար հրավիրվեցին հայության այն 10 համագումարները, որ բերում ենք ստորև:

# Ղարաբաղի հայության համագումարները

| Հերթա-կանությունը | Երբ է կայացել | Նիստերի կայացման վայրը | Մասնակիցների քանակը | Քննարկված հարցերը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| I | 1918թ. 22-26 հուլիսի | Ասկերանի թիմական դպրոցի դահլիճը | 104 | 1.Զորքերի և ֆիդայիների խորհրդի հաշվետվությունները: 2.Պարենավորման խնդիրը: 3.Հայկական ուժերը: 4.Դատարանների հարցը: 5.Արտաքին հարաբերությունների մասին: 6.Ղարաբաղ դպրոց Արդարության Հանրապետության անդամագրման մասին: 7.Ինքնապաշտպանության խնդիրը: 8.Ընտրություններ: |
| II | 1918թ. սեպտեմբերի 8-10 | Շուշիում Ռեալական ուսումնարանի դահլիճում | 101 | 1.Թուրքական նուվաճողական վերջնագրին տրվելիք պատասխանի մասին: 2.Ղարաբուլաղի (Ինչուլաղի) հարցերի խնդիրը: 3.Կառավարության գործունեությունն ու անխնամությունները: |
| III | 1918թ. սեպտեմբերի 18-22 | Շուշիում | 300 | 1.Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու մասին առաջարկների վերջնական քննարկումը և պատասխանը: |
| IV | 1919թ. հունվարի 10-20 | Շուշիում թիմական դպրոցի դահլիճում | 84 | 1.Ղարաբաղի ժողովրդական կառավարության գնահատումը: 2.Ժամանակավոր ազգային խորհրդի ստեղծումը: 3.Ինքնապաշտպանության հարցը: 4.Ղարաբաղը Հայաստանին կցելու հարցը: 5.Տնտեսական հարցերը: 6.Վարչական մարմինների կազմակերպումը, դատարանների ստեղծումն և դպրոցների բացման հարցը: 7.Հայ-թուրքական հարաբերությունները: 8.Ընտրություններ: |
| V | 1919թ. մարտի 23-29-ը | Շուշի թիմական դպրոցի դահլիճ, մասնակցում էին անդրկովկասյան միության ինքնուրույնության Հանձնախմբերը և նախագահությունը | 84 | 1.Ադրբեջանի նախանձախնդրության հարցը: 2.Շրջանային խորհուրդների ստեղծումը: 3.Վարչական մարմնի ստեղծումը: 4.Դրամական հարցերը: 5.Ազգային բանակի գործունեության շուրջ զեկուցում: 6.Հոգի խնդիր: 7.Ազգային խորհրդի հրաժարականն և ընտրությունները: |
| VI | 1919թ. հունիսի 28-30 | Վարանդայի Հոր գյուղում | 500 | 1.Մեծարում է Ազգային խորհուրդ: 2.Ընդունում է միասնական միությունն (այդ երկուսի նախագիծը Տեմուրաղ աղայի է): 3.Բանաձևություններ միջոցով մշակել Ղարաբաղի հարցի խաղաղ լուծման առաջնորդող մինչև նրա վերջնական որոշումի գնահատման կողմից: |
| VII | 1919թ. 13-22-ը օգոստոսի | Վարանդայի Հոր գյուղում | 175 | 1.6-րդ համագումարի շեղոնված որոշումների իրագործման ընթացքը: 2.Ղարաբաղի քաղաքական դիրքորոշը: 3.Արքեպիսկոպոսության հետ վերաբերմունքների ուղղումը: 4.Հարկերի գանձման ընթացքը: 5.Ռեկվիզիայի մարմինների գործունեությունը: 6.Ազգային խորհրդի մարմինների գործունեության մասին: |
| VIII | 1919թ. փետրվարի 28-մարտի 5-ը | Մի մասը Հոր գյուղում, մի մասն էլ Հոր գյուղում: Կայացրել են տարբեր որոշումներ | 96 | 1.Լեռնային Ղարաբաղի քաղաքական խնդրի վերջնական լուծումը |
| IX | 1920թ. մարտի 25-ին | Ստեփանակերտի Դեղձի և Լարաբուլաղի ներքևի թաղամասերում | Մասնակցում են Դեղձի և Լարաբուլաղի ներքևի բնակիչները | 1. Մեկ տեղում ևս հարցնել Ղարաբաղի հարցերի գործերը Հայաստանի հետ միասնության մասին և հաստատել ժամանակավոր կառավարության որոշումները: |
| X | 1920թ. մայիսի 26 | Վարանդայի Ստեփանակերտ գյուղում | - | Միասնաբար որոշվեց Ղարաբաղը գլխին նարատանի խարիզային իշխանություններին և ստորագրեց հետևյալ Հանձնաժողովի նախագահությամբ: |



Ղարաբաղի հայությունը առ ժամանակ թիկունք ունենալով Անդրանիկին, որը 1918թ. օգոստոսի 3-ից մինչև 1919թ. ապրիլի 1-ը գտնվելով Գորիսում և Սիսիանում սերտ կապեր էր պաշտպանում Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի և գավառների հրամանատարների հետ: Զորահրամանատարներ Սոկրատ Մելիք Շահնազարյանը (Վարանդայում), Արտեմ Լալայանը (Դիզակում), Ալեքսան դային (Խաչենում), Բագրատ Նազարյանը (Զրաբերդում) ունեին 3-10 հազար զորականներ: Թուրքական և մուսավաթական բանակները մինչև Շուշի հասնելն էլ ավերեցին Ասկերանի շրջակայքի Դահրավ, Վարազաբուն, Ֆրջամալ, Նախիջևանիկ, Քյաթուկ, Խրամորթ, Խանաբադ, Ղլիչբաղ, Քարագլուխ, Միրշալու գյուղերը: Բարբարոս Զահիդ բեյի բանակի դեմ դուրս եկավ Արցախի ողջ հայությունը՝ փրկելու հայրենիքը:

Թուրք-մուսավաթական բանակները հարձակվեցին գավառների վրա, բայց ջախջախվեցին Մարտակերտում: Թուրք դահիճներ Քյազիմ-բեյի, Շիրին-բեյի, Շահմալի ավազակի, Կալվածատեր Կալաբեկովի ջոկատների երեք անգամյա հարձակումներն պարտություն ունեցան: Արցախահայերը կռվում էին անձնվեր խիզախությամբ: Նրանց օգնում էին կանայք, երեխաները, ծերունիները:

**Ստորև բերվում է թուրք-մուսավաթական բանակների հարձակումների ուղղությունները և գլխավոր ճակատամարտերը ցուցադրող ու Շուշի քաղաքի կառավարումը պատկերող գծագիրը.**



Թուրք-թաթարական 400 ասկյարներից բաղկացած ջոկատը այս անգամ էլ թիրախ է դարձնում Վարանդան, բայց գավառի Ավետարանոց, Սղնախ, Խաչմաչ, Թաղավարդ, Սարուշեն, Սարգսաշեն, Ղավախան, Մսմնա, Հաղորտի, Մուշկապատ, Ճարտար, Սոս, Քերթ, Քաչահունջ, Մաշադիշեն, Խերխան, Ծովատեղ, Հերհեր, Սխտորաշեն, Մավաս գյուղերի կամավորները ոտքի ելան և 1918թ. հոկտեմբերի 18-ին Դիզակի քաջ հրամանատար, Ասլանիկի (Ասլանիկ Մուրադխանյան) ղեկավարությամբ ջախջախեցին թշնամուն: Թշնամու փորձերը երկու ուղղությամբ Հաղորտի-Մուշկապատ-Ճարտար և Մսմնա-Ամարաս ձորակով անցնել մալականեր, խաթարվեց:

«Աշխարհազորայինները մարտնչում էին հերոսաբար... Քարահունջեցի եղբայրներ Սմբատ և Հարություն Ղահրամանյանները կողք-կողքի զոհվում են, բայց մի քայլ ետ չեն նահանջում փակելով թշնամու փախուստի ճանապարհը (Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քարահունջ գյուղի գերեզմանոցում միասին թաղված եղբայրների շիրմաքարի վրա փորագրված է. «մենք մեր ազգի ազատությանը զոհվեցինք»): Լեոնիդ Հուրունց բանաստեղծը Մսմնայի հերոս Ասլանիկին պատմվածք է նվիրել «Քաջ Ասլանը և նրա որդին» վերտառությամբ»:[126]

Թուրքերը 600-700 հոգուց բաղկացած ջոկատով երկրորդ անգամ են շարժվում Վարանդայի գավառի կենտրոնով: Բայց Դռնավարզ (այժմ Կարմիր գյուղ) գյուղի մոտ պարտվում են և փախչում: Նրանք ստիպված հեռանում են Ղարաբաղից, թողնելով միայն ավեր ու վիշտ: Ղարաբաղից թուրքերի հեռանալու պատճառներից մեկն էլ Մուդրոսի[127] պայմանագիրն էր (1918թ. հոկտեմբերի 30-ին), որի համաձայն I համաշխարհային պատերազմում պարտված Թուրքիան պետք է իր զորքերը հաներ Անդրկովկասից:

Թուրքիային փոխարինած Անգլիան իր հրամանատարներ Թոմսոնի, Շաթելորթի և մյուսների ղեկավարությամբ նույնպես բռնեցին ադրբեջանամետ դիրք և ձգտում էին համոզել հայերին հանձնվելու Ադրբեջանի ենթակայությանը: Նրանք խանգարեցին հայ զորվար Անդրանիկի մուտքը Ղարաբաղ «առանց որի Զանգեզուրը և Արցախը որբացան»:[128]

Անգլիացիների «վերահսկողության» պայմաններում էլ հայկական գյուղերը հրո ճարակ դարձան: Հայտնի է Շուշիի մերձակա Ղայբալիշենի ավերումը Մուսավաթների դրածո Խոսրով-բեկ Սուլթանովի հրամանով: Գյուղի 700 բնակիչներից ողջ են մնացել 11 մարդ և 87 կին ու երեխա: Ավերվեցին Կրկժան, Փահլուր, Զամիլու, Խանածախ և Դաշուշեն գյուղերը:

1919թ. օգոստոսի 24-ին անգլիացիները հեռացան Արցախից: «Հայերը ատելությամբ և նզովքով ճանապարհեցին նրանց»:[129] Հետո Արցախի պատմության մեջ սկսվում է ողբերգությամբ և դրամատիզմով լի մի շրջան:

Սուլթանովի իշխանության պայմաններում, հայտնի էնվեր փաշայի խորհրդով մուսավաթական զորքերը ավերեցին Արցախի հյուսիս-



արևմտյան գավառի Ղարաչինար, Ներքին և Վերին Աղջալա, Էրքեջ, Գյուլիստան, Բուզլուխ, Արմավիր, Սուլուկ, Ղարադաղլու, Արջախ, Խարխուտի, Հայ Բարիս և այլ հայկական գյուղեր: 1920թ. փետրվարից սկսած արցախյան աշխարհի գլխին սկսեցին բարձրանալ նոր ամպեր: Շուշի են ժամանում Նուրի փաշան և գեներալ Նովրուզովը: Ներխուժում են թշնամու նոր զորքեր առաջանում են նոր վտանգներ, զորքերի կենտրոնացում Ասկերանում, Խանքենդիում, Շուշիում, Կարյագինոյում, Ջեբրաիլում, Աղդամում: Թշնամու նոր հարձակումները 1920թ. մարտի 22-ին Ձիվանշիրի վրա (Մարտակերտ) և ջախջախվելը: Թշնամին կռվում էր Ասկերան-Խանքենդի-Շուշի խճուղու Քիրս-Տումի-Խծաբերդ ուղղություններով:

Անհուսալի էր Արցախի դրությունը: Ուժերը անհավասար էր թշնամու դեմ: Միայն Ասկերանի ուղղությամբ թշնամին նետել էր 30 հազար ասկյար: Դալի Ղազարի 350 հոգանոց ջոկատը անզոր գտնվեց պաշտպանելու առաջին գիծը և թշնամին մտավ Շուշի (ապրիլի 2-3): Դալի Ղազարը, որ գանձակեցի էր, ինքնասպան եղավ:

Դիզակի ռազմաճակատում հայ պաշտպանների հրամանատարն էր Հովակ Ստեփանյանը, նրա օգնականն էր Սասունցի Մանուկը: Նրանք 400 զինվորներով ճանապարհ բացեցին դեպի Զանգեզուր: Խանքենդի ուղղությամբ հերոսաբար էին կռվում գնդապետ Զաքար Մեսյանի 400 զինվորները: Մեսյանին օգնում էին Ալեքսան դայի (Բալասանյանը) և սպա Լալայանը: Նրանք գրավում են Խանքենդը, շրջապատում զորանոցները և զինաթափում ասկյարներին: Ահա այդ պատերազմական գործողությունների ժամանակ հայկական ուժերի դասավորությունը Արցախում.

## Հայկական ուժերի դասավորությունը Արցախում 1920թ.



Այդ օրերին տեղի ունեցավ Արցախ աշխարհի ամենաողբերգական իրադարձությունը՝ Շուշիի հայկական թաղամասի (որ քաղաքի 70%-ն էր կազմում, թե տարածքով, և թե բնակչությամբ) հրդեհը: Քաղաքը հրդեհելու վերաբերյալ կան տարբեր վարկածներ, որոնցից շատերը սին են և ոչ ռեալ: Բայց ճշմարտությունն այն է, որ դա Ղարաբաղի նահանգապետ, մոլի հայատյաց Խոսրով-բեկ Սուլթանովի գործն է, որը 1920թ. մարտի 23-ին՝ Նովրուզ-Բայրամի ամանորը որոշել էր անցկացնել հայերի արյունը թափելու և նրանց մատաղելու ճանապարհով: Եվ նա արավ, հրդեհել տվեց ողջ քաղաքի հայկական ընդարձակ մասը. Մահմեդական մոլեռանդ խուժանը ասկյարների գլխավորությամբ թափվում է քաղաքի հայկական թաղամասերը, հրդեհում, կոտորում բնակչությանը: Այդ սարսափելի օրը՝ մարտի 23-ին, սպանվում են հազարավոր տղամարդիկ, կանայք, երեխաներ: Փրկվածները ցած իջած մառախուղի քողի տակ փախչում էին դեպի Վարանդա և Դիզակ: Թիֆլիսում տպագրվող «Սլովո» թերթը պատմում է. «Քաղաքի հայկական մասում չի մնացել քարը քարի վրա: Մուսուլմանական խուժանը մարտի 24-ին (պետք է լինի 23-ին)... քաղաքի հայկական մասը կրակի մատնեց... Մարտի 24-ի երեկոյան քաղաքը ներկայանում էր կրակի մի ծով: Հայկական մասից ոչինչ չի մնացել»:[130]

Այդ օրերին Շուշիում զոհվեցին Ալ. Ծատրյանը, Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը, բժիշկ Յարամիշյանը, բանաստեղծներ Մ. Ջանումյանը, Փիրջանյանը, ուսուցիչներ Թավրիզյանը, Տեր-Գաբրիելյանը: Այդ նախճիրին զոհ կգնար նաև Ղարաբաղի ապագա մանկավարժ-դրամատուրգ Իսահակ Ալավերդյանը, եթե հայկական-զանգեզուրյան ջոկատը կամ այլ օգնական ուժեր քաղաքը չմտներ: Ահա թե այդ առթիվ ինչ է ասել երջանկահիշատակ գրողը իր ընտանիքի անդամներին ու մերձավորներին, որ հետո գրառել է նրա աղջիկը. «1920թ. գարնանն էր: Ազգամիջյան ընդհարումների հետևանքով կործանվեց Շուշին, մի գիշերում վառվեց հայկական թաղամասը, քրիստոնյա ազգաբնակչությունը թողեց քաղաքը: Ով չհասցրեց դուրս գալ (կանայք, երեխաներ, ծերեր) պատսպարվեցին Ղազանչեցոց սբ. Ամենափրկիչ եկեղեցում: Նրանց մեջ էր և Մինան՝ իր Իսահակ թոռան հետ (ամուսինը և տղաները խնձրիստանում էին): Հաջորդ օրը թուրքից, սովից ու ցրտից սարսափած երեխաները լաց ու կոծ սկսեցին: Թուրք զինվորները մտան եկեղեցի և սկսեցին ծնողներից խլել երեխաներին ու դուրս տանել, որտեղ յաթաղանի մի հարվածով լռեցնում էին նրանց: Որպեսզի երեխան լաց չլինի, Մինան, որ դարաբաղյան եռափեշ տարազ ուներ հագին, նրան թաքցրեց ազգատարազ շապիկի տակ ու... կուրծքը դրեց երեխայի բերանում, և... ով բնության հրաշք, 60-ամյա կնոջ կուրծքը կաթ ընկավ, երեխան կերավ ու քնեց: Եվ փրկվեց սպանդից»:

Կարինե Ալավերդյան գրող-հրապարակախոսը, որ հոր հիշատակին գիրք է գրել, համառոտ նկարագրել է նաև հոր կենսագրականը, որտեղ



գրում է, որ «նա ծնվել է 1917թ. հունվարի 4-ին (Ն.Տ.-17-ին) Սերգեյ և Թամարա Ալավերդյանների ընտանիքում: Առաջնեկ էր, բայց վերջինը եղավ, որովհետև երկու տարի անց վախճանվեց մայրը: Երեխայի խնամքն ընկավ մեծ մոր՝ Մինա Ալավերդյանի ուսերին: Իսահակը երկար ժամանակ կարծում էր, թե նա իր մայրն է, մանավանդ որ... հրաշք կատարվեց»:[131]

Շուշիի սուգը շատերն են արել՝ թե այնտեղի նախկին բնակիչները և թե նույնիսկ օտարազգի հումանիստ-մարդիկ: Շուշիի նախկին բնակիչ, լեգենդար հեղափոխական Սուրեն Սպանդարյանի հայր Սպանդար Սպանդարյանը, որը Ամարասի նոր վանքը իր միջոցներով 1870թ. կառուցողներից մեկի՝ Ամիրջանի որդին էր, «Նոր դար» թերթի խմբագիրը (1872թ.), վտարանդիության մեջ լսելով Շուշիի հրդեհը, կաթվածահար է եղել Գերմանիայում ու մահացել (1923թ.): Ի դեպ, նա այն հայ մարդն է, որ ասել է. «Ազատությունը չեն ստանում, այլ՝ ձեռք են բերում»:[132]

Խորհրդային պետության քաղաքական ու պետական գործիչ Սերգո Օրջոնիկիձեն տեսնելով Շուշին ավերված վիճակում, ասել է. «Այսօր ես սոսկումով եմ հիշում այն պատկերները, որոնք մենք տեսել ենք 1920թ. մայիսին Շուշիում: Հայկական գեղեցիկ քաղաքը հիմնահատակ ավերված, կործանված է»:

Կամ, մի ուրիշ անգամ նա ասել է. «Նոր պատմության մեջ քիչ ժողովուրդներ կան, որոնք այնքան մեծ զոհեր տված լինեն, որքան հայերը, և քիչ երկրներ կան, որտեղ այնքան շատ արյուն հոսած լինի, որքան Հայաստանում»: Իսկ Թիֆլիսում 1920-ական թվականներին հրատարակված մի թերթ գրել է. «Անդրկովկասում մի ծաղիկ կար (հմա-խոսքը Շուշիի մասին է), թուրքերը կոխկրտեցին այն ու ոչնչացրին»:

Մեր նոր ժամանակի պատմավիպասան Սերո Խանզադյանը շատ ու շատ մտքեր է արտահայտել 20-րդ դարի 60-ական թվականներին, երբ մի երկու անգամ տեսել է հրդեհված Շուշին. «Արյունով է ներկված Շուշվա պատմությունը... Արցունքով է ողողված Շուշվա պատմությունը: Հայոց մեծ քաղաքը լիակատար մոռացության տալու համար երեք տարի առաջ (1964թ.) այստեղ բերին բուլդոզերներ, քանդիչ, հարթիչ մեքենաներ և հսկա քաղաքը, որ իրենից մի Պոմպեյ էր ներկայացնում՝ ճարտարապետական շինություններով, գետնին հավասարվեց: Օ՜ քսաներորդ դարի 60-ական թվականների քանդիչներ, դուք գիտեք, որ Շուշվա օրինակով ցույց տվիք աշխարհաքանդման պատկերը: Ես ավելի խոր հասկացա Լենկ Թեմուրի, Չինգիզ խանի, Շահ Աբասի, Հիտլերի ավերածությունները: Լավ հասկացա»:[133] Եվ հետո նա շարունակում է. «Թշվառ Շուշի, քո զավակները՝ Նելսոն Ստեփանյանից մինչև հզոր պատմական գործիչ Իվան Թևոսյանը, Լենինի զինակից Բոգդան Կնունյանցից մինչև մարշալ Խանֆերյան-Խուդյակով, Խորհրդային Միության 21 ղարաբաղցի հերոսները իրենց արյամբ պաշտպանեցին Մոսկվան, Լենինգրադը, հազարավոր քա-

ղաքներ փրկեցին գերմանա-ֆաշիստական ավերիչներից, և երբ թվում էր, թե քո ավերակները պիտի նորոգվեր, կենդանացիր դու ևս՝ ի վարձատրություն քո զավակների հեղած արյան, հողին հավասարեցվեցիր: Մի՞թե սա է վարձատրությունը»:[134]

1980թ. նույն մեր հոգեհարազատ գրողը նորից տեսնելով Շուշին, բացականչել է. «Շուշվա դիակը պատել են կանաչով՝ ծառերով, ծաղիկներով, ինչպես գերեզմաններն են կանաչապատում մեծ խնամքով: Հայոց կիսավեր եկեղեցին ցցված բռունցքներ են ահեղ ու դաժան երկնքին դեմ արած»:[135]

Ազերի թուրքերը այս քաղաքի հրդեհ կործանումը եկվոր անծանոթներին բացատրել-պատճառաբանել են բնության տարերքով, ասենք երկրաշարժով (նրանք դա ասում էին Սանատորիա-հանգստանալու եկածներին), և եկվորներից մի ուկրաինացի ասում է. «Ասում են ահեղ երկրաշարժ է եղել 1920թ. մարտին, դրանից է այս քաղաքը կործանվել»:

«Թուրքերը «մոռացության են տվել վանդալիզմին մասնակից թուրքերից մեկի 1920թ. ապրիլի 8-ի թվակիր նամակը, որ Շուշիից գրել է մորը. «Աղդամից դուրս եկանք և մինչև Շուշի-Ղալան գրավեցինք, ինչքան հայերի գյուղեր կային՝ այրեցինք ու իրենց էլ կոտորեցինք... Շուշիի-Ղալայում ինչքան հայեր կային՝ կոտորեցինք»[136] և օտարների առաջ կեղծում են իրականը:

Ակամայից մեր դեմ է հառնում Շուշի քաղաքի ծննդի և կործանման ամբողջ պատմությունը, հատկապես ծննդի, որի շուրջը թուրք պատմաբանները և ինչու չէ, բոլոր թուրք-ազերիները Շուշին իրենց սիրտն են համարում: Բայց հայերն էլ ունեն իրենց առավել համոզիչ փաստարկները, որ գրվանի տակ է դնում նրանց շինիչ փաստարկները: Ահա դրանք. «Շուշվա բերդապարիսպի հիմքը դրել է Ավան հարյուրապետը դեռ 1724 թվականին, եթե ոչ դրանից առաջ»,- գրել է Շուշի քաղաքի ծնունդ, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը: Բայց դեռ բանից պարզվում է, որ նա դեռ վերանորոգում էր բերդը: Ավան Յուզբաշու կողմից Շուշին կառուցելու փաստը հաստատում է նաև ռուս գեներալ Մատյուշկինը: Նա 1725թ. ասել է, որ Ավան Հարյուրապետը լսելով Ղարաբաղի բնակչության խնդրանքը, իր 10 000 մարդկանցով (զորքով) չի գնում Գիլան (Պարսկաստան), այլ մնում է Շուշի Սղնախում և բերդ կառուցում:

Որ 1312 թվակիր խաչքար կար Շուշիում, ի՞նչ ասել:

Նոր ժամանակում Շուշի քաղաքի տարածքը պեղած, հայկական գերեզմանների շիրմաքարերի արձանագրությունները վերծանած (որոնք հասնում են մի քանի հազարի) և այդ կապակցությամբ մի գիրք գրած Հրաչիկ Հարությունյանը ի պատասխան Բաքվի «Նովոյե Վրեմյա» և «Զերկալո» թերթերի էջերում հրապարակված երկու հոդվածների հեղինակների հրապարակումների (որոնք եղել են 23.04.2004 և 25.06.2004թթ. ժամանակներում) Շուշիի բերդի իբր ավերման, իսկ Շուշիի մզկիթը թանգարան



դարձնելու, իսկ հետագայում արտասահմանցիներին հանձնելու մտադրության վերաբերյալ գրել է. «Ուզում եմ հարցնել Ն. Կուլիևի («Հայ բռնագավթիչների բարբարոսությունը» հոդվածի հեղինակին), որ պնդում է, թե, իբր Շուշիի յուրաքանչյուր անկյուն իր մեջ պահպանում է ադրբեջանական ժողովրդի պատմությունը և այնտեղ «հայերին պատկանող ոչինչ չկա»: Ն Կուլիևը երբևէ (լինի դա ռազմագործողությունների ընթացքում, թե հետո) որևէ առաքելությամբ եղե՞լ է, արդյոք, Լեռնային Ղարաբաղի տարածքում: Ես նրան հրավիրում եմ այստեղ՝ սեփական աչքով տեսնելու, թե իրականում ինչպիսին է իրերի վիճակը և ինչը ում է պատկանում»:[137]

Խոսք բացելով բերդի, իբր ավերման, մասին Հ. Հարությունյանը գրում է. «Նախ բերդը կառուցվել է ռուսների կողմից՝ մինչև 1826-28թթ.: Ռուս-պարսկական պատերազմը, ինչի մասին ասվել է ռուս-պարսկական բանակցությունների ընթացքում (տես Գրիբոյեդովի մասին ֆիլմը) ինչպես նաև Ն. Ախունդովի «Կարաբախ նամյալար» (էջ 264) գիրքը, որտեղ կոնկրետ նշվում է, որ հին պատերի տեղում «Հզոր ռուսական պետությունը («Ամնացի Ռուսիա Դովլաթի« պարսկ.) կառուցել է բերդ» (այստեղ «հին պատերը» երևի վերաբերվում է Ավան հարյուրապետի կառուցումներին,- Մ.Բ.)»:[138]

Բերդի հյուսիսային պատը երկու տեղում քանդվել է 60-ական թվականներին՝ ադրբեջանական իշխանությունների կողմից և հին հայկական գերեզմանոցի տարածքով անցկացվել է ավտոճանապարհ: «Ինչ վերաբերում է մզկիթին, խորհրդային օրոք Շուշին կառավարող ադրբեջանցի ղեկավարները այն դարձրել էին թանգարան, հաշվի առնելով, որ Աղդամի մզկիթը և նրա սպասավորները բավականացում են այդ տարածքի թուրքերին»:[139]

Մեր նորընծա հետազոտողը գերեզմանաքարերից մեկի վրա (իհարկե, հայի) 1751թ. թվանշանը, իսկ ադրբեջանականը՝ 1820թվեր է կարդացել: Մեր նախկին մատենագիրներից Հակոբ Շուշեցին 1752թ. տեսել է «Հայազգի բնակիչք վիճակին ղարաբաղցու յոթանասուն հազար տուն»:

Իսկ Ֆանահի գալու, Շուշին բնակեցվելու հարցի առթիվ պատմիչ Միրզա-Ջամալ Ջևանշիրը գրել է, որ Ֆանահը Ղարադաղից («Սև լեռներ») մի քանի գյուղ է բերել տալիս ու տեղավորում քաղաքում: Իսկ նույն ժամանակակից Հակոբ Շուշեցին վկայում է, որ «որք ի բնակութեան եկեսցին ընտանիքք ի քաղաքս նորաշեն (Շուշի) ազատեն ամենայն հարկայ և ծառայութեանց»:

Շուշին հայի քաղաք են անվանել Մ. Գորկին, Պետրոս Մեծը, Միրզա Ֆաթալի Ախունդովը, Սաքիրը, Կիրովն ու Օրջոնիկիձեն: Բայց ասենք, որ ներկա ժամանակներում այդ քաղաքի ծուռումուռ պատմության մասին թուրքերի՝ Գորբաչովին հասցրած տեղեկություններից նյութ քաղած, ԽՍՀՄ վերջին ղեկավարը կասկածանքով ասում է. «Ադրբեջանցիները ա-

սում են, որ այդ քաղաքը իրենց երաժիշտների, կոմպոզիտորների հայրենիքն է, և որ հայերն էլ են իրենցը համարում քաղաքը»:

Բայց արդյոք, Գորբաչովը ինչու չէր կարող ստուգել և իմանալ, որ դեռ 1886թ. Ղարաբաղի այդ գոհարի բնակչության 56,7%-ը հայեր էին, 1916թ. 53,3 %-ը, որ 1916թ. քաղաքում հրատարակվող 21 թերթերից 19-ը հայերեն էր, 2-ը՝ ռուսերեն, իսկ դպրոցները, հայկական մեկ տասնյակից ավելին դպրոցները, 4 եկեղեցիները նրանց մեկ մեչիդի դիմաց: Խոշոր հայ դեմքերի գրողների, պատմաբանների, հեղափոխական գործիչների, պետական այրերի, Սովմիության կրկնակի հերոսի, խոշոր գիտնականների, երաժիշտների ծննդավայր լինելը միթե նրանց մի քանի երգիչներին ու կոմպոզիտորներին չէր հավասարեցնում, որպեսզի Շուշիի պատկանելությունը չսակարկեր, հարցականի տակ չդներ և դուալիստական մտքեր չասեր:

Կարող էր, իհարկե, կարող էր, բայց Նոբելյան մրցանակակրին խանգարում էր թուրքամետ հայացքները:

Շուշիի խորհրդային շրջանի սկզբնական պատմությունից մենք իմանում ենք, որ բոլշևիզմի կաթսայում եփված 20-ական թվականների ԼՂԻՄ-ի ղեկավարները՝ նույնիսկ խոչընդոտում էին քաղաքը մազապուրծ հայերով բնակեցնելուն և շենացնելուն:

«Շուշիի նախկին բնակիչներից 400 ստորագրությամբ դիմում է տրվում Ղարաբաղի պատուհաս Արմենակ Կարակոզովին՝ որպես կառավարության նախագահի, թույլ տալ վերաբնակվել իրենց անվնաս մնացած տներում, սակայն մերժում ստացան: Մինչդեռ թուրքական գյուղերից շատ մարդիկ փոխադրվեցին և բնակություն հաստատեցին քաղաքում, իսկ հայ գյուղացիների առաջ հազար ու մի խոչընդոտ հարուցելով, արգելք էին հանդիսանում թեկուզ ավերակներում բնակվելու համար»:[140]

Նույն ձևով էլ Շուշին չդարձավ ԼՂԻՄ-ի մայրաքաղաք, քանզի Ադրբեջանի ազգայնամոլները երկյուղում էին նորից Շուշին հայկականի վերածվելուց, նորից հայ բնակչության, մանավանդ նախկին շուշեցիների վերադարձից, որոնք կարող էին Շուշին դարձնել Արցախ աշխարհի տնտեսության, հոգևոր և վարչական կենտրոնը:

## ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1.Ինչպիսի՞ վերաբերմունք է ցուցաբերել Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասի հայկական տարածքների նկատմամբ ընդհանրապես և Արցախի նկատմամբ մասնավորապես:

2.Մուսավաթ և թուրք զավթիչները ի՞նչ վայրագություններ կատարեցին Ղարաբաղի հայության նկատմամբ 1918-20 թվականներին: Ի՞նչ հանգամանքներում հրդեհվեց Շուշի քաղաքը:

3.Ղարաբաղի հայության քանի՞ համագումար տեղի ունեցավ՝ 1919-20



թվին և նրանցից որը Ղարաբաղը ժամանակավորապես համարեց Ադրբեջանի կազմում:

4.Բերել գյուղացիների հերոսական պայքարի ցայտուն օրինակներ 1918-20թթ. հակաթուրքական պայքարում:

5.Հասարակական, քաղաքական և պետական գործիչներից ովքե՞ր են Շուշին համարել հայկական քաղաք:

## ՂԱՐԱԲԱՂԸ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ՈՐՈԳԱՅԹՆԵՐՈՒՄ

***Թեման զուգակցվում է VIII դաս. Հայոց պատմության, 2000թ. «Արցախ, Զանգեզուր, Լոռի» թեմայի հետ (թեմա 4 և 2, էջ 48-52), (X դաս. գլ. 17, էջ 200)***

Այն պահին, երբ ՈՍՖՍՀ 11-րդ Կարմիր բանակի զորամասերը մխրճվում էին Անդրկովկաս և առաջին խորհրդայնացման քայլերը կատարում Ադրբեջանում, Ղարաբաղի ռազմա-քաղաքական վիճակը աստիճանաբար սրվում էր ու անհուսալի դառնում: Վիճակը ծանր էր նրանով, որ Ղարաբաղի հայությունը շվարել էր իր քաղաքական կողմնորոշման մեջ և չգիտեր ում կողմը թեքվել՝ եղբայրական Հայաստանի դաշնակցական պետությա՞ն, թե՞ Ադրբեջանում նոր հաստատված բոլշևիկների պետության, որի կառավարությունը աստառը շուռ տված մուսավաթներից էր բաղկացած: Գործը ավելի էր բարդանում նրանով, որ «1920թ. ապրիլին 14-ին» Զանգեզուրի կողմից Արցախի Վարանդա գավառը մտան Դրոյի (Դրաստամատ Կանայան), իսկ Ղափանի կողմից Դիզակ մտան Նժդեհի (Գարեգին Տեր-Հարությունյան) հայկական զորամասերը»,[141] որը ցնծությամբ էր դիմավորվել արցախահայության կողմից, իսկ մյուս կողմից էլ գործում էր նահանգապետ Խ. Սուլթանովը, որը հայկական բանակի դեմ ոչինչ ձեռնարկել չկարողացավ և իր ասկյարներով կղզիացած էր Շուշիում:

Այդ օրերին կազմված Արցախի բազմակուսակցական ժամանակավոր կառավարությունը 1920թ. ապրիլի 23-ին նիստ գումարեց և որոշեց Արցախը վերամիավորել Մայր Հայաստանի հետ, որը բխում է արցախահայության արդարացի պահանջից: Կառավարության անդամ Արշավիր Քամալյանն իր ելույթում ասաց. «Ներկա պահին Ղարաբաղի հայության ձգտումը հայկական կողմնորոշումն է. երբեք և ոչ մի դեպքում Ադրբեջանի հետ կապ ստեղծելու խնդիր այլևս չի կարող լինել, իսկ Աստվածատուր Ավետիսյանը, թե՝ «մեր ժողովրդի կողմնորոշումը պետք է պարզ լինի. նույնիսկ սոցիալիստական կարգերի միջոցին Ղարաբաղը և Զանգեզուրը Հայաստանի հետ պետք է լինեն», «Ղարաբաղի հայության ֆիզիկական գոյությունը պահպանելու միակ միջոցը Հայաստանն է...», ապա Հարություն Թումյանը պահան-

ջեց՝ որ «Ղարաբաղը կառավարվի Ազգային խորհրդի միջոցով, ունենալով Հայաստանի կառավարության բոլոր մարմինները»»:[142]

Ապրիլի 25-ին Վարանդայի Թաղավարդ գյուղում հրավիրված Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը միաձայն ընդունեց և հռչակեց հետևյալ որոշումը. «Հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի հանրապետությանը որպես նրա անբաժան մաս»: Այդ որոշումը հաստատող փաստաթուղթ էր նաև Արցախի գավառներում ընթացած և համանման որոշումներ ընդունած ժողովները: Արցախի ժամանակավոր կառավարությունը նույնիսկ խնդիր էր դրել Արցախը ենթարկել Զանգեզուրի նահանգապետությանը և այդպիսով Արցախն ու Զանգեզուրը միասին համարել Հայաստանի Հանրապետության մի մասը: Սակայն 1920թ. ապրիլի 28-ի Ադրբեջանի խորհրդայնացումը հանկարծակիի բերեց Արցախ-Ղարաբաղի տարածաշրջանի ազգաբնակչությանը և առանձնապես Մուսավաթ Սուլթանովի դիմակավորվելը և նրա կողմից Հեղկոմ ստեղծելն ու նրա նախագահ հռչակվելը: Դա խոր զայրույթ առաջացրեց արցախահայության շրջանում, որոնց անունից էլ հեռագիր ուղարկվեցին Լենինին և Նարիմանովին: Եվ շուտով Սուլթանովի այդ հեղկոմը լուծարքի ենթարկվեց (մայիս 14-ին), ստեղծվեց նոր հեղկոմ Բահատուր Վելիբեկովի նախագահությամբ, իսկ Սուլթանովը ձերբակալվեց և տարվեց Բաքու:

«Թվում էր, թե այդ դահիճը կենթարկվեր արժանի պատժի: Սակայն Ադրհեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի միջնորդությամբ նա ազատվեց և ապահով տեղափոխվեց Պարսկաստան, որտեղ շարունակեց իր հակահայկական և հակախորհրդային գործունեությունը»:[143]

Ղարաբաղում ևս սկսվեց խորհրդային կարգեր ստեղծելու գործընթացը: Բայց սկսված թոհուբոհի պայմաններում՝ մի կողմից Ադրբեջանի նոր կառավարության, մյուս կողմից ՌՍՖՍՀ-ի՝ Հայաստանի դաշնակցական կառավարությանը ներկայացրած վերջնագրերի, որոնք պահանջում էին դուրս բերել իր զորքերը Ղարաբաղից և Զանգեզուրից: Ղարաբաղի ազգաբնակչությունը սպասում էր թե Ադրբեջանի խորհրդայնացումը վերջ կտա Արցախի և Զանգեզուրի նկատմամբ Ադրբեջանի զավթողական քաղաքականությանը: Ցավալի է նաև այն, որ ազգերի ինքնորոշման իրավունքը հռչակած նորաստեղծ Խորհրդային Ռուսաստանը անտեսում է այդ իրավունքը տարածել հայ ժողովրդի մի մասի նկատմամբ:

Գիտակցող հայը սարսուռ է զգում, երբ տեղեկանում է, որ երբ 1920թ. սկզբին Լենինի 11-րդ բանակի 32-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը Եվլախից շարժվեցին դեպի Արցախ, առանց հարցնելու արցախահայության ցանկությունը, այդ օրերին նույն 11-րդ բանակի պատվիրակությունը Սահակ Տեր-Գաբրիելյան հայ բոլշևիկի գլխավորությամբ եկավ Վարանդայի Ղարաբուլախ (այժմ՝ Ակնաղբյուր) գյուղը՝ հանդիպեց Դրո հայ հրամանատարին և կտրականապես պահանջեց հայկական զորամասերը



դուրս բերել Արցախ-Ղարաբաղից:

Այո՛, հենց այդ նույն Տեր-Գաբրիելյանի պահանջով 1920թ. մայիսի 25-ին Արցախում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ-նախագահը, ներքին գործերի և Զինվորական բաժինները Դրոյի գլխավորությամբ թողեցին Արցախը և Քիրս լեռան փեշերով վերադարձան Գորիս՝ ամբողջ զինանոցը և պարենի պաշարները թողնելով արցախցիներին (հավանական է ապագա մարտնչողներին՝ թևանականներին): **Այստեղ հարկ է, որ ուսուցիչը** աշակերտներին ցույց տա ներքոհիշյալ գրաֆիկական գծագիրը, թե Արցախում ինչ դասավորություն է ունեցել Հայաստանի ներկայացուցչությունը (թե քաղաքացիական, և թե զինվորական):




գործել է 1920թ. ապրիլի 14-ից մինչև 1920թ. մայիսի 25-ը

## Գծագիր-գրաֆիկը կազմված է ըստ պրոֆ. Հր. Աբրահամյանի «Արցախյան գոյամարտ» գրքի.

Զորացրվեցին գնդապետ Թարխանյանի զորքը Վարանդայի Գյունե Ճարտար, Ծովատեղ և Տռնավազ (Կարմիր գյուղ) գյուղերից, գնդապետ Եգոր Տեր-Ավետիսյանի զորքը՝ Հյուսիսային Արցախից, որը երկար ժամանակ պաշտպանում էր Չարդախլուից մինչև Գյուլիստան ընկած տարածքի հայերին: Դուրս բերվեց նաև հայկական սպայական կազմը Խաչմաչ գյուղից, ինքնապաշտպանության շտաբը՝ Սարուշենից: Լուծարվեցին կառավարման բաժինները (պարենավորման, արդարադատության և առող-

ջապահության), որոնք տեղավորված էին ներքին Թաղավարդ, Ավետարանոց և Սխտորաշեն գյուղերում:

Հետագայում այն հանգամանքները, թե Հայաստանում երևում են խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչները, թե Հայաստանը շուտով կբոլշևիկացվի, թե դաշնակների կառավարության վերջն է և այլն, ստիպեցին Արցախի ժամանակավոր կառավարությանը 1920թ. մայիսի 26-ին Թաղավարդ գյուղում հրավիրել Արցախի հայության 10-րդ համագումարը, որը և Լեռնային Ղարաբաղը հայտարարեց խորհրդային, ստեղծեց հեղկոմ՝ Սաքո Համբարձումյանի նախագահությամբ: Մինչև հունիսի վերջը հեղկոմներ ստեղծվեցին Արցախի բոլոր գավառներում և գյուղերում:

«Բայց արցախահայության այն հույսը, սակայն, թե խորհրդային կարգերի հաստատումը կնպաստի Մայր հայրենիքի հետ Արցախի վերամիավորվելուն, շուտով հօդս ցնդեց»:[144]

Հօդս ցնդեց, որովհետև այստեղ էլ Տեր-Գաբրիելյանի նման բոլշևիզմով ջերմացած մի մեծադիր հայ նունպես սեպ խրեց Արցախը Հայաստանի հետ միավորվելու հայերի ցանկությանը: Դա Ա.Ի. Միկոյանն էր, որը միացած Ն. Նարիմանովի շայկային, հեռագրում են Լենինին, թե «ինչ վերաբերում է իբրև վիճելի Զանգեզուրին և Ղարաբաղին, որոնք արդեն մտել են Ադրբեջանի կազմի մեջ, վճռականորեն հայտարարում ենք, որ այդ շրջանները պետք է մնան Ադրբեջանի կազմում»:[145]

Չնայած Խորհրդային Միության գործիչներ Ս. Կիրովը, Ս. Օրջոնիկիձեն, Գ. Չիչերինը, Բ. Լեգրանը, Ալ. Մյասնիկյանը արդարացիորեն գտնում էին, որ Ղարաբաղը, Նախիջևանը, Զանգեզուրը և ուրիշ մի շարք հայաբնակ տարածքներ պատմականորեն կազմում են Հայաստանի անբաժանելի մասը և, հետևաբար պետք է վերամիավորվեն նրա հետ, բայց Ստալինը և մյուսները կարողանում են Լենինի ուշքը շրջել դեպի թուրքերը: Սակայն ակամայից հարց է ծագում, թե այդ դեպքում ինչպե՞ս առաջացավ Ն. Նարիմանովի կառավարության 1920թ. նոյեմբերի 30-ի այն հայտնի հռչակագիրը, որով «այսուհետ վիճելի տարածքներ չեն համարվում Զանգեզուրը, Նախիջևանը և Ղարաբաղը», և որ դրանք վերստին պատկանում են Հայաստանին: Ոմանք (Հր. Աբրահամյան և ուրիշներ), գտնում են, որ Նարիմանովի արած հայտարարությունը «Սոսկ միջոց էր մոլորեցնելու հասարակական կարծիքը և միջոց շահելու, մինչև որ կգտներ նոր գործելակերպ»:[146]

«Դա մի երաշխավորություն-խոստում էր, մի քաջալերանք հայ ժողովրդին սրտանց գնալու խորհրդային կարգերի հաստատմանը իր երկրում»[147] գրում է մեկ ուրիշը: Թերևս երկու կարծիքն էլ ճիշտ է, որը ապացուցեց հետագայում Նարիմանովի կողմից նոյեմբերյան հռչակագրից հրաժարվելու պատճառները:

Ղարաբաղի պատկանելության հարցը «Երկար ու ձիգ ճանապարհ է



անցել» և շատ տատասկոտ էր այն տեսակետից, որ քեմալական Թուրքիայի հրահրմամբ և Ստալին-Նարիմանովի որոգայթով 1921թ. հուլիսի 5-ի ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի տխրահռչակ որոշումով Ղարաբաղը թողնվեց Ադրբեջանի հոշոտմանը: Այդ ընդամենը 8 հոգուց բաղկացած Կավբյուրոյի որոշումը միանգամայն ապօրինի էր և չի կարելի հիմնավոր համարել, քանզի նա օրենսդրական մարմին չէր և շատ-շատ կարող էր միայն կարծիք հայտնել: «Եվ հարց է առաջանում, կավբյուրոն ի՞նչ իրավունքով, առանց հայերի կարծիքը հաշվի առնելու, առանց հաշվի առնելու հայ ժողովրդի կարծիքը, առանց Ղարաբաղի հայության ներկայացուցիչների մասնակցության, նման ապօրինի որոշում ընդունեց»:[148]

Կովկասյան բյուրոյի այդ որոշումը արդարացի համարելու նպատակով Ադրբեջանի կառավարությունը մի շարք կեղծ միջոցառումներ ձեռնարկեցին, որոնցից էր 1921թ. օգոստոսի 1-ի Վարանդայի Հաղորտի գյուղում տեղի ունեցած խորհուրդների արտակարգ համագումարի ընդունած որոշումը: Բայց ի՞նչ որոշում, երբ նիստը ընթացել է խոսկակռվի պայմաններում՝ Լևոն Միրզոյան (Ադրբեջանի ԿՀ-ի 2-րդ քարտուղար) և պատգամավոր Պետրոսյանի միջև: «Վերջինս ասում էր.» բոլորին լավ հայտնի է Խորհրդային Հայաստանի հետ միավորված լինելու գյուղացիության ցանկությունը»: Արցախցիներին Ադրբեջանից նավթի, աղի, կտորողենի, շաքարի, դաշտավայրերից արոտատեղիներ հատկացնելու մասին Ադրբեջանի ՀՀ-ի I քարտուղար Ա. Կարահի և Լ. Միրզոյանի խոստումներն էլ չէին օգնում, որ Արցախը լինի Ադրբեջանի կազմում»:[149]

**Աշակերտներին, արցախցիների անդրդվելիության մասին լիակատար պատկերացում տալու համար,** ուսուցիչը կարող է օգտագործել Լեռնային Ղարաբաղի պատմա-երկրագիտական թանգարանում[150] պահվող այն հուշերը, որ պատկանում է փրջամալցի Սուրեն Գրիգորի Միրզաբեկյանցին: Միրզաբեկյանցը իր հիշողության վերջում ընդգծում է, որ Կարահը և Միրզոյանը 3 օր շարունակ մշակում են (Շուշիում-Մ.Բ.), խորհրդակցության մասնակիցներին, նրանց նկատմամբ ուժ գործադրում: Դրանից հետո միայն ձայների շատ փոքր առավելությամբ որոշում են Արցախը թողնել Ադրբեջանի կազմում՝ ինքնավար մարզի իրավունքով:

Իսկ մի՞թե Ադրբեջանը ցանկանում էր Ղարաբաղի հայությանը (որ կազմում էր Ղարաբաղի ազգաբնակչության 94,4%-ը), տալ ինքնավարություն, իհարկե, ոչ: ԼՂԻՍ-ի մասին Անդրերկկոմի որոշումը կյանքի կոչվեց միայն Լ. Միրզոյանի հարկադրմամբ՝ Ադր. կենտգործկոմի 1923թ. հուլիսի 7-ի դեկրետով, որի դեմ արդեն Մոսկվայում աշխատող Ն. Նարիմանովն էր բողոքում:

Հետո, Արցախը Ադրբեջանին թողնելու մասին կայացած ինչ-որ հանրաքվեի մասին են հաճախ բարբաջում Ադրբեջանի պատմաբանները: Նրանք պնդում են, թե իբր Լեռնային Ղարաբաղում 1923թ. օգոստոսին

անց է կացվել հանրաքվե, և մարզի բնակչությունը պաշտպանել է Ղարաբաղը Ադրբեջանի սահմաններում մնալու գաղափարը: Նրանք իրենց ասածները հաստատելու համար հիմք են ընդունում այն ժամանակվա մարզկոմի քարտուղար Սերո Մանուցյանի Ադրկոմկուս ուղարկած 1923թ. հոկտեմբերի 12-ի թվակիր զեկուցումը, որտեղ գրված է. «ինքնավարության ակտը գյուղացիների կողմից ընդունվել է միաձայն... գյուղացիներն իրենց մասսայական բանաձևերով ողջունել են ինքնավարությունը և խորհրդային կարգերը», կամ էլ Լևոն Միրզոյանի և Կարանի կողմից Ղարաբաղի Աշան և Ճարտար[151] գյուղերում կազմված այն կեղծ արձանագրությունները, որի առթիվ իրենց ատելության խոսքն են ասել այն ժամանակվա Ղարաբաղի անվանի մարդիկ (Աբրահամ Կիսիբեկյան, Ջավադ-Առստամյան, Սամվել-Տեր-Գրիգորյան, Արմենակ Բեգլարյան, Հարություն Թումյան)»:[152]

Մայր Հայաստանի հետ արցախահայության վերմիավորման պայքարի կարևոր էջերից են 1920թ. աշնանից մինչև 1921թ. ապրիլի 19-ը Արցախի Դիզակ և Վարանդա գավառներում տեղի ունեցած շարժումները, որը գլխավորում էր Թևան Ստեփանյանը: Քանի դեռ այդ քաղաքացիական պատերազմի պատճառների վերաբերյալ Արցախի նախորդ սերնդի կողմից նոր սերնդին է փոխանցվել բացասական երանգներով բացատրություններ, իսկ պատմության նախկին դասագրքերում հակաժողովրդական բնույթով է ներկայացված, ուստի հարկ է, որ մեր նորագույն դպրոցի ուսուցիչը աշակերտներին այդ շարժում-պայքարը ներկայացնի ճշմարտության դիրքերից, ինչպես որ այն մատուցված են նոր պատմաբանների աշխատություններում:

Ասվի, որ 1892թ. Դիզակի շրջանի Տումի գյուղում ծնված, I համաշխարհային պատերազմում հեծելազորային ստորաբաժանման վախտմիստրի (ավագի) աստիճան ունեցած Թևան Ստեփանյանը սկզբում Դիզակի արևելյան գյուղերը պաշտպանում էր թուրք-թաթարական հարձակումներից, իսկ 1920թ. ամռանը պայքարում Ղարաբաղ ներխուժած խորհրդային բանակի բռնագրավումների դեմ:[153] Խորհուրդները Թևանին ծերբակալում են, բայց փախչում է և իր շուրջը համախմբում խորհրդային կարգերից դժգոհ մարդկանց և պայքար ծավալում պետական խորհրդային իշխանավորների և Կարմիր բանակի զորամասերի դեմ: Թևանի ջոկատը գրավում է գրեթե ամբողջ Դիզակն ու Վարանդան, մոտենում Կարյագինոյին, Աղդամին, Շուշիին: Նա սերտ կապի մեջ էր Սյունիքի հերոսամարտի կազմակերպիչ Նժդեհի հետ և նրանից էր ստանում օգնություն և օժանդակություն: Նրա ջոկատի մեջ հաշվում էր 1800 մարդ: Նժդեհը մերժելով բոլշևիկների ներկայացուցիչ Գրիգոր Վարդանյանի և Շուշիի բոլշևիկների կայազորի պետ Վացյախովսկու, բրիգադի հրամանատար Սեմյոնովի և 11-րդ բանակի հրամանատար Հեկկերի պահանջները, նրանց պատասխանում է, որ



ինքը ընդառաջում է արցախահայության ձգտումներին և իր պարտքն է համարում աջակցություն ցույց տալ նրանց: »Թևանի շարժումը« խորհրդային ժամանակաշրջանի պատմագրության կողմից որակված է որպես արկածախնդրային (ավանտյուրիստական) շարժում: Մինչդեռ պարզվում է, որ Թևան Ստեփանյանի գլխավորած շարժումը նպատակ ուներ Ղարաբաղը պաշտպանել Ադրբեջանին բռնակցվելուց: Լինելով Ղարաբաղ-Սյունիք-Հայաստան միասնության ջատագովը, նա միացավ Դրո-Նժդեհի զորքերի ծավալած պաշտպանական մարտերին, մասնակցեց նույնիսկ Մսմնայի հայտնի ճակատամարտին իր ակտիվ ջոկատով (Արտեմ Լալայան-Ասլանիկ ջոկատը) 1918թ. հոկտեմբերին և ջախջախեց թուրքերին:

Բայց քաջակորով ղարաբաղցու կյանքի վերջին շրջանը սևով պարուրվեց, իսկ նրա աջակիցների ճակատագրերը հայտվեցին բանտերում ու աքսորում, ոմանց էլ՝ գնդակահարությամբ:

Միայն Թևան Ստեփանյանի դեմ պայքարողներից 300-ը խորհրդային իշխանության կողմից «Կարմիր պարտիզանի» կոչման արժանացան և ցմահ թոշակ ստացան, իսկ մի քանի հոգի էլ կառավարական շքանշանների տեր դարձան:

Պատմաբան, պրոֆ. Հրանտ Աբրահամյանը նկարագրելով Թևան Ստեփանյանի դատավարության պրոցեսը, մեջ է բերում դատավարությունը վարող ռուս դատավորի այս բառերը, որ նա ասել է թարգմանիչ Էդուարդ Մարտիրոսովին. «Սա ասպետ է, ընբոստ հայրենասեր, իսկական հերոս: Ես համոզված եմ, որ գալու է ժամանակ, նրա արձանը կանգնեցվելու է իր հայրենի Ղարաբաղում»:[154] Ի դեպ այս օրերին Տումի գյուղում կառուցվում է Թևանի անվան տուն-թանգարան:

## ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1.Հայկական զորամիավորումները ե՞րբ և ո՞ր հրամանատարների ղեկավարությամբ մտան Արցախ: Արցախի ժամանակավոր կառավարությունը ի՞նչ որոշում ընդունեց Արցախի պատկանելության վերաբերյալ:

2.Արցախում ինչպիսի՞ դասավորություն են ունեցել հայկական զորքերը: Ներկայացնել նրանց քաղաքացիական և զինվորական բաժինների նստավայրերը:

3.Ի՞նչ ճանապարհով և ի՞նչ ուժերով բոլշևիկները մուտք գործեցին Արցախ:

4.Արցախի հայության ո՞ր համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց խորհրդային:

5.Բնութագրել «Թևանի շարժման» քաղաքական իմաստը:

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 1921-1988ԹԹ.

## *(Ղարաբաղը Ադրբեջանի ճիրաններում)*

Նյութը առնչվում է «Խորհրդային Հայաստանի տնտեսությունը», (X դասարանի դասընթացից արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը 1920-1990թթ.) թեմայի հետ:

X դասարանի դասագիրք, 2001թ. հրատ, գլ. 21, §1, էջ 250, գլ. 13, էջ 268:

Առաջին աշխարհամարտից և ազգամիջյան ընդհարումներից հետո Ղարաբաղ երկրամասի տնտեսությունը քայքայված էր: Տնտեսական որոշ աշխուժացում է նկատվում Նոր տնտեսական քաղաքականության տարիներին (ՆԵՊ՝ 1921-25թթ.), որը տակավին կարճ է տևել:

1929-30թթ. սկսվում է գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը, որոնց մեծ մասը սակավահող էր: Բերքի մեծ մասը գնում էր պետական մթերումներին: Աշխատանքը ԷՊԻՄ-ում դառնում է ոչ արդյունավետ, դժվարանում էր կյանքի պայմանները, հատկապես լեռնային գյուղերում:

Հետադարձ հայացքով ասենք, որ դեռ 1920-ական թվականներին, նորընծա Ադրբեջանի կառավարությունը 1921թ. մայիսի 15-ի դեկրետով: Լեռնային Ղարաբաղում գտնվող շուրջ 117560 դեսյատին վարելահողը և 42764 դեսյատին արոտավայրերը, որ ազգայնացվել էր գյուղացիներին բաժանելու ժամանակ «Ոտնահարվեցին Ղարաբաղի հայության իրավունքները: Այսպես, ըստ օրենքի լեռնային շրջաններում մեկ շնչին պետք է տրվեր 3 դեսյատին հող, իսկ հարթավայրային շրջաններում՝ մեկ դեսյատին: Ղարաբաղում ստացվեց դրա միանգամայն հակառակ պատկերը: Հարթավայրային շրջաններում՝ որտեղ ադրբեջանաբնակ գյուղերն էին գտնվում, տրվեց 5 դեսյատին հող, իսկ լեռնային շրջաններում կես դեսյատինից փոքր-ինչ ավելին: Բացի այդ, բազմաթիվ տնտեսություններ էլ մնացին առանց հողի»:[155]

ՆԵՊ-ի քաղաքականության սկզբունքները կիրառելուն ուղղվեցին Ղարաբաղի գավառներում բոլոր տեսակի մթերքների և արդյունաբերական ապրանքների ազատ առևտուրը, վարձակալության կարգով անգործության մատնված արդյունաբերական ձեռնարկությունները, առաջին հերթին մետաքսագործական ֆաբրիկաները վաճառքի տալը և այլն: Այդպիսի վարձակալության են տրվել Դիզակի և Խաչենի շրջանների 11 ֆաբրիկաները: Եվ շուտով մետաքսարդյունաբերությունը մեծ հաջողությունների հասավ 1922 թվականին: «Մինչև 1924թվականը բոժոժը ներմուծվում էին Ադրբեջանի և Վրաստանի շրջաններից, իսկ երբ Հադրութում հիմնադրվեց իտալական Չիչե հունդային ընկերությունը, բոժոժի արտադրությունը ավելի շատացավ»:[156]



1925թ. օգոստոսին ստեղծվեց Ղարմետաքսարդյունը: 1929թ. շահագործման հանձնվեց Ստեփանակերտի ֆաբրիկայի առաջին մասնաշենքը: Շերամապահության զարգացման նպատակով 1926թ. մարզում ստեղծվեց փորձնական տնտեսություն, որի ջերմոցներում աճում էր 600 հազար թթենի: Գյուղատնտեսության էքստենսիվ վիճակից ինտենսիվ վիճակի փոխադրելու նպատակով մարզում ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ՝ քյահրիզների ստեղծումը (61 հատ) և ջրանցքների վերանորոգումները Թալիշ, Մադաղիզ, Փրջամալ գյուղերի շրջաններում: Բայց այդ գործը հետո վերացվեց: Հողագործության մեջ կիրառվեցին ագրոմիջոցառումներ և տեխնիկա: 1925թ. գյուղացիներին վարձակալության կարգով տրամադրվում էին սերմացուներ, սրսկիչներ, գութաններ և այլն: Բայց անասնապահության բնագավառը խիստ կաղում էր Ադրբեջանի շատ շրջանների համեմատությամբ: 1925թ. այդ հետամնացությունը վերացավ և գերազանցեց 1913թ. մակարդակը:

Մինչև գյուղերի կոլեկտիվացումը ստեղծվում էին կոմունաներ (Կարմիրավանում՝ 1925թ., Ամարասում՝ 1927թ.):

1928-30թթ. սկսվում և համարյա թե ավարտվում է գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը Ղարաբաղում: Գյուղերի կոլեկտիվացումը տարվում էր խստավարժության և հարկադրանքի մեթոդներով, որի արդյունքում շատ գյուղացիներ մորթոտում էին անասունները, հրկիզում կերապաշարները, տեղի էին ունենում ընդհարումներ և սպանություններ: «Արցախյան գյուղը, որի բնակչությանը բազում դարեր հատուկ էր համերաշխությունն ու համատեղ ստեղծագործ աշխատանքը, հայտնվեց տարբեր թշնամական ճամբարներում»:[157] Արդյունքը՝ կոլեկտիվացման տոկոսի զգալի կրճատումն էր (1931թ. հուլիսի 31-ի դրությամբ հասցնելով 15%-ի և միայն 1931թ. նոյեմբերի վերջին նոր կոլտնտեսությունների ստեղծումով ավարտվեց կոլեկտիվացումը՝ կոլտնտեսությունների թիվը 114-ից հասցնելով վերջնական 224-ի: Գյուղերը մեքենայացման ենթարկեցին մեքենատրակտորային կայանների ստեղծումով՝ 1932թ. Մարտակերտում, 1934թ.՝ Մարտունում և հետո Ասկերանում՝ 180 տրակտորների ընդգրկումով: Սակայն կոլեկտիվացումը ունևոր չդարձրեց գյուղացիներին, քանզի աշխատանքը անարդյունավետ էր, իսկ եղածն էլ տրվում էր պետությանը: Դրա հետևանքով շատերը լքում էին գյուղը: Դրությունը որոշ չափով շտկվեց խրուշչովյան բարեփոխումների տարիներին՝ 1953-1964թթ: Բայց Արցախում այդ բարեփոխումները էական քիչ դեռ խաղացին, որովհետև Ադրբեջանի կառավարողները մարզի նկատմամբ վարում էին խտրականություն, որի հետևանքով նա մնում էր կախված հարևան և հեռավոր ադրբեջանական շրջաններից: Լինելով անասնապահական կարևոր շրջան, Ղարաբաղը չուներ խտացրած կերերի գործարան: Երիվ մշակման չէր ենթարկվում մետաքսի արտադրանքը, նրա վերջնական պրոցեսը կատար-

վում էր Շաքիում: «Մարզը չուներ ալրաղաց, ցածր էր կապիտալ ներդրումների մակարդակը: Օրինակ՝ 1986թ. մի հոգուն ընկնող կապիտալ ներդրումները Ադրբեջանում կազմում էր 473 ռուբլի, Նախիջևանում 342ռ., իսկ ԼՂԻՄ-ում՝ 151 ռուբլի: Այդ պրոցեսը ավելի նկատելի դարձավ 70-80-ականներին, երբ կրճատվեց բնակարանային շինարարությունը: Ճիշտ է, որոշ չափով ավելացավ խաղողի և գինիների արտադրությունը, սակայն դա չէր նպաստում տնտեսության կոմպլեքսային զարգացմանը»:[158]

Լեռնային Ղարաբաղը իր տնտեսության կառուցվածքով արդյունաբերական ագրարային երկիր է: 1980-ական թվականներին նրա համախառն արտադրանքի 68,7%-ը բաժին է ընկնում արդյունաբերությանը: 1985թ. տվյալներով մարզում գործել է 52 արդյունաբերական ձեռնարկ, որից էլեկտրատեխնիկական է 1-ը, էլեկտրաէներգետիկ՝ 1-ը, 20-ը՝ սննդի արդյունաբերության, 14-ը՝ թեթև արդյունաբերության, 8-ը՝ անտառային և փայտամշակման, 3-ը՝ շինանյութերի արտադրության, 1-ը՝ պոլիգրաֆ:

Արդյունաբերության զարգացման մակարդակը մարզում հետևալ պատկերն էր ներկայացնում (1970-1986թթ.):

| Արդյունաբերության ցուցանիշներ | 1970 | 1975 | 1980 | 1985 | 1986 |
|---|---|---|---|---|---|
| Էլեկտրաէներգիա (մլն. կվ.ժ.) | 1,6 | 602 | 45,9 | 74,1 | 57,8 |
| Լատեքսամետալային տուփեր (հազար հատ) | 474 | - | 780 | 1015 | 1074 |
| Մարտակի ձեռնատախտակ սալիկներ (հազար հատ) | - | - | - | 74,6 | 93,0 |
| Ցիմենտանման կիր (հազար տոննա) | 7,2 | - | 6,3 | 10,1 | 9,0 |
| Մարգարիտներ (հազ. խմբեր)... | 180 | 20,8 | - | 3,9 | 3,4 |
| Բուրդանման գոտեխոնջներ (հազար զուգակոնք) | - | - | - | 750 | 794,0 |
| Մեղրաձի հումք (տոննա)... | 124 | 143 | 131 | 117 | 109 |
| Մեղրաջրեղ (տոննա)... | 125 | 75,0 | 98 | 108 | 128 |
| Մեղրաձի կոկոներ (մլն. կոնուսներ)... | 9,8 | | 15,7 | 17,5 | 14,9 |
| Լարդի կոշիկ (հազար զույգ)... | 8,4 | 1869 | 4183 | 4514 | 4502 |
| Կինոդիտակոց լար (տոննա) | 550 | 723 | 885 | 904 | 935 |
| Գանձի (տոննա)... | 557 | - | 652 | 767 | 909 |
| Եռաթել գնդիկ (հազար գրիչոց) | 539 | 756 | 1946 | 1233 | 138 |
| Կանաչի (հազար գրիչոց)... | 13,0 | 6,6 | 53,8 | 44 | 57,7 |
| Կոնյակ (հազար տարբ) | 1893 | 2510 | 3435 | 4657 | 5386 |

Իսկ եթե արդյունաբերությունը ներկայացնենք (որոշ ցուցիչներով) 1923-1986թ. զուգահեռությամբ, ապա այն կներկայանա հետևյալ պատկերով:

(Մետաքսի կոմբինատ)

| Արտադրանքանվանումներ | 1923 | 1940 | 1965 | 1980 | 1986 |
|---|---|---|---|---|---|
| Մետաքսաթել (տոննա) | 5,2 | 98 | 108 | 133 | 109,3 |
| Ոլորած մետաքսաթել (տոննա) | 22 | 25,9 | 55 | 98 | 127,8 |
| Մետաքսե գոլգոթաներ (հազար մետր) | - | 120 | 405,2 | 15710 | 14,896 |



Մարզում նոր արտադրամիջոցներ էին էլեկտրատեխնիկական (60-ական թվ-ին) և կոնդենսատորների (1980թ.) գործարանները, կահույքի ֆաբրիկան (50-ական) կոշկի ֆաբրիկան (1971թ.), կարի ֆաբրիկան (1963թ.):

Հանրահայտ է, Ղարաբաղի բնական հումքի ու օգտակար հանածոների հայթհայթման ու շահագործման գործում Ադրբեջանի վարած խտրական քաղաքականությունը: Դիտավորություն կար այդ բնական հարստությունները հայտնաբերելու ուղղությամբ: Իսկ չէ՞ որ «Ղարաբաղի տարածքում դեռ վաղուց հայտնաբերված են բազմամետաղներ՝ ցինկի, կապարի, պղնձի, ոսկու, ծծմբային կոյչեդանի, երկաթի հանքավայրեր և երևակումներ: Գունավոր մետաղների հանքավայրերով հատկապես նշանավորը Մարտակերտի շրջանն էր: Թարթառ և Խաչեն գետերի միջև ընկած տարածքը. պղնձի ու այլ գունավոր մետաղների հանքավայրերի երևակումներ կան Դրմբոն, Գյուլաթաղ գյուղերի մոտ, ինչպես նաև Մռով սարի լանջին», որը միայն այժմ է շահագործվում:[159]

Գյուղատնտեսությունը մարզի կարևոր արտադրամիջոցներից է. ունենալով հարթավայրային, նախալեռնային, լեռնահովտային, միջին և բարձր լեռնային բնաշխարհ, Ղարաբաղի հողագործությունը տարվում է բազմաբնույթ ձևով, բնակլիմայական պայմաններին համընթաց, հնարավորություն ստեղծելով մշակելու ինչպես ջերմասեր, այնպես էլ բարեխառն կլիմայի կուլտուրաներ՝ սկսած չոր մերձարևադարձային կուլտուրաներից ու պտուղներից մինչև կարտոֆիլն ու գարնան գարին: ԼՂՀ-ն ունի հարթավայրային ծմեռային և բարձր լեռնային ամառային արոտավայրեր, որոնք նպաստավոր են անասնապահության զարգացման համար: Սակայն Ղարաբաղի տարածքի սահմանափակ լինելը, լեռներով, հողահանդակների ծվարվածությունը, ջրովի տարածությունների պակասը (Մարտունու և Հադրութի շրջաններում) խոչընդոտում են գյուղատնտեսության զարգացմանը: Գյուղատնտեսության զարգացմանը անբավարար են ներգործում նաև եղանակների մեծ տատանումները:

ԼՂՀ հողային ֆոնդը կազմում էր 436 հազար 700 հեկտար, որից

-120 հազար հա-ն կամ տարածքի 27,3 %-ը պիտանի են ցանքսի համար

-15 հազար 700 հա-ն (3,5 %-ը) զբաղեցվում է տնկիներով.

-33 հազար հա-ն (10,7 %) արոտավայրեր են

-37,8 %-ը՝ կազմում են անտառներն ու թփուտները.

-21%-ը՝ ոչ պիտանի հողեր են:

Հողերի զգալի մասը անջրդի են: Ղարաբաղն ունի միայն 2 ջրանցք Թարթառ-Սարսանգը, որի միայն 10-12%-ն է Ղարաբաղին ծառայում և Բադարա-Նորագյուղը, որի տակ քիչ տարածքներ կան: Կան և արտեզյաններ: Ղարաբաղի գյուղատնտեսությունը զարգանում էր պետության քմահաճույքների հաշվառումով, այսինքն նպաստելով մերթ հացահատի-

կի արտադրությանը, մերթ՝ գինեգործությանը (70-ական թվականներ) և մերթ էլ վերջինս կրճատելու ճանապարհով:

Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսությունն ընդգրկում է բուսաբուծության և անասնապահության բոլոր հիմնական ճյուղերը՝ հացահատիկի մշակություն, այգեգործություն, պտղաբուծություն, բանջարա-բոստանային կուլտուրաների մշակություն, խոշոր և մանր եղջերավոր անասունների պահպանություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն, շերամապահություն:

Բուսաբուծության առաջատար ենթաճյուղը հացահատիկի մշակությունն է, որին բաժին է ընկնում ցանքատարածությունների 36-38%-ը: 1940թ. այն կազմել է 70,6 հազար հա, 1987թ. միայն 22,7 հազ. հա: Հացահատիկի համախառն բերքը 1985-88թթ. տարեկան կազմել է 100 հազար տոննա:

Տեխնիկական կուլտուրաների պլանտացիաները մարզում կազմում էին 4000 հա, բայց բամբակի պլանտացիաները Մարտակերտում կրճատելու և նրա տեղը խաղողի այգիներ հիմնելու պատճառով տեխնիկական կուլտուրաների ցանքերը զբաղեցրեց ընդամենը 411 հա, որից ծխախոտը՝ 225հա (1987թ.): Խաղողի արտադրությունը 13,9 հազար հեկտարից արդեն հասցվել էր 150 հազար տոննայի: Բայց մարզի արտադրանքը չէր, որ բնորոշում էր նրա բնակչության ապրելակերպը, այլ այն հանգամանքները, որ գալիս էին նրա նկատմամբ Ադրբեջանի ազգայնամոլ ղեկավարների վերաբերմունքից: Ղարաբաղի հայ բնակչության շահերը ոտնահարող խտրականության քաղաքականությունն իր արտահայտությունն է գտել սոցիալական, տնտեսական, քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում և մակարդակներում:

Այդ բոլոր ասպարեզներում էլ ԼՂԻՄ-ը ծնկաչոքի էր եկած թե գյուղերում և թե քաղաքներում: Մեծ հարկերը, որ դրվում էին Բաքվից, բզկտում էին բնակչությանը, անմխիթար ճանապարհները հոգեհան էին անում մարզի մարդկանց, արտադրության շատ ճյուղեր (ավտովերանորոգում և այլն) չունենալը ժողովրդին դնում թշվառ ու խնդրողի վիճակում: Բարձիթող վիճակում էին ոռոգման և մելիորացման աշխատանքները: Նախիջևանի համեմատությամբ մարզը 3000 տոննա հաց ավել էր տալիս պետությանը: Չնայած հինգ տարում նախատեսված էր մսի արտադրությունը հանրապետությունում ավելացնել 2,7%-ով, իսկ մարզում՝ 12-13%-ով:

Ազգայնամոլությունը առավել ցայտուն է դրսևորվել Ղարաբաղի ճանապարհների հարցում: Հանրահայտ է, որ յուրաքանչյուր տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր ցուցանիշը նրա տրանսպորտը և արտաքին տնտեսական կապերն են: Խորհրդային իշխանության տարիներին չի կառուցվել Ստեփանակերտը շրջկենտրոնների հետ կապող բարեկարգ մի ավտոխճուղի, որն անցներ Արցախի տարածքով: Բոլոր ճանապարհները հատում էին ադրբեջանական շրջանները, ինչպես՝



ա/ Ստեփանակերտ -Ասկերան-Աղդամ-Մարտակերտ

բ/ Ստեփանակերտ-Աղդամ-Մարտունի-Ֆիզուլի-Հադրութ

գ/ Ստեփանակերտ-Շուշի-Լաչին-Գորիս-Երևան

դ/ Ստեփանակերտ-Աղդամ-Կիրովաբադ-Ղազախ-Իջևան-Դիլիջան-Երևան

Մոլի ազգայնամոլության հոտ էր փչում հատկապես «Անդրկովկասի հայկական մարգարիտ քաղաք Շուշիի» փողոցների անվանումներից: Մի՞թե ծաղրանք չէ այն, որ հանրահայտ շատ հայերի անուններով Շուշիում ոչ մի փողոց չի անվանվում, չնայած նրանք ծնվել են այնտեղ, իսկ այդ քաղաքում մի երկար փողոց թուրք գեներալ Շիխլինսկու անունն է կրում: Բայց հո մենք գիտենք թե ով է նա, արյունռուշտ ազերի թուրք մի տականք, որ 1918թ. հունվարին կազմակերպեց՝ Պարսկաստանից տուն՝ Ռուսաստան մեկնող ռուս 6 հազար զինվորների զինաթափումն ու կոտորածը Շամխոր քաղաքի մոտ («Շամխորի կոտորածը»): Այստեղ տեղն է հիշեցնել խորհրդային Ռուսաստանի այն ղեկավարներին, որոնք երկյուղում էին հայ զորավար Անդրանիկի անունը տալուց և թուրքերի հուշարարությամբ տարված յոթ փականքի տակ էին դնում նրա անունը, սաստում, բանտ ձգում այն մարդկանց, ովքեր կհամարձակվեին հիշատակել նրան: Ստեփանակերտի թիվ 1 միջն. դպրոցի 4-րդ դասարանի մի աշակերտի կողմից «քաջ Անդրանիկ» երգը երգելու համար պաշտոնազրկել են դպրոցի տնօրեն, ԼՂԻՄ-ում անուն հանած մանկավարժ Բահատուր Դավթյանին:

Շուշի քաղաքի ծնունդ Հարություն Թումյանի ու շատերի անունը կրող մի փողոցի անվան չէիր հանդիպի այն տարիներին: Հարց է, իսկ ո՞վ է Թումյանը, որի մասին Ավետիք Իսահակյանը բանաստեղծություններ ունի գրած: Նա Պետերբուրգի համալսարանի այն ուսանողն էր, որը Արևմտյան Հայաստանը թուրքերից ազատագրելու և Ռուսաստանին միացնել ցանկացող գործիչներից էր: Նա 1918-20թթ. Ղարաբաղի այն դժնդակ տարիներին Շուշվա ազգային-ազատագրական բանակի գլխավոր հրամանատարն էր, անցյալ դարի սկզբին հռչակված ազգային-ազատագրական կռիվների մասնակից ու կազմակերպիչ Թումանի կրտսեր եղբայրն է Շուշի քաղաքից: Այդ ազնիվ ու քաջակորով մարդուն անգլիացի գեներալ Թոմսոնը և Ղարաբաղի դրածո նահանգապետ Սուլթանովը հեռացրին Ղարաբաղից: Հ. Թումյանը հետագայում աշխատում էր Երևանում և դասախոսում Երևանի պետական համալսարանում: Ապրեց 96 տարի ու թողեց փառահեղ հիշողություններ, որից նյութեր են քաղում այսօրվա պատմաբանները:

## ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1.Ղարաբաղը տնտեսական ինչպիսի՞ վիճակում էր գտնվում խորհրդայնացման նախօրյակին և ի՞նչ տվեց ՆԵՊ-ը Ղարաբաղին:

2.Ե՞րբ և ի՞նչ սկզբունքներով կատարվեց գյուղի կոլեկտիվացումը Ղարաբաղում:

3.Արդյունաբերության ո՞ր ճյուղերը հիմնադրվեցին Ղարաբաղում, ինչպիսի՞ առաջխաղացում ունեցավ արդյունաբերությունը 1970-80-ական թվականներին:

4.Թվել գյուղատնտեսության առավել զարգացած ճյուղերը Ղարաբաղում:

5.Բերել փաստեր, որոնք կապացուցեն Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի կառավարողների հակաղարաբաղյան և հակահայկական քաղաքականությունը:

## ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ

***(Պատմության դասագիրք, X-դասարան, «Հայրենական պատերազմը», էջ 223-240, VIII -դասարան, համանուն թեման, պատմության դասագիրք, էջ 72-79):***

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ,
բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:
(Հովհաննես Շիրազ)[160]

1939-45թթ. երկրորդ աշխարհամարտի մի մեծ հատվածը կազմող խորհրդա-գերմանական պատերազմը, որը տևեց 1418 օր (1941թ. հունիսի 22 մինչև 1945թ. սեպտեմբերի 3-ը), մահու և կենաց մի պատերազմ էր խորհրդային պետության ժողովուրդների (այդ թվում և հայ ժողովրդի) կյանքում: Դա միլիոնավոր մարդկանց, առանձնապես երիտասարդների ցանկությունների խաչ ու վերջն էր:

ԽՍՀՄ բազմազգ ընտանիքի մի փոքր մասը կազմող հայ ժողովուրդը այդ աշխարհացունց և մահաբեր պատերազմին մասնակցեց արժանապատվորեն: Նրա շուրջ 360 հազար զավակները և ԽՍՀՄ-ին Դաշնակից պետությունների հայ ազգի 200 հազար մարդիկ դարչնագույն ֆաշիզմի դեմ ելան հանուն ազգի ազատության և խաղաղ կյանքի:

Հայերի մասնակցությունը այդ մեծ պատերազմին շատ բանով պայմանավորված էր նաև վրիժառությամբ, քանզի կայզերական Գերմանիայի այդ վաղեմի դաշնակից Թուրքիան այդ ժամ էլ ատամ էր սրել հոշոտելու



Հայաստանին: Բայց ափսոս, որ այդ շահած պատերազմում, ԽՍՀՄ հաղթանակի պայմաններում Ստալինի սառը և անտարբեր վերաբերմունքի պատճառով հայերը իրենց նվիրվածության պտուղները չվայելեցին, ինչպես ռուսները, որ Կայինինգրադ-Քյոնգիսբերգ շահեցին, ուկրաինացիները և բելոռուսները իրենց արևմտյան հողերը, կարելները իրենց հյուսիսի հողերը, էլ չենք ասում, որ ռուսները վերացրին իրենց «Սև բիծը» տիրանալով Սախալինին և Կուրիլներին: Շահեցին չեխերը, լեհերը, սլովակները և շատ-շատերը:

Մեծ հայրենական պատերազմի պատմության մեջ Լեռնային Ղարաբաղի հայությունն էլ իրեն «հատկացված» էջում ոսկե տառերով գրեց իր անունը: Ղարաբաղը ԽՍՀՄ Մեծ Հայրենականին մասնակցեց իր 45056 կտրիճներով, որոնցից ավաղ տուն չդարձան 22 հազարից ավելի զինվորներ:

«Պատերազմի մասնակիցներից 1850-ը կին և աղջիկներ էին: Մասնակիցների միայն 3 %-ն էին ադրբեջանցիներ (թեև նրանք կազմում էին մարզի ազգաբնակչության 10%-ը): Շուրջ 15 հազար մարտիկներ պարգևատրվել են շքանշաններով ու մեդալներով, 21 հոգի (որից 20-ը հայ) արժանացել են Խորհրդային Միության Հերոսի բարձր կոչման, 5-ը դարձել է փառքի 3 աստիճանի ասպետներ, 23-ը գեներալներ: Անդրկովկասի բոլոր մարշալներն ու ադմիրալները (Հ.Ք.Բաղրամյանը, Ա.Ք. Բաբաջանյանը, Ա.Ն.Խանփերյանցը (Սերգեյ Խուդյակով), Հ.Ս.Իսակովը նույնպես Արցախ-ղարաբաղյան ծագում ունեն»:[161]

Բայց ո՞վ չգիտեր և ու՞մ ծանոթ չէր ղարաբաղցու նվիրվածության չափանիշները: Ամենահին ժամանակներից ի վեր ղարաբաղցին մարտում եղել է քաջ ու համարձակ, հնարագետ ու դիմացկուն, ազնիվ, անկաշառ ու անդավաճան բարեկամության մեջ:

Հիշենք ռուս անվանի բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս, հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկու մարգարեական գնահատականը, որ տրված է ղարաբաղցուն. «Բնությունն ու պատմությունը ղարաբաղցուն ստեղծել են ցայտուն արտահայտված մի տիպ: Ստեղված ամբողջ աշխարհում ղարաբաղցիները հեշտությամբ կարող են ճանաչվել: Գործունեության լայն թափ, անձնական քաջություն, վտանգալից խիզախության հակում, ինքնավստահություն, ինքնահատուկ համառություն, ուղղամիտ հաստատակամություն, նահապետականություն ընտանեկան կյանքում՝ ահա ղարաբաղցու համակրելի գծերը, որոնք ասես խտացնում են հին հայկական առաքինությունները՝ խամրած պատմության դաժանություններից և մաքուր տեսքով պահպանված Ղարաբաղը»:[162]

Մարդկային այս որակումները, այս գնահատականը, արցախցիները միշտ էլ վառ են պահել ու իրենց երակներով փոխանցելով կարծրացել ու դարձել են երկրամասի հայության յուրատիպ, անկրկնելի հատկանիշը: 20-րդ դարի 40-ականներին դարաբաղցի հայը նմանօրինակ խառնված-

քով իր մի կաթիլ, բայց այնքան թանկագին արյունը չխնայեց: Այն նվիրաբերեց, որպեսզի կրկին չկրի օտարի լուծը:

Ղարաբաղցի հողվորը, շինարարը, գրչի մարդը հորովելի կանչը սրտում, մուրճի զնգոցը և դպրոցի զանգի ղողանջները ականջներում, զենքը ձեռքին մարտնչեց լայնարձակ Դնեպրի ափերից մինչև Նեման ու Բալթիկ ծով, Վոլգայից ու Մոսկվայից մինչև Քյոնգիսբերգ, Կրոնշտադից մինչև Կոլա, կռվեց հեռավոր Լեհաստանում և Մոլդովայում, Կարպատներում ու Պրուսիայում, որպեսզի ապրի իր հայրենի արծվաբույնը, որպեսզի չկորչի պատմության անէության մեջ:

Պատերազմի տարիներին ղարաբաղցի հերոսների ներդրած ավանդը շատ մեծամեծերի շրթունքներով են ծոնվել, բայց որ ազգանվիրյալ հայ ծովակալ Հ. Իսակովի այս բառերով է բարուրված, անմոռանալի է: Նա ասել է. «Մենք գնահատում ու հարգում ենք նրանց, ովքեր վտանգի ենթարկելով իրենց կյանքը հերոսաբար պաշտպանում էին անմիջականորեն իրենց տունը, իրենց օջախն ու ընտանիքը, ապա էլ ավելի պետք է սիրենք ու ըստ արժանվույն գնահատենք նրանց, ովքեր առանց երկար մտածելու արյունահեղ մարտերի մեջ էին ընկնում իրենց տնից 2-3 հազար կմ հեռու եղբայրական հանրապետությունների հողում, պաշտպանելու ընդհանուր գործը, ունեցվածքը: Ահա սա է հայրենասիրության բարձրագույն ձևը... Ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների և Միության մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հերոսությունը կատարվում էր հանուն հաղթանակի, ընդդեմ ընդհանուր թշնամու, ի երջանկություն բոլորի, այդ թվում նաև հանուն Լեռնային Ղարաբաղի անկախության, ազատության և երջանիկ ապագայի»:[163]

Եվ ահա հենց այդ անկախությանը, ազատությանը և երջանիկ ապագան պահել-պահպանելու համար էլ ղարաբաղցիները մարշալների, գեներալների և միջին ու կրտսեր հրամանատարների ուսադիրներով, հերոսների ու փառքի ասպետների կոչումներով կռեց այս բոլոր ցանկալիները:

Ահա նրանք[164]



# ԱՐՑԱԽՑԻ ԱՆՎԱՆԻ ՁԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ

| Ազգանուն Անուն Հայրանուն | Ծննդյան թիվը, ծննդավայրը | Զինվորական կոչումը | Զբաղեցրած պաշտոնը, գործողության տեղը կամ ժամանակը | Ստացած կառավարական պարգևները |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Բաղրամյան Հովհաննես (Իվան) (Խրիստափոր) Հայաստանի** | 1897թ. Շամխորի շրջանի Չարդախլու գյուղ | Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս | Զինծառայությունը սկսել է 1915թ. 2-րդ Կովկասյան գնդում: 1918թ. Սարիղամիշի և Ղարսի պատերազմի մասնակից հրամանատար: Հայկական խորհրդային բանակում գնդի հրամանատար: Կռվի հատուկ զինծկրուզի շտաբի պետի տեղակալ, նույնը և Հայրենական պատերազմի սկզբին: Հարավ-արևմտյան ուղղության օպերատիվ խմբի պետ (մինչև 1942թ.): 16-րդ բանակի հրամանատար, Մերձբալթյան և 3-րդ Բելոռուսական ռազմաճակատների հրամանատար: Ռազմ-ն Ակադեմիայի գլխ. շտաբի պետ, Զինված ուժերի թիկունքի պետ, ԽՍՀՄ բանակի գլխավոր տեսուչ և տեսուչների խմբի ղեկավար: ԽՍՀՄ, Լիտվայի և Հայաստանի ԽՍՀ պատգամավոր: | Լենինի 6, Հոկտեմբերյան հեղափոխության, Սուվորովի I աստիճան 2, Կուտուզովի I աստիճանի շքանշաններով, Լեհաստանի և Մոնղոլիայի շքանշաններով: |
| **Իսակով Սոֆիամեղես (Իվան) Սերգեյի** | 1894թ. Ղարսի մարզի Հաջիքենդ գյուղում արդյունաբերական ընտանիքում | ԽՍՀՄ ծովակալ, Խորհրդային Միության հերոս | 1918թ. սկսած ծառայել է Բալթյան և Սևծովյան նավատորմերում: ԽՍՀՄ ծովային ուժերի գլխավոր շտաբի ծովային բաժնի պետ, Ռազմական պատերազմի դատախազ և Կիևի ֆեդերալի վարիչ, Բալթյան նավատորմի գլխ. հրամանատար, Յուսիսային Կովկասի ռազմաշրջանային ուժերի գլխավոր շտաբի պետ, ԽՍՀՄ Պաշտպանության բանակի գլխավոր տեսուչ-վերադիտակ: «Վարոնեժ ռմբակոծիչ» ինքնաթիռի գլխավոր դիզայներ: «Ծովակալ ստալինգրադ» ինքնաթիռի գլխ. դիզայներ: | Լենինի 6, «Կարմիր դրոշի» 3, «Հայրենական պատերազմի I աստիճան», «Կարմիր Աստղի» 2 շքանշաններ, հարավսլավիական I դասի շքանշան: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խուդյակով Սերգեյ Ալեքսանդրի (Խանֆերյանց Արմենակ Արտեմի) | 1902թ. ԼՂ-ի Հադրութի շրջանի Մեծ Թաղլար (Թաղեր) գյուղում | Ավիացիայի մարշալ | 1918-22թթ. քաղաքացիական պատերազմում խորհրդային հրամանատար (11-րդ բանակում), Բելոռուսիայում հատուկ ռազմա-օդային օկրուգի շտաբի պետ, իսկ հետո հրամանատար, Արևմտյան ռազմաճակատի ռազմա-օդային ուժերի հրամանատար, ռազմա-օդային ուժերի գլխ. շտաբի աշխատող, 1945թ. 12-րդ ռազմա-օդային բանակի հրամանատար Անդրբայկալյան ռազմա-ճակատում, Հեռավոր-արևելյան զինվորական օկրուգի հրամանատար: | Լենինի »Կարմիր դրոշի« 2, շքանշաններով և արտասահմանյան մեդալներով: |
| Բաբաջանյան Համազասպ Խաչատուրի | 1906թ. փետրվարի 18-ին, Շամխորի շրջանի Չարդախլու գյուղում | Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Սովետական Միության հերոս | Մարտական մկրտությունը ստացել է 1938-39թթ. սովետա-ֆիննական պատերազմում: 1941-45թթ. առաջին օրերին նա մայոր էր, գնդի հրամանատար Սմոլենսկի ուղղությամբ: Որպես 20-րդ տանկային բրիգադի հրամանատար մասնակցել է Կուրսկ-Օրյոլյան մարտերին, այնուհետև Ուկրաինայում Դնեպրի և Պրուտի անցումներին, Գդանսկի և Սանդոմիրի օպերացիաներին, Լեհաստանի ազատագրմանը, Բեռլինի գրավմանը: Հետպատերազմյան շրջանում ծառայել է Գերմանիայում, Մերձբալթիկայում, եղել է Օդեսայի ռազմական օկրուգի հրամանատար, գտնվել է ԽՍՀՄ տանկային զորքերի պետի պաշտոնում: | Խորհրդային Միության հերոսի «Ոսկե Աստղի», Լենինի 3, «Կարմիր դրոշի» 4, Սուվորովի I և II աստիճանի, Կուտուզովի I, «Կարմիր Աստղի» II աստիճանի, «Հայրենական պատերազմի» I աստիճանի, լեհական 2 շքանշաններով և շատ մեդալներով: |
| Պարսեղով Միխաիլ Արտեմի | 1899թ. Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մաշադիշեն (Կոլխոզաշեն) գյուղում: | Գեներալ-գնդապետ, Խորհրդային Միության հերոս | 1918թ. կամավոր մտավ Կարմիր բանակի շարքերը: Մասնակցել է Բուխարայի էմիրի զորքերի ջախջախման: Եղել է լենինգրադյան ռազմական օկրուգի արտիլերիայի պետը: Սովետա-ֆիննական պատերազմի ժամանակ դիվիզիայի հրամանատար էր, 1941-45թթ. Հարավ-արևմտյան ռազմաճակատի հրետանու պետ: Գործել է Մոսկվայի, Օրյոլի ճակատամարտերում, եղել է հեռավոր-արևելյան Սովետական բանակի հրետանու հրամանատար, 2-րդ հեռավոր-արևելյան ռազմաճակատի հրետանու հրամանատար: | Խորհրդային Միության հերոսի «Ոսկե Աստղ», Լենինի 3, Կարմիր դրոշի 4, Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշաններ: |



| | | | | |
|---|---|---|---|---|
| Սարդարով Սերգեյ Արշակի | 1909թ. փետրվարի 25-ին, Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Ազոխ գյուղում: | Գեներալ-գնդապետ | Ռազմական պաշտոնավարությունը սկսել է 1934թ. Հեռավորարևելյան կարմրադրոշ հատուկ բանակում: Սկզբում եղել է ավիացիոն ռմբակոծիչների էսկադրոնի դասակի հրամանատար, կոմիսար, 1939թ. Խաբարովսկի ավիացիոն գնդի կոմիսար, գնդի հրամանատար: Նրա ավիացիոն գունդը կռվել է Մինվոդի, Կովկասի նախալեռների, Թամանյան թերակղզու, Նովոռոսիյսկի, Կերչի և Ղրիմի ազատագրման մարտերին: Եղել է դիվիզիայի հրամանատար, որը գործել է Ուկրաինայում, Մոլդովայում: Զինվորական բարձրագույն պաշտոնը եղել է ավիացիոն միավորման հրամանատար: Հետպատերազմյան շրջանում գտնվել է հակաօդային պաշտպանության ռազմա-հրամանատարական ակադեմիայի պետի տեղակալ: | Լենինի, «Կարմիր Աստղի», «Հայրենական պատերազմի I աստիճանի» շքանշաններով և մեդալներով: |
| Գաբրիելյան Ռուբեն Նիկոլայի | 1912թ. Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղում | Գեներալ-լեյտենանտ | 1931թ. կամավոր մտել է Կարմիր բանակի շարքերը: Կապի 2-րդ կովկասյան դիվիզիայի միավորման հրամանատար էր: Հայրենական պատերազմի ժամանակ եղել է 47-րդ բանակի կապի պետի տեղակալ: Որպես այդպիսին նա մասնակցել է Ղրիմի ճակատում, Կովկասի նախալեռներում, Կուբանում, Թամանում տեղի ունեցած մարտերին: Եղել է I ուկրաինական ռազմաճակատի կապի միավորման պետ, նույնը և I բելոռուսական ռազմաճակատում: Գտնվել է Լեհաստանում և Չեխոսլովակիայում, նա հասել է մինչև Էլբա: | «Կարմիր դրոշի», «Կարմիր Աստղի» 2, «Հայրենական պատերազմի I աստիճանի» շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: |
| Դանիելյան Սմբատ Մելիքի | 1895թ. Չարդախլու գյուղում (Շամխորի շրջան) | Գեներալ-մայոր | Առաջին համաշխարհային պատերազմի՝ 1914-18թթ. մասնակից, գործել է Կովկասյան ռազմաճակատում: Ստ. Շահումյանին Թիֆլիս ուղեկցողը: Քաղաքացիական պատերազմի մասնակից՝ բոլշևիկների կողմում: 1941-45թթ. պատերազմի ակտիվ մասնակից հրամանատար Կալինինի ռազմաճակատում և Մերձբալթիկայում որպես դիվիզիայի հրամանատար: | «Կարմիր դրոշ»-ի 2 և հետմահու՝ «Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշաններով» |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մինասով Ռադիոն Իվանի | 1896թ. Յակուտական Ալդան գյուղում աքսորված դարաբաղցու ընտանիքում | Գեներալ-մայոր | Ծառայել է 10-րդ սիբիրյան պահեստային գնդում (1915, 16, 17թթ.): Խորհրդային իշխանության զինվոր-հրամանատար, գումարտակի կոմիսար, զինկոմ, Սիբիրյան ռազմական օկրուգի շտաբի պետ, Ֆինբաժնի պետ, մասնակցել է ճապոնիայի դեմ մղված 1945թ. պատերազմին: | Լենինի, «Կարմիր դրոշի» 2, «Հայրենական պատերազմի I աստիճանի» շքանշաններով և մեդալներով: |
| Իսրայելյան (Իզրայելյան) Վաղարշակ (Վալենտին) Սողոմոնի | 1903թ. ապրիլի 20-ին ԼՂ Ասկերանի շրջանի Տռնավարգ (Կարմիր գյուղ) գյուղում: | Գեներալ-մայոր | Սկզբում կոմերիտական աշխատող, Մոսկվայի զինվորական օկրուգի դատախազի տեղակալ, Հարավային, Անդրկովկասյան, Վոլգոգրադյան և 4-րդ ուկրաինական ռազմաճակատների դատախազ: | Լենինի, «Կարմիր դրոշի», «Հայրենական պատերազմի I աստիճանի» 2, Բոգդան Խմելիցկու 2-րդ աստիճանի շքանշաններով և մեդալներով, չեխական և լեհական շքանշաններով: |
| Իսահակյան Բագրատ Օհաննեսի | 1904թ. Նոր Նախիջևանում՝ Շուշեցու ընտանիքում | Գեներալ-մայոր | Որպես Պսկովի 63-րդ հեծյալ գնդի հրամանատար, կռվել է ֆինների դեմ 8-րդ բանակի կազմում, Լենինգրադի I մոտոհրաձգային գնդի հրամանատար, 1941-45թթ. որպես գնդի հրամանատար կռվել է Ստալինգրադում, Կովկասում, Ուկրաինայի 2-րդ ռազմաճակատի կազմում, իսկ հետո՝ I Ուկրաինական ռազմաճակատում: | Լենինի, «Կարմիր դրոշի», «Հայրենական պատերազմի I աստիճանի», «Կարմիր Աստղի» շքանշաններով, մեդալներով և լեհական մեդալով: |
| Ղազարյան Անդրանիկ Աբրահամի | 1904թ. մայիսի 14-ին Շուշի քաղաքում | Գեներալ-մայոր Սովետական Միության հերոս | Լինելով 230-րդ դիվիզիայի 988-րդ գնդի, 139-րդ բրիգադի 74-րդ դիվիզիայի հրամանատար մարտեր է վարել Բրյանսկի ռազմաճակատում, Օրյոլ-Բելգորոդում, Կիևի ուղղությամբ, 3-րդ Բելոռուսական ռազմաճակատում և Լիտվայում (215-րդ դիվիզիայի հրամանատար): Մասնակցել է Չինաստանի ազատագրմանը՝ 1945թ.: | Լենինի 2, Սովետական Միության հերոսի, «Ոսկե Աստղ», Սուվորովի 2-րդ աստիճանի 3, «Կարմիր դրոշի» 5, շքանշաններով և չինական «Յուն գույ» շքանշանով և այլ մեդալներով: |



| | | | | |
|---|---|---|---|---|
| Տեր-Սահակով Ռուբեն Տիգրանի | 1906թ. Թիֆլիսում, շուշեցու ընտանիքում | Կապի զորքերի գեներալ-մայոր | Աշխատել է Խարկովի հեռախոսային կայանի մեխանիկ, այնուհետև ծառայել որպես զինվորական ինժեներ, հետո եղել է ավիաջոկատի կապի պետ: Մեկ քառորդ դար աշխատել է ռազմական պատասխանատու դիրքերում: 1966թ. պահեստի գեներալ է: | Կառավարական մի շարք շքանշաններով և մեդալներով: |
| Ավքանդիլյան Արսեն Մարկոսի | 1910թ. Բաքու քաղաքում՝ արցախցու ընտանիքում | Գվարդիայի գեներալ-մայոր | Մինչև Հայրենական պատերազմը եղել է հեծելազորային գնդի դպրոցի պետ (1936թ.) հեծելազորային դիվիզիայի գնդի հրամանատարի տեղակալ:<br>Հայրենական պատերազմի ժամանակ եղել է Արևմտյան ռազմաճակատի գնդերից մեկի հրամանատար, պաշտպանել է Մոսկվան, կռվել է նաև Կովկասում, մասնակցել է Կորոնեժի և Կուրսկ-Օրյոլյան մարտերին: Հետպատերազմյան շրջանում ղեկավարել է խոշոր զինվորական միավորումներ: | Լենինի, «Կարմիր դրոշի» 3, Բոգդան Խմելիցկու, «Հայրենական պատերազմի» I աստիճանի շքանշաններով և չորս մեդալներով: |
| Դադալով Հովհաննես Միքայելի | 1918թ. ՌՍՖՍՀ Դերբենդ քաղաքում՝ շուշեցու ընտանիքում | Բժշկական ծառայության գեներալ-մայոր | Կրասնոդարի բժշկական ինստիտուտի շրջանավարտ (1941թ.), կամավոր ռազմաճակատ մեկնած, եղել է Բրյանսկի ռազմաճակատի 204-րդ գնդի գումարտակի բժիշկ: Իր պաշտոնով մասնակցել է Կորոնեժի և Մոսկվայի պաշտպանությանը: Գտնվել է բժշկական սանիտարական գումարտակի հրամանատարի պաշտոնում: Իր ծառայությունն է ներդրել Սմոլենսկի և I ուկրաինական ճակատներում: Պատերազմից հետո մնացել է ծառայության մեջ Արևմտյան Եվրոպայում, գտնվել է Անդրկովկասի զինվորական օկրուգի բժշկական ծառայության մեջ, իսկ 1961-66թթ. Միջինասիական ռազմական օկրուգի բժշկական ծառայություններում: | Նա հինգ շքանշանների և շատ մեդալների ասպետ է: |
| Արզումանյան Սերգեյ Արկադյայի | 1921թ.սեպտեմբերի 14-ին ԼՂ Ասկերանի շրջանի Ներքին Սզնեք գյուղում | Գեներալ-մայոր | 1939թ. Աստրախանի ռազմական ուսումնարանի լեյտենանտ շրջանավարտ: 1941թ. գնդացրային գումարտակի կազմում մասնակցել է Վիտեբսկ քաղաքի պաշտպանությանը: Գործել է Հս.Դվինիայի գետանցի գնդում, մասնակցել է Վելիկիի Լուկիի պաշտպանությանը: Եղել է գնդի շտաբի պետի տեղակալ, գնդի հրամանատարի տեղակալ, հետո էլ՝ գնդի հրամանատար: Ծառայել է մինչև 1949թ.-ը, որից հետո երկար ժամանակ Անդրկովկասի զինվորական օկրուգում: 1962թ. նշանակվել է հայկական հանրապետության ՆԳ նախարար: | «Կարմիր դրոշի» և «Կարմիր Աստղի» շքանշաններ և մեդալներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մուրադյան Միխայիլ Արտեմի | 1921թ. մայիսի 21-ին ԼՂ-ի Հադրութի շրջանի Հադրութ գյուղում: | Գեներալ-մայոր | Բաքվի հրետանու ուսումնարանի շրջանավարտը մինչև պատերազմը դասակի հրամանատար էր Երևանի զորամասերից մեկում, որը ուղարկվեց ռազմաճակատ: Մասնակցել է Տագանռոգի պաշտպանությանը, կռվել է հայկական Թամանյան 89-րդ դիվիզիայի կազմում և հասել Բեռլին: Ավարտել է ռազմական բուհը: 390-րդ գնդի հրամանատարն էր: Պատերազմից հետո ավարտել է ռազմական ակադեմիան: Եղել է ՀՀ քաղպաշտպանության պետ: | «Հայրենական պատերազմի I և II աստիճանի», «Կարմիր Աստղի» 2 շքանշաններով և մարտական մեդալներով: |
| Նազարով Կոնստանտին Ալեքսանդրի | 1923թ. օգոստոսի 17-ին Կիսլավոդսկում արցախցու ընտանիքում | Գեներալ-մայոր | 1941թ. հունիսին ավարտելով լեռնահրետանային ուսումնարանը, 1942թ. հունվարից գտնվել է ռազմաճակատում: Մասնակցել է Խարկովի ճակատամարտին, կռվել է Ստալինգրադում, մասնակցել Բելոռուսիայի մի շարք քաղաքների ազատագրմանը, մարտեր վարել Ուկրաինայում և Լեհաստանում: Նա անցել է Վիսլան, հասել է Բեռլին, որի ժամանակ գնդի շտաբի պետի տեղակալ էր: Հետպատերազմյան շրջանում ավարտել է ռազմական ակադեմիան և ծառայել Մոսկվայի ռազմական օկրուգում: | «Ոսկե աստղ» մեդալ, Լենինի «Հայրենական պատերազմի I աստիճանի» 2, «Հայրենական պատերազմի II աստիճանի», «Կարմիր Աստղի» 2, շքանշաններով և մեդալներով: |
| Աղաջանյան Սուրեն Իվանի | 1905թ. ԼՂ Հադրութի շրջանի Ազոխ գյուղում | Սկզբում կուսակցական և պետական, իսկ 1939թ. զինվորական գործիչ, գնդապետ: | Եղել է ինժեներական հատուկ զորամասի հրամանատար, իր զորամասով մասնակցել է Կիևի և Բելոռուսիայի պաշտպանությանը, հասել է Բեռլին: Թշնամու կրակի տակ կառուցել կամ վերականգնել է հարյուրավոր կամուրջներ և գծեր: | Լենինի, Կուտուզովի I աստիճանի և «Կարմիր Աստղի» շքանշաններով: |



| | | | | |
|---|---|---|---|---|
| Շահումյան Հովհաննես Կոնստանտինի | 1910թ. ԼՂ Մարտունու շրջանի Պառավաքումբ գյուղում | Փոխգնդապետ, Խորհրդային Միության հերոս | Հայրենական պատերազմ է մեկնել Տիմիրյազևի անվան ակադեմիայից: Մարտական մկրտությունը ստացել է Մոսկվայի ճակատամարտում սկզբում դասակի հրամանատար, պատերազմի վերջում փոխգնդապետ: Կռվել է Տուլայում, Յասնայա-Պալյանայում, Կուրսկի աղեղում, Դնեպրի մերձակայքում, Բելոռուսիայում: Պատերազմից հետո ծառայել է ԳԴՀ-ի խորհրդային զորաբանակում, իսկ 1948-61թթ. գյուղա-տնտեսական փորձակայանի դիրեկտոր, ՌՍՖՍՀ գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր: | Հերոսի «Ոսկե Աստղ» և Լենինի, «Կարմիր դրոշի» շքանշաններ և մի շարք մեդալներ: |
| Ստեփանյան Նելսոն Գեորգիի | 1913թ. մարտի 28-ին ԼՂ Շուշի քաղաքում | Փոխգնդապետ Խորհրդային Միության կրկնակի հերոս: | 1932 թվականից օդաչու-հրահանգիչ: Հայրենական պատերազմի սկզբից Եյսկի փորձաթռիչքների մասնակից: Մասնակցել է Լենինգրադի պաշտպանությանը, Օդեսայի, Սևաստոպոլի, Կովկասի և Մերձ Բալթիկայի ազատագրմանը: Նա օդատորմի կրտսեր-լեյտենանտից հասել է փոխգնդապետի կոչման: Կառավարել է օդային շատ մարտեր: Հերոսի I մեդալին արժանացել է 1942թ. հունիսին, իսկ II-ին՝ հետմահու՝ 1945թ. մարտի 6-ին: Նրա կիսանդրին տեղադրված է Շուշի քաղաքում: Նրան անվանում էին «Բալթյան արծիվ»: | «Ոսկե Աստղ» 2, Լենինի 2, «Կարմիր դրոշի» 3, «Կարմիր Աստղի» շքանշաններ և բազմաթիվ մեդալներ: |
| Հակոբյանց Գևորգ Թամրազի | 1920թ. Պյատիգորսկում՝ ղարաբաղցու ընտանիքում | Փոխգնդապետ, Խորհրդային Միության հերոս | Լեյտենանտի կոչումով 1941թ. զորակոչվել է պատերազմ ու եղել դասակի հրամանատար: Պատերազմի սկզբից մասնակցել է պաշտպանական մարտերին Ուկրաինայում Հս. Կովկասում: Որպես վաշտի հրամանատար կռվել է Դոնի Ռոստովում, Տագանռոգում, Ստալինգրադում: Գնդի շտաբի պետի տեղակալ էր, գումարտակի հրամանատար Արմավիրի, Կրասնոդարի, Զրիմի ազատագրման ժամանակ: Դնեպրի անցման կազմակերպիչներից էր, Խերսոնի և Մոլդովայի ճակատամարտերի բովում կռվողներից: Գտնվել է նաև Թամանյան դիվիզիայում, հասել է Լեհաստան և Բեռլին: | Հերոսի «Ոսկե աստղ», Լենինի շքանշան և մի շարք մեդալներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դանիելյան Մուշեղ Ղարախանի | 1898թ. ԼՂ Մարտունու շրջանի Բիլբիլաք գյուղում: | Մայոր քաղաքական և զինվորական գործիչ: | Խորհրդային իշխանությանը նվիրված մարդ, Մոսկվայի կուլտուրայի ինստիտուտի կաֆեդրայի վարիչ, Ադրբեջանի Կ.Հ.Կենտկոմի բաժնի վարիչի տեղակալ: Հայրենական պատերազմի ժամանակ Լենինգրադի պաշտպանության ժամանակ գնդի կուսբյուրոյի քարտուղար, դիվիզիայի քաղվարչության պետ, դիվիզիայի հրամանատարի տեղակալ: | |
| Կասպարով Աշոտ Զումշուդի | 1909թ. դեկտեմբերի 29-ին, ԼՂ Հադրութի շրջանի Դուդուկչի գյուղում | Մայոր, Խորհրդային Միության հերոս: | 1931-1946թթ. ծառայել է Խորհրդային բանակի ավիացիոն զորամասերում: Հայրենական պատերազմի տարիներին իր ինքնաթիռով և ինքնաթիռների իր էսկադրիլիայով կռվել է Կալինինի, Ստալինգրադի և 3-րդ Բելոռուսական ճակատներում: Նրա ինքնաթիռների օդակը գործել է Ուկրաինայում, կռվել և հաղթել Թշնամուն Սմոլենսկ, Լվով, Ռոսլավլ, Բրյանսկ, Վիտեբսկ, Մինսկ, Գոմել ուղղություններում: Նրա էսկադրոնը թռիչքներ է կատարել Հելսինկիի, Խոտկիի, Տիլզիտի, Քյոնգիսբերգի, Ինստերբուրգի վրա: 16 անգամ մասնակցել է Բեռլինի ռմբակոծությանը: Նրա անձնական հաշվում գրանցված է 300 մարտական թռիչք: | Խորհրդային Միության հերոսի «Ոսկե Աստղ», Լենինի, «Կարմիր Աստղի», «Կարմիր Դրոշի» 2, «Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշաններով և շատ մեդալներով»: |
| Հայրիյան Արմեն Թևանի | 1910թ. ԼՂ Հադրութի շրջանի Տող գյուղում | Մայոր, Խորհրդային Միության հերոս | 1931թվականից Խորհրդային բանակի օդաչու, Կիրովագրադի ավիացիոն գնդի մեխանիկ: Հայրենական պատերազմի ժամանակ մասնակցել է Տիրասպոլի, Կրեմենչուկի, Պոլտավայի, Բրյանսկի, Ստալինգրադի, Տագանռոգի, Մերծբալթիկայի մարտերին: Նա եղել է ավիացիոն գնդի հրամանատարի տեղակալ: | «Ոսկե Աստղի», Լենինի, «Կարմիր Աստղի», Ալ. Նևսկու «Կարմիր դրոշի» 2, և այլ շքանշաններով ու մեդալներով: |



| | | | | |
|---|---|---|---|---|
| Հայրապետյան Գուրգեն (Գրիգոր) Միքայելի | 1914թ. ԼՂ Մարտակերտի շրջանի Մինգրելսկ գյուղում: | Մայոր, Խորհրդային Միության հերոս: | 1939թվականից Խորհրդային բանակի շարքերում կրտսեր լեյտենանտի կոչումով, վաշտի հրամանատար: Իր վաշտով մասնակցել է Ուկրաինայի, Ա. Բելոռուսիայի ազատագրմանը, գտնվել է խորհրդա-ֆինական պատերազմում, որտեղ էլ հենց արժանացել է հերոսի կոչման: Հայրենական պատերազմի ժամանակ գտնվում էր 2-րդ Ուկրաինական ռազմաճակատում, մասնակցել է Լենինգրադի ազատագրմանը, Բուգ, Դնեստր գետերի անցմանը, մտել է Հունգարիա: պատերազմից հետո դասախոս էր Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: | «Ոսկե Աստղ», Լենինի, «Կարմիր դրոշի», «Կարմիր Աստղի» 2, շքանշաններով ու մեդալներով: |
| Մանասյան Իսահակ Մարկոսի | 1917թ. ԼՂ Մարտունու շրջանի Խերխան գյուղում | Մայոր, Խորհրդային Միության հերոս | 1935թ. զորակոչվել է Խորհրդային բանակ, եղել է դասակի ապա վաշտի հրամանատար, մասնակցել է Ար. Ուկրաինայի և Բելոռուսիայի ազատագրմանը (1939թ.), մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին, որտեղ էլ արժանացել է հերոսի կոչման: Հայրենական պատերազմի տարիներին եղել է գնդի կոմիսար, Բաքվի թիվ 12-88 հոսպիտալի պետ, Երևանի 372 հոսպիտալի պետի քաղաքական գծով տեղակալ: Գումարտակի հրամանատար էր մինչև 1948թ.: | Հերոսի «Ոսկե Աստղ» մեդալ, Լենինի շքանշան, մեդալներ: |
| Սաֆարյան Արամ Հովակիմի | 1913թ. ԼՂ Մարտունու շրջանի Հաղորտի գյուղում: | Գվարդիայի ավագ լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս: | Խորհրդային բանակ է մեկնել 1941թ. հունիսին: Պատերազմի սկզբից մինչև զոհվելը (1944թ. հոկտեմբեր) մասնակցել է Հյուսիսային Կովկասի, Ուկրաինայի, Ռումինիայի և Հարավսլավիայի մարտերին: Նրա վաշտը ակտիվ է գործել Դանուբի անցման շրջանում և Բելգրադի ազատագրման ժամանակ: | Հերոսի «Ոսկե Աստղ», Լենինի շքանշաններով և մեդալներով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Պետրոսյան Սուրեն Գրիգորի | 1910թ. դեկտեմբերի 15-ին ԼՂ Ասկերանի շրջանի Ռև գյուղում: | Ավագ լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս: | 1939թ. զորակոչվել է բանակ:Հայրենական պատերազմի առաջին օրից մասնակցել է Կամենեց-Պոդոլսկի ուղղությամբ տարված մարտերին: Սկզբում լեյտենանտ էր, վաշտի հրամանատար: Կռվել է լեգենդար Ստալինգրադում, մասնակցել Դնեպրի անցմանը: Գումարտակի հրամանատար էր Դնեպրի անցման ժամանակ, որտեղ էլ արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման: | Հերոսի «Ոսկե Աստղ», Լենինի, «Կարմիր Աստղի», «Կարմիր դրոշի», «Հայրենական պատերազմի I աստիճանի» շքանշաններ և մի շարք մեդալներ: |
| Ավքանդիլյան Թեմիկ Հովհաննեսի | 1922թ. ԼՂ Մարտակերտի շրջանի Մարտակերտ ավանում: | Ավագ լեյտենանտ Խորհրդային Միության հերոս | 1942թ. կամավոր մեկնել է ճակատ: Ավարտել է Բաքվի հետիոտն ուսումնարանը և նշանակվել 89-րդ հայկական դիվիզիայի դասակի հրամանատար: Կռվել է Նովոռոսիյսկի, Վերխնե-Բականսկի, Ուկրաինական I ռազմաճակատում: Վաշտի հրամանատար էր: Կռվել է նաև Լեհաստանում, Գերմանիայում: Զոհվել է գերմանական կլեյն քաղաքի մատույցներում: 1945թ. հունիսի 27-ին նրան հետմահու արժանացրել են Խորհրդային Միության հերոսի կոչման: | Հերոսի «Ոսկե Աստղ», Լենինի, «Կարմիր դրոշի», «Կարմիր Աստղի» շքանշաններ: |
| Դանիելյան Երեմ Իվանի | 1901թ. ԼՂ Ասկերանի շրջանի Արանզամի ն գյուղում: | Ավագ սերժանտ, Խորհրդային Միության հերոս: | Կռվել է Ստալինգրադի (1942-43թթ.) մարտերում: Դնեպր գետի գետանցի մասնակից, գերմանացիների մի ջոկատի զգալի մասի ոչնչացնող: | Խորհրդային Միության Հերոսի «Ոսկե Աստղ»-ի, շքանշան և այլ մեդալներ: |
| Հովհաննիսյան Վլադիմիր Աբրահամի | 1905թ. ԼՂ Ասկերանի շրջանի Ռև գյուղում: | Լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս (հետմահու) | Կռվել է Ելնա քաղաքի մատույցներում (1941թ. օգոստոս), Լենինգրադի ռազմաճակատում և Մոսկվայի մատույցներում, Օրյոլում, Կուրսկում և Դոնի Ռոստովի տակ: Նրա հերոսություններին է նվիրված բանաստեղծ Իլյա Էրենբուրգի «Նոր շարք Կուրսկում» գիրքը: | Հերոսի «Ոսկե Աստղ» և Լենինի շքանշանները |



| | | | | |
|---|---|---|---|---|
| Բագիրով (Բաղդյան) Ռուբեն Քրիստափորի | 1908թ. Շուշի քաղաքում | Խորհրդային Միության հերոս | Կռվել է I ուկրաինական ռազմաճակատում, որպես վաշտի հրամանատար: Գործել է Լվովի ուղղությամբ, մասնակցել է Սան և Վիսլա գետերի անցումների համար մղված մարտերին: Կռվել է Լեհաստանում: | Հերոսի «Ոսկե Աստղ», Լենինի և «Կարմիր Աստղ» շքանշաններով: |
| Ավագյան Հրանտ Արսենի | 1924թ. հոկտեմբերի 15-ին Բաքվում ապրող շուշեցու ընտանիքում | Խորհրդային Միության հերոս | Ռազմական I մկրտությունը ստացել է 1942թ. աշնանը Օրջոնիկիձե քաղաքի պաշտպանական մարտերում, ծառայել է որպես հակատանկային հրանոթի նշանառու և մասնակցել Հս. Օսեթիայի պաշտպանական մարտերին: Խփել է 2 տանկ: Նրա ծառայությունները ծգվել են Կովկասից մինչև Կրասնոդար, Ղրիմ, Ուկրաինա, Մոլդովա և Բեռլին: 1946թ. արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման: | Հերոսի «Ոսկե Աստղ», Լենինի 3, «Կարմիր Աստղի», «Հայրենական պատերազմի II աստիճանի», «Կարմիր դրոշի» շքանշաններ և մի շարք մեդալներ: |
| Կասպարով (Գասպարյան) Սուրեն Հակոբի | 1924թ. օգոստոսի 15-ին ԼՂ-ի Ասկերանի շրջանի Ղլիժբաղ գյուղում | Խորհրդային Միության հերոս, սերժանտ | Բանակ է զորակոչվել 1943թ. հունվարի 5-ին: Մասնակցել է 1-ին Ուկրաինական և 3-րդ Բելոռուսական ռազմաճակատների մարտերին: Նրա քաջագործությունները տեղ են գտել 8-րդ բանակի հրամանատար մարշալ Չույկովի հրամանում: Սերժանտ Սուրեն Կասպարովի քաջագործությունները դրսևորվեցին թշնամու տանկերը ոչնչացնելու մեջ: Նա ԽՍՀՄ ԳԽ-ի 1944թ. նոյեմբերի 18-ի հրամանագրով արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման: Զորացրվել է 1956թ.: | «Ոսկե Աստղ», Լենինի շքանշաններով և բազմաթիվ մեդալներ: |
| Հովսեփյան Հովսեփ Սահակի | 1912թ. ԼՂ Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղում: | Փառքի 3 աստիճանների ասպետ, սերժանտ | Հայրենական պատերազմի սկզբից մասնակցել է Հյուսիսային Կովկասի պաշտպանությանը: Գործել է Հայկական 89-րդ Թամանյան դիվիզիայում որպես սակրավոր: Մասնակցել է Ղրիմի ազատագրմանը և հասել մինչև Բեռլին: Փառքի III աստիճանի շքանշանը ստացել է Կերչում, II աստիճանի շքանշանը նա ստացել է 1944թ. հունվարի 28-ին, իսկ I-ը Բեռլինի գրավման համար 1945թ.: | Փառքի 3 աստիճանի շքանշաններ, «Կովկասի պաշտպանության համար», «Խիզախության համար», «Բեռլինի գրավման համար», «Վարշավայի ազատագրման համար» և այլ մեդալներով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խորհրդային Գեղոգ Անդրեեսի | 1920թ. ԼՂ Անկերանի շրջանի Ներքին Սգնեք գյուղում | Փառքի շքանշանների առպետ, ավագ սերժանտ: | Երբ հրապարակվեց ԽՍՀՄ ԳԽ-ի հրամանագիրը Փառքի 3 աստիճանների մասին, հենց ԽՍՀՄ-ում նա առաջինը արժանացավ այդ շքանշաններին: Սերժանտը 1943թ. առաջավ III աստիճանի շքանշանը, 1944թ. ապրիլի 27-ին II աստիճանը, 1945թ. մարտի 1-ին Փառքի I աստիճանի շքանշանը: Նրա սխրանքների մասին լույս է տեսել թերթին ռուսերեն և հայերեն լեզուներով: Նրա մեջ գրված է. «Խփիր և ոչնչացրու թշնամուն Իսրայելյանի պես»: | Փառքի 3 աստիճանի շքանշաններ, «Կարմիր Աստղ» և «Կարմիր դրոշի» շքանշաններ, «Մարտական ծառայության համար» մեդալներ: |
| Վարդանյան Մարգարիտի | 1921թ. մայիսի 5-ին ԼՂ Անկերանի շրջանի Դարաբուլաղ (Ակնաղբյուր) գյուղում | Փառքի շքանշանների առպետ, սերժանտ: | 1942թ. օգոստոսից մասնակցել է Հայրենական պատերազմին: 1944թ. օգոստոսի 17-ին պարգևատրվել է փառքի III աստիճանի շքանշանով, 1945թ. մարտի 21-ին II աստիճանի շքանշանով, 1945թ. ապրիլ-մայիսին I աստիճանի շքանշանով: | Փառքի 3 աստիճանի շքանշաններ, բազմաթիվ մարտական մեդալներ և գովասանագրեր: |
| Մելքումյան Աշոտ Գալուստի | 1922թ. ԼՂ Մարտակերտի շրջանի Գառնաքար գյուղում: | Փառքի շքանշանների առպետ: | Որպես կամավոր 1941թ. մեկնել է պատերազմի դաշտ: Կռվել է Հս. Կովկասում և նրա ողջ ծառայությունը անցել է հակակամ 89-րդ Թամանյան դիվիզիայում: 1944թ. փետրվարի 2-ին ստացել է Փառքի III աստիճանի շքանշանը, II աստիճանը 1944 թվականին, իսկ I-ը 1945թվականին: Նա կռվելով հասել է Բեռլին և Էլբա: | Փառքի 3 շքանշաններ, «Կովկասի պաշտպանության համար», «Բեռլինի գրավման համար» մեդալներ: |
| Սարգսյան Շահեն Հովհաննեսի | 1924թ. ԼՂ Անկերանի շրջանի Հարավ գյուղում | Փառքի շքանշանների առպետ, սերժանտ, իսկ հետո կրտսեր լեյտենանտ: | Հոդվածագրել է Խորհրդային բանակի շարքերը պատերազմի առաջին օրերին: Առաջին մարտական մկրտությունը ստացել է Բատայսկ քաղաքի մոտ: Մասնակցել է Կուրսկի ճակատամարտին: Նա թշնամիներ որսալու և «լեզուներ» գերելու վարպետ էր: Փառքի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճանների շքանշանների է արժանացել հենց այդ «լեզուների» համար 1943թ., 1944թ., հուլիսին, 1944թ. սեպտեմբերի 26-ին: | Փառքի 3 շքանշաններ և բազմաթիվ մեդալներ: |



Ղարաբաղը ամուր թիկունք էր Խորհրդային Միության համար, այդ առթիվ պատմաբանը գրում է.

«Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԼՂԻՄ-ում վիթխարի աշխատանք կատարվեց ամբողջ թիկունքը պատերազմի պայմաններին համապատասխան վերակառուցելու... Պատերազմի տարիներին ղարաբաղցիները երկրի պաշտպանության ֆոնդն են մտցրել 2762337 ռուբլի, 2 կգ 71 գրամ ոսկի, 31 կգ 989 գր արծաթ: Տանկային շարայուններ և մարտական ինքնաթիռների կառուցման ֆոնդն է մուծվել 1 միլիոն 631 հազար 214 ռուբլի և 5 միլիոն 961 հազար 905 ռուբլի արժողությամբ պետական պարտատոմսեր»:[165] Հատկանշանական է Մարտունեցի տրակտորիստ-մեքենավար Սերյոժա Սարգսյանի ավանդը, որը պաշտպանության ֆոնդ է մուծել 100 հազար ռուբլի:

## ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Աշխարհում որքա՞ն հայեր են մասնակցել 2-րդ աշխարհամարտին, նրանցից որքա՞նն են Հայաստանից և որքա՞նը Ղարաբաղից: Թվել իգական սեռի կռվող զինվորների քանակը:

2. Որքա՞ն ղարաբաղցի հայեր են պարգևատրվել շքանշաններով ու մեդալներով, քանիսն են արժանացել Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման, քանի հոգի են դարձել փառքի երեք շքանշանների ասպետներ:

3. Խորհրդային Միության մարշալներից և ադմիրալներից ովքեր ունեն արցախ-ղարաբաղյան ծագում: Քանի ղարաբաղցի գեներալներ կռվեցին ֆաշիզմի դեմ:

4. Ղարաբաղցի թիկունքայինները ինչքա՞ն միջոցներ են տրամադրել հայրենիքի պաշտպանության ֆոնդին (դրամ, ոսկի, արծաթ, պետական պարտատոմսեր):

## ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԸ (1988-2005ԹԹ.)

**(10-րդ դասարանի դասագիրք, 1998թ. օր. 2-րդ - էջ 256-259), նորագույն պատմություն 8-րդ դասարան թեմա «Վերակառուցումը և ճգնաժամի խորացումը» (դաս. 35, 36)**

Արցախյան շարժման տարեգրությունը կազմում է իր անկախության և ազատության համար Ղարաբաղի ժողովրդի այն պայքարի շարունակությունը, որ նա սկսել էր դեռ 1918-21թթ.:

Բայց հարց է, թե ինչու համազգային այդ շարժումը մի երկար ժամանակով, ասենք, 1921-87թթ. նահանջ ապրեց կամ, ինչպես ասում են, սառեցվեց:

**Ուսուցիչը, ձեռքի տակ ունենալով ներքոհիշյալ փաստերը, կարող է,** և պետք է աշակերտներին բացատրի «սառեցման» պատճառները: Նախ ասենք, որ շարժումը լրիվ չի սառեցվել, չէ՞ որ դեռևս 1928թ. ԼՂՀ մարզկոմի այն ժամանակվա 1-ին քարտուղար Արտավազդ Սահակյանը մարզային կուսակցական մի հերթական կոնֆերանսում իր դժգոհությունն է հայտնել Ադրբեջանի վարած ազգային քաղաքականության վերաբերյալ: Բայց այնուամենայնիվ հարցի սառեցումը նկատելի էր, որի պատճառները լուրջ էին և կայանում էին հետևյալում.

Որ ԽՍՀՄ-ում, այդ թվում Ղարաբաղում, այն տարիներին այնքան արագ էին կատարվում դժգույն փոփոխությունները, որ ղարաբաղցի հայը դրանից դժվար էր ուշքի գալիս. ռազմական կոմունիզմ, քաղաքացիական պատերազմ, ՆԷՊ, կոլեկտիվացում, ինդուստրացում, ՊԱԿ-ի «անվրեպ» գործունեություն, «անհնազանդներից երկրի մաքրում»՝ կուլակաթափություն, հայրենական պատերազմ և բնակչության մի զգալի կորուստ, տնտեսության հետպատերազմյան վերականգնում, նորից ՊԱԿ-ի անզուսպ գործունեություն 1949թ., պետական խաղաղ հեղաշրջումներ հետստալինյան ժամանակաշրջանում՝ խրուշչովյան «ձնհալ», բրեժնևյան «լճացում», անդրոպովյան, չեռնենկոյան թմբկահարումներ և վերջապես գորբաչովյան տխրահռչակ «վերակառուցում», որոնցից ամեն մեկը մի մի ապտակ էր ժողովրդին:

Այս ամենը ղարաբաղցու ուշադրությունը շեղում էր ազգային հարցից, չնայած փոքր իսկ «ընդմիջումները» լավ օգտագործվեցին երկրորդ աշխարհամարտից հետո՝ 1945 և 1949թթ. և արտահայտվեցին Հայաստանի կենտկոմի 1-ին քարտուղար Գրիգոր Հարությունյանի նամակներում, որ ուղղված էր Ստալինին:

Իսկ դեռ դրանից առաջ, հայ մտավորականությունը և նրա ղեկավար Աղասի Խանջյանը բազմիցս են բարձրացրել Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Նման բողոք-նամակներ ուղարկվել են նաև 1960-70-ական թթ.:

Հարցի վերաբերյալ 1962թ. Մոսկվայի հայ խոշոր գիտնականների նամակները կենտկոմին, 1965թ. 13-ի բողոք-դիմումը, իսկ այնուհետև 1966թ. 50 հազար ղարաբաղցիների ստորագրություններով դիմումը արժեք չունեցան և քար լռությամբ ընդունվեցին: 1971թ. մի քանի տասնյակ ժողովրդական մտավորականներ Հայաստանից՝ Մարտիրոս Սարյանը, Պարույր Սևակը, Գոհար Գասպարյանը դիմեցին ՀԽՍՀ և ԽՍՀՄ ղեկավարությանը տագնապով ընդգծելով այն անօրինությունների մասին, որ կատարվում էր ԼՂԻՄ-ում՝ Ադրբեջանի իշխանավորների կողմից:

1976թ. ԽՍՀՄ նոր սահմանադրության համաժողովրդական քննարկման ժամանակ նորից շարժվեց արցախյան հիմնահարցը: ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահության արձանագրությունը շեշտեց, որ պատմական մի շարք հանգամանքների հետևանքով մի քանի տասնամյակ առաջ Լեռնային Ղարաբաղը արհեստականորեն միացվել էր Ադրբեջանին: Ըստ այդմ էլ հաշվի չէին առնվել մարզի պատմական անցյալը, նրա ազգային կազմը և տնտեսական շահերը... Անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղը (հայերեն «Արցախ») միացնել Հայկական ԽՍՀ հետ: Այն ժամանակ ամեն ինչ կբռնի իր օրինական տեղը:[166]

Ուշագրավ մի փաստ ևս. 1977թ. «Պրոբլեմա միրա ի սոցիալիզմա» հանդեսում երևացել է հնդիկ Սարադա Միտրայի և քուրդ Ադել Խաբայի «մենք տեսել ենք ազգերի եղբայրություն» վերտառությամբ ռեպորտաժը, որն ամբողջովին ներկված է ալիև-կնորկովյան խաբեությամբ: Հեղինակները լինելով Արցախում, այն ժամանակվա ԼՂԻՄ մարզկոմի 1-ին քարտուղար Բ.Կնորկովին հարցնում են, թե ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղի մարզը չի մտնում ՀԽՍՀ-ի կազմի մեջ, որից բաժանված է ընդամենը մի նեղ շերտով, վերջինս պատասխանում է՝ Լեռնային Ղարաբաղը տնտեսապես կապված է Ադրբեջանի շրջանների հետ, մինչդեռ Հայաստանից անջատված է բարձր լեռներով: Իսկ այն հարցին, թե մարզի բնակիչները բոլորն են դա ընկալել, Կնորկովը պատասխանում է. «Իհարկե, պահանջվել է դաստիարակչական մեծ աշխատանք: Կային մարդիկ, որոնք ասել են «թող ես վատ ապրեմ, բայց կապված լինեմ Հայաստանի հետ»:[167]

Եվ հենց այն «կային մարդիկ»-ն էլ, նրանց սերունդներն էլ այլևս չդիմանալով Ադրբեջանի ազգայնամոլների բազմաթիվ ճնշումներին, 1987թ. Բ.Կնորկովի ժուռնալիստներին տված պատասխանից 10 տարի հետո ընդվզեցին և իրենց հարյուր հազարի հասնող դարաբաղցիների բողոք դիմումը առաքեցին Մոսկվա՝ ԽՄԿԿ Կենտկոմ: Արցախցիները վերևներից նորից չստանալով հուսալի պատասխան 1988թ. փետրվարի 20-ին իրենց հրապարակային ելույթ-որոշումը շաղախված մարզխորհրդի որոշման հետ՝ կայացրին:

**Քանի որ շարժման ամբողջ պատմությունը, նրա պատճառները բազմաթիվ հաղորդումներում, ստվար գրքերում լուսաբանված են, ուսուցիչը հեշտ կարող է կողմնորոշվել և աշակերտներին հաղորդել հարուստ շատ փաստեր: Ի դեպ շարժման շատ պատճառների շարքում գլխավորը համարելով ԼՂԻՄ-ի ազգագրության պատկերի փոփոխությունը հօգուտ ադրբեջանցիների, ուսուցիչն աշակերտներին այդ առումով պետք է հաղորդի հետևյալը.**

Հայերի թիվը Ղարաբաղում 1939-59թթ. կրճատվեց 17 տոկոսով (132,8 հազարից՝ 110 հազարի), իսկ ադրբեջանցիների թիվն ավելացավ 17 տոկոսով: Եթե այդպես շարունակվեր 10-15 տարում նրանց բնակչությունը Ղարաբաղում կգերազանցեր հայերին և գուցե թե «ինքնավար մարզը» դադարեր գոյություն ունենալուց: Նույնիսկ 1941-45թթ. պատերազմի ժամանակ և զանգվածային ռեպրեսիաների պայմաններում (1949թ.) գոյու-

թյուն ուներ հայ բնակչության որոշակի աճ: Ղարաբաղը կարելի է համեմատել Աֆրիկայի հետ, երբ գաղութարարները 18-19-րդ դարերում այն դարձրին «սևամորթների որսատեղի» և ստրկավաճառության դարաշրջան:

Միայն վերջին 40 տարում «սև» մայր ցամաքի բնակչության աճը դարձավ դրական, իսկ Արցախում այն չկարգավորվեց:

«Բայց, ինչպես երևում է վավերագրերից, 1924թ. Ղարաբաղը ունեցել է 100 հազար ծուխ և եթե մեկ ծուխը միջին հաշվով հաշվենք 5 շնչից բաղկացած, ապա ստացվում է, որ Ղարաբաղը դարի առաջին քառորդում պետք է ունենար 500 հազար բնակչություն»:[168]

ԼՂ-ի բնակչության թիվը, ըստ 1989թ. մարդահամարի, կազմում էր 188 հազար 40 մարդ, իսկ 1923թ. 157,8 հազար մարդ: Հայերի թիվը 1989թ. կազմում էր 145 հազար 450-ի (77,4%), ադրբեջանցիները՝ 40 հազար 49 մարդ (21,3%), այլազգիները 1,3 5, մինչդեռ 1923թ. նախկին մարզի բնակչության 94,4%-ը կազմում էին հայերը, իսկ մնացածները՝ 5,6%: Տասնյակ հայկական գյուղեր դարձան սակավամարդ կամ անմարդաբնակ: Այսպես, ըստ Մակար Բարխուդարյան պատմիչի բերած տվյալների, 1880-ական թթ. Ղարաբաղի մի քանի գյուղերի բնակչություն, եթե համեմատենք 1989թ. հետ, կունենա հետևյալ պատկերը:

| Շրջանները | Գյուղերը | Բնակչությունը 1880թ. | Բնակչությունը 1989թ. |
|---|---|---|---|
| Մարտունի | Մուշկապատ | 827 | 369 |
| | Կաղարծի | 989 | 329 |
| | Հաղորտի | 1132 | 249 |
| | Մամնա | 490 | 83 |
| | Սխտորաշեն | 484 | 77 |
| | Ծովատեղ | 582 | 147 |
| | Կոյխոզաշեն | 948 | 366 |
| Ասկերան | Ամենարանոց | 1740 | 1024 |
| | Արանգամին | 955 | 111 |
| Հադրութ | Մեծ Թաղեր | 2470 | 1519 |

Որոշ գյուղեր անցած դարի 70-ական թթ. դարձել են անմարդաբնակ (Հարար, Վերին Ղլիժբաղ, Քարագլուխ, Ուլուբաբ, Փահլուր, Բիլբիլաք, Մավաս և Հադրութի ու Շուշվա շրջանների շատ գյուղեր):

Հայ բնակչության նոսրացումը կամ անհետացումը բացատրվում է երկու պատճառով՝ մեխանիկական շարժով (դուրս գալով) և պակաս ծնունդով, իսկ ադրբեջանցիների ավելանալը նույնպես այդ երկու պատճառներով, բայց ավելանալու առումով (ներհոսք և բարձ ծնունդ):

«Ծննդի առումով պատկերն այսպիսինն էր.

Խոջալուում տարեկան 45-55 ծնունդ, Քյոսալարում՝ 35-40, իսկ Նորագյուղում 15 ծնունդ, Սոսում՝ 15, Վանքում՝ 17, Ավետարանոցում և Բերդաշենում նույնպես 17 ծնունդ: Բայց Հարավ, Կարմիր գյուղ, Սարգսաշեն, Քոլատակ, Գառնաքար, Սարուշեն, Խաչեն և այլում 5-6 երեխա: Դրությունը ավելի սարսափելի էր Շուշվա և Հադրութի շրջաններում: 25-30 տարվա



ընթացքում Ջամիլու, Կալադարասի, Կանաչ Թալա գյուղերը դարձան ադրբեջանաբնակ: Դաժան ճակատագրերի առումով Դիզակի մելիքության հանրահայտ Տող գյուղը, որն աստիճանաբար դառնում էր ադրբեջանական իրենից վանում էր հայկական էթնոսը»:[169]

Չխորանալով շարժման շարժառիթների և պատճառների մեջ, որն աշակերտները ուսումնասիրում են (8-10-րդ դասարաններում) մի շարք դասաժամերի ընթացքում, անհրաժեշտ է կոնկրետ և հարուստ փաստերով (որը, իհարկե բացակայում է դասագրքերում) վեր հանել այն ցցուն իրադարձությունները, պատմել այն խոշոր ու բախտորոշ ճակատամարտերի մասին, որ եղել են 1992-94թթ. Ղարաբաղ աշխարհի տարբեր հատվածներում, բայց, որ գլխավորն է, խոսք բացել հերոս զինվորների և հրամանատարների մասին:

Մինչ կշարադրվի այդ հերոս մարդկանց արարումները նախ՝ անհրաժեշտ է ընդգծել շարժման համառոտ էտապները և իրադարձությունները:

| Էտապները | Տարեթվերը | Կարևորագույն իրադարձությունները |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1. | 1987 նախապատրաստական մինչև 1988թ. շարժման սկիզբը | -Մտորագրահավաքներ՝ Ղարաբաղը Ադրբեջանից անջատելու վերաբերյալ: 5-6 անգամ ԼՂԻՄ-ի պատվիրակությունների ներկայանալը Մոսկվա:<br>- Ցույցեր բուդաբաղայր Ստեփանակերտում և շրջաններում:<br>-Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու մասին բանաձևերի ընդունում մարզկենտրոնում և շրջաններում:<br>-Շարժումը ղեկավարելու համար «Ղարաբաղ» և «Կռունկ» կոմիտեների առաջացումը:<br>-Միջազգային Ասկերան քննակավայրում:<br>-Սումգայիթյան նախերգը: |
| 2. | 1988-89-90-91թթ. մայիս | -Ղարաբաղյան հիմնահարց-ընդրության քննարկումները ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահությունում, ԽՄԿԿ բյուրոյում:<br>-Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի փակումը և ուսանողների տեղափոխումը Կիրովական: Երկրաշարժը Հայաստանում:<br>-«Հաղորդ կոմիտեի» ստեղծումը Ղարաբաղում:<br>-Խորհրդային զորքերը Ղարաբաղում: Արտակարգ դրություն մտցնելը Ղարաբաղում և նրա շուրջը:<br>-«Լրագրկոմիտեի» ստեղծումը, օդանավակայանի գավթումը և նրանում գործող հատուկ ռեժիմը:<br>-Հայ ազատագրողների և նրանց կազմակերպիչների հետապնդումները, ձերբակալությունները:<br>-Հայկական գյուղերի թալանը, «մարդկային ոչնչ»: |
| 3. | 1991թ. աշուն | -Այս էտապի քննարկ գիծը ԽՍՀՄ փլուզվելը և մեր ձեռքերին ազատություն տալն է: |
| 4. | 1992թ. հունվար-1993թ. վերջ | -Քարին սանի ճակատամարտը:<br>-ԽՊԱՀ-ի կողմից թշնամու կրակակետերը վերացնելու հոգեբանում, Մայիսեկլիում, Վերին Ալիսալում, Ղարադաղլում:<br>-Թշնամու դուրս փոնդումը Մարտունուն հարող տարածքներից:<br>-Շուշիի ազատագրումը, Լաչինից-Հայաստան (միջանցքի բացումը):<br>Թշնամու ուժերի փոխումը և կրակակետերի վերացումը Ասկերանից, Քնարաբարից, Աղդամից, Ֆիզուլուց, Զանգելանից, Կելբաջարից և Զանգելանից:<br>Մարտակերտի շրջանի մի զգալի մասի և Ծառուկյանի շրջանի ամբողջ տարածքի գավթումը թշնամու կողմից:<br>-Բանակցությունների սկիզբ «Ղարաբաղի հարցի շուրջ» (Մարիո Ռաֆայելի): |
| 5. | 1993-1994 թթ. մայիս | -Կռիվներ Մարտակերտի տարածքում և ազատագրված մյուս շրջաններում:<br>-Արվան-մուջահեդների խառնվելը պատերազմին՝ Ադրբեջանի կողմում, նույնը և չնչեներին:<br>-Դադար պատերազմի ընթացքի մեջ:<br>-Բանակցություններին ընթացք տալը միջազգային միջնորդների մասնակցությամբ («Մինսկի խումբ» ստեղծվելը):<br>-Ռազմագերիների փոխանակում՝ առնթիգ-առնթ: |

Անրաժեշտ է գնահատական տալ առավել տուր բնույթ ստացած այն կռիվներին, որոնք միտված էին Ղարաբաղը շրջափակումից ազատելու և Հայաստանին միանալուն (Քարին տակ, Շուշի, Լիսագոր, Լաչին): Խոսք պետք է գնա Արցախի ծայրակետերում ընթացած ճակատամարտերի մասին (Մաճկալաշեն, Գևորգավան, Ավդալ-Գյուլափլու, Յուսափ ջանլու, Ասկերան, Աղդամ, Ուխտաձոր, Հադրութ, Պուշկեն Յալ և այլն):

Գոյամարտի պատմության մեջ հատուկ նշանակություն ուներ հատկապես Շուշիի ազատագրումը, քանզի մեզ պարտադրված պատերազմի սաստկացված շրջափակման պայմաններում ԼՂՀ-ն հայտնվել էր ծանր ռազմա-քաղաքական և սոցիալական վիճակում, և որ նրան այդ վիճակից դուրս բերելու միակ միջոցը Շուշիին տիրելն էր՝ գիտակցելով, որ «Ով տիրում է Շուշիին, նա տիրում է Ղարաբաղին»:

Հարկ է, որ ուսուցիչը իր ձեռքի տակ եղած փաստերի միջոցով պատմի Շուշիի ազատագրման ռազմական պատմությունը, ընդգծվի քաղաքը ազատագրելու գործում ԼՂՀ բանակի 4 ուղղություններով ծավալված ռազմագործողությունների ընթացքի մասին, տրվի այդ գործողություններում հանդես եկած զորամիավորումների փոխհամագործակցության գնահատականը:

Նկարագրվի, որ թշնամին Շուշիի շուրջը ուներ 1200 զինվոր, Զառիսի գյուղում 100 մարդ, Լիսագորում՝ մինչև 300-350 մարդ, Քյոսալար -Զանհասանի ուղղությամբ՝ մինչև 200 մարդ:

Ասվի, որ այդ ուժերը ջախջախելու համար ԼՂՀ պաշտպանության բանակը նրանց դեմ ուղղեց իր չորս զորամասերը՝ «26»-ի ուղղություն /հյուսիսային/, հրամանատար՝ Վ. Չիթչյան, Շոշի ուղղություն /արևելյան/՝ հրամանատար Ս. Կարապետյան, Լաչինի ուղղություն /հարավային/՝ հրամանատար Ս. Բաբայան և Քյոսալարի ուղղություն, հրամանատար՝ Ս.Օհանատար Ս. Բաբայան և Քյոսալարի ուղղություն, հրամանատար Արկադյա Տերնյան: Նշվի ճակատամարտի ընդհանուր հրամանատար Արկադյա Տեր-Թադևոսյանի և նրա տեղակալ Ֆելիքս Գզոդյանի ստորագրությամբ առկա պլանի կենսագործման պատմական նշանակության մասին, ասվի,

**-որ այդ հաղթանակը ապահովեց ԼՂՀ կապը Մայր Հայաստանի հետ,**

**-նպաստեց մեր ժողովրդի մարտական ոգու բարձրացմանը**

**-համաշխարհային հանրության համար բացահայտեց առաջ քաշված հիմնահարցի նպատակների ու խնդիրների ողջ լրջությունը.**

**-ալեկոծեց հողագնդի ծագերով մեկ ցրված ողջ հայությանը՝ առիթ տալով խորհելու ազգային շահերի միասնության մասին,**

**-առաջ բերեց թշնամու հուսալքումը և կոտրեց նրա թափը պատերազմում:**

Արցախյան պատերազմի մեծ ռազմադաշտ ներկայացնող Մարտակերտի կռիվները, որը մարդկային մեծ զոհաբերությունների գին էր պահանջել, պետք է ուսուցչի կողմից հատուկ ընդգծվի, նշվի այդ տարածքում մեր պաշտպանների սկզբնական անհաջողությունների պատճառները (ԽՍՀՄ 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի հանդես գալը Ադրբեջանի կողմում, ռազմական մեծ ուժերի առկայությունը Ադրբեջանում, որը քսանապատիկ շատ էր Հայաստանից):



Անհրաժեշտ է նշվեն ու մեծարվեն պաշտպանական մեր բանակների հրամանատարները՝ Ավո (Մոնթե Մելքոնյան), Արթուր Աղաբեկյան, Վիտալի Բալասանյան, Նորայր Դանիելյան, Վաչագան Իշխանյան, Սամվել Կարապետյան, Մովսես Հակոբյան և գլխավոր հրամանատար Սամվել Բաբայան, շտաբի պետեր Գզոդյան և Զինևիչ:

Հատուկ նշանակություն տալ 1992թ. մարտի 4-ին ձևավորված ԼՂՀ պաշտպանության խորհրդի, մարտի 26-ին նորաստեղծ պաշտպանության կոմիտեի, որը հետո ինքնապաշտպանություն անունը կրած, պաշտպանության գործի կազմակերպիչներին (Արթուր Սկրտչյան, Օլեգ Եսայան, Սերժ Սարգսյան, Ռոբերտ Քոչարյան, Վիտալի Բալասանյան, Ազո Կարապետյան, Արկադյա Տեր-Թադևոսյան): Հենց այդ յոթնյակը իրենց քաջագուն և ինքնազոհ հրամանատարների միջոցով փրկեցին Արցախ-Ղարաբաղը մոլի թշնամուց:

**Աշակերտների գիտակցությանը հասցնել այն միտքը,** թե հաղթել է այն ժողովրդի բանակը, որ չէր ուզում մեռնել, Կոմանդոսից մինչև Դալիբալթայան, Մովսես Հակոբյանից մինչև Սերժ Սարգսյան, Նելսոն Սողոմոնյանից, Նորիկ Դանիելյանից, Սեյրան Օհանյանից, Հմայակ Հարությանից, Սամվել Բաբայանից մինչև Լեոնիդ Մարտիրոսյան, Բեկոր (Աշոտ Ղուլյան), Վլադիմիր Բալայան, Շահեն Մեղրյան, Արմեն Մելքումյան, Սոս Գասպարյան, Յուրա Պողոսյան, Նելսոն Հարությունյան, Յուրի Բաբաջանյան, Հովիկ Հարությունյան, Վագիֆ Գալստյան, Սամվել Հարությունյան, Վալերի Քոչարյան, Արթուր Գրիգորյան, Բենիկ Սահակյան, Վոլոդյա Համբարձումյան, Սահակ Պողոսյան, Վիգեն Գրիգորյան, Վոլոդյա Խաչատրյան: Թողեք աշակերտները մտապահեն բանաստեղծի այս բառերը:

«Մեր հերոս ինքնապաշտպանները հայրենի հողի վրա կանգնել են ինչպես խաչքարերը, ամուր՝ ինչպես հավատը, անծախ՝ ինչպես պատիվը»:[170]

Կամ մեկ ուրիշ բանաստեղծի սրտի խոսքերը մեր անմահ զոհերի մասին՝ «Այս բանակի հերոսներն առանց երկմտելու, արցախյան գոյամարտում իրենց վազքով գնացին դեպի մարտական զենքը ու փարվանա թիթեռների նման այրվեցին իրենց ռոմանտիկ ցանկություններին ցանվող պատերազմի բոցերում»:[171]

Աշակերտը կարդալով կամ ուսուցչից լսելով եղբայրներ Վարդան և Վազգեն Գրիգորյանների հանդուգն քայլերի մասին, որոնցից Վազգենը թշնամուն չհանձնվելու համար սպանել է նախ իր շանը և ապա իրեն, մեծ կսկիծ ապրելով՝ հանդերձ հպարտանա նրանցով ու հար հիշի բանաստեղծի՝ Վազգենին ձոնած այս տողերը.

Եվ առաջինն էր ամբողջ Արցախում,
Վերջին գնդակը իր համար պահել,

Որ չնվաճի ոսոխն արնախում
Նրա մարմինը կենդանի, ջահել...
Նա առաջինն էր, որ գերազանցեց
Թուրքի գնդակից սեփականը իր...
Որ ուրիշներին տվեց սուրբ դասեր
Հերոսության փայլուն սխրանքի:[172]

Այս ճանապարհով զոհվեցին նաև կարմիրավանցիներ Իգոր և Հովսեփ Հասրաթյանները: Իսկ չէ՞ որ նմանօրինակ է նաև թաղավարդցի Արսեն Խաչատրյանի համարձակ այն քայլը, որ իր շրջված տանկի տակից դուրս գալու և թշնամու ձեռքը չընկնելու համար, դանակով կտրել է իր իսկ ձեռքը ու փրկվել: Թշնամու կողմից հարկադիր գերությանը դիմադրելու և միայն իր հայրենի հողում սպանվելու քայլին էր դիմել դրախտիկցի քաջ Լևոն Մկրտումյանը:[173]

Ճարտարի գումարտակի զոհված հրամանատար Հովիկ Հարությունյանի թևավոր այս բառերն է, որ պետք է աշակերտը անգիր իմանա՝

Ախ, հողի տակ ես լինեմ անգամ,
Լսեմ՝ Սիփանս** թուրքին եք տվել
Սիրասուն մորս արևը վկա՝
Ես ձեզ կանիծեմ՝ ահել ու ջահել:[174]

Աշակերտը թող իմանա թե ինչպիսի՞ անձնազոհության գնացին Քյալբաջար-Քարվաճառի դռները առաջինը բացող տանկի անձնակազմի հերերցիներ Գագիկ Խաչատրյանը, Արտիկ Ավագյանը և Լևոն Համբարձումյանը: Նույնը և Շուշին գրոհող, բայց խփված տանկի հերոսներ Շահենը, Աշոտը և Կարենը, որոնցից առաջին երկուսը զոհվեցին:

Արցախյան պատերազմի մասին մեր գրողների ստեղծագործություններում ստեղծված բազմաթիվ այն փաստերը, որ հրամանատարների ու զինվորների հնարամտություններին է վերաբերում, առատ նյութ են, որ պետք է հաղորդվեն սովորողներին: Դրանցից են հրամանատարներ Կարեն Առաքելյանի և Հովիկ Ձիվանյանի ձեռնարկումները, որոնցից առաջինը թշնամու մոտեցող տանկի անձնակազմին մի թուրքի լեզվով արտահայտած հնարք-հրամանով դուրս է բերել տանկից ու կոտորել, իսկ 2-րդը՝ կարողացել է ցատկել թշնամու տանկի վրա, բացել մտոցը ու նրա մեջ խոթած երկաթի մի կտորով տանկի մեջ գտնվողների մոտ վախ առաջ բերել, որոնք էլ դուրս են եկել տանկից ու մեր հերոսի ինքնաձիգից արձակված գնդակների բաժինը դառել:

Սովորողը, անկասկած, հպարտության զգացում կապրի ստեփանակերտցիներ Հակոբ և Սամվել Բաղմանյան եղբայրների քաջագործության համար, որոնք հետապնդել ու սպանել են հայի արյունռուշտ թշնամիներից մի մեծադիրի ու շատ տարիներ բանտախցում գտնվել: Կամ Գագիկ Տեր-Հովհաննիսյան և Մկրտիչ Մարտիրոսյան լոնդոնաբնակ հայ մարդկանց կատարածի համար, որոնք սպանել են չեչեն Ուցիև եղբայրներին ու խանգարել Ադրբեջանի համար նրանց հրթիռներ ներկրելը:[175]

Երեխաների համար գերող կլինեն ինքնաշեն զենքեր պատրաստող մանկավարժներ Մելիք Վարդանյանի (Զրակուսի դպրոցի տնօրեն) և Գավրիլ Միրզոյանի (շեխերցի ուսուցիչ) ձեռնարկումները, որոնցից առաջինը զենքեր էր նորոգում, իսկ վերջինս՝ ինքնաշեն գրադ, որով խփել են թշնամու տանկը:[176]

Իսկ Ղազանչիի դպրոցի տնօրեն, 5 երեխաների հայր, իր հող ու ջրի համար իր կյանքը մատաղած Պավել Ասատրյանի այս խոսքերը. «Եթե անգամ աշխարհակործան փոթորիկները փորձեն մոտենալ Ղազանչի գյուղին, ապա մի հրաշքով ես կփոխակերպվեմ հզոր ու կախարդական մի ուժի, որ անսասան կպահի գյուղն իմ հայրենի», մեծ դաս նորօրյա և գալիք սերունդների համար:[177] Իհարկե, աշակերտը դառնագին ցավ կապրի Մարադայի այն 10 երեխաների հայր Արշավիր Սարգսյանի համար, որ երբ հայրենի գյուղը վառվում էր, նրա աչքի առաջ կտրեցին որդու գլուխը: Նրա երկու տղաները զոհվեցին գոյամարտում, իսկ երբ 4-րդ տղայի այդ Արշավիր հայրը, ուզում էր խնդրել, որ ազատեն վերջին տղային զինծառայությունից, որ պահի իրենց, տղան հրաժարվեց հոր առաջարկից:[178]

**Ղարաբաղցի երեխան պետք է զգա,** որ մեր ազատագրական պայքարի մեջ, թերևս մեծ են հայաստանաբնակ խիզախների ծառայությունները՝ սկսած Վազգեն Սարգսյանի կազմակերպած 500 երկրապահ կամավորներից (մահապարտներից) մինչև «Արաբո», «Հայդուկ», «Չաուշ», «Թաթուլ Կրպեան», «Նիկոլ Դուման», և այլ ջոկատներ: Որ վիշտը սրտում հրացան էր վերցրել երկրաշարժից նահատակվածների որդիք գյումրեցիք, զենքի տակ էին խրոխտ թալինցին, անվեհեր կոտայքցին, սասունիկցին, էջմիածինեցին՝ իր զանգերի կոչով, արծիվ կտրած սյունիքցիք, հպարտ շիրակցին, վախը բացառող եղեգնաձորցին, անհողդողդ տաուշեցին, վայքեցին, աբովյանցին, քանաքեռցին ու վանաձորցին, չարենցավանցին, գեղարքունիքցին, ու քաղաքամայր երևանցին մասիսցու հետ մի շարքում, որոնք եղբայրական օգնությունը չեն խնայել Ղարաբաղի համար ու իրենց սուրբ արյունով ապացուցել, հավերժացրել են հայրենասիրությունը:

Հիշենք նրանցից «Արաբո»-ի ջոկատի զոհվածներին Մարադայում, Վարդան Դուշմանին, որը Շուշիի ազատագրումից հետո շամպայնի շիշը ձեռքին այցելել է հայկական հին գերեզմանոցը և մեկական կաթիլ ծորել հայերի գերեզմաններին ասելով. «Հանգստացեք մեր պապեր, Շուշին ազատագրված է»: Թողեք, որ աշակերտներն իմանան, որ այդ նույն Վարդանի մոտ հայրենասիրությունը ձևավորվել էր դեռ աշակերտական նստարանից, երբ 10-րդ դասարանում սովորելու ժամանակ իր ազատ շարադրության թեման վերնագրել էր «Երանի նրան, ով Մասիսը տուն բերի»:[179]

Բայց մի՞թե ղարաբաղցիների հիշողության մեջ անմոռանալի չեն Շու-

շի գրավման բեմահարթակում գործած «Հրազդան-1» կոդային անունը կրող օպերացիայի կազմակերպիչներ գեներալ գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը, որն այն ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարության շտաբի պետն էր, Լեոնիդ Մարտիրոսյանը, ՀՀ պաշտպանության նախարարության օպերատիվ վարչության պետի տեղակալը՝ Ֆելիքս Գզողյան գնդապետը, որը ԼՂՀ ԻՊՈՒ-ի շտաբի պետն էր, Նվեր Չախոյանը, Ժիրայր Սեֆիլյանը, որը հարձակվող ջոկատների հրամանատարներից էր, կապի պետ Արթուր Փահլազյանը: Չի մոռացվի նաև ՀՀ քաղաքական ու պետական գործիչ, գրող Սամվել Շահմուրադյանը, որը գոհվեց Գանձասարի մոտերքում, գովքի է արժանի գեներալ Մանվել Գրիգորյանի կատարածը, որ նրա ղեկավարությամբ գործած բանակը ազատագրել է Ղարաբաղի 70 բնակավայրերը:

**Անհրաժեշտ է, որ աշակերտը պատմական զուգահեռներ անցկացնելու կարողության տերը լինի:** Ասենք, երբ նա Ավարայրի ճակատամարտում քարոզիչ Ղևոնդ Երեցին, պատմիչ Եղիշեին և կաթողիկոս Հովսեփին է իմանում, կարողանա իմանա նաև մեր նորօրյա Ավարայրների քարոզիչներին ևս, որոնցից են Վազգեն Առաջինը, Գարեգին Առաջինը (կաթողիկոսներ), Ղարաբաղի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, որոնց օրհնությունն ու աղոթքը Շուշիի գրավման և տասնյակ այլ ճակատամարտերի հոգևոր սնունդը եղան մեր ազատամարտիկների համար: Նաև իմանան, որ արցախյան գոյամարտում մեր մտավորականների գրիչներն էլ զենքի դեր են կատարել, որ «գոյամարտում իրենց գրիչը զենքով փոխարինեցին և թշնամու դեմ մարտնչեցին գրողներ Ռոբերտ Եսայանը, Սեյրան Քամալյանը, Սենոր Հասրաթյանը, Գագիկ Բեգլարյանը, Լեռնիկ Հակոբյանը, Դավիթ Շիրինյանը, Արիս Գրիգորյանը, Սպարտակ Հակոբյանը, Կոմիտաս Հակոբյանը և ուրիշներ, իսկ Կիմ Գաբրիելյանին և Նորեկ Գասպարյանին կարելի էր տեսնել թեժ մարտերում՝ հաղորդումների և գրքերի համար կենդանի փաստեր հավաքելիս»:[180]

Արժեքավոր կլինի, եթե կրկին, զուգահեռների ճանապարհով, աշակերտները գնահատական տան մեր շարժման ժամանակ դրսից, օտարազգի մարդկանց մեզ հասցրած օգնության մասին նորօրյա նանսեններ Մեծ Բրիտանիայի բարոնուհի Քոքսի, բուլդարուհի լրագրող Ցվետանա Պասկալևայի, ռուս գրող Անդրեյ Նույկինի, ԽՍՀՄ ժողպատգամավորներ Վլ.Սմիռնովի, Շաբադի, Վ.Շեյնիսի և շատերի հոգեհարազատության, անհանգստությունների և ծեռնարկումների մասին:

**Թողեք, որ ձեր աշակերտները գնահատել կարողանան նաև մեր ներքին և արտաքին կազմակերպությունների ուժերը,** այն մարդկանց, որոնք հայաստանաբնակ արցախցիներն են: Որ ըստ արժանվույնի գնահատեն նրանց ստեղծած «Հայրենակցական միությանը»՝ իր «Վարանդա», «Դիզակ», «Զրաբերդ», «Խաչեն», «Շահումյան-Գետաշեն» կազմակերպություններով և «Քարին տակ», «Բերդաձոր» համայնքներով հանդերձ: Որ նրանց «ամեն ինչ Արցախին» կոչը, ռազմական և տնտեսական օգնությունը փրկեց դրությունը Արցախում:

**Ուսուցչի կողմից թերևս ընդգծելի են մեր այն պետական ու քաղաքական գործիչներին,** որոնք խիզախել են ու հանդգնել պայքարելու ԽՍՀՄ վարչա-հրամայական կարգերի այն որոշումների դեմ, որոնք հակահայկական ուղղվածություն ունեին, որ բանտերն անգամ նրանց չեն ընկճել ու չեն հեռացել ընտրած ուղուց (Արկադի Մանուչարով, Առնո Մկրտչյան, ճարտարապետ, «Կռունկ»-ի անվան հեղինակ Արմեն Հակոբյան: Գերագնահատել է պետք և նրանց, ովքեր արհամարհելով իրենց կյանքը երկարատև հացադուլի են նստել Մոսկվայում և Ստեփանակերտում՝ հանուն Արցախի ազատության (Վիկտոր Համբարձումյան, Զորի Բալայան, Սոս Սարգսյան, Վաչագան Գրիգորյան, Սեմիոն Բաբայան, Համլետ Գրիգորյան):

**Հարկ է, որ համապատասխան արխիվային փաստաթղթերից վերցնել նրանցից ոմանց պատասխանները Արկադյա Ղուկասյան լրագրողին, որը կրում է այս բովանդակությունը.**[181]

Ար.Ղուկասյանը (հեռախոսով)-Կրեմլի վերաբերմունքը դեռ նույնն է և ոչ ուրիշ կերպ.

Սեմիոն Բաբայան- Դա միության երկաթբետոն է, հրամանատարական-բյուրոկրատական մեքենայի դժվար տատանվող արդյունք է.

Վաչագան Գրիգորյան-Կրեմլը առաջվա պես խուլ ու համր է: Հերթական անգամ Գորբաչովը հերթ չի հասցնում Ղարաբաղին: Նրան այժմ առաջին հերթին հետաքրքրում է իր համար լրացուցիչ լիազորություններ ստանալը: Երկիրը մեզ հիշեցնում է ուղղությունը կորցրած նավի:

**Հաղորդվող նյութի առաջին շարքերին պետք է դասել նաև մեր նախկին մարզի այն համարձակներին** (Շմավոն Պետրոսյան, Վիգեն Հայրապետյան, Բորիս Ղադամյան, Սուրեն Դանիելյան, Գրիգոր Ուլուբաբյան), որոնք ԽՍՀՄ բյուրոկրատական կարգերի պայմաններում, դեռ ժողովրդավարություն, բացախոսություն և հրապարակայնություն խաղալու տարիներին, ՊԱԿ-ի գոյության պայմաններում, մեր շարժման արշալույսին լույս են վառել Ղարաբաղում և հանդգնել առաջինը խոսել, առաջինը բացել շրջանային և մարզային խորհուրդների նստաշրջանները և հրապարակային միտինգները 1988թ. փետրվարին:

**Իհարկե, ուսուցչի տեսադաշտից չեն վրիպի Արցախի պատանի հանդուգնները,** որոնք հանդես են եկել պայքարի առաջին օրերից մինչև վերջ, խիզախել տարբեր ռազմաճակատներում՝ խփել թշնամու տանկը, գերել ազերիներին, կատարել վրիժառու գործողություններ, օգնել մեծահասակներին ռազմի դաշտում, օգնել վիրավորներին, սակրավորի դեր կատարել (փաստերը թողնում ենք ուսուցչին):

**Ընդգծվի կանանց դերը այս գոյապայքարում, բնութագրվեն ուսուցչին ծանոթ կերպարները,** որոնցին առավել ցայտուն են երկրապահ ջոկատներից աղջիկներ Լիանան ու Ժաննան, Նունեն ու Հասմիկը, Գայանեն, Մարգարիտը, Լյուբան «ժայռի» անդամը: Մի՞թե պատկերացնելու բան է, որ իգական սեռի մի ներկայացուցիչ կռվում ստանա վերքեր գլխից, ձեռքից, երկու ոտքից, ունենա 18 բեկոր մարմնի մեջ, որպիսինը կրել է Կարինե Դանիելյանը կամ Սիրանուշ Առուշանյանը, որ մասնակցել է Հաթերքի ազատագրմանը և կռվել Չլդրանի, Կիչանի, Մեհմանայի, Գետավանքի, Հարգոմերի, Մաղավուզի, Ումության, Չարդախչի կռիվներին: Եվ մի՞թե պատկերացնելու բան է, որ նուրբ արվեստի տեր մի կին, որին կոչում են դերասան Ժաննա, պատերազմի տարիներին դառնար զինվոր-կազմակերպիչ, զինվոր-հրամանատար Ժաննա Գալստյան:

**Աշակերտները սարսուռ կզգան, երբ իմանան, որ միայն Շուշվա 5-րդ գումարտակում ընդգրկված 24 կանանցից ու աղջիկներից 15-ը նահատակվել են:** Երեխան ինչպես չգնահատի կիչանցի ուսուցչուհի Ալիսայի վարքը, որ գյուղի ահավոր վիճակը հասցնելով «Խորհրդային Ղարաբաղ» թերթին, բարձրագոչ հայտարարել է. «Կմեռնեմ, բայց չեմ թողի գյուղը»: Կամ՝ ասկերանցի (Քարագլուխ գյուղացի) Մարալ Արզումանյանին, որ Բաքվից եկած մեծապաշտոն թուրքի երեսին է շպրտել՝ «թաղեմ ձեզ, 70 տարի մեզ ուտում եք, վերջ, հերիք է ձեզնից կշտացել ենք, ուզում ենք մեր ժողովրդի հետ ապրել, ուզում ենք միանալ մայր Հայաստանին» բառերը: Իսկ աղջիկների գումարտակի զինվոր Ռիտա Տերտերյանի գոչումը, թե «ինձ թվում է, թե եթե հեռանամ Ղարաբաղից, Ղարաբաղը կփլվի» խիստ կոգևորի դասարանի աշակերտներին: Ասվի, որ Ռիտային է պատկանում նաև «յուրաքանչյուր մայրիկ հայոց այբուբենի հետ միասին իր երեխային նաև զենքի «այբուբեն» պետք է սովորեցնի» բառերը:

Երեխաների համար բերվող շատ փաստեր, արժե որ լրացվի ստեփանակերտցի կանանց այն կոչերով, որ հնչում էին մեզ համար տագնապալից օրերին: «Իմ ընտանիքը. ամուսինս, տղաս, կեսուրս այստեղից թեկուզ ժամանակավոր տեղափոխվելու միտք չունեն, մենք այս հողից ենք բուսել» (Անգին Գրիգորյան):

«Գնում են, շատերն են գնում, բայց ես դատապարտում եմ նրանց ովքեր տուն-տեղով, ունեցվածքով են գնում: Ես ամոթանք եմ ուղղում նրանց, ովքեր մոռանում են անգամ հարազատների գերեզմանները»- ասում է մեկ ուրիշը:

«Ես համոզված եմ, որ մեր ինքնապաշտպանության ուժերը թույլ չեն տա, որ վտանգավոր լինի մեր բալիկների համար»,- գոչում է երիտասարդ կինը: Կամ՝ «ես կոչ եմ անում տոկալ, դիմանալ թշնամու ճնշմանը, համոզված եմ, որ ղարաբաղցիները հաղթանակով դուրս կգան այս դժվարություններից»: Դասալիքներին, վախկոտներին, նվնվացողներին, վարկաբեկող ու հուսադրող այս մտքերը դաստիարակիչ ուժ ունեն:

**Հրապարակեցեք ու պահանջեցեք, որ սովորողներն անգիր իմանան գորիսցի բանաստեղծուհի Մեդորա Խաչատրյանի այն չափածո բանաստեղծությունը, որում վիշտ ու կսկիծ է պարունակվում արցախցի կանանց դժվարությունների համար.**[182]

Որ մեղքիդ համար, քույր իմ արցախցի, պատիժ ես կրում
Սև հագնում ընդմիշտ, առհավետ ողբում...
Այն մեղքիդ համար, որ ժրաջան ես ու կյանք ես կերտում,
Նրա համար, որ առույգ ու խենթ կորյուններ ես միայն երկնում,
Շեներ կառուցող, պատնեշներ կերտող բազուկներ սնում,
Աստղեր ավերող ուղեղներ սերում և աշխարհահռչակ այրեր փայփայում,
Մի խոսքով ասեմ՝ տանջվում ես այդպես, որ հայ ես ծնված ու հայ ես ծնում:
Մարդկության ծագման լեգենդին գոյատևելու հիմնն ես մրմնջում:
Սիրած տղաներից, ամուսիններից, սիրատոչոր եղբայրներից զրկված աղջիկներին ու կանանց առումով որպես սպեղանի արժե աշակերտներին շատ մեղմիկ ու ցածր ընթերցել բանաստեղծ Արկադի Թովմասյանի այս տողերը.

Չգույշ քայլեցեք մարդիկ,
Չգույշ նայեցեք,
Նրանք փնտրում են գարնան ծաղիկներ,
Դուք էլ փնտրեցեք,
Ու նվիրեցեք
Կույս աղջիկներին
Նրանց փոխարեն...[183]

**Աշակերտների ուղեղներին պետք է հասցվի** այն հարյուրավոր բժշկուհի և բուժքույր կանանց սխրագործությունների մասին, որոնք արհամարհելով վախն ու դժվարությունները գթության քրոջ դերեր են կատարել վիրավորների համար: (Թող ուսուցիչը պատմի իրեն հայտնի բժիշկների և բուժքույրերի մասին):

**Անհրաժեշտ է, որ աշակերտները զգան և իմանան.** մեր հերոսական Արցախի ժողովրդի անկոտրում կամքի և դիմադրության մասին, որոնք լավ էին յուրացրել պոետի հայրենասիրական այս կոչերը.[184]

Գիտեինք ուժը թշնամու,
Եվ ինչ խոսք, մերն էլ գիտեինք,
Ամենուր մեզ նայող մահի
Կոկորդից բռնել գիտեինք
Գեղեցիկ ապրելու համար
Գեղեցիկ մեռնել գիտեինք:

**«Արցախյան շարժումը» թեմայի դասավանդման ժամանակ հարկ է,** որ ուսուցչի կողմից տրվեն տարբեր քաղաքական կուսակցությունների, պե-

տական գործիչների, խորհրդային ժամանակաշրջանի որոշ պետական օրգանների՝ շարժման նկատմամբ ունեցած վերաբերմունքի գնահատականները: Անհրաժեշտ է, հատկապես, գովեստի խոսք ուղղել ՀՅԴ (Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության) և ԱԻՄ-ի (Ազգային ինքնորշման կուսակցության) հասցեին: Նշել, որ հենց «ՅԴ կուսակցությունը «Արցախ եկած» առաջին կուսակցությունն էր, որոնք հոգացին գենքի մասին, գենք բերին կռվողներին» նրա (ՀՅԴ) գործիչները 1989թ. Արցախում ստեղծեցին հայդուկային ջոկատներ, որը կատարվում էր անաղմուկ: Սկզբում դաշնակցությունը պահանջում էր գործադուլավորներից, որ ժամանակավորապես սառեցվի շարժումը, նախապատրաստվեն, բացեն ճանապարհները, դուրս գալ շրջապատումից, բացել երկաթուղին, կապ հաստատել Իրանի հետ, օգնություն ստանալ արտասահմանից, ուժեր գործադրել 4-5 տարում դուրս գալ ճգնաժամից:

«ՀՅԴ բյուրոն, ՍԴԿ-ը և ՌԱԿ կենտրոնական վարչությունը 1990թ. հունվարի 25-ին ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահությանը հղեցին հեռագիր: Նրանում ասվում էր, որ երկու տարի է, ինչ արցախահայությունը ծանր օրեր է ապրում: Արցախը, որ մնում է Ադրբեջանի կազմում Ստալինի մեղքով է: Սումգայիթից մինչև Կիրովաբադ հայերի սպանդ է կազմակերպվում: Խորհրդային միության անտարբերությունը զարմանք և վրդովմունք է առաջ բերում: Հայ ժողովուրդը ոչ մի ատելություն չունի Ադրբեջանի ժողովուրդի նկատմամբ: Հայ ազգային 3 կուսակցությունները մտահոգված են ԼՂ-ի և այն Հայաստանին միացնելու հարցով»:[185]

ԱԻՄ-ը, ԱԺՄ-ն (Ազգային ժողովրդավարական միությունը) և ՀԴԿ-ն (Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը) նույնպես կտրուկ պահանջներ են առաջադրում ԽՍՀՄ-ին: Դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Սերգեյ Մելքումյանը ասել է, թե ծանր վիճակում գտնվող Արցախին, Հայաստանի օգնությունն անբավարար է: ԱԻՄ-ի ներկայացուցիչը բոլոր քաղաքական ուժերից պահանջեց նյութական և ռազմական օգնություն ցույց տալ Արցախին:

ԱԻՄ-ը չընդունեց 1991թ. հուլիսի 1-ի հայտարարությունը՝ արցախահայության պայքարը ազգային-ազատագրական պայքար չճանաչելու և 1989թ. դեկտեմբերի որոշումը կյանքում չիրագործելու վերաբերյալ պահանջը:

ՀՀՇ-ի ներկայացուցիչ Դավիթ Շահնազարյանի կարծիքով Հայաստանի և Ադրբեջանի հանրապետություններում պետք է բացառվեր 3-րդ կողմի միջամտությունը, նա պահանջում էր, որ այդ հանրապետությունների ղեկավարները հանդիպեն և արտահայտեն իրենց ժողովրդի պահանջները: ՀՅԴ-ն գտնում է, քանի դեռ Գետաշենի, Մարտունաշենի, Բերդաձորի, Հադրութի շրջաններից բռնագաղթվածները չեն վերադարձել իրենց բնակավայրերը և նրանց տարածքներում գործում են ազերի օմոնականները,



ՀՅԴ-ն չի կարող ընդունել հայ-ադրբեջանական հարաբերությունների հաստատում, ինչ մակարդակով էլ դա լինի:

ԱԻՄ-ը գտնում է, որ Մոսկվան ոտնահարել է Արցախի ինքնորշման իրավունքը և հիմնահարցը ուզում է լուծել այնպես, ինչպես լուծել է արևմտահայության և Նախիջևանի հարցը: ԱԻՄ-ը գտնում է որ ԼՂ-ը մարզային խորհրդի սահմանադրական որոշումով դուրս է եկել Ադրբեջանի կազմից և միացել Հայաստանին: Հետևաբար, արցախահայության միացումը Հայաստանին պետք է ճանաչել դեֆակտո, այսինքն՝ կատարված փաստ:

Հասարակական քարեգործական կազմակերպությունների մեջ, թերևս, արժանի տեղ ուներ «Արցախ» հայրենակցական միությունը, որի օգնությունն Արցախին, դրամական արտահայտությամբ կազմում է 42 միլիոն ռուբլի: Բայց այդ դրականի կողքին կային նաև անհամատեղելի գործելու երևույթներ ևս, որի առթիվ մի բաց նամակով Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղից, 25 հոգու ստորագրությամբ, 1992թ. սեպտեմբերի սկզբին, ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ Իվան Աթայանի նախաձեռնությամբ, հասցեագրվեց ԼՂՀ ԳԽ-ի նախագահությանը և ԼՂՀ ՊՊԿ-ին: «Դատապարտելով արցախյան հիմնահարցի կուսակցական շահարկումը, անհրաժեշտ ենք համարում ժամանակավորապես կասեցնել կուսակցությունների գործունեությունն Արցախում», - գրում են նրանք:

## ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվել Ադրբեջանից ղարաբաղցիների անջատվել ցանկանալու տարեթվերը և նշել, թե ինչո՞ւ այդ ըմբոստացումները հաջողություն չէին բերում նրանց:
2. Նշել Արցախյան շարժման դրդապատճառները:
3. Թվարկել շարժման համառոտ էտապները:
4. Քարտեզի վրա ցույց տալ այն շրջանները և կրակակետերը, ուր տեղի են ունեցել վճռորոշ ճակատամարտերը:
5. ՀՀ-ում ո՞ր քաղաքական կուսակցություններ էին առավել շահագրգիռ Արցախյան շարժման հարցում, թվել դրանք:

# ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՎԱՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՆՈՐՕՐՅԱ ՇՐՋԱՆԸ (4-20-ՐԴ Դ.Դ.)

***Դասանյութը տեղադրված է 5-7 և 9-10 դասարանների հայոց պատմության և ընդհանուր պատմության դասագրքերի էջերում (5-դ. ընդ. պատմ. էջ 29, 30, 31, 6-րդ դ. թեմա 11, 12, 16, 7-րդ դ. թեմա 6 և 17, 8-րդ դ. թեմա 8, էջ 80, թեմա 13 էջ 154: 9-րդ դ. ընդհանուր պատմություն գլ. 10, էջ 13, էջ 174, 10-րդ դ. ընդ. պատմություն գլուխ 14, էջ 162)***

Ղարաբաղի մշակույթին վերաբերող նյութերը, ինչ խոսք, պարուրված են հայոց պատմության դասագրքերի վերը հիշատակված բաժիններում: Ուսուցչի գործն է հայրենագիտական առումով, սովորողներին հաղորդել Արցախ-Ղարաբաղի մշակույթի բաժինը կազմող նյութերը, որոնք, իհարկե, պետք է վաղօրոք հայտնի լինեն նրան ու դասակարգված նրա թղթապանակում:

Մշակույթի թեմայի մեջ ներառվող բաժինները, ինչպես գիտենք, շատ է շատ. նա գիր է և դպրոց, գրականություն և ճարտարագիտություն է ու քանդակագործություն, պատմագրություն է և փիլիսոփայություն, երգ է ու երաժշտություն, այեդ-գուսանություն է և թատրոն: Մշակույթի մեջ մարդու հոգեկան աշխարհի այն մասն է նաև, որ կրոն անունն է ստացել իր նախասկզբնական հավատալիքներ-պոլիթեիզմից մինչև քրիստոնեություն, այսինքն բազմաստվածություն-հեթանոսությունից մինչև մարդակերպ-Քրիստոսը:

**Մշակույթ թեմայի դասավանդման սկզբունքերն ու մեթոդիկան պատմության ուսուցչի առանցքային խնդիրներից մեկն է, և գուցե թե ամենադժվարը մյուս նյութերի դասավանդման համեմատությամբ:** Դասավանդել «Մշակույթ», նշանակում է տեղյակ լինել նրա բոլոր բաժիններին, թեկուզ միջակ չափով տիրապետել նրա այն ենթաբաժիններին, որոնցից հառնում է գիտությունը իր մասերով (քիմիա, ֆիզիկա, մաթեմատիկա, գրականություն, պատմագրություն, արվեստ՝ քանդակագործություն, թատրոն, երաժշտություն, կինո ենթաճյուղերով): Քանի որ այդ հարցերը ուսուցչի կողմից միայնակ լուծելը մեծ դժվարություն է ներկայացնում, ուստի հարկ է, որ պատմության ուսուցիչը (նույնիսկ հմուտ ուսուցիչը) օգնության հրավիրի դպրոցի մյուս ուսուցիչներին (քիմ-բիոլոգիայի, լեզվի և գրականության, ֆիզիկայի, մաթեմատիկայի և այլն) կամ դպրոց հրավիրի դերասանների, ռեժիսորների, քանդակագործների, ճարտարապետների, որոնք մասնագիտական առումով աշակերտներին առավել շատ նյութեր կհաղորդեն: Այստեղ, այս կոնսիլիում-կոնսուլտացիոն պարապմունքի ժամանակ պատմության ուսուցիչն առաջին տեղում պետք է գտնվի և շարադրի



մշակույթի յուրաքանչյուր տարատեսակի պատմական ժամանակաշրջանը, տա նրա առաջացման ու զարգացման դրդապատճառները:

**Փորձված ուսուցիչը, որ գիտի ուսուցման շատ ձևեր ու հնարներ,** հարկավ ուշադրություն է դարձնում ուսուցման գրաֆիկական մեթոդին: Այդ մեթոդը կիրառելի է հենց մշակույթ թեմայի դասավանդման պրոցեսում: Մեթոդը կիրառելի է մշակույթի թեմատիկ մասերի առումով, որն ավելի հեշտ է մատուցվում ուսուցչի կողմից, իսկ աշակերտների կողմից՝ հեշտ յուրացվում:

**Բերենք գրաֆիկական ուսուցման մի օրինակ «Շուշիի մշակույթը 1800-1920թթ.՝ դպրոց, թատրոն, տպարան, «Թերթեր» բաժնի վերաբերյալ**

| Դպրոց | Թատրոն | Տպարան | Թերթեր և հանդեսներ |
|---|---|---|---|
| Ծեմարան (1838թ.)<br>Օրիորդաց (1864թ.)<br>Ռեալական (1898թ.)<br>Մաթեմ-Հումանիտարյան օրիորդաց (1914թ.)<br>Ռեալական ուսումնարան (1881թ.) | Ռամազանի (350 տեղանոց) | 1828թ. Ռազմի (Ճենկլուչիա) Միսիոներական ընկերության կողմից առաջին: 1837թ. Ռադդասար Միսրապոլիս: 1881թ. Մյուրզաթան Հարությունի | «Հայկական աշխարհ» (1874թ.) «Գործ» և «Հզոր զարթուցան հանդես» 1896թ. «Ղարաբաղ» 1911թ. «Ծաշինակի լեռներ» 1911թ., «Մխիթարեան» 1913թ. «Միություն» 1913թ. «Մեղուն» 1916թ. «Ալաբարս» 1914թ. «Քայլակ» 1915թ. «Մեղուն ամենայն» 1915թ. «Ղարաբաղ» 1917թ., «Աշխատանք» 1917թ., «Լեռներ» 1917թ. «Ակունք» 1912թ., «Նիգար» 1917թ., «Լուսնակ» 1917թ., «Լրջան» 1919թ., «Ղարաբաղի Տարեգրություն» 1919թ. «Նոր կյանք» 1919թ., «Ելիզավետ» 1917թ.. |

Այդպիսի գրաֆիկներ կարելի է կազմել Արցախի մշակույթի ցանկացած ժամանակահատվածի և ցանկացած բաժինների վերաբերյալ:

**Պատմության ուսուցչի խնդիրն է՝** աշակերտներին բերել այն համոզման, որ յուրաքանչյուր ազգի մշակույթը նրա պատմական և ազգային կեցության անքակտելի բաղադրամասն է, և որ դրա վիճակն ու ձևերը պայմանավորված են ազգային պետականության առկայությամբ կամ բացակայությամբ, երկրի քաղաքական անկախության աստիճանով, սոցիալ-տնտեսական հիմքով ու կառուցվածքով, քաղաքական համակարգով:

Շատ կարևոր է նաև այն, թե պետությունը ինչպես է վերաբերվում մշակույթին (դրական թե բացասական): Հենց այստեղ մենք պետք է վեր հանենք հայոց անկախ կամ օտարից կախյալ վիճակում գտնվող հայոց թագավորների՝ մշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Ասենք, որ Տիգրան Մեծը (95-55 մ.թ.ա.), իր պետության կայունության հիմքում բանակի հզորացման հետ մեկտեղ դնում էր նաև իր կայսրությունում հելլենիստական մշակույթի ստեղծման հարցը, որը կմիավորեր երկրի բազմազգ ժողովուրդներին: «Երկրի հելլենականացումը Տիգրան Մեծը բարձրացրեց պետական ընդհանուր քաղաքականության մակարդակ», որի համար

էլ Տիգրան 2-րդին համարում էին «Հելլենիստական վերջին մեծ միապետ»:[186]

**Պատմության ուսուցչի, և ոչ մեկ խնդիրն է՝** աշակերտներին հասկացնել քրիստոնեական կրոնի ընդունման գործում հայ ժողովրդի առաջնահերթության պատճառները (տարբեր կրթական խայտաբղետ հոսանքների, զրադաշտականության դեմ պայքարը, երկրի միավորումը) և մարդկության պատմության մեջ առաջին անգամ քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելու պատմական նշանակությունը:

Սովորաբար «Մշակույթ» թեմայի մեջ առաջին պլան է մղված գրի, դպրոցի, մի խոսքով դպրության առաջացման և զարգացման խնդիրները, մեր պարագայում հայոց գրի և դպրության հանդես գալը Արցախում: Այստեղ խնդիրը ոչ այքան նրանումն է, թե ինչու, ասենք, Մեսրոպ Մաշտոցը չհավանեց ու չօգտագործեց իրենից առաջ եղած Դանիելյան գրերը, կամ թե, քանի ծայնավոր կամ բաղաձայն տառեր նա մշակեց, հունականից ինչը վերցրեց կամ չվերցրեց, դա լեզվի մասնագետի գործն է, այլ աշակերտներին բացատրել թե.

ա) ազգային գրերի ստեղծումը, որպես կանոն, յուրաքանչյուր ազգի կողմից ընկալվում է որպես պատմա-մշակութային խոշոր երևույթ,

բ) որ լեզվի և առհասարակ գրավոր մշակույթի ոլորտում վարած քաղաքականությունը՝ պետական քաղաքականության շարունակություն է: Տվյալ դեպքում մեր գրերի գյուտը դրա լավագույն վկայությունն է:

գ) որ հայոց առաջնորդները և գաղափարախոսները (Վռամշապուհ, Սահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոց) ճիշտ կողմնորոշվելով պատմական ու քաղաքական բարդ շրջադարձերում (387թ. հայ ժողովրդի բաժանվելը և պետության կորուստը) և հատկապես գիտակցելով ժամանակի պահանջն ու մարտահրավերը հանգեցին հանճարեղ-հայեցակարգային եզրակացության՝ Հայոց եկեղեցու պաշտոնական լեզվի ստեղծմանը:

դ) բնութագրել Մաշտոցի առաքելության բարդ հետագիծը և երթուղին՝ Գողթան-Եդեսիա..., նրա պայքարը լատիներեն, հունարեն, ասորերեն ժամասացությունների դեմ, որոնք առանձին-առանձին տիրում էին բաժանված Հայաստանի երկու մասերում: Որ Մաշտոցը պետք է դրանց փոխարեն հայոց եկեղեցում մտցներ սեփականը՝ հայերենը: Իսկ դա նա կատարեց դպրոցի միջոցով:

ե) որ գրերի գյուտը պետք է հիմք ծառայի (և ծառայեց) ազգային մշակույթի բարձր ճեների, այն է՝ գիտական, փիլիսոփայական, կրթական, գեղարվեստական և այլնի զարգացման, ազգային գիտակցության և ինքնագիտակցության վերելքի համար: Հետևաբար՝ գրերի գյուտի առանցքային և որոշիչ գործոնը քաղաքական էր:

**Սովորող երեխան պետք է իմանա,** որ նախամաշտոցյան շրջանում Հայաստանում, այդ թվում և Արցախում հայ դպրությունը զարգացել է 4-րդ



դարից սկսած: Պատմական աղբյուրները և մատենագրական տվյալները այդ են ապացուցում: Սակայն այդ գրերը եղել են օտարոտի՝ ասորագիր, հունագիր, նույնիսկ լատինագիր: Ասում են Արշակ 2-րդ թագավորը մի ոսկե մանյակի վրա ուներ մակագրություն, որ Տիգրան 2-րդը հռչակվել էր որպես քերականագետ և հռետոր, որ Արտավազդ 2-րդը հունարեն ողբերգություններ էր գրում: Ապացուցված է, որ Սյունիքում և Արցախում մինչմաշտոցյան շրջանում կային դպրոցներ մեհենական, ասորական, պարսկական, հունական լեզուներով:

Իսկ մաշտոցյան շրջանում սյունյաց աշխարհից հետո, պատմական Արցախը հայ դպրոցի ստեղծման, պահպանման և զարգացման 1-ին, համեմատաբար ամենաապահով վայրն է եղել: Մովսես Կաղանկատվացին, որ Արցախցի էր, հրճվանքով է նկարագրում Մեսրոպ Մաշտոցի կողմից 5-րդ դարում Հաբանդ գավառի Ամարաս վանքում ստեղծած դպրոցի մասին: Այն ժամանակ Ամարաս վանքը համարվում էր ոչ միայն Արցախի հոգևոր (եպիսկոպոսանիստ), այլև մշակութային և տնտեսական կարևոր կենտրոն: Չնայած հետագա տարիներին Ամարասը ենթարկվել է օտարերկրյա զավթիչների արշավանքներին, բայց չկորցրեց եպիսկոպոսական աթոռը, մնաց որպես մշակութային միաբանության կենտրոն և անընդմեջ գործում էր դպրոցը, ստեղծվում թանկարժեք ձեռագրեր, որոնցից շատերը հասել են մեզ:

Դպրոցաշինության գործում մեծ է, հատկապես, Վաչագան Բարեպաշտ թագավորի ձեռնարկումները: Վաչագանը գիտեր մի հետաքրքիր ավանդական զրույց այն մասին, թե ինչպես են նախնիներից շատերը փառք վաստակելու համար գեղեցիկ գործեր կատարել, բայց դրանք բոլորն էլ անհետացել են: Ահա այդ ավանդությունը, որ հետաքրքիր կլինի ներկայացնել աշակերտներին.

**- Ավանդությունն ասում է, թե** Հայկ Աղեղնավորի ժամանակներում մեր հզորներից մեկը մի պուրակ է գցել Երզնկայի կողմերում, որի մեջ իր ձեռքով տնկել է տարվա օրերի թվով պտղատու ծառեր, բայց այդ հայոց այգեպանի անունը չի պահպանվել, քանզի հայոց գրիչները ենթարկվելով իրենց տերերին, հին անունը ջնջել են, նորն են գրել, իսկ այդ նույնն էլ փոխարինվել է ավելի նորով, ջնջելով իրեն նախորդի անունը:

**-Ասում են թե** մեկ ուրիշն էլ, որ անհայտ մի տեր է, տարվա օրերի թվով հարճեր էր պահում իր պալատում, որը սիրելի չէր, ոչ իր ժամանակակիցներին և ոչ էլ իր հետնորդներին:

**-Գրում են, որ** Տիգրան Մեծ աշխարհակալն էլ իր թագավորության սահմաններում տարվա օրերի թվով ամրոցներ է կառուցել, բայց ավաղ դրանցից անմատչելի են մնացել մի քանիսը:

**-Հայոց արքաներից մեկն էլ** տարվա օրերի թվով խրախճանքներ է սարքել, հուսալով թե դրանով իր անունը կանմահացնի գալիք բոլոր դա-

րերում: Բայց այդ մասին գրող գրիչը ջնջել է արքայի անունը և կողքին գրել՝ «խրախճանասերի փառքը կես օրվա կյանք ունի»:

**-Ասում են մի անգամ թշնամին խուժել է հայոց հողը** և սկսել կողոպտել, քանդել ու ավերել ամեն բան: Հայոց արքան տարվա օրերի թվով զորեր մատուցեց աստծուն, որ հետ քաշվի թշնամին, բայց թշնամին երկար նստեց հայոց երկրում: Արքան ստիպված ինքնասպան եղավ:

**-Ասում են, թե Մ.Մաշտոցի աշակերտներից մեկը,** վաղարշապատցի մի գրող, որ ապրել է մի դար, տարվա օրերի թվով մատյաններ է ընդօրինակել, մինչ այդ ոչ ոք այդքան չէր արտագրել, բայց նրա անունը չի պահպանվել:

**-Խոսվել է, որ մեր Արցախ աշխարհի 1-ին թագավոր Առանը** Տրտու գետի ափին տարվա օրերի թվով ջրաղացներ է հիմնել, բայց ժամանակի ընթացքում քանդվել է:[187] Ավանդության մեջ պատմվող ձեռնարկողներից տարբերվելու համար Վաչագան Բարեպաշտը Արցախ-Ուտիքում և Կամբեճայում բացեց տարվա օրերի թվով դպրոցներ, որպեսզի իր հողի վրա հայը հայի և աստծո հետ խոսի միայն հայերեն: Չէ՞ որ հայերենով է հայը հայ մնում, իսկ հայոց աշխարհը՝ հայկական հող: Մ.Կաղանկատվացին նկարագրում է, թե ինչպես էր Արցախ-Ուտիքյան հայ աշխարհի փոքրիկ թագավորության թագավոր Վաչագանը երեխաների հետ հաճույքով պարապում մեկին տալով պնակիտ, մյուսին՝ գիրք, երրորդին՝ նկարելու տախտակ և այլն:

Այս տեսակետից պետք է աշակերտներին ասել, որ «հայը իր թիկունքում ոչ մի դար չի թողել առանց հերոսության: Իսկ եթե դառանք օտարախոս ու այլադանդ, ապա դատարկ կմնան ոչ միայն մեր դարերը, այլև հազարամյակները: Չէ՞ որ օտար լեզվով աշխարհին մեր ասածն այնքան ճապաղ կլինի, որ ոչ մի հուշադարանում չի մնա: Ազգային հոգու ամենագորեղ կրթարանը հայկական դպրոցն է: Հայրենի կամուրջներով է, որ մենք պիտի դարերն ու հազարամյակները կամարենք իրար: Կար ժամանակ, որ պարսիկն ու բյուզանդիացին պինդ էին բռնել մեր կոկորդը և նրանք բաց կթողնեին մեզ, եթե հայերենը խլանար մեր հոգում և մեր կոկորդն արտաբերեր պարսկերեն կամ հունարեն հնչյուններ: Նրանց վեճը մեզ հետ միայն այդ էր և ոչ ուրիշ վեճ: Իսկ հայերենը հայերիս համար պերճ ու շքեղ է այնպես, ինչպես պարսիկների և հույների համար պերճ ու շքեղ են պարսկերենն ու հունարենը:

Արցախը, Ուտիքն ու Կամբեճանը հայոց աշխարհի արևելյան կողմն են, մեծ տան արևելյան պատը: Եթե այդ պատը և մյուս երեք կողմերի պատերը անսասան ու հայկական մնան, ապա տան ներսում ինչ էլ լինի հայը հայ կմնա: Ահա հենց դրա համար էլ նա զարկ տվեց դպրոցաշինությանը»:[188]

Արցախի դպրոցական կյանքում մեծ աշխուժություն է նկատվում, հատկապես, 10-րդ դարում: Այդ ժամանակ է, որ սկսում են գործել աշխարհիկ դպրոցներ, որոնք նույնիսկ պետական էին: 12-13-րդ դարերում բազմաթիվ էին կրթարանները Արցախում: Նահանգի Խաչեն գավառի դպրոցները լավագույններն էին (Դադի վանքի և այլն): Պատմագիտական աղբյուրներն ուսումնասիրած մանկավարժներ Ա.Բ.Մովսիսյանը, Ս.Սիմոնյանը այդ բոլորի մասին շատ են մատնանշում:

**«Հայկական մշակույթը 10-14-րդ դարերում» թեման ուսումնասիրելիս,** պետք է մեջ բերել արցախյան մշակույթի նմուշներ, հատկապես, միջնադարյան արվեստի գլուխգործոցները: Աշակերտներին հասցնել սելջուկյան լուծը թոթափած Արցախում սկսված ընդհանուր զարթոնքը, նշել ներքին Խաչենի իշխաններ Վախտանգ Մեծի (1120-1150), Հասան Մեծի (1150-1181), Վախտանգ Տանգիկի (1181-1214) և Հասան Զալալի (1214-1261) եռանդուն և համարձակ քայլերի մասին: Ասել, որ այս տաղանդաշատ խաչենցիները շատ բան արեցին Արցախի տնտեսության և մշակույթի ասպարեզում, հատկապես, մշակութային օջախների ստեղծման ու հոգևոր ոլորտի բարգավաճման համար: Որ Արցախի իշխաններն ու բնակիչները ոչ միայն դիմակայում էին օտար նվաճողների կեղեքիչ ու հավատափոխ քաղաքականության, այլև այդ ամենի հետ միասին լարում էին իրենց հոգևորն ու ֆիզիկականը զարգացնելու իրենց երկրամասի մշակույթը:

Հենց նրանք կառուցեցին Գանձասարի ճարտարապետական գլուխգործոցը, (1216-1238թթ.), Դադի համալիրը (1212-14թթ.), Ծիծեռնավանքը, Վաղուհասի Տիրամայրը (1181թ.), Խորանշատի (13-րդ դ.), և մի քանի այլ կոթողներ, որոնց թիվը տասնյակների է հասնում: Այդ առավել նշանավորը, քանդակագործական արվեստի առումով Գանձասարն է, որն Աղթամարից հետո հայ իրականության մեջ երկրորդն է: Այդ տաճարի որմերի արտաքին մակերեսի վրա փորագրված էին Հին և Նոր Կտակարանների տեսարաններ: Որ դիտելով այդ հրաշալիքները իրենց զարմանքն են արտահայտել համաշխարհային ճանաչում ունեցող արվեստագետներ Յակոբսոնը, Շարլ Դիլը, գրող էդուարդաս Մեժելայտիսը, հայ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին և ուրիշներ: Դիտողին զարմանք է պատճառում եկեղեցու մուտք-դռան եզրերի այն նշանները, որ ներկայացնում են Արցախի բոլոր գյուղերի էմբլեմաները՝ մեկը-մյուսից տարբեր նախշերով:

**Դասապրոցեսում չպետք է մոռանալ հիշատակելու նաև Խաչենի իշխանների կանանց հեղինակած խաչքարերի և եկեղեցիների մասին:** 9-13-րդ դարերի հայ պատմիչներ Կիրակոս Գանձակեցու, Օրբելյանի և էլի ոմանց վիմագիր արձանագրությունների տեղեկատվությամբ իմանում ենք, որ հնամենի մեր կոթողների կառուցման գործում տղամարդկանց կողքին նկատելի վաստակ են ունեցել նաև հայ կանայք: Պահպանված տեղեկություններից երևում է, որ նշանակալից է եղել նրանց մասնակցությունը, պաշտամունքային կառույցների ստեղծմանը: Նրանք իրենց իշխան ամուսինների հետ միասին ոչ միայն հսկայական միջոցներ են տրա-

մադրել և կառուցել շքեղ վանքեր ու եկեղեցիներ, այլև նյութական հնարավորություններ են ստեղծել դրանց հետագա գործունեության համար: Պատմիչները հավաստում են, որ հայ կանայք իրենց միջոցներով գնել ու վանքերին են նվիրել գյուղեր՝ իրենց շրջակա արոտավայրերով, արտերով, այգիներով, լեռներով ու ջրերով: Եկեղեցիներին են նվիրել թանկարժեք զարդեր ու ոսկյա իրեր, ջահեր, գորգեր, վարագույրներ:

## Արցախի անվանի կանանց լուսավորչական և մշակութային այլ ձեռնարկումները պատկերող աղյուսակ

| Վ/հ | Իշխանազան կանանց անունները | Դարը կամ տարեթիվը | Ձեռնարկումները |
|---|---|---|---|
| 1. | Խարիշան (Ներքին Խաչենի իշխան Վախտանգ Տանգիելի կինը) | 1181-1214 | կառուցել է Հավրոի վանքը Մեծոռանք գյուղում և նրա կից բացել դպրոց: |
| 2. | Մամբռա (Հասան Զալալի կինը) | 1233 | Ավարտում է Գանձասարի եկեղեցու և նրա գավթի շինարարությունը: |
| 3. | Դոփի իշխանուհին (Վերին Խաչենի Ծարի պետ Հասանի կինը) | 17-րդ դարի սկիզբ | կառուցել է խաթրավանքը (Ղադին) և նրան կից բացել դպրոց, որը Արցախում ամենաապրի ընկած դպրոցն էր: |
| 4. | Ապգու-Աթաբեր կամ Արզախաթուն՝ (Հադեզրի իշխան Վախթանգի կինը) | | Հայրենիքում բացել է արհեստանոց կանանց համար, որտեղ գործում էին գորգեր, վարագույրներ և այլն: Նա գրագետ կին լինելով, գրել-կարդալ էր սովորեցնում երեխաներին: Կառուցել է խաթունաշենի սուրբ Աստվածածին եկեղեցին, Նոր Գետիկի Մարիամ Աստվածածին եկեղեցին: |
| 5. | Վանենի (Զաքարյանների թոյոր) | | Դեռևս գետի վրա կառուցել է Սանահինի և Հովհաննավանքի կամուրջները |
| 6. | Մարիամ Հախումյան (Համբարձում աղա Հախումյանի կինը) | | Դպրոցներ է բացել: Բացել է Շուշիի օրիորդաց դպրոցը, որն իր սենյակներից 5-ը տրամադրել է դպրոցին: Այդ դպրոցում է դասավանդել նաև Ղազարոս Աղայանը: |

Արցախի մշակույթի զարգացման համար 19-րդ դարը և 20-րդ դարի 1-ին քառորդն առանձնացավ նրանով, որ արդեն թուրք-պարսկական լուծը թոթափած Արցախի ժողովուրդը իր բախտը կապել էր համեմատաբար առաջավոր ռուսական կայսրության մշակույթի հետ, որը և բարերար էր նրա համար: Սակայն ռուսական շովինիզմն էլ պակաս չէր արգելակում կրթության զարգացմանը Արցախում, որ Արցախի դպրոցները հաճախ էին փակվում, առանձնապես Անդրկովկասի փոխարքա Գոլիցինի օրոք, իսկ եկեղեցիները անասունների գոմերի կամ լավագույն դեպքում՝ պահեստների վերածվում (խուրհուրդների օրոք): Այնուամենայնիվ, Արցախը՝ հանձին Շուշիի, ունեցավ իր կրթական կետրոն-օջախը, իսկ գյուղերն էլ իրենց եկեղեցական մեկդասյա դասարանները: 19-րդ դարի 2-րդ քառորդում լուսավորչական և կրոնական միսիոներների խմբեր էին գալիս Արցախ (Գերմանիայից, Շվեյցարիայից), որոնք դրական քայլերի հետ միասին կրոնադավան քաղաքականություն էին վարում: Նրանք Շուշիում հրատարակել են 11679 գիրք, զբաղվել են հնեաբանական պեղումներով:



Արցախում լուսավորչական գործը առաջ տանելուն շատ նպաստեցին տեղացի շատ նշանավոր մարդիկ, ինչպես միտրոպոլիտ Բաղդասարը, որը Շուշիում բացեց հոգևոր ուսումնարան, տպարան (1837թ.) և Սարգիս արքեպիսկոպոսը Պողոս Ղարաբաղցին, Հովսեփ Արցախեցին, իսկ դրսից՝ Եֆրեմ Կաթողիկոսը և Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին:

Արցախ-Ղարաբաղի դպրոցների և մշակույթի օջախների վիճակի բարելավման հարցերը Խորհրդային իշխանության տարիներին՝ 1922-1991թթ. լուրջ ուշադրության արժանացան:[189]

Այսպես, օրինակ, 1922թ. Լեռնային Ղարաբաղում հաշվում էր 79 առաջին աստիճանի դպրոցներ՝ 4375 աշակերտներով, 1923թ.՝ 102 դպրոց, 7627 աշակերտներով, 1924-1925թթ. համապատասխանաբար 88, 134 դպրոցներ, 8615 և 14764 աշակերտների ընդգրկումով:

2-րդ աստիճանի դպրոցներ էին գործում, 1922թ.՝ 2, 1923թ.՝ 6, 1924թ.՝ 5, 1925թ.՝ 12, համապատասխանաբար 4, 126, 110, 315 աշակերտներով:

Առաջին աստիճանի այլազգի դպրոցներ էին գործում Ղարաբաղ երկրամասում՝ ինչպես օրինակ, 1922-23 ուս. տարում 10, 1923-24 ուս. տարում 18, 1924-25 ուս. տարում՝ 20: Գործում էին նաև 2-րդ աստիճանի դպրոցներ:

ԼՂԻ մարզում ըստ շրջանների դպրոցների ցանցը ներքոհիշյալ պատկերն ուներ՝ Վարանդայում 21, Դիզակում 27, Խաչենում 18, Ջրաբերդում 21, Շուշիում 6, համապատասխանաբար 1560, 1967, 846, 1219 և 458 աշակերտներով:

Մարդկանց անգրագիտությունը վերացնելու համար ԼՂԻՄ-ում 1923-24 ուս. տարում գործում էին 116 լիկկյան՝ 3899 սովորողներով, իսկ 1926-27-ում 300-ը 4624 սովորողներով: Այդ տիպի դպրոցները գործել են մինչև 1930թ. Նրանցում աշխատող ուսուցիչների մի մասը անվարձ էին աշխատում: (Կաղուհասում՝ Ս.Օհանյանը, Կոճողոտում՝ Մուշեղ Օհանյանը և Սոսում՝ Թամարա Օհանյանը):

1926-27 ուս. տարում ԼՂԻՄ-ում գործում էին 8 տեխնիկումներ 959 աշակերտներով: 1923-24թթ. կային 25 գյուղերիտ դպրոցներ, իսկ 1928-29թթ.՝ 87-ը:

Դպրոցական գործը առավել լավ կազմակերպելու նպատակով տեղի ունեցավ ուսուցչական ընդհանուր ժողով (1922-23 ուս. տարում)՝ 100 ուսուցիչների մասնակցությամբ, իսկ 1923թ. օգոստոսի 28-ին Հադրութում, Վարանդայում և Մարտակերտում կայացան ուսուցչական առաջին համագումարները:

Որպես դպրոցական կյանքի պատմություն, հարկ է, որ մեր աշակերտներն իմանան, որ 1929-30 ուս. տարում մարզում գործում էին 145 դպրոց՝ 19563 աշակերտով, իսկ 1933-34 ուս. տարում՝

| Դպրոցների տիպերը | Քանակը | Սովորողների քանակը | Ուսուցիչներ |
|---|---|---|---|
| Գյուղտեխնիկում | 1 | 230 | 12 |
| Մանկավարժ. տեխնիկում | 1 | 367 | 11 |
| Կուսակցական դպրոց | 1 | 95 | 6 |
| Երեկոյան կուս. դպրոց | 3 | 215 | 8 |
| Կենդ. (կոմուն. երիտասարդ դպրոց) | 2 | 130 | 6 |
| 9-ամյա դպրոց | 5 | 1560 | 92 |
| 7-ամյա դպրոց | 3 | 390 | 34 |
| Ի-աստիճանի դպրոց | 165 | 2478 | 545 |
| Ընդհանուր միջնակարգ | 2 | 75 | 4 |
| ՖԶՈՒ | 2 | 15 | 11 |
| Մանկատուն | 6 | 340 | 10 |
| Մանկապարտեզ | - | - | - |
| Լիկբեզ | 803 | 25.000 | 132 |

***1930-ական թթ. գործում էր 6 տեխնիկում 2000 աշակերտներով: ԼՂԻՄ-ի դպրոցական ցանցի պատկերը 1941-45թթ. այսպիսին էր՝***

| Ուս. տարի | Դպրոցների թիվը | | | | Աշակերտների թիվը | Ուսուցիչների թիվը |
|---|---|---|---|---|---|---|
| | Տարրական | Յոթնամյա | Միջնակ. | Ընդամենը | | |
| 1941-42 | 44 | 102 | 33 | 179 | 26743 | 1590 |
| 1942-43 | 44 | 104 | 34 | 182 | 32307 | 1500 |
| 1943-44 | 46 | 105 | 36 | 187 | 31414 | 1490 |
| 1944-45 | 51 | 106 | 41 | 196 | 33719 | 1674 |
| *Լեզգիական ցանցը 1946-1958թթ | | | | | | |
| 1945-46 | 238 | 51 | 81 | 306 | | 32898 |
| 1946-47 | 200 | 53 | 40 | 307 | | 34584 |
| 1947-48 | 203 | 53 | 40 | 308 | | 35440 |
| 1948-49 | 200 | 52 | 40 | 308 | | 34831 |
| 1949-50 | 200 | 52 | 40 | 308 | | 34222 |
| 1950-51 | 205 | 24 | 111 | 40 | | 24116 |
| 1951-52 | 214 | 32 | 110 | 42 | | 32967 |
| 1952-53 | 203 | 51 | 108 | 44 | | 30394 |
| 1953-54 | 201 | 49 | 105 | 47 | | 29598 |
| 1954-55 | 203 | 44 | 100 | 53 | | 28999 |
| 1955-56 | 205 | 44 | 100 | 61 | | 28697 |
| 1957-58 | 204 | 46 | 102 | 56 | | 27580 |

Դպրոցների կրթադաստիարակչական և աշակերտների աշխատանքային դաստիարակության զարգացման ուղղությամբ մեծ նշանակություն ունեցավ 1958թ. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընդունած օրենքը »Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և երկրում ժողովրդական կրթության զարգացման մասին»:

Իսկ ինչպիսի՞ պատկեր էին իրենից ներկայացնում ուսումնարաններն ու ԲՈՒՀ-երը:

ա) Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները (1922-1991թթ.) ունեին ներքոհիշյալ բովանդակությունը



| Ուսումնական հաստատությունը | Երբ է բացվել | Սովորում էին | Գործո՞ւմ է, թե՞ փակվել է |
|---|---|---|---|
| Մանկավարժական ուսումնարան | 1922-23 ուս. տ. | 100-ից ավելին | գործում է |
| Գյուղատնտեսական տեխնիկում | 1923 | 200-200 հոգի | գործում է |
| Երաժշտական ուսումնարան | 1924 | 175 | գործում է |
| Բժշկական ուսումնարան | 1932 | 400 | գործում է |

բ) Նախնական մասնագիտական կրթությունը մինչև 1991թ. իրականացնում էին 3 միջնակարգ մասնագիտական տեխնիկական ուսումնարաններ:

գ) Հատուկ գիշերօթիկ դպրոցը լուծարվել է 1992թ., ուներ 200 աշակերտ:

դ) ԼՂՀ-ում գործում է ֆիզմաթ դպրոց (Ա.Շահինյանի անվան):

ե) Արցախի պետհամալսարանի վարժարան:

զ) ԼՂՀ պաշտպանական նախարարության ռազմամարզական վարժարանը (Իվանյանի անվան ռազմական ուսումնարան):

է) Գործում է արվեստի դպրոց:

## ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ա) Երկամյա մանկավարժական (ուսուցչական) ինստիտուտ՝ 1939-1953թթ. ուներ 3 ֆակուլտետներ հայկական և ադրբեջանական բաժիններով, դասախոսներ՝ 35-40 հոգի, որոնցից 1-ը գիտությունների թեկնածու, 2-ը՝ դոցենտ, 22-ը՝ ավագ դասախոսներ:

բ) ԲՈՒՀ, 1969-2005թթ. ինստիտուտի և համալսարանի կոչումներով՝ Հայկական ադրբեջանական և ռուսական սեկտորներով: Ունի 4500 ուսանող:

գ) Արցախում այժմ գործում են 12 ԲՈՒՀ-եր (մեծամասամբ մասնավոր):

Սակայն Ադրբեջանի հանրապետության կազմում գտնված Ղարաբաղը չկարողացավ իր ցանկալի զարգացումն ապրել (բերել օրինակներ Ադրբեջանի վարած շովինիզմի վերաբերյալ):

Ղարաբաղի «Կրթական արգանդից» շատ ակադեմիկոսներ, վաստակավոր ուսուցիչներ, ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ, ժողովրդական դերասաններ, արվեստի վաստակավոր գործիչներ, մշակույթի վաստակավոր գործիչներ, դարի լավագույն մանկավարժներ, վաստակավոր բժիշկներ, ակադեմիկոսներ, գիտության դոկտորներ են դուրս եկել: Ահա կրթության, մշակույթի և գիտության հանրահայտ մարդկանց մասին ցցուն թվերը:

| ԽՍՀՄ ժողովրդ. ուսուցիչ | Վաստ. ուսուցիչ | 20-րդ դարի լավագույն մանկավարժ | Ժողովրդ. դերասան | Վաստակ. դերասան | Սպորտի վաստակ. գործիչ | Մշակույթի վաստակ. գործիչ | Հայաբնակ գյուղերում գիտությունների դոկտոր | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ԽՍՀՄ ակադեմ. | ՀՀ-ն ակադեմ. | Գիտությունների դոկտոր |
| 1 | 36 | 100 | 8 | 12 | 3 | 3 | 13 | 14 | 82 |

Արցախ աշխարհը տվել է գիտության, մշակույթի պետական ու ռազմական գործի ականավոր բազմաթիվ գործիչներ, որոնք հայ ժողովրդի փառքը ոսկե տառերով են գրել համաշխարհային պատմության մեջ: Շուշի քաղաքում է ծնվել խոշոր վիպասան Մուրացանը, ականավոր պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան), ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը: Այս երկրամասի ծնունդ են գրականագետ-ակադեմիկոս Արսեն Տերտերյանը, տնտեսագետ-ակադեմիկոս Արտաշես Առաքելյանը, կենսաբան-ակադեմիկոս Արմեն Թախթաջյանը, քիմիկոս-ակադեմիկոս Հովհաննես Կնունյանցը, գյուղատնտես-ակադեմիկոսներ Սերգեյ Վարունցյանն ու Ռուբեն Դավիդովը, էլեկտրոտեխնիկ-ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանը, բժիշկ-ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանը, օվկիանոսագետ-ակադեմիկոս Արտյոմ Սարգսյանը, գիտությունների պատմության համաշխարհային պրեզիդենտ Աշոտ Գրիգորյանը և բազում այլ գիտնականներ:

Մանկավարժության բնագավառում առավել հանրահայտ է Ղարաբաղում միակը համարվող ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ Իվան Աթայանը:

Երաժշտության բնագավառում առավել հանրահայտ են Մոսկվայի մեծ թատրոնի նախկին դիրիժոր Մելիք Փաշայանը, երգահաններ Անդրեյ Բաբաևը, Ալեքսեյ Հեքիմյանը, երգչուհիներ Թամարա Խանումը և Նաիրուհի Ալավերդյանը, թատերական արվեստի բնագավառում Վաղարշ Վաղարշյանը, Գուրգեն Գաբրիելյանը, վաստակավոր պարուսույցներ Աշոտ Բաբայանը և Ռոբերտ Գրիգորյանը, քանդակագործության ասպարեզում՝ Հակոբ Գյուրջիյանը և Սարգիս Բաղդասարյանը: Մորական կողմից Արցախի Հադրութի շրջանից էր սերված շախմատի աշխարհի եռակի չեմպիոն Գարի



Գասպարովը: Արցախյան ծագում ունեն զինվորական գործիչներ Մյուրատը, Վալերի Մադաթովը, Հովհ. Լազարևը, Հ.Մելքումովը, Տեր-Ղուկասովը, Բեհբուդովը և ուրիշներ: Արցախի զորահրամանատարներից շատերը անգնահատելի դերակատարում ունեն հայ ժողովրդի կյանքում (Դանիել-բեկ Փիրումով, Պողոս-բեկ Փիրումով, Նիկոլ Դուման, Վարդան և այլոք):

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ տիպի դպրոցներ կային Շուշիում 19-րդ դարի կեսերին և 20-րդ դարի սկզբին:
2. Թվել տաղանդաշատ խաչենցի այն իշխաններին, որոնք եռանդուն և համարձակ քայլեր էին ձեռնարկում մշակույթի բնագավառում:
3. Ովքե՞ր էին այն շնորհաշատ իշխանուհի կանայք, որոնք լուսավորչական և մշակութային ձեռնարկումների հեղանակներ էին Արցախում:
4. Ի՞նչ տիպի դպրոցներ էին գործում Ղարաբաղում Խորհրդային իշխանության տարիներին և ի՞նչ հաջողությունների էին հասել դրանք:
5. Թվել արցախցի մի քանի անվանի ակադեմիկոսների անուններ, ասել, թե ո՞վ է ԽՍՀՄ միակ ժողովրդական ուսուցիչը Ղարաբաղից:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Արցախցի մեր նախնի այն զորավարների մասին, որոնք հայ ժողովրդի պատմության և ընդհանուր պատմության դասընթացներում փոքր-ինչ հիշատակվում են:

## ԱՎԱՆ ՅՈՒԶԲԱՇԻ

Ծնվել է 1670թ. ԼՂ-ի Ասկերանի շրջանի Շոշ գյուղում: 18-րդ դարի սկզբին Իրանում սկսված սոցիալական և ազգային ճնշումների աճը նախապատրաստեց և նպաստեց նրա ճնշման տակ գտնվող հայերին՝ դիմելու զինված ինքնապաշտպանության:

Պարսկաստանում սկսված շարժումները և հատկապես նրանց տիրապետության տակ գտնվող աֆղանների ապստամբությունները զգալիորեն թուլացրին Սեֆևիդների հզորությունը, որը և բարերար պայմաններ ստեղծեց Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումների համար: Հայերին, հատկապես, ոգևորեց ռուսական կայր Պետրոս 1-ի պարսկական արշավանքը:

Հենց այդ անցքերի հերոսներից էր Ավան Յուզբաշին:

1717թ. Յուզբաշին ծնողների հետ միասին Լոռուց վերադարձել է Վարանդա և հիմնավորվել իր ծննդավայր Շոշ գյուղում և այն վերածում ռազմական հենակետի:

Նա տեղացիներից կազմեց իր բանակը և 1722թ. գլխավորեց զինվորների մի խումբ, անցավ Գանձակ, որպեսզի դիմավորի Պետրոս Մեծին: 1724-28թթ. ճակատամարտերում, որ տեղի էին ունենում հայերի և պարսիկների, հայերի և թուրքերի միջև, Յուզբաշին գլխավորում էր Արցախի հինգ մելիքների բանակները և ներդրեց իր նվիրվածությունը Հայաստանի ազատագրությանը:

Ավանը 1724թ. գարնանը Դավիթ Բեկին օգնելու նպատակով իր ջոկատով հասավ Ղափան և կռվեց պարսկական խաների դեմ:

Երբ 1725-28թթ. հայերը կռվում էին թուրքական զորքերի դեմ նա այստեղ էլ ցուցաբերեց իր զորավարական տաղանդը: Այդ ժամանակաընթացքում պարսկական շահը Յուզբաշուն ուղարկեց խանի կոչում:

1728թ. Յուզբաշին իր եղբայր Թարխանի հետ միասին գնաց Բաքու՝ ստանալու ռուսական զորքերի օժանդակությունը: 1729թ. վերադարձավ մերձկասպյան շրջան, մտավ ռուսական կայսրության բանակի մեջ և ծառայեց հայկական էսկադրոնում:

Ռուսական բանակի կազմում Յուզբաշովի հայկական էսկադրոնը կատարել է ոչ քիչ խիզախումներ ռուսների կասպիական արշավանքի ժամանակ: 1734թ. նրա հերոսական գործողությունները բարձր գնահատվեց կայսրուհի Աննայի կողմից՝ իր ընտանիքով հրավիրելով Պետերբուրգ նրան շնորհեց գեներալ-մայորի զինվորական կոչում և նվիրեց Հյուսիսային Կովկասի Կիզլար քաղաքը իր շրջակա 9 գյուղերով: Ավանի մահից հետո նրա կինը ապրել է Աստրախան քաղաքում:

Հայկական պատմագրության մեջ երբեմն շփոթում են Ավան Յուզբաշուն Եգան Ավան Յուզբաշու հետ (Ռաֆֆի, Լեո): Դա բացատրվում է նրանով, որ այդ երկուսի կենսագրություններում նմանություններ շատ կան:

## ՄՅՈՒՐԱՏ՝ ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎԱԿԻՄ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Ծնվել է 1767թ. Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Կրկժան գյուղում:

Հովակիմը դեռ երեխա էր, երբ նրա հայրը իր հետ տարավ նրան Արևմտյան Եվրոպա, ուր նա գնում էր կապ հաստատելու Ղարաբաղի և Եվրոպական առևտրականների միջև: Նա հիմնավորվեց Լեյպցիկ քաղաքում: Այդ նույն ժամանակ Ֆրանսիայում պայթեց հեղափոխությունը, ուժեղանում էին հարաբերությունները Իրանի և Թուրքիայի միջև: Այդ պատճառների հետևանքով էլ փակվել էին ճանապարհները Արևելքի և Արևմուտքի միջև: Եվ հայր Մուրադյանը, ելնելով դրանից, փոխեց իր պլանը և եկավ Վիեննա: Այնուհետև որդի Մյուրատի խնդրանքով նա եկավ Փարիզ, հետո հիմնավորվեց Բաստիդե քաղաքում, որտեղ տղային տվեց ուսումնարան: Ունենալով ռազմական գործի նկատմամբ թեքում, Հովակիմը, Բաստիդ քաղաքից վերադարձավ Փարիզ, որտեղ մտավ զինվորական ծառայության մեջ՝ հեծելազորային գնդերից մեկում:

Կարճ ժամանակում պատանին դարձավ հեծելազորային և սկսեց կատարել իր կարիերայի առաջին քայլերը:

1787թ. Մյուրատը ծառայեց ֆրանսիական բանակում:

1792թ. ստացավ սպայի կոչում: 1794թ. հոկտեմբերի 4-ին նա Մոնարխիստների (ռոյալիստների) խռովությունը ճնշելու ժամանակ աչքի ընկավ: Իտալական արշավանքից հետո (1796թ.) Մյուրատին շնորհեցին բրիգադի հրամանատարի, իսկ Եգիպտական արշավանքից հետո (1799թ.) Դիվիզիոնի գեներալի կոչում:

Նա ակտիվ է գործել նաև Նապոլեոնի կողմից իշխանությունը գրավելու ժամանակ, իհարկե, Նապոլեոնի կողմում:

Նա 1804թ. ֆրանսիական մարշալ էր: 1800թ. Մյուրատը ամուսնացել է Նապոլեոնի քրոջ հետ: Մասնակցել է Նապոլեոնի բոլոր արշավանքներին և առանձնացել է իր բացառիկ խիզախությամբ ու նվիրվածությամբ, հրամանատարի բարձր ընդունակություններով ու հատկանիշներով:

1808թ. նա դաժանորեն ճնշել է Մադրիդի (Իսպանիա) ապստամբությունը, դարձել է Նեապոլիտանական թագավոր և ձգտել է վարել ինքնուրույն քաղաքականություն: Այդ ամենի արդյունքում նրա հարաբերությունները 1810թ. վատացել է Նապոլեոնի հետ: 1812թ. Ռուսաստանի վրա արշավելու ժամանակ Մյուրատը գլխավորել է 28-հազարանոց հեծյալ կորպուսը և պարտություն կրել Տարուտինոյի տակ, հավանական է իր երկրացի Մադաթովի կողմից:

Նապոլեոնի փախուստից հետո Մյուրատը հետ դարձող բանակների հրամանատարն էր: 1813թ. մասնակցել է Դրեզդենի և Լեյբցիգի ճակատամարտերին, հետո գնացել Իտալիա: Չգտելով պահել իշխանությունը Իտալիայի վրա նա 1814թ. դավաճանում է Նապոլեոնին՝ գաղտնի պայմանագիր կնքելով Ավստրիայի և Անգլիայի հետ:

1814-15թթ. Վիեննայի կոնգրեսի կողմից պաշտպանություն չգտնելով՝ Մյուրատը Նապոլեոնի 100-օրյա իշխանության ժամանակ, անցնում է Նապոլեոնի կողմը, բայց Իտալիայում ջախջախվել է և ջոկատով իջել է Կալաբրիայի ծովափ (Իտալիա), պարտվել ու գերի ընկել և ավստրիական դատարանի դատավճռով գնդակահարվել 1815թ.:

Նրա թոռը, որ կրել է ժան Մյուրատ անունը, թողել է մեծ հետք ֆրանսիական կուլտուրայի պատմության մեջ, լինելով կինոդերասան (1888-1968թթ):

## ՌՈՍՏՈՄ (ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌՈՍՏԱՄ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ)

Ծնվել է 1780թ. Թիֆլիսում՝ շուշեցու ընտանիքում:

Նապոլեոնի առաջին թիկնապահն էր:

Ռոստոմը 11 տարեկան էր, երբ նրա հայրը առևտրական գործով ճանապարհվել էր Ղարաբաղից Թիֆլիս՝ իր հետ տանելով երկու տղաներին՝ Ավագին և Սեյրանին: Տանը մնացել էին կինը, երկու աղջիկները և Ռոստոմը: Չանցած մեկ տարի հայրը իր մոտ էր հրավիրել ընտանիքին: Ճանապարհին թաթարները գերել են Ռոստոմին: Առևտրականները 7 անգամ վերավաճառել են նրան և վերջիվերջո, Ռոստոմը ընկել է Եգիպտոս: Նա այնտեղ 2 տարի ծառայել է բանակում, որից հետո շեյխը նրան իր արաբական ձևով, որպես նվեր, տվել է Նապոլեոնին: Դա եղել է 1799թ. երբ Նապոլեոնը գտնվել է Եգիպտոսում:

Նապոլեոնը զրուցելով 19-ամյա Ռոստոմի հետ, համոզվել է, որ իր առաջ մեծ ապագա խոստացող մի երիտասարդ է կանգնած: Հետաքրքրվելով նրա ձեռքի վերքով, նա իմացել է, որ Ռոստոմը այդ վերքը ստացել է արաբների հետ ունեցած ճակատամարտի ժամանակ: Նապոլեոնը նրան ընդունել է որպես իր առաջին թիկնապահ: Ռոստոմը Նապոլեոնի մոտ ծառայել է մինչև 1814թ. ապրիլը և արժանացել այն ժամանակվա ամենամեծ ճանաչմանը: Նրա հարաբերությունը Նապոլեոնի հետ այնքան է մեծ եղել, որ երբ կայսրը մտել է Մոսկվա, Ռոստոմը խնդրել է նրան պահպանել քաղաքի հայկական թաղամասը:

Ընկնելով գերի, Ռոստոմը շատ էր մտածում մոր և քույրերի ճակատագրի մասին: Նա խնդրել է մի հայ վաճառականի, որ Ֆրանսիայից հաճախ էր Կովկաս գալիս, մի լուր բերի իրեն՝ նրանց մասին: Ծառայության համար վաճառականը մեծ գումար է պահանջել: Խորհրդակցելով Նապոլեոնի հետ, Ռոստոմը խոստանում է վճարել նրա պահանջածը, միայն թե մի լուր ստանալուց հետո:

Դրանից հետո, երբ Նապոլեոնը արդեն աքսորված էր, Ռոստոմը դուրս է գալիս Փարիզից և հասնում Թեհրան, իսկ այնտեղից էլ Թիֆլիս: Նրան ընդունել է Կովկասի փոխարքա Երմոլովը: Ռոստոմը մասնակցում է ռուս-պարսկական պատերազմին (եղել է հեծելազորային ջոկատի հրամանատար) և Ղարաբաղի ազատագրումից հետո հիմնադրվում է հարազատ Շուշիում:

Ապրելով Շուշիում երկու տարի, Ռոստոմը 1840թ. վերադառնում է Ֆրանսիա: Նա ընթանում էր իրադարձությունների առջևից, առաջնորդում է Նապոլեոնի աճյունը Սուրբ Հելենե կղզուց դեպի Փարիզ:

Ռոստոմը ունեցել է երկու երեխա՝ տղա և աղջիկ, կինը՝ Դուվիյեն, որի հայրը եղել է Նապոլեոն Բոնապարտի կին՝ թագուհի Ժոզեֆինայի ծառան: Նապոլեոնի և Ռոստոմի ջերմ հարաբերություններին են անդրադարձել ֆրանսիական գրողներ Ստենդալը և Բալզակը:



Վերջինս իր «կասկածելի գործ» ստեղծագործության մեջ Ռոստոմին անվանել է «անկախ մամլուկ»:

Հետագայում նապոլեոնագետ Գ. Ֆլեյշմանը հատուկ ուսումնասիրություն է նվիրել մամլուկ Ռոստոմի կյանքին և գործունեությանը:

Ֆրանսիայում Բուրբոնների իշխանության վերականգնման ժամանակաընթացքում Ռոստոմը մեմուարներ է գրել, որոնք առաջին անգամ հրատարակվել են 1866թ., որն ընդգրկել է Նապոլեոնի ծննդյան օրից մինչև 1814թ.: 1869թ. ամռանը մեր հայտնի միջազգայնագետ Համազասպ Հարությունյանը Փարիզից փաստաթղթերի մի ծրար է բերել, որպեսզի հանձնի Երևանի արխիվներից մեկին կամ էլ ամենահայոց կաթողիկոսարանի գրասենյակին: Այդ փաստաթղթերը պատմել են Ղարաբաղի մի ջոկատի մասին, որը ծառայել է նապոլեոնյան Ֆրանսիային, և որի հրամանատարը եղել է ժան դե Շուշի (Օվանես Շուշեցին): Այդ ջոկատում են եղել և ֆրանսիական կառավարության պարգևներին են արժանացել արցախցի հայտնի մամլուկներ Պիեռը (Պետրոս) և Ռոստոմը, որոնք ճակատագրի բերումով հայտնվել են Ֆրանսիայում, դարձել Նապոլեոնի խիզախ թիկնապահները, վերադարձել հայրենիք, բայց համենայնդեպս իրենց կյանքի վերջամասը ապրել Փարիզում:

Ռոստոմը մահացել է 1845թ. Ֆրանսիայի Դուրդան քաղաքում: Նրա հետնորդները զբաղվել են հասարակական-քաղաքական գործունեությամբ: Նրա տղաներից մեկը եղել է Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպանը Թունիսում, իսկ թոռ էդմոն Ռոստամը հայտնի է եղել ֆրանսիական գրականության մեջ, որպես դրամատուրգ և բանաստեղծ:

## ՄԱԴԱԹՈՎ (ՄԱԴԱԹՅԱՆ) ՎԱԼԵՐԻԱՆ (ՌՈՍՏՈՄ) ԳՐԻԳՈՐԻ

Ծնվել է 1782թ. ԼՂ-ի Ասկերանի շրջանի Չանախչի գյուղում: Գեներալ-ադյուտանտ: Նրա քեռի Պետրոս Յուզբաշիի Մադաթյանը 1796թ. Ղարաբաղի հայ մելիքների կազմում Աստրախանով Պետերբուրգ է մեկնել: Պատվիրակությունը ղեկավարել են երկու խոշոր մելիքներ՝ Զումշուդ Շահնազարյանը և Ֆրեդուն Բեգլարյանը: Աստրախանում նրանց միացել է և Ռոստոմը (Վալերիան Մադաթով): Պետերբուրգում պատանու աչքին շատ փայլուն է երևացել Պավել 1-ի գվարդիական գունդը: Զինվորական շքերթի ժամանակ, որին մասնակցել են նաև մելիքները, Պավել 1-ի աչքին շատ դուրեկան է թվացել և նրա ուշադրությունը գրավել բարձրահասակ, թեքերես ու սրածայր, արծվային քթով երիտասարդ մարդը՝

Ռոստոմ Մադաթյանը:

Կայսրը հրամայել է նրան ընդունել զինվորական ծառայության մեջ: Պատվիրականության ղեկավար մելիք Ջումշուդը իր համաձայնությունն է տալիս Ռոստոմին զինվորական ծառայության տալու հարցում, պայմանով, որ նա կոչվի իշխան Վալերյան Գրիգորի Մադաթով անունով, դառնալով լեյբ-գվարդիայի պոդպորուչիկ պրեոբրաժենյան գնդում: Դա էլ հենց դարձավ Մադաթովի ռազմական կարիերայի փայլուն սկիզբը, իսկ նրա տաղանդի բացմանը նպաստեց ռուս-թուրքական 1806-1812թթ., պատերազմը, առանձնապես 1808թ. ճակատամարտերը: Նա աչքի ընկավ Մոլդովայի և Վալախիայի տարածքներում տեղի ունեցած մարտերում, որի համար էլ ստացավ կապիտանի զինվորական կոչում: Նույն 1808թ. սեպտեմբերի 4-ին Մադաթովը մասնակցել է Ռասիվերա ամրության մոտ տեղի ունեցած այն մարտերին, որ ռուսական բանակը իշխան Բագրատիոնի գլխավորությամբ ջախջախեց Սերասկեր Խոսրով փաշայի թշնամական կորպուսը: Այդ ճակատամարտում ցուցաբերած արիության համար Մադաթովը ստացավ ոսկե սուր:

1810թ. փետրվարին Մադաթովին տեղափոխեցին Ալեքսանդրյան գնդի հեծելազորային հուսարակ-հուսարական զորամաս՝ Ռոտմիստրի կոչումով, իսկ հետագայում նրան շնորհեցին մայորի կոչում:

Հատկանշական է հետևյալ փաստը.

Մի անգամ Մադաթովը հրամանատարին է դիմել հետևյալ հարցով.

«Ի՞նչ է հարկավոր անել, որպեսզի ստանաս Գեորգևյան խաչ»:

Հրամանատար Լանսկոյը նրան ցույց տվեց թուրքական չորս հազարանոց հեծելազորային խումբը, որը նախապատրաստվում էր հարձակվելու ռուսական զորքի վրա, և ասում՝ «ջախջախիր նրան»: Ոչ երկար մտածելուց Մադաթովը հրամայեց երկու հեծելազորային էսկադրոնին «իմ հետևից» ու սկսեց թշնամու հարվածը: Հենց այդ երկու էսկադրիլիայի հարվածների տակ էլ այդ չորսհազարական բանակը ցիրուցան դիմեցին փախուստի: Մարտից հետո մի քանի վերստի վրա ծածկվեցին դիակները: Առավոտյան լրաբերը գլխավոր շտաբից Մադաթովին հասցրեց մի ծրար, որի մեջ գրված էր, որ նա պարգևատրված է «Գեորգիևյան խաչ»-ով:

1812թ. հուլիսի 31-ին Գորդեշկո գյուղի մոտ տեղի ունեցավ կրկին մի ճակատամարտ, որտեղ ռուսական 18 հազարանոց բանակը կռվել է 40 հազարանոց սաքսոնական և ավստրիական բանակների հետ, որը ձգտում էր ճախից շրջանցել ռուսական բանակը: Մադաթովը չորս էսկադրոնով հարձակվեց թշնամական այդ զորաբանակի վրա և հետ շպրտեց՝ կոտորելով զորաբանակի մի մասին, իսկ մյուսին՝ գերի վերցրեց: Այդ խիզախության համար Մադաթովը ստացավ գնդապետի կոչում: Ռուսական բանակը սկսեց առաջանալ: Նրա առաջին գծում անփոփոխ գտնվում էր գնդապետ Մադաթովի փոքրաքանակ ջոկատը, որը սեպտեմբերի 12-ին հեռացրեց թշնամուն Թուրինսկ ավանից և գրավեց ստրատեգիական նշանակություն ունեցող կամուրջը: Այնուհետև ջոկատը անցավ Բուգ գետը և Բրեստ-Լիտովսկի մոտ ջախջախեց ավստրացիներին:

Թողնելով վառվող Մոսկվան, Նապոլեոնը նահանջեց: Այդ գծով շարժվելիս



նա պետք է անցներ Բերեզինա գետը: Սակայն մի ընթացքում ռուսական բանակը նրանց հարձակումների տակ պետք է հետ նահանջեր: Հետ նահանջելու ժամանակ ռուսական բանակը պետք է նահանջեր Բերեզինա գետով՝ Բորիսով քաղաքը: Գետի վրայով դրված էր նեղ և երկար կամուրջ, որին թշնամին ուզում էր տիրանալ և ուժեղացնել հարձակումը: Մադաթովը որոշեց կտրել ֆրանսիացիների հարձակումը: Դա միակ ելքն էր փրկելու ռուսական հետիոտն բանակը և հնարավորություն տալ նրան շրջանցելու կամրջի վրա կուտակված հրետանուն:

«Հուսարներ, -դիմեց Մադաթովը,- ես գնում եմ թշնամու վրա, եթե դուք հետ մնաք, ինձ ապասվում է գերի ընկնել կամ էլ ոչնչացում: Դե էն դեպքում դուք ուզում եք օրվա մեջ կորցնել ձեր բոլոր հրամանատարներին»:

Եվ չնայած հարձակումը ծանր նստեց հուսարների վրա, այն հնարավորություն տվեց փրկելու ռուսական հեծելազորությանը և հրետանուն: Գնդապետ Մադաթովը առաջինն անցավ Նեմանը, այնուհետև Վիսլան և 1813թ. փետրվարի 1-ին, միանալով ռուսական կորպուսին, մասնակցեց Կապիշի մոտ սաքսոնական բանակի ջախջախեցմանը: Այդ հաղթանակի համար գնդապետը պարգևատրվեց Գեորգիևյան խաչի 3-րդ աստիճանով:

Հաղթանակներ ֆրանսիական, սաքսոնական, ավստրիական և լեհական բանակների դեմ, հաղթանակներ պարտիզանական կռիվներում, հերոսություն, փառք, պարգևատրություններ,- այսպիսին էր Մադաթովի անցած ուղին Նապոլեոնյան արշավանքների տարիներին:

Սակայն 1813թ. Լեյպցիգի տակ տեղի ունեցած ճակատամարտերից մեկում նա ծանր վիրավորվեց, բայց չթողեց մարտի դաշտը, Մադաթովը այդտեղ շատ արյուն կորցրեց և վերքը այդպես էլ չսպիացավ և հետագայում նրա մահվան պատճառ դարձավ:

Նա 31-րդ տարվա մեջ էր, երբ Լեյբցիգյան ճակատամարտի համար ստացավ գեներալ-մայորի զինվորական կոչում:

1816թ. Հայրենական պատերազմի հերոս Ալ. Երմոլովը նշանակված էր Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար, Կովկասի գլխավոր ռազմապետը և կառավարիչը: Հեշտ չէր Կովկասում, եթե հաշվի առնենք չենթարկվող ժողովրդին, լեռնականների մշտական ավազակային հարձակումները, խորթ սովորությունները և բարքերը:

Երմոլովը ծայրաստիճան զգում էր մի այնպիսի մարդու, ինչպիսինը Մադաթովն էր՝ հավատարիմ, խիստ և խելոք: Մադաթովը նշանակվեց Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի ռազմական կառավարիչ: Նրան շատ լավ ծանոթ էր երկրամասը, ժողովուրդը, սովորությունները: Նա լավ գիտեր արևելյան լեզուները, իսկ թուրքերենով կարող էր փայլել գեղեցիկ խոսակցականով: Մադաթովը ուներ բոլոր տվյալները, որպեսզի արդարացներ Երմոլովի հույսերը ու հարազատ երկրամասին մյուս ժողովուրդների սպասումները: Կարճ ժամանակամիջոցում նա խաղաղացրեց լեռնականներին և այստեղ հաստատեց անհրաժեշտ կարգ:

Վերքերը, այնուամենայնիվ, զգացնել էին տալիս իրեն, և 1826թ. Մադաթո-

վը գնաց Հյուսիսային Կովկաս՝ Պյատիգորսկի հանքային ջրերում բուժվելու: Դեռ չէր հասցրել գնալ, երբ հրաման ստացավ Երմոլովից վերադառնալ Թիֆլիս՝ քանզի սկսվել էր երկրորդ ռուս-պարսկական պատերազմը: Մինչև երկու օրը նրա շարժակառքն հասել էր Թիֆլիս, իսկ 1826թ. օգոստոսի 10-ին Մադաթովը ընդունել է գնդի հրամանատարությունը: Նա իր 2 հազարանոց զորքով Շամխորի տակ ջախջախեց պարսկական 10 հազարանոց բանակը: Երմոլովը շնորհավորեց նրա հաղթանակը և զգուշացրեց՝ «Մի կովիր անհաշիվ բանակի դեմ»: Հերթը Ելիզավետապոլինն էր, որտեղ Մադաթովին որպես գլխավոր հրամանատար, միացել էր Պասկևիչը: Ռուսական բանակը հաղթել է, Աբաս-Միրզան զինվորներով փախել է Թավրիզ: Հաջողությունը՝ անսման էր, հաղթանակը՝ փառավոր, իսկ Մադաթովը՝ անկրկնելի: Նրան շնորհեցին գեներալ-լեյտենանտի կոչում: Ղարաբաղի ժողովուրդը նրա պատվին կազմակերպեց փայլուն ընդունելություն: Դրանք եղել են Մադաթովի հաջողությունների և փառքի վերջին ակորդները Կովկասում: Իվան Պասկևիչը եկավ Կովկաս, որպեսզի շուտով ապացուցի կայսր Նիկոլայ 1-ին, որ նա արդեն կարողանում է ինքնուրույն ճանաչել իրադրությունը և գործել տեղում: Խտրություն չդնելով միջոցների մեջ, նա նվաստացրեց Երմոլովին և հետապնդեց նրա մերձավորներին: Գլխավոր նշանակետը դարձավ Մադաթովը՝ Կովկասում փայլուն մի անձ, որ կարող էր խանգարել Պասկևիչին, վնաս հասցնել նրա ձգտումներին, ռուսականացման նրա քաղաքականությանը: Արդյունքում 1827թ. Երմոլովը հետ կանչվեց Կովկասից և զրկեցին պաշտոնից: Մադաթովին նույնպես հրամայվեց վերադառնալ Թիֆլիս:

Թիֆլիսում 5 ամիս անգործ մնալուց հետո, գեներալ Դիբիչի միջամտությամբ և ցարի թույլտվությամբ Մադաթովը անցավ Պետերբուրգ:

1828թ. ապրիլի 14-ին սկսվեց երկրորդ ռուս-թուրքական պատերազմը: Մադաթովը նորից գործող բանակում էր: Եվ այստեղ նույնպես նրա անվան հետ են կապված մի շարք հաղթանակներ Իսկաչի, Գիրսի, բերդերի նվաճման, Պրովոդի և Կուչլա գյուղի մոտ տեղի ունեցած փառավոր ճակատամարտերում:

Ցարը չէր կարող ուշադրություն չդարձնել այդ ամենին և անձամբ նամակով դիմեց Մադաթովին և նրան պարգևատրեց Ալեքսանդր Նևսկու շքանշանով:

Ուշացած սիրալիրություններն արդեն հարկավոր չէին Մադաթովին: Հոգնած, պատերազմներով ներծծված, վերքեր ու հետապնդումներ տարած 47-ամյա գեներալ-ադյուտանտը, որի կյանքը լի էր հրաշալի հաղթանակներով ու խիզախումներով, 1829թ. սեպտեմբերի 7-ին Շումլա ամրոցի մոտ մահացավ: Ռուսական բանակը սգի մեջ էր, գեներալ Դիբիչի ասելով «Մադաթովի մահով մեր հեծելազորային բանակը կորցրեց ռուսական Մյուրատին»:

Տիրնովյան արշավանքի ժամանակ թուրք բնակչության նկատմամբ ցուցաբերած մարդկային հարաբերությունների համար Թուրքիայի մեծ վեզիր Հյուսեին-փաշան, որպես հարգանքի նշան բացեց ամրոցի դռները, որպեսզի հուսարական մի վաշտ դուրս տանի խիզախ գեներալի դիակը: Նրան սկզբում թաղեցին Շումլա քաղաքի սուրբ Գեորգի եկեղեցու բակում՝ պահպանելով



քրիստոնեական ադաթները: Պատերազմից հետո Մադաթովի այրին (Սոֆիան) ցարի թույտվությամբ նրա մարմինը տեղափոխեց Պետերբուրգ և թաղեց Ալեքսանդր Նևսկու վանքի բակում, որտեղ թաղված է Մադաթովի մեծ նախորդ Ալեքսանդր Սուվորովը:

## ՄԱԴԱԹՈՎԻ ՄԱՍԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄԱԲԱՆ, ԳԵՆԵՐԱԼ ԴԵՆԻՍ ԴԱՎԻԴՈՎԻ ՀՈՒՇԵՐԻՑ

1. Կովկասի զորքերի գլխավոր հրամանատար Ալեքսեյ Երմոլովի և Վալերի Մադաթովի նկատմամբ ցար Նիկոլայ 1-ի հակակրանքը և նրանց զբաղեցրած պաշտոններից ազատելը պայմանավորված էր գեներալ Պասկևիչի և ցարի պատանեկան ընկերությամբ:

Այդ առթիվ արժե հիշել գեներալ Դենիս Դավիդովի հետևյալ մեջբերումը.

«Հիշում ես, երբ մենք քեզ հետ զինվորական խաղեր էինք խաղում, իսկ այժմ ես քո թագավորն եմ, իսկ դու իմ գլխավոր հրամանատարը»:

Ցարի այդ սրտաշարժ նամակը բավական է, որպեսզի հասկանալի դառնա Երմոլովին և Մադաթովին պաշտոնից ազատելու պատճառը:

2. Պասկևիչի՝ Մադաթովին պաշտոնից ազատելու մասին հրամանում պատճառաբանություն կա այն մասին, որ իբր թե Մադաթովը Երմալովի թույտվությամբ թալանել է Ղարաբաղի ազգաբնակչությանը, «որը միանգամայն կեղծ է մի մարդու հանդեպ, որ իր խիզախությամբ փայլում էր Եվրոպական Թուրքիայում»,- գրում է Դ.Դավիդովը իր «Ռազմական հուշեր» գրքում:

3. Մադաթովը իր մահից առաջ բախտ ունեցավ լսելու գեներալ-ադյուտանտ Կոնստանտին Խրիստափորովիչի հետևյալ խոստովանությունը.

«Ես քո առաջ և առանձնապես Ալեքսեյ Պետրովիչ Երմոլովի առաջ շատ եմ մեղավոր, ես Ձեր երկուսին շատ վնասներ եմ հասցրել իմ եղբոր միջոցով, բայց հավատացեք, որ դա եղել է միայն մի հանգամանքում, որի համար ներեցեք ինձ»:

4. «Մադաթովը լինելով բավականին խելոք և արտակարգ խորամանկ մարդ, շատ լավ էր տիրապետում ռուսաց լեզվին, չնայած երբեմն դիտավորյալ սխալ շրջադարձեր էր կատարում խոսակցության մեջ: Մի անգամ ուշանալով Երմոլովին ներկայանալիս, նա ներողություն է խնդրել ու ասել. «Ինձ ուշացրեց մի ջուհուդ և ցանկացավ ջուհուդավարի խաբել ինձ, բայց ես նրան խաբեցի հայավարի ու մի բան էլ պարտք թողեցի» (Դ.Դավիդովի հուշերից)»:

5. «Մադաթովը, որն իշխան չի եղել ի ծնե, բայց հետո սկսել է իրեն անվանել իշխան, կրել է իր մոր ազգանունը՝ Մադաթով, քանի հայրը անշան անձ է եղել, իսկ նրա քեռի Պետրոս-Բեկը Ղարաբաղում օգտվել է մեծ հեղինակությունից» (Դավիդով, Ռազմական հուշեր):

# ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՈՎ (ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՅԱՆ) ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Գեներալ-լեյտենանտ Տեր-Ղուկասյանը ծնվել է 1819թ. շամխորցի թիֆլիսաբնակ եկեղեցականի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Նա ավարտել է Պետերբուրգի հաղորդակցության ուղիների ինստիտուտը: 1842-1850թթ. աշխատել է Կովկասի ռազմական ճանապարհների շինարարության վրա՝ որպես ինժեներ:

1850թ. անցել է ռազմական ծառայության, 1852թ. ծառայել է Ափշերոնյան գնդում, որպես 3-րդ գումարտակի հրամանատար և մասնակցել լեռնականների դեմ տարվող կռիվներին: Ռազմական գործում ունեցած կարողությունների և հմտությունների համար նա նշանակվեց նույն Ափշերոնյան գնդի հրամանատար: Նրա կողմից ղեկավարվող զինվորական միավորումը տիրեց լեռնականների Դիլի և Բուրդունա բնակավայրերին, 1859թ. էլ՝ Գունիբի: 1865թ. Ա. Տեր-Ղուկասյանը ստացավ գեներալ-մայորի զինվորական կոչում և նշանակվեց 19-րդ դիվիզիայի հրամանատարի օգնական, իսկ 1869թ. 38-րդ հետիոտն դիվիզիայի հրամանատար:

Տեր-Ղուկասյանի զինվորական տաղանդը հանդես եկավ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ:

1877թ. ապրիլին նրա հրամանատարությամբ գործող Երևանյան զինվորական ջոկատը հանդես եկավ Բայազետի ուղղությամբ և գրավեց Բայազետը, Դիադինան, Ղարաքիլիսան, իսկ հունիսի 4-ին Դրամդաղի և հունիսի 9-ին Դիարի տակ ջոկատը ջախջախեց թուրքական բանակին: Նա շատ հմտորեն վարեց իր ջոկատի հետ նահանջումը և 10 հազար հայ բնակիչների միգրացիան (տեղահանությունը) դեպի Իգդիր, իսկ հունիսի 28-ին ազատագրեց շրջափակված Բայազետը:

Տեր-Ղուկասյանը նպաստեց ռուսական բանակի հաղթանակին Դեվեբոյնում 1877թ. հոկտեմբերի 23-ին:

1878թ. նա նշանակվեց Ախալցխայի ուղղությամբ գործող ռուսական բանակի հրամանատար, իսկ պատերազմից հետո դարձավ մերձկասպիան բանակի հրամանատար, միաժամանակ և կովկասյան 2-րդ կորպուսի հրամանատար:

Գեներալ-լեյտենանտ Արշակ Տեր-Ղուկասովը պարգևատրված է ռուսական և արտասահմանյան շքանշաններով:

Մահացել է 1881թ. հունվարի 8-ին: Թաղվել է Թիֆլիսի հայկական եկեղեցու բակում:



# ԻՎԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ) ԴԱՎԻԹԻ ԼԱԶԱՐԵՎ (ԼԱԶԱՐՅԱՆ)

Գեներալ-լեյտենանտ, ծնվել է 1820թ. Շուշիում: Դեռ դպրոցական տարիներին նա շփվում էր Շուշիում գտնվող ռուսական զինվորների հետ: Ձգտում էր սովորել կադետական կորպուսում, բայց մերժում ստացավ և գնաց որպես զինվոր ծառայելու Շիվանյան գնդում: Լազարևը անցել է պայքարի հերոսական ուղի և 1860թ. ստացավ գեներալ-մայորի զինվորական կոչում: Եղել է այն հրամանատարներից, որոնք կարողացել են հարվածներ հասցնել և հաղթել Կովկասի լեռնականներին: Հենց նա գերի վերցրեց հանրահայտ Շամիլին, որը չի հաջողվել ռուս մյուս հրամանատարներին:

1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ նրան պահեստայինից հետո են կանչել գործող բանակ: 1877թ. հունիսին Լազարևին նշանակում են Թուրքիային հարող սահմանամերձ չորս նահանգների հրամանատար գեներալ-նահանգապետի իրավունքներով: Լազարևը մեծ դժվարությամբ հաղթահարելով լեռնային հատվածները անցել է Ալաջարի ամրությունների մոտ, որը ոչ պակաս չափով է անհանգստացրել Մուխտար-փաշային: Հոկտեմբերի 2-ին նա հասավ Օրշայի բարձունքները՝ Մուխտարի թիկունքը: Լուսաբացին Լազարևը սկսեց հարձակումը թուրքական գերակշիռ բանակի վրա, որն գլխավորում էր Մուխտար-փաշան և Ալաջարի բարձունքները վերածեց թուրքերի գերեզմանի, փաշան հազիվ փրկվեց գերի ընկնելուց: Լազարևը գերի վերցրեց 7 փաշա, 250 սպա և մոտ 10 հազար զինվոր:

Զինվորական խորհրդում ոչ ոք չէր երաշխավորում սկսելու հարձակումը Ղարսի բերդի վրա և առաջարկում էին հետաձգել այն մինչև գարուն: Բայց և այնպես Լազարևը իրագործեց հարձակումը բազմաքանակ թուրքական բանակի վրա և կրեց անհաջողություն: Լրաբերը Լազարևին հասցրեց Լորիս Մելիքովի հրամանը հետ նահանջելու մասին, բայց Լազարևը նրան ասաց.

«Հաղորդեցեք կորպուսի հրամանատարին, որ ես չեմ նահանջի և առաջ եմ տանելու հարձակումը: Եթե Ղարսը չվերցվի այս գիշեր, ես նրան կվերցնեմ ցերեկը, կամ էլ կռվելու եմ մինչև հաջորդ գիշերը»:

Լազարևը շրջեց դիրքերում, օգնություն ցույց տվեց և օժանդակեց զինվորներին և հրամանատարներին: Հրամանատարներ Խրաբրենի, Ալխազովի հետ միասին Լազարևը հաղթանակով մտավ Կարս և գերի վերցրեց 17 հազար թուրքական զինվոր, 5 փաշա և 800 սպա:

Լազարևի անունը թնդացել է ողջ Ռուսաստանում՝ «չենթարկվող Կարսի ամրոցը վերցվել է 12 ժամում» գոչումներով: Այդ հաղթանակի համար Լազարևը ստացել է Գեորգիի 2-րդ աստիճանի շքանշան:

1878թ. մայիսի 30-ին, Ղարսի գրավումից հետո, ռուսական զորքերը մտան

էրզրում: Լազարևը Լորիս Մելիքովի տեղ նշանակվեց գործող կորպուսի հրամանատար:

Նկարագրելով Լազարևի մտնելը էրզրում, ռազմական պատմաբան Վասիլի Պոտտոն գրել է.

«Հանելով գլխարկը բարձրագոշ «ուռռա»-ի տակ, սիրով բարևեց ժողովրդին: Հանկարծ նա կանգնեցրեց ձին՝ գերող մանկական երգ լսելով: Դրանք հայկական դպրոցի երեխաների ձայներն էին. «Կեցցե անվախ զորավարը, կեցցե Լազարևը՝ փառք և պատիվ իր ժողովրդից»:

Այդ ժամանակվա մամուլը գրել է գեներալ-ադյուտանտ Լազարևի մասին հետևյալը. «Լազարևը փայլուն զորավար է, գործունյա և կատարողական տաղանդով, որն ամենուր, ուր էլ որ նա լիներ, իր մասին թողել է արժանի հիշատակ: Քեզնից անկախ խոնարհում ես գլուխդ նրա պրպտող խելքի և շնորհալի ընդունակությունների առաջ»:

Թուրքերի դեմ Կարսում տարած հաղթանակի պատվին կանգնեցվել է ռուս զինվորի արձանը: Նրա երեք կողմերում տեղադրվել են տաղանդավոր զորավարներ-Պասկևիչի, Լորիս Մելիքովի և Լազարևի քանդակները: Հուշարձանը քանդել են այն ժամանակ, երբ Ղարսը անցել է Թուրքիային՝ 1921թ. մարտի 16-ի սովետա-թուրքական պայմանագրով:

1879թ. Լազարևը պատրաստվում էր Թուրքեստանի գրավման և Ռուսաստանին միացնելու համար իր 2-րդ արշավանքին, սակայն փառապանծ զորավարին չհաջողվեց կենսագործել այդ գաղափարը՝ 1878թ. օգոստոսի 14-ին, 59 տարեկան հասակում զորավարը վաղաժամ մահացավ:

Նրա մահախոսականը ավարտվում էր այսպիսի բառերով. «Իվան Դավթի Լազարևը պատկանում է այն եզակի անձանց շարքին, որոնց մասին սերունդները հիշելու են հպարտությամբ և խոր շնորհակալությամբ»:

Լազարևի դիակը թաղված է Թիֆլիսի հայկական եկեղեցու բակում՝ իր մերձավորներ Լորիս Մելիքովի, Արշակ Տեր-Ղուկասյանի, Ալխազովի և Շելկովնիկովի շարքում:

## ՄԱՐԿԱՐՈՎ ԻՎԱՆ ԽՐԻՍՏԱՓՈՐՈՎԻՉ (ՄԱՐԳԱՐՅԱՆ ՁՀԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ)

Իվան Մարկարովը ծնվել է 1844թ. Ելիզավետպոլի նահանգի Չարդախլու գյուղում: Նա գեներալ-ադյուտանտ էր: Ավարտել է Թիֆլիսի ազնվականական գիմնազիան և կայսերական բժշկավիրահատական ակադեմիան: 1871թ. հունվարին աշխատել է որպես կրտսեր բժիշկ Բաքվի Հ 153 հետիոտն գնդում: 1871թ. ապրիլին նրան աշխատանքի են գործուղում Թիֆլիսի ռազմական հոսպիտալը, իսկ հոկտեմբերին՝ կրտսեր Օրդինատորի օգնական: 1873թ. նշանակվում է Թիֆլիսի ռազմական գիմնազիան որպես ավագ բժիշկ, միաժամանակ աշխատելով Թիֆլիսի կոմենդատուրայի վարչությունում և Կովկասի ռազմական օկրուգում: 1875թ. մարտ ամսում հաստատվում է որպես խորհրդատու, իսկ 1877-78թթ. ղեկավարել է Կոջարի հոսպիտալի բաժինը: 1879թ. եղել է Թիֆլիսի երկրորդ ռազմական հոսպիտալում, որպես կրտսեր օրդինատոր և ազնվականական խորհրդատու:

1881թ. Մարկարովը գործուղվել է Թիֆլիսի ռազմական գիմնազիա: 1882թ. եղել է 1-ին հեծելազորային դիվիզիայի բժիշկ, իսկ 1883թ. 2-րդ կովկասյան հրաձգային գումարտակի կրտսեր բժիշկ: 1886թ. նրան նշանակում են կովկասյան 4-րդ հրաձգային գումարտակի ավագ բժշկի ժամանակավոր պաշտոնի և գործուղել Կովկասի ռազմա-բժշկական վարչություն: 1886թ. հուլիսին նա դարձել է Թիֆլիսի ռազմական հոսպիտալի ավագ օրդինատոր, իսկ 1887թ. կոլեժի խորհրդատու: 1891-1903թթ. եղել է 1-ին կովկասյան հեծելազորային դիվիզիայի, 18-րդ հրաձգային դիվիզիայի և 14-րդ բանակային կորպուսի բժիշկ: 1897թ. նա եղել է պետական խորհրդատու, 1904թ. օգոստոսի 15-ին նրան նշանակել են 2-րդ բանակի կորպուսային բժիշկ: Իվան Մարկարովին հատուկ են եղել բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են հայրենասիրությունն իր ժողովրդի նկատմամբ: 1911թ. նա իր հայրենի Չարդախլու գյուղի խլված հողերը հետ վերցրեց և հանձնեց տերերին: Սովի տարիներին օգնել է համագյուղացիներին հացով: Հայրենի գյուղում կառուցել է երկհարկանի հիվանդանոց, որը սպասարկում էր հարևան գյուղերին: Նա ուներ նաև օրինակելի մանկական բուժարան Թիֆլիսին մերձ Կոջորե բնակատեղում:

Կյանքի վերջին շրջանում Մարկարովը կուրացել է: Մարտական ծառայությունների համար Իվան Խրիստափորի Մարկարովը պարգևատրվել է սուրբ Ստանիսլավի 3-րդ աստիճանի, սուրբ Վլադիմիրի 2-րդ աստիճանի (1890թ.) և մի շարք հիշատակի մեդալներով:

1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին և Ալեքսանդր 3-րդի թագավորության ժամանակաշրջանում նա արժանացել է հիշատակ մեդալի:

Մահացել է 1931թ. Թիֆլիսում՝ 87 տարեկան հասակում:

## ՓԻՐՈՒՄՅԱՆ (ՓԻՐՈՒՄՈՎ) ԴԱՆԻԵԼ-ԲԵԿ ԱԲԻՍՈՂՈՄՈՎԻՉ

Ծնվել է 1861թ. նոյեմբերի 22-ին ԼՂ-ի Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղում: Ռազմական գործիչ, ցարական բանակի սպա (1916թ.), գնդապետ, Պողոս-Բեկ Փիրումյանի հորեղբոր տղա:

Ավարտել է Շուշիի քաղաքային ուսումնարանը: Զինվորական ծառայությունը սկսել է 1881թ.՝ Երևանյան լեյբգվարդիայի գնդում: 1881-83թթ. սովորել է Թիֆլիսի հետիոտն յունկերական ուսումնարանում, 1913թ. ավարտել է Օրենբուրգի հրածգային դպրոցի սպայական դասընթացները (այժմյան Ս.Պետերբուրգի մարզի Լոմոնոսով քաղաքի): 1883թ. ստացել է պոդպորուչիկի, 1888թ.՝ պորուչիկի, 1900թ.՝ կապիտանի, 1912թ. փոխգնդապետի կոչումներ: Նա եղել է վաշտի, գումարտակի և գնդի հրամանատար: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Փիրումյանը կռվել է Արևմտյան Հայաստանի Կովկասյան ռազմաճակատի Վանի և Մուշի մարզերում՝ որպես գնդի հրամանատար:

Դանիել-Բեկ Փիրումյանը ինքնագլուխ ընդունեց Սարդարապատի ուղղությամբ գործող բանակի ջոկատի հրամանատարությունը: Այդ բարդ տեղամասում տարվող ռազմական գործողություններում դժվար էր կողմնորոշվել հաղթանակի հարցում: Կռիվներին պետք է մասնակցեր և Պողոս-Բեկ Փիրումյանը, որի 5-րդ ղարաբաղյան հրածգային բանակն անցնելով Իգդիրից մինչև Արաքսի ձախ ափը, հարկ եղավ, որ իր վրա վերցնի թուրքական բանակի գլխավոր հարվածը: Գնդի 2-րդ և 3-րդ գումարտակները գտնվում էին Էջմիածին, Թռնալու և Այզեվա գյուղերի արևմտյան տարածքում, իսկ 1-ին և 4-րդ գումարտակները՝ երկաթողուղ հարավ՝ Մարգարա գյուղի ծայրամասերում:

Մայիսի 27-ին, երբ արդեն Փիրումյաններն աշխատել էին կռվի մանրամասները ճշտելու վրա, ներս է մտնում համայն հայության կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը: Մեկ ժամ անց 5-րդ ղարաբաղյան գունդը մարտական պաշտպանության վիճակում կանգնած էր Վաղարշապատի դաշտում: Կաթողիկոսը զինվորներին հիշեցրեց, որ նրանց նախնիները կռվել են մեծ երկրների դեմ և միշտ էլ հաղթել: Եվ գունդը երդվեց հաղթել: Կռվից հետո, որ տևեց 3 օր, թշնամին մեծ կորուստներով ու ցրիվ կերպով նահանջեց: Մայիսի 29-ի երեկոյան Թիֆլիսում ստացվեց ռազմաճակատի հրամանատար Մովսես Սիլիկյանի հեռագիրն այն մասին, որ «Սարդարաբադի տևած 3-օրյա կռիվներից հետո, թուրքերը հետ են նահանջել բոլոր դիրքերից և շրջապատվել թևերից: Հետապնդելով նրանց հայկական բանակները հասել են մինչև Կարագալա կայարանը: Թուրքերի կորուստները բավական անչափ զգալի են»:

Պետականությունը կորցնելուց հետո հայ ժողովուրդն առաջին անգամ հաղթանակ տարավ թուրքերի դեմ: Սարդարապատի ճակատամարտի մասնակիցների մեջ Փիրումյանների տոհմից մեկն էլ մասնակցեց, դա բժիշկ Քրիստափոր Փիրումյանն էր:



Եթե Ավարայրի ճակատամարտում միայն փրկվեց հայերի հավատը, ապա Սարդարապատի տակ տեղի ունեցած կռիվներում վճռվում էր ազգի լինելու կամ չլինելու հարցը: Փիրումյանների սխրանքը այդ ճակատամարտում դժվար է գերագնահատել:

Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելուց հետո արտակարգ հանձնաժողովի նախագահ Գևորգ Աթարբեկյանը հսկողության տակ էր առել Դանիել-Բեկ Փիրումյանին և Սարդարապատի ու Բաշ-Ապարանի մյուս հերոսներին և նրանց ուղարկեց Ռուսաստան:

1921թ. փետրվարի 17-ին Ռյազանի բանտում գնդակահարվեց Դանիել-Բեկ Փիրումյանը:

Դանիել-Բեկ Փիրումյանը պարգևատրված է ռուսական շքանշանով ու մեդալներով, և Գեորգևյան զենքով:

Մարշալ Հովհաննես Բաղրամյանը, որ մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին, հետագայում բարձր է գնահատել Փիրումյանի զորավարական արվեստը, նրան հիշատակել Սարդարապատի ճակատամարտի արժանի հերոսների շարքում:

## ՓԻՐՈՒՄՅԱՆ ՊՈՂՈՍ-ԲԵԿ (ՊԱՎԵԼ) ՂԱՀՐԱՄԱՆԻ

Ռազմական գործիչ, գնդապետ Փիրումյան Պողոս-Բեկը ծնվել է 1864թ. ԼՂ Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղում: 1874թ. ավարտել է Շուշիի ռազմական ուսումնարանը և 1878թ. Յուկերական ուսումնարանը: 1878թ. եղել է Մինգրելյան գրենադերական գնդի պրապորշչիկը, 1882թ. Շիրվանյան 84-րդ հետիոտն գնդում պոդպորուչիկ, 1891թ. Ալեքսանդրապոլի Արդահանյան գնդում շտաբս-կապիտանի զինվորական կոչումներում:

1898թ. Պավել Փիրումյանը ստացել է կապիտանի կոչում, իսկ 1905թ. փոխգնդապետի: 1906թ. նա ոչ երկար ժամանակով ծառայել է հեռավոր Արևելքում և եղել Մոժայսկու 141-րդ հետիոտն գնդում: 1908թ. ծառայել է Քութաիսի փոթիական գնդում: 1914թ. անցել է թոշակի, բայց սկսված 1-ին համաշխարհային պատերազմը հետ բերեց նրան գործող բանակ: 1916թ. տեղափոխվեց կովկասյան ճակատ և նշանակվեց հայկական 5-րդ հրածգային գնդի հրամանատար, որը կռվել է Վանի և Մուշի շրջաններում: 1916-17թթ. Փիրումյանը եղել է Դարալագյազ-նոր բայազեթյան զինվորական ջոկատի հրամանատար: Դանիել-Բեկ Փիրումյանի հետ միասին վարել է Սարդարապատի ճակատա-

մարտը ղեկավարելով ղարաբաղյան 5-րդ գունդը և վճռական դեր ունեցել թուրքական բանակի ջախջախման գործում: Իմանալով Դանիել-Բեկ Փիրումյանի և նրա ընկերների գնդակահարության մասին և որպեսզի խուսափի վերահաս ձերբակալումից, որ կատարում էր Գևորգ Աթարբեկյանը, փորձեց բողոքել, բայց չհասնելով ոչ մի հաջողության, 1922թ. գնդապետն ինքնասպան եղավ:

## ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ (ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ծնվել է Լեռնային Ղարաբաղի Խաչենի նահանգի Ղշլաղ գյուղում 1867թ. լուսավորչի ընտանիքում: Սովորել է Շուշի քաղաքում: 1891թ. անցել է Թավրիզ, իր բարեկամ Հովնան Դավթյանի մոտ: Այստեղ մտավորականների մի խումբ զբաղվում էր լուսավորչական գործերով և նպաստում ազգային-ազատագրական շարժմանը: Նրա ֆինանսական գործերը վարում էր Նիկոլը: 1895թ. Նիկոլ Դումանը ընկերների հետ անցել է Վան: Ճանապարհին քրդերի հետ պատահած մի վեճի ժամանակ հայկական ֆիդայիները կռվի մեջ ընկան, բայց հերոսաբար հաղթեցին նրանց: Հենց այդ ժամանակ էլ քրդերը նրան տվեցին ածական անուն՝ Դուման: Վանում նա բանտարկվեց տեղական իշխանությունների կողմից և ազատվելուց հետո անցավ Թիֆլիս: 1904թ. Նիկոլն իր մերձավոր ընկերների հետ փորձեց անցնել Սասուն, բայց փորձը հաջողություն չունեցավ:

Հայ-թուրքական պատերազմի ժամանակ Նիկոլ Դումանը մասնակցեց Երևանի նահանգի հայերի պաշտպանությանը: 1910թ. Նիկոլ Դումանը մասնակցել է Կոպենհագենում կայացած սոցիալիստների միջազգային կոնգրեսին: Այնուհետև անցել է Արևմտյան Հայաստան, որտեղից էլ Թավրիզ և մասնակցել 1911թ. Իրանում տեղի ունեցած բուրժուա-դեմոկրատական հեղափոխությանը:

Շուտով վատացավ նրա առողջությունը, և նա անցավ Կովկաս: Թևակոխեց 1914թ.: Դումանը պատրաստվեց ֆիդայիների հետ գնալ կռվի, բայց առողջական վիճակը նրան թույլ չտվեց:

1914թ. նոյեմբերի 29-ին մահացավ Թիֆլիսում և թաղվեց Խոջիվանքի եկեղեցու մոտ:



## ԴԱՎԹՅԱՆ ԵՖՐԵՄ ԴԱՎԹԻ (ԵՖՐԵՄ-ԽԱՆ)

Ծնվել է 1868թ. Ելիզավետպոլի նահանգի Բարսում գյուղում: Ժողովրդական պաշտպան էր: 1905-1911թթ. իրանական հեղափոխության գործիչ էր: Դեռ պատանեկան հասակում Եփրեմին գերել է հայ ժողովրդի ազատագրության գործը, որի համար էլ իր երկու ընկերների հետ անցավ Թիֆլիս, որպեսզի պաշտպանի սկսված շարժումը:

1880-ական թթ. Եփրեմը գնաց Արևմտյան Հայաստան, կազմակերպեց հայդուկական խումբ Հայաստանը փրկելու համար: 1890թ. սեպտեմբերին մասնակցել է Ս.Կուպանյանի կազմակերպած շարժմանը, ենթարկվել բանտարկության և աքսորվել Սախալին: Այնտեղից նա փախել է Թավրիզ: 1897թ. որպես հեծելազորային ջոկատի հրամանատար մասնակցեց Խանասերի գրավման արշավանքին: Այնուհետև գաղտնի անցավ Կովկաս, բայց 1899թ. վերադարձավ Իրան և զբաղվեց ուսուցչությամբ:

Եփրեմը մեծ հույսեր է կապում Իրանում սկսված առաջադիմական շարժման հետ, մասնակցել է դաշնակցական կուսակցության ստեղծմանը: 1908թ. էնզելիում Եֆրեմը ստեղծեց «Փայլակ» կոմիտե, միաժամանակ ռազմական հանդերձանք տեղափոխել Կովկասից: Նա մեծ դեր է խաղացել Իրանական ժողովրդի ազատագրական շարժման ժամանակ: 1909թ. Եֆրեմը նշանակվեց պարսկական ժամանակավոր կառավարության զինվորական ուժերի գլխավոր հրամանատար: Ղեկավարել է 60 ճակատամարտեր և անփոփոխ եղել հաղթողի դերում: Նրան շնորհել են Սարդարի (մարշալի) կոչում: Եփրեմի բանակի մեծ մասը հայեր էին: Նա սպանվել է 1912թ. մայիսին ճակատամարտում՝ Համադան քաղաքի մոտ (Սուրջիի ճակատամարտում): Թաղված է Թեհրանում, հայկական դպրոցի բակում, որը կրում է նրա անունը:

Պարսկաստանում Եփրեմին կնքել են «Արևելքի Դանտոն» հայ տաղանդավոր բանաստեղծ Ավետիք Իսահակյանը Եփրեմի մասին գրել է.

«Շապուհների, հազակերտների, շահ-աբասների և աղա-մամեդխաների ձիերի սմբակների տակ Հայաստանը մոխրի էր վերածվել: Բայց այդ մոխիրի միջից դուրս եկավ Եֆրեմը իր անվախ զինվորներով, որոնց ձիերը հաղթանակով անցան շապուհների, շահ-աբասների դիակների վրայով, նրա համար, որպեսզի վերադարձնեն խաղաղություն, եղբայրություն և հավասարություն»:

## ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ (ԼԵՎՈՆՅԱՆ)

Ծնվել է 1873թ. Շուշիում: Հայկական ազատագրական շարժման մասնակից: Ստանալով սկզբնական կրթություն Շուշիի ռեալական դպրոցում, 1892թ. ընդունվել է Պետերբուրգի մեքենաշինական բարձրագույն դպրոցը: 1895թ. անցել է Ժնև, իսկ հետո Վան, որպեսզի մասնակցի արևմտահայերի ազատագրական պայքարին: Եղել է 1896թ. Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը: Մի քանի տասնյակ մարտիկներից բաղկացած խմբով պաշտպանել է Վանի բնակչությունը թուրքական կանոնավոր բանակի և քուրդ գրոհայինների հարձակումից:

Ինքնապաշտպանությունից հետո Սարուխանյանը 70 ֆիդայիներից կազմված խմբով ձգտել է անցնել Պարսկաստան, բայց շրջապատվել է թուրք և քուրդ ուժերի կողմից և անհավասար կռվում զոհվել: Մարտիրոս Սարուխանյանին է նվիրված Շուշանիկ Կուրղինյանի բանաստեղծություններից մեկը:

## ԹՈՒՄԱՆ (ԹՈՐԳՈՄ) ԳՐԻԳՈՐԻԻ ԹՈՒՄՅԱՆ

Ծնվել է 1879թ. Շուշիում: Ազատագրական շարժման մասնակից: Ավարտել է Շուշիի հոգևոր սեմինարիան: Նրա համադասարանցիներն էին Նժդեհը, Մենակը և ապագա հանրահայտ ժողովրդական պաշտպանները:

Դեռ դպրոցական տարիներին ընդունակ և համարձակ պատանին գրավել էր ուսուցիչների ուշադրությունը: Նա աշակերտներին և քաղաքի բնակիչներին հայտնում էր ու տեղեկություններ տալիս հայկական ազգային-ազատագրական շարժումների մասին:

1897թ. Թումանը գնաց Մոսկվա, որտեղ ստացավ ռազմական կրթություն: Նա մասնակցել է նաև համալսարանի պարապմունքներին՝ որպես ազատ ունկնդիր: Մոսկվայից վերադառնալով հարազատ Շուշի, Թումանը ծավալեց ակտիվ հասարակական-քաղաքական և ստեղծագործական աշխատանք: Նրա նախաձեռնությամբ և ղեկավարությամբ բացվել են կուլտուր-լուսավորչական խմբակներ ոչ միայն Շուշիում, այլ նաև մոտիկ գյուղերում: Շուշիում Թումանը հրատարակեց «Կոկոն» թերթի 1-ին համարը և այն տարածեց երիտասարդների շրջանում:

1901թ. Թումանը գնաց Ալեքսանդրապոլ (Գյումրի), անցավ զինվորական ծառայության որպես սպա: Կարճ ժամանակում նրա անունը հայտնի դարձավ: Թումանին սպասվում էր փայլուն ապագա, բայց նա գնաց այլ ճանապարհով՝



կազմակերպեց «Մրրիկ» ջոկատը՝ 23 հոգու ընդգրկումով, ուր մտան հայտնի ֆիդայիներ Գևորգը, Սեբաստացի Մուրադը, Մենակը և մյուսները:

Լավ զինված և նախապատրաստված ջոկատը վռազվեց մեկնելու Սասուն՝ օգնելու Անդրանիկին, Գ.Չաուշին, Հրայրին և մյուսներին: Ջոկատի ներկաները ջերմ ընդունվեցին սասունցիների և մեծ զորավար Անդրանիկի կողմից, որը հետագայում իր մեմուարներում գրել էր.

«Իմանալով, որ Սեմալ են ժամանել 20 ֆիդայիներ, մենք գնացինք այնտեղ, որպեսզի տեսակցվենք Թումանի հետ»:

Սասունում Թումանը գրեց հայրենասիրական հոդվածներ և թռուցիկներ, որոնք ձեռքից ձեռք են անցել և օգնել նրանց: 1904թ. սասունցիները նամակ ստացան կովկասյան հայոց միությունից, որում խնդրել են պատվիրակություն ուղարկել համահայկական ժողով: Սասունցիների որոշմամբ, որպես պատգամավոր, գործուղվեցին Թումանը և Կայծակը: Ժողովից հետո Թումանը կազմակերպեց նոր խումբ՝ բաղկացած 60 հոգուց:

1904թ. հուլիսի 15-ին Օլթիի շրջանում ստեղծվեց մի խումբ Թումանի և որսորդ Գևորգի հրամանատարությամբ, որպեսզի գնան Սասուն և ներառվեն երկրամասի բնակչության ազատագրական պայքարի մեջ: Արդեն սահմանի վրա տեղի ունեցավ հակամարտություն Թուրքիայի զինված ուժերի հետ: Մարտի վճռողական պահին գնդապետ Բրլկովի հրամանով ֆիդայիների թիկունքին ռուսական սահմանապահները հարված են հասցրել: Համարելով, թե տեղի է ունեցել անընմբռնում, Թումանը հրամայել է չկրակել ռուսների վրա և որպեսզի պարզություն մտցնի, գնդապետի մոտ ուղարկեց մի քահանայի՝ Ղազարի հորը: Սակայն Բրլկովի հրամանով բոլորը գնդակահարվում են: Ալեքսանդրապոլում ծառայելու ժամանակ Թումանը մերձենում է Ավետիք Իսահակյանի հետ: Բանաստեղծը հետագայում նրան է նվիրել իր «Որսկան ախպեր» բանաստեղծությունը:

## ՄԵԼՔՈՒՄՈՎ (ՄԵԼՔՈՒՄՅԱՆ) ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿԻ

Ծնվել է 1885թ. դեկտեմբերի 12-ին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Խերխան գյուղում: Եղել է Թուրքմենիայի հեծելազորային դիվիզիայի բրիգադի հրամանատար, գեներալ: Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին հեծյալ այն 4-րդ դիվիզիան, որի մեջ էր գտնվում և Հակոբ Մելքումովը, կանգնած էր Պսկով քաղաքի մոտերքում:

Մելքումովը նրանցից մեկն էր, ով տրամադիր կերպով քարոզչական աշխատանք էր տանում 4-րդ գնդի զինվորների և հրամանատարների շրջանում: Շուտով նա դարձավ գնդի հրամանատար:

1917թ. նոյեմբերին ցարական գեներալ Կալեդինը Դոնում ապստամբություն էր կազմակերպել, որպեսզի տապալի երիտասարդ սովետական իշխանությունը: Հենց այստեղ ուղարկվեց Պսկովի 4-րդ սովետական հեծելազորային դիվիզիան, որը մարտի մեջ մտավ սպիտակ գվարդիականների հետ:

1918թ. հունվարի 8-ին հետապնդելով թշնամուն, Կարմիր հեծելազորայինները ազատագրեցին Ռոստով քաղաքը: Քաղաքը ազատագրողների առաջին շարքում էր Մելքումովի հեծյալ գունդը:

1919թ. աշնանը լուրջ վիճակ ստեղծվեց նաև հարավային ռազմաճակատում: Դենիկինի բանակը գրավեց Վորոնեժը, Տուլսկը և վտանգված էր Օրյոլը և Տուլան: Վորոնեժյան ուղղություններում թշնամու դեմ կռվում էր 8-րդ բանակը, որի կազմում էր նաև միացյալ հեծելազորային բրիգադը Հ.Մելքումովի հրամանատարությամբ: Կատաղի մարտերից հետո Դենիկինի բանակը ջախջախվեց Օրյոլի և Վորոնեժի տակ: Խորհրդային բանակի հարվածների տակ Դենիկինի բանակը նահանջեց դեպի հարավ: Այդ մարտերում միացյալ հեծելազորային բրիգադը արժանացել է փառքի և իր ու իր հրամանատար Հակոբ Մելքումովի հետ միասին փառաբանվել: Նա 2-րդ անգամ պարգևատրվեց Կարմիր Դրոշի շքանշանով: Այդ մարտերի ժամանակ նա ծանր վիրավորվեց, և առողջանալուց հետո նորից վերադարձավ կռվի դաշտ: Այս անգամ նա գործուղվեց Սամարա, թուրքմենական ճակատ:

1919թ. դեկտեմբեր ամիսն էր սկսվում: Հաշվի առնելով Մելքումովի առավելությունները, թուրքմենական ռազմաճակատի հրամանատար Ֆրունզեն նրան նշանակեց թուրքմենական հեծելազորային դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատար: Բասմաչների դեմ պայքարելու համար 1922թ. ապրիլի 5-ին ստեղծվեց բասմաչական ճակատի շտաբ և ռազմա-ռևոլուցիոն խորհուրդ, որի համար էլ հունիսի սկզբին զորամասի շտաբը եկավ Կարմիր բանակի գլխավոր հրամանատար Սերգեյ Կամենևը: Տեղում ծանոթանալով իրադրության հետ, Կամենևը փոխեց խմբավորման ռազմական պլանները:

Էնվեր փաշայի բանակի ջախջախումը միջին Ասիայի ժողովուրդների մոտ դարձել էր լեգենդ: Ասել են իբր ինքը, աստված է ուղարկել նրան մուսուլմանական ժողովրդին փրկելու համար, քանի որ գնդակը չի կարող կոտրել ու մտնել նրա երկաթե մարմինը:

Էնվեր փաշայի բանակի ջախջախումը հնարավոր եղավ բանակի այն միավորման միջոցով, որը նախկինում աչքի էր ընկել անցած մարտերում (բասմաչների հետ):

Սերգեյ Կամենևի հրամանի մեջ ասվում էր.

«Առաջին բրիգադի հրամանատար Մելքումովին: Հրամայում եմ հունիսի 15-ի լուսաբացին զինվորական ծախ խմբավորման ամբողջ ուժերով անցնել հարձակման և ոչնչացնել Էնվեր փաշայի գլխավոր ուժերը»:

Պատասխանելով գլխավոր հրամանատար Կամենևին՝ Մելքումովը գրում է. «Լուսաբացին, մինչև առավոտյան խոնարհումը, Էնվերը ջախջախված է լինելու»:

Մելքումովի գրոհը սկսվեց ճակատից: Բացի դրանից Մելքումովը հետախուզության է ուղարկում առևտրականների՝ ուղտերով այն շրջանները, որտեղ գործում էին Էնվերի ջոկատները: Ինքը՝ Մելքումովը մի անգամ չէ, որ եղել է բասմաչների «գլխավոր շտաբում» որպես գյուղացի և փորձել է համոզել նրանց զենքը ցած դնել, բայց նրանք չեն լսել: Այն դեպքում Մելքումովը իր զինվորներով դաժան ճակատամարտերում ջախջախել է Էնվեր փաշային:

12 տարի Մելքումովը (1920-1932թթ.) հեծելազորային իր բրիգադով մասնակցել է Միջին Ասիայի լեռներում և ավազուտներում տարվող կռիվներին: Սովետական կառավարությունը բարձր է գնահատել Մելքումովի ծառայությունները հայրենիքի հանդեպ: Նա պարգևատրված է Կարմիր Դրոշի 3, Թուրքմենիստանի Կարմիր դրոշի, Բուխարայի Ոսկե աստղի և պատվավոր ոսկե զենքով:

Թուրքմենստանում թշնամուն ջախջախելուց հետո Մելքումովը 1934թ. ավարտել է Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան:

Ստանալով թեորիական գիտելիքներ՝ Մելքումովը վերադառնում է Տաշկենտ: Նրան նշանակում են Միջին Ասիական զինվորական օկրուգի հրամանատարի տեղակալ և նա հրամանատար Վելիկանովի հետ 1937թ. կեսերին ուզում էր բարձրացնել օկրուգի զինվորական զորամասերի մարտունակությունը:

Միջին Ասիայում քաղաքացիական պատերազմն ավարտելուց հետո 1937թ. Ա.Մելքումովը զրպարտվում է Ստալինի անձի պաշտամունքի ժամանակաշրջանում: 17 տարի նա անց է կացրել սիբիրյան աքսորավայրում: Արդարացվել է 1954թ., վերադարձել է հայրենիք, մահացել է 1962թ., Մոսկվայում:

1960թ. «Ռազմահրատարակչությունը» հրատարակեց քաղաքացիական պատերազմի հերոս, պահեստի վետերան գեներալ-լեյտենանտ Ա.Ա.Մելքումովի գիրքը:

## ՌԵՄԱԼ ՆԻԿՈԼԱՅԻ ՓԻՐՈՒՄՈՎ

Ծնվել է 1925թ. հուլիսի 23-ին Բաքվում՝ արցախցու ընտանիքում: 1950թ. ավարտել է Մոսկվայի Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարանը, իսկ հետո Ֆ.Է.Ձերժինսկու անվան ռազմական ակադեմիան: 1950-51թթ.աշխատել է Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարանում՝ որպես լաբորատորիայի վարիչ:

1951թ. զորակոչվեց խորհրդային բանակ:

1976 թվականից գեներալ-մայոր, 1968 թվականից՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, 1969 թվականից՝ դոցենտ:

Այժմ պրոֆեսոր է, Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարանի ռազմական կաֆեդրայի վարիչ:

Ռեմալ Նիկոլայի Փիրումովը պարգևատրված է Կարմիր աստղի եւ ԽՍՀՄ «Զինված ուժերի եւ հայրենիքին ցուցաբերած ծառայությունների համար» 3-րդ աստիճանի շքանշաններով:

## ՎԼԱԴԻՄԻՐ ՍԵՄՅՈՆԻ ՓԻՐՈՒՄՈՎ /ՓԻՐՈՒՄՅԱՆ/

ԽՍՀՄ ռազմա-ծովային նավատորմի կոնտր-ադմիրալ Վլադիմիր Սեմյոնի Փիրումովը ծնվել է 1926թ. դեկտեմբերի 1-ին, Կիրովական քաղաքում արցախցու ընտանիքում: Վլադիմիրի հայրը՝ Սեմյոն Փիրումովը 1932թ. լեռնային շրջաններում իր ծառայությունները վերջացնելուց հետո ընտանիքով վերադարձավ Բաքու: Վոլոդյան Կասպից ծովում տեսավ նավերի վերնագագաթները, սիրեց ծովը և 1941թ., 7-րդ դասարանն ավարտելուց հետո, առանց տատանվելու, ընդունվեց ռազմա-ծովային հատուկ դպրոցը: Այնուհետև սովորեց նախապատրաստական ուսումնարանում, և վերջապես, 1948թ. կասպիական բարձրագույն ռազմա-ծովային ուսումնարանում:

1963թ. սովորել է Լենինգրադի Խորհրդային միության մարշալ Ա.Ա.Գրեչկոյի անվան ռազմա-ծովային ակադեմիայում, իսկ 1974թ.՝ Կ.Ե. Վորոշիլովի անվան գլխավոր շտաբի բարձրագույն դասընթացներում: 1948-60թթ. զբաղեցրել է տարբեր պաշտոններ բալթյան նավատորմում, եղել է Միրոնովի էսկադրոնի հրամանատար: Իր միավորման մեջ Փիրումովը վաստակել է փառք ոչ թե միայն որպես փորձառու հրամանատար, այլ նաև որպես մասնագետ՝ ստեղծագործաբար վճռելով ռազմական պրակտիկայի հարցերը:

Բալթիական նավատորմի քաղվարչությունը հատուկ թերթիկ է լույս ընծայել «Ստեպենին» նավի հրամանատարի լուսանկարով: Այդ թերթիկներում բովանդակում են կոչեր բոլոր սպաներին՝ հետևելու առաջավոր հրամանատար Փիրումովի օրինակին:

Ահա այդ կոչերի համառոտ բովանդակությունը.

«Կարմրադրոշ բալթիական նավատորմի հրամանատարությունը գերազանց է հայտարարում «Ստեպենին» էսկադրոնի մինոնեսցին, որի հրամանատարն է III կարգի կապիտան Վ.Ս. Փիրումովը»:

Նա արժանացել է ԽՍՀՄ ռազմա-ծովային նավատորմի փոխ-ծովակալի կոչման և հետո նաև ռազմական գիտության դոկտորի գիտական աստիճանի: Աշխատել է ռազմածովային ակադեմիայում, որպես կաֆեդրայի վարիչ, իսկ 1974թվականից՝ ռազմածովային նավատորմի գլխավոր շտաբում: Մի շարք աշխատությունների հեղինակ է: Պարգևատրված է Կարմիր Աստղի շքանշանով:

Վերջերս դարձավ ռազմական գիտությունների գծով ռուսական ակադեմիայի փոխնախագահ:



## ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ՀԱԿՈԲԻ

Ծնվել է 1887թ. Շուշիում: Հայ ազատագրական շարժման մասնակից: Ավարտել է Շուշիի հոգևոր դպրոցը, իսկ այնուհետև՝ Պետերբուրգի ռազմական դպրոցը և ստացել Պորուչիկի կոչում: 1913թ. հրաման է եղել ճնշելու ժողովրդական հուզումները: Ա.Գրիգորյանը հրաժարվել է կրակել ապստամբ մարդկանց վրա, հայտարարելով՝ «թող հրամանը կատարի ռուս հրամանատարը»: Հրամանը չկատարելու համար Ա.Գրիգորյանի գործը տրվել է զինվորական տրիբունալ, որտեղ պարուչիկին ճիշտ են հասկացել և ազատել: Սակայն նրան, որպես հրաման չկատարողի հեռացրին զինվորական ծառայությունից: Նա վերադարձավ հայրենի տուն:

1914թ. Գրիգորյանին զորակոչեցին բանակ՝ որպես սպա: Նա կռվել է արևմտյան ռազմաճակատում, վիրավորվել է և զորացրվել: Բայց նա հայրենիք չվերադարձավ: 1915թ. որպես կամավորական ուղարկվել է արևմտյան Հայաստան, որպեսզի կանգնի արտագաղթվող հայկական գյուղերի բնակչությունը պաշտպանելու դիրքերում:

Արմենակը զինվորական մի կետում հանդիպում է զորավար քեռուն, որի միջոցով անցել է զորավար Անդրանիկի մոտ և նրա կողմից նշանակվել հայկական կամավորական ջոկատներից մեկի հրամանատար: Գրիգորյանի ջոկատը թուրքական զորքերի դեմ կռվել է Վանա լճի ափերին և տակտիկական միջոցներով ու հնարամտությամբ կատարել Անդրանիկի պլանները: Մի քանի օրից հետո, քեռու զոհվելուց հետո, Անդրանիկը իր ոչ մեծ ջոկատով ուղղվում է դեպի Վան: Թուրքերը նպատակադրվել էին ոչնչացնել հայկական հանրապետությունը: Անդրանիկը անցնում է Լոռի, իսկ Ա.Գրիգորյանը՝ Սարդարապատ և նշանակվում գումարտակի հրամանատար:

1918թ.՝ Սարդարապատի ճակատամարտից հետո, երբ կամավորները զորացրվում են տուն, նա վերադառնում է Զանգեզուր, հարազատների մոտ, որոնք արդեն ապրում էին այնտեղ:

1919թ. հունվարին թուրք մուսավաթականները օգտվելով Հայաստանի ծանր վիճակից Զանգեզուրը կտրել էին Հայաստանից: Զորավար Նժդեհը, որ այդ ժամանակ պաշտպանական ջոկատներ էր ստեղծում, Արմենակին վերցրեց որպես իր օգնական, նույնը և Խաչատուր Մալիքյանին: Արմենակի հրամանատարության տակ էին 300 փորձված ու կոփված համերկրացիներ: Արմենակի և մյուս փորձառու հրամանտարների ջոկատները Զանգեզուրը մաքրեցին թուրքերից: Դրանից հետո Արմենակին հանձնարարվում է զբաղվելու փախստականների հարցով, որը և կատարվում է՝ բազմաթիվ մարդիկ փրկվում են:

Խորհրդային իշխանության ժամանակ Գրիգորյանը մեղադրվում է որպես դաշնակ, բայց մինչև 1941 թվականը նա թագնվում է: 1941թ. նրան բռնում են և բանտարկում, որը 1944թ. մահանում է էլարի բանտում: 1960թ. նա ռեհաբիլիտացվում է:

# ԹԱԻՐՈՎ /ՏԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/ ՎԼԱԴԻՄԻՐ ԽՐԻՍՏԱՓՈՐԻ

Ծնվել է Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Խրմանջուխ գյուղում 1894թ.: Երկրորդ կարգի բանակային կոմիսար էր: Նրա մանկական տարիներն անցել են հայրենի գյուղում: 10 տարեկանում զրկվել է մորից: Նա իր չորս եղբայրների և երկու քույրերի հետ միասին գնացել են Բաքու՝ քեռու մոտ: Նա ձմեռը սովորել է առևտրական ուսումնարանում, իսկ ամռանը ապրել հարազատ գյուղում: 1915թ. ավարտելով Բաքվի առևտրական ուսումնարանը, ընդունվել է Կիևի առևտրական ինստիտուտը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ինստիտուտը տեղափոխվել է Սարատով: Այստեղ Թաիրովը սոցիալ-դեմոկրատական գործունեության համար երկու ամսով ձերբակալվում է: Նահանգային բանտից ազատվելուց հետո անցել է Մոսկվա և ընդունվել կոմերսիոն ինստիտուտը /այժմյա Գ.Մ.Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտը/: Ինստիտուտը ավարտելուց հետո նրան նշանակում են Մոսկվայում գործող չորս բանակների կոմիսար: Նա եղել է ՌՍՖՍՀ-ի պետբանկի վարչության անդամ և միաժամանակ Մոսկվայի քաղխորհրդին կից ֆինանսական խորհրդի անդամ:

1918թ. Թաիրովը մտավ Կարմիր բանակի շարքերը և կռվեց 10-րդ Կամիշևյան դիվիզիայի շարքերում: 1918թ. հոկտեմբերին նրան նշանակեցին Հարավային ռազմաճակատի Կամիշինի հատուկ խմբավորման ռազմա-հեղափոխական խորհրդի անդամ:

Թաիրովը երկու անգամ վիրավորվել է Բալաշով և Կամիշին քաղաքների կատաղի մարտերի ժամանակ:

Թշնամու դեմ ցուցաբերած անձնական խիզախության և արիության համար Թաիրովը երկու անգամ պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշաններով: 1919թ. հունիս ամսում նշանակվեց 9-րդ և 10-րդ բանակների կոմիսար: 1922թ. անվախ հրամանատար Թաիրովը աշխատեց Բուդյոննու լեգենդար բանակում որպես քաղաքական կոմիսար: Նույն տարում նա թողեց հեծելազորային բանակը և ընդունվեց Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, որն ավարտելուց հետո նշանակվեց Չինաստանում ԽՍՀՄ դեսպանության ռազմական խորհրդատու: Երկար ժամանակ նույն պաշտոնը նա վարեց ֆրանսիական ներկայացուցչությունում: Տիրապետում էր ռուսերեն, վրացերեն, ֆրանսերեն, պարսկերեն և անգլերեն լեզուներին:

Մեկ տարուց հետո Թաիրովի ճակատագիրը նրան գցեց Խաբարովսկ, որտեղ նա դարձավ Հեռավորարևելյան հատուկ կարմրադրոշ բանակի ռազմական խորհրդի անդամ, որի հրամանատարն էր լեգենդար մարշալ Բլյուխերը:

1935թ. Թաիրովին նշանակում են Մոնղոլիայի ժողովրդական հանրապետությունում ԽՍՀՄ դեսպան, որտեղ նա աշխատեց երկու տարի:

Խորհրդային կառավարությունը, բարձր է գնահատել նրա արդյունավետ աշխատանքը միջազգայնագիտության բնագավառում և 1937թ. հունվարի 26-ին նրան պարգևատրեց Լենինի շքանշանով: Հինգ ամսից հետո Թաիրովին վռազ կանչում են Մոսկվա և 1937թ. հունիսի 4-ին, դեռ Մոսկվայի կազանյան կայարան չհասած, նրան կնոջ հետ բանտարկում են:

Առաջածորի գտածոներից



Չայլուի պեղումներից



Աստղաշենի (Դաշբուշաղի) պեղումներից



ԼՂՀ թանգարանի նյութերից, որոնք հանված են Քարին Տակ, Մուշկապատ և Ծովատեղ բնակավայրերի պեղումներից





ԼՂՀ թանգարանի նյութերից



ԼՂՀ թանգարանի նյութերից

Շուշին XIX դարում





Գանձասար վանքի եկեղեցին

XVII-XVIII դդ. Մելիք Հայկազի ապարանքը, Քաշաթաքի շրջանում

VI-VII դդ. Հոդափերինի կամուրջ



1241-1246թթ. Գտչավանք, Հաղրուի շրջան





916թ. Խաչքար, Քարվաճառի շրջան

XIX դ. Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին

Մեծ Հայքի թագավորությունը 298-387 թթ.





Ցեղասպանությունից առաջ Մեծ Հայքի տարածքը

Արցախի հերոսները

Նրանք 15 էին, որոնք ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությամբ 1993թ. օգոստոսի 10-ի հրամանագրով «Մարտական Խաչ» 1-ին աստիճանի շքանշանով հետմահու պարգևատրվել են:

# ՕԳՏԱԿԱՐ ԳԻՐՔ-ՁԵՌՆԱՐԿ

Երբ անվանի պատմության ուսուցիչ Միքայել Բեգլարյանի առաջարկությամբ ընթերցեցի «Հայրենագիտությունը սովորողներին» նրա անտիպ աշխատությունը, ենթադրեցի, որ այն ժամանակի պատմական առումով Արցախի դպրոցի համար կարևոր երևույթ է: Հայրենագիտությամբ հարուստ այդ ամբողջության մեջ հեղինակը ջանացել է ներկայացնել Արցախի խոր անցյալն ու ներկան իր քաղաքական, տնտեսական մշակութային կյանքի վայրուվերումներով և ազգային ազատագրական դրվագներով լի պատմությունով:

Սույն աշխատության մեջ սերունդներին է փոխանցվում բառերից կազմված այն շղթան, որի ամրությունը պայմանավորված է ճշմարտությամբ:

Սկսած Տիգրան Մեծի ժամանակներից Արցախը միշտ էլ եղել է Կովկասի շողշողուն սուրը, որը բազմիցս օտարները ցանկացել են փշրել ու շպրտել աշխարհով մեկ, բայց նրա քաջարի ու ազատությամբ լցված որդիների ալեկոծված հոգին խաղաղվել է թշնամուն համոզելով, որ մերը միայն «թղթե շերեփը» չէ: Տարիներ շարունակ համբերության աստծո կողմից հովանավորվող Արցախը չի հուսահատվել և կարողացել է վաստակել ապրելու իրավունքը՝ հենվելով նախ իր բազկի վրա:

Մեր անվերջանալի պատմության մատյանում արձանագրված են ապրելու այդ իրավունքը վաստակած և պատմական տարբեր ժամանակներում հային յուրահատուկ կեցվածք ու պահվածք ցուցաբերած մարդկանց անունները: Գրքի մեջ այս մարդկանց նվիրված տողերով հեղինակը նպատակ է ունեցել ներկա ու գալիք սերունդների մեջ արթնացնել այն, ինչ առանձնահատուկ է Արցախցուն. **գործնեության լայն թափ, ազնազոհ քաջություն, վտանգալից խիզախում, ինքնավստահություն, ինքնահատուկ համառություն, ուղղամիտ հաստատակամություն և նախապետականություն ընտանեկան կյանքում:**

Գիրքը նախատեսված է ոչ միայն հայ ընթերցողների լայն շրջանների համար, այլ միաժամանակ մեթոդական ուղեցույց ձեռնարկ է պատմության և աշխարհագրության հակում ունեցողների և ուսուցիչների համար: Հետաքրքրությամբ պատմական փաստերով, ավանդություններով, իրական դեպքերով հարուստ այս գիրքը ունենա հաջողություն, որովհետև այն անհրաժեշտություն է:

Հուսանք որ Միքայել Բեգլարյանի հաջորդ աշխատությունը նվիրված կլինի ԼՂՀ -ի ճանաչված անկախության գաղափարին:

*Գայանե ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, Պատմ. ուսուցչուհի,*
*«Լավագույն մանկավարժական փորձ»*
*մրցույթի նոմինակիր:*



# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. "Преподование истории в школе", журнал, 1948г, N 3 и тот же журнал, 1954г., N 2 и N3, Кузмин Н.А.
2. Կարցով Վ.Գ., Պատմության ուսուցման մեթոդիկայի ուրվագծեր VIII-X դասարաններում, Հայպետ ուսմանկիրատ 1957, Երևան (թարգմանություն), էջ 193-214:
3. ԼՂՀ-ում կան 8 երկրագիտական թանգարաններ՝ Ստեփանակերտի, Մարտակերտի , Մարտունու, Ասկերանի, Շուշիի, Քաշաթաղի, Հադրութի, Փառքի (Ստեփանակերտում):
4. Асрян Ю.А.- Нагорный Карабах в эпоху поздней бронзы и раннего железа (II-I -тыс. лет до. н. э.), Степанакерт, 1999, ст. 3
5. Բալայան Վ.Ռ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 23:
6. Աբրահամյան Հ.Բ. Կրթությունը և գիտությունը Արցախում, Երևան, 2002, էջ 23, «Արցախը հնադարից մինչև մեր օրերը»:
7. Асрян Ю. А. там же, ст. 45.
8. Асрян Ю. А. "Нагорный Карабах в эпоху поздней бронзы и раннего железа", Степанакерт, 1999, ст. 3.:
9. Բալայան Վ.Ռ., Արցախի պատմություն, 2002, Երևան, էջ 23:
10. «Ազատ Արցախ» (թերթ) 2004թ.:
11. Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 109:
12. Մկրտչյան Շ. , Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 173:
13. Асрян Ю. А. "Нагорный Карабах в эпоху поздней бронзы и раннего железа", Степанакерт, 1999, ст. 24.
14. Բալայան Վ.Ռ., Արցախի պատմություն, 2002, Երևան, էջ 26:
15. Բալայան Վ.Ռ., Արցախի պատմություն, 2002, Երևան, էջ 26:
16. Патканов К. Использование о диалектаь армянского языка, СП. Ф 1869, ст. 35.
17. Մ.Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 153-154:
18. Ստրաբոն- քաղեց և թարգմանեց Հր. Աճառյանը, Երևան, 1940, էջ 31:
19. Բալայան Վ.Ռ., Արցախի պատմություն, էջ 26:
20. Пиетровский Б. - Ванское Царство, М., 14542., ст. 92.
21. Հեղինակի անձնական արխիվը («Լեռնային Ղարաբաղ» թերթ)
22. Птегемеос - Известия древних писателей, т. 1. ст. 79
23. Дион Кассий - Римская История (перевод Латышева), В. Ш. 1948 N 2. КН II, 2-4 ст.7
24. Աբաս Կուլի-Աղա Բաքիխանով 1846 թ. ավարտած իր «Գյուլիստան Իրամ» («Դրախտի մարդիկ») պատմաաշխարհագրական երկ.:
25. Մակար Բարխուդարյան, Պատմութիւն Աղուանից և դրացիկ, Բաքու, 1895, էջ 34:
26. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 55:
27. Բալայան Վ., Նույն տեղը, էջ 57:
28. Թովմասյան Ա., Սայլակներով պար, բանաստեղծություններ, Երևան, 2003, էջ 10:
29. Խաչատրյան Հ., Վաչագան, Երևան, 1998, էջ 71:
30. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 58:
31. Բալայան Վ., Նույն տեղը, էջ 59:
32. Խաչատրյան Հ,. Վաչագան, Երևան, 1998, էջ 71:
33. Աբրահամյան Հ.Բ., Խաչատրյան Հ., Արցախ, գրպանի օրացույց, Երևան, 1995, էջ 66-67:
34. Կարապետյան Բ., Շուշի բերդաքաղաքը:
35. Մկրտչյան Շ., Արցախ, Երևան, 1991, էջ 23:
36. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 73:
37. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 73-74:
38. Եղիշե, էջ 247:
39. Ղևոնդ Ալիշան, Գրքերի աշխարհ, 2 մարտի, 1991:
40. Օրբելյան Ստեփանոս, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 72:
41. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002,էջ 74:
42. Լալայան Ե., Երևան, 1988, էջ 44:
43. Բալայան Վ., Արցախի պատմություն, 2002, Երևան, էջ 75:
44. Ջալալյանց Ս., Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մաս Բ, Տփխիս, 1985, էջ 339:

45. Գյուտական քաղաք, Վաչագան Բարեպաշտի կառուցած քաղաքը, որ գտնվում էր ներկայիս Սարտակերտի շրջանի Թալիշ գյուղի մոտ:
46. Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1998, էջ 187:
47. Բալայան Վ., Արցախի պատմություն, 2002, Երևան, էջ 93:
48. Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղուանից աշխարհի, էջ 255:
49. Ուլուբաբյան Բ., Զրուցարան, Երևան, 1987, էջ 172:
50. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002,էջ 96-97:
51. Լեո, 2-րդ հատոր, էջ 434-446:
52. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002,էջ 97:
53. Քթիշը ամրոց էր Արցախի Սյուս Հաբանդ գավառում:15-րդ դարից հիշվում է Տող անունով՝ Դիզակի մելիքանիստ, գյուղը, որի գլխով շատ ամպեր են անցել: Այժմ Տողասարի վրա Գտիչը կա և գտնվում է Մեծ Թաղլարի դիմաց, Տումի գյուղի հայացքի տակ:
54. Արծրունի Թումա և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1985, էջ 279-281:
55. Գոշ Մխիթար, ժաժ Գանձակայ, Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 301:
56. Գանձակեցի Կիրակոս, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 117:
57. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002,էջ 117:
58. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002,էջ 120:
59. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002,էջ 122:
60. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002,էջ 124:
61. Աբրահամյան Հ., Խաչատրյան Հ., Արցախի գրպանի օրացույց, Երևան, 1995, էջ 66-67:
62. Բեգլարյան Հրաչյա, Հրաշք երկիր, իմ Ղարաբաղ (բանաստեղծությունների ժողովածու), Երևան, Նաիրի, 1990, էջ 128-145:
63. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002,էջ 131:
64. Գանձակեցի Կիրակոս, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 313:
65. Գանձակեցի Կիրակոս, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 243:
66. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 183:
67. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002,էջ 182:
68. Աղայան Ծ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Երևան, 1981, էջ 75:
69. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 185:
70. Ամնախ- թուրքական «Սգմախ», սեղմել բառը:
71. Քամալյանց Մ., «Խոթա վանքի Ս նշանը», «Արծագանք», 1892, ՀՍ III, էջ 1-2:
72. Г. Эзов, стр. 340-341.
73. Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, էջ 173:
74. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 156:
75. Ուլուբաբյան Բ., Զրուցարան, Երևան, 1987, էջ 261:
76. Լեո, Երկերի ժողովածու, 3-րդ հատոր, գիրք 2, Երևան, 1973, էջ 174:
77. Մելիք-Մելիքներ էին կոչվում «Արևելյան Հ-ի գավառական իշխանները», «Մելիք տեր է, տիրապետող, ինքնիշխան», Լեո, հ 2, գիրք 2, էջ 28 սեմերեն՝ թագավոր:
78. Բեգլարյան Հրաչյա, Ամարասի հովտի հուշարձանները, «Լրաբեր», 1974, էջ 93-94:
79. Ռաֆֆի, հատոր 10, Հայպետհրատ, 1959, էջ 207:
80. Մաղալյան Ա. Կրթությունը և գիտությունը Արցախում, 2004, Հ1-2, էջ 41-45:
81. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002,էջ 141:
82. Խամսա - Պարսկերեն նշանակում է «հինգ», «հինգ մելիքություններ»:
83. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002,էջ 168-169:
84. Աբրահամյան Հ., «Լուսարար» թերթ, 2005, թիվ 21, Ստեփանակերտ:
85. Ռաֆֆի, հատ. 10, էջ 294:
86. Ռաֆֆի, նույն տեղը, էջ 214:
87. Ռաֆֆի, նույն տեղը, էջ 192:
88. Վարանդա, Գավառ, որի այդ անունը գրվել է նաև «Վարընթոյ»: 1575թ. գրիչ Հովհաննեսը գրում է. «Շոշ գյուղ Փասահակ գավառ Վարընթոյ»: Առաջին անգամ եմ լսում Փասահակ անունը: Վարընթոյը վար ընթացք-գառիթափն է, որ դարձել է Վարանդա (Խանզադյան, Հայրենապատում, Զ գիրք): Մի ուրիշ աղբյուրագիտության մեջ նշվում է, որ Վարանդայի առաջին անունը եղել է Հաբանդ, հետո Սիսական և ապա Վարանդա»:
89. Բալայան Վ. , Արցախի պատմություն, էջ 173:
90. Բալայան Վ. նույն տեղը, էջ 171:



91. Լեո, գիրք 2, Երևան, 1973, էջ 271:
92. Աղդամ-Աղդամը Հայոց պատմական Աղվեն քաղաքն է: Նրա ամառանոց դղյակը եղել է Շուշի քաղաքի ծորային թաղամաս Քարին տակ գյուղում (Սերո Խանզադյան, Հայրենապատում, Զ գիրք):
93. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 172:
94. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 192:
95. Լեո, հատ. 4, էջ 249:
96. Ուլուբաբյան Բ., Ոսկե շղթա, Երևան, 1979, էջ 228:
97. Ռաֆֆի, 10-րդ հատոր, Հայպետհրատ, 1959, էջ 222:
98. Василь Потто, Первые добровольцы Карабаха в эпоху водворения русского владычества, Тбилиси,1902г, стр.24-29
99. В.Потто, там же, стр.47.
100. Հեղինակի անձնական արխիվ:
101. Մովսիսյան Ար., Կրթությունը և գիտությունը Արցախում, էջ 149, (ՀՀ 4, 2004), Ազնվատոհմերի շառավիղները:
102. Потто В. "Первые добровольцы Карабаха..." Тифлис, 1902, стр. 68.
103. Потто В. "Первые добровольцы Карабаха..." Тифлис, 1902, стр. 33.
104. Потто В. "Героическая оборона." стр. 33.
105. Աբրահամյան Հր., Կրթությունը և գիտությունը Արցախում, 2003. Հ է էջ 6:
106. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 3:
107. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002,էջ 247:
108. История Азербайджана, т. 2, Баку, стр. 164:
109. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 249:
110. «Ազգագրական հանդես», 1897, էջ 89:
111. Նույնը տեղը, էջ 249:
112. Մկրտչյան Շ. , Արցախ, 1991, էջ 46:
113. Гулимамбаров Ст. "Обзор фабрик у заводов Закавказского Края", Тифлис, 1894, стр. 320.
114. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 255:
115. Աբրահամյան Հր., «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2003, հ 3/4, էջ 6:
116. «Սեցուկ» (պարբերական Շուշի), 1917:
117. Վարանդյան Մ., ՀՀՊաշնակցության պատմություն, հատ. Բ, էջ 56, ՀՍՍ. Հ. Ս., ազատագրական պայքարի ուղիներում, 4 գրքով, գիրք 2, Երևան, 2003, էջ 68:
118 Հարությունյան Մ., 1905-1906թթ. թուրք-հայկական ընդհարումների պատճառների մասին, «Մարտիկ» ԼՂՀ ՊԲ պատմաթերթ, 2007:
119. Վորովսկի, Հեղափոխությունը և հակահեղափոխությունը, ("Кавказский календарь" 1917, Тбилиси, стр. 193).
120. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2001, էջ 269-270:
121 Աբրահամյան Հր., Գոյամարտ, Երևան, «Գիտելիք», 1991, էջ 4:
122. Աբրահամյան Հր., Գոյամարտ, Երևան, «Գիտելիք», 1991, էջ 6:
123. Խանզադյան Ս., Հայրենապատում, Երևան, 1980, էջ 329:
124. Խանզադյան Ս., Հայրենապատում, Երևան, 1980, էջ 330:
125. Աբրահամյան Հր., Արցախյան գոյամարտ, Երևան, «Գիտելիք», 1991, էջ 7:
126. Աբրահամյան Հր., Արցախյան գոյամարտ, Երևան, «Գիտելիք», 1991, էջ 7:
127. Մուդրոսը կղզի է Հունաստանում:
128. Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1974, էջ 687:
129. Աբրահամյան Հր., նույն տեղը՝ էջ 28:
130. Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Երևան, «Գիտելիք», 1991, էջ 36-37:
131. Ալավերդյան Կ., Իսահակ Ալավերդյան, Ստեփանակերտ, «Ազատ Արցախ», 2001, էջ 104:
132. Խանզադյան Ս., Հայրենապատում, էջ 36:
133. Խանզադյան Ս., նույն տեղը՝ էջ 37:
134. Խանզադյան Ս., Հայրենապատում, էջ 37:
135. Խանզադյան Ս., նույն տեղը՝ էջ 341:
136. Աբրահամյան Հր. , Արցախյան գոյամարտ, էջ 37:
137. Հարությունյան Հ., «Ազատ Արցախ» թերթ, 3.08.2004:
138. Հարությունյան Հ., նույն տեղը:

139. Հարությունյան Հ., նույն տեղը:
140. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ, էջ 274:
141. Հր. Աբրահամյան, «Արցախյան գոյամարտ», Երևան, «Գիտելիք», 1911, էջ 38:
142. Նույն տեղը, էջ 39:
143. Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, էջ 40:
144. Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, էջ 44:
145. Աբրահամյան Հ., նույն տեղը, էջ 46:
146. Աբրահամյան Հ., նույն տեղը, էջ 52:
147. Մկրտչյան Լ., Արցախ Ղարաբաղը՝ իր անցյալով և ներկայով, Աթենք, 1988, էջ 37:
148. Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, էջ 57:
149. Աբրահամյան Հ., Պետարխիվ. 848. y-1, 9-14:
150. ԼՂՀ պատմաերկրագիտական թանգարան, 82, Գ-34:
151. Ճարտար գյուղն այն ժամանակ Վարանդայի կենտրոնն էր:
152. Документы, ст. 203.
153. Բալայան Վ., Արցախի պատմություն, էջ 313:
154. Աբրահամյան Հ., Թեևան, Երևան, 1998, էջ 39:
155. Բալայան Վ., Արցախի պատմություն, էջ 323:
156. Кочарян Р.А., "Нагорный Карабах", Баку, 1925г. ст. 92.
157. Բալայան Վ., Արցախի պատմություն, էջ 329:
158. Ամիրջանյան Թ., Արզումանյան Վ., ԼՂՀ աշխարհագրություն, «Մաշտոց», Ստեփանակերտ, 1994, էջ 60:
159. Մելքումյան Ս., ԼՂՀ աշխարհագրություն, Երևան, 1992, էջ 33:
160. Շիրազ Հ., Բանաստեղծությունների ժողովածու:
161. Մկրչյան Շ., Արցունքներով լցված բուրգ, «Գրական թերթ», 23-ին մարտի, 1990:
162. Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, էջ 3:
163. «Սովետական Ղարաբաղ» թերթ, 6 հոկտեմբերի, 1988:
164. Вирабян А., Знаменитые арцахцы,изд.Аполон,Ереван, 1992,стр.45-147.
165. Բալայան Վ., Արցախի պատմություն, էջ 337, 339:
166. ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահության 1977թ. նոյեմբերի 23-ի, h-61 արձ. Կ-4133:
167 "Проблема мира и социализма", газета, 1977г. N 6, ст. 12:
168. Արզումանյան Վարդան, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2003, h 3/4 էջ 11:
169. Արզումանյան Վարդան, «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2003, h 3/4 էջ 11:
170. Հարությունյան Վ., հեղինակի անձնական արխիվ:
171. Եսայան Էր., Զորավար Ավո, Երևան, 1993, էջ 14:
172. Գաբրիելյան Գ., «Մուսա լեռան երկու որդին», Ստեփանակերտ, 1995, էջ 47:
173. Հեղինակի անձնական արխիվ:
** Սիփան-ռազմական օբյեկտի պայմանական անվանում:
174. Ղազարյան Ռ., Ազդականչը-13, Ստեփանակերտ, 1995:
175. Հեղինակի «Ղարաբաղը պատմության զուգահեռներում» գիրքը, Ստեփանակերտ, 2002, էջ 135:
176. Հեղինակի նույն գիրքը՝ էջ 135:
177. Հեղինակի նույն գիրքը՝ էջ 80:
178. Հեղինակի նույն գիրքը՝ էջ 73:
179. Հեղինակի նույն գիրքը՝ էջ 97:
180. Բեգլարյան Հր., «Արցախ՝ դաժան սեր», Ստեփանակերտ, 1992, «Առաջաբան»:
181. Հեղինակի «Ղարաբաղը պատմության զուգահեռներում», էջ 120:
182. Հեղինակի «Ղարաբաղը պատմության զուգահեռներում» գիրք, էջ 92:
183. Թովմասյան Ա., «Սայլակներով պար» բանաստեղծությունը, Երևան, 2005, էջ 7:
184. Հեղինակի «Ղարաբաղը պատմության զուգահեռներում» գիրք, էջ 47:
185. Աբրահամյան Հր., «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2004, h/4, էջ 119-126:
186. Միրումյան Կ., «Կրթությունը և գիտությունը Արցախում» 405-2005, էջ 17:
187. Խաչատրյան Հ., Վաչագան, Երևան, 1988, էջ 74:
188. Խաչատրյան Հ., Վաչագան, Երևան, 1998, էջ 76:
189. Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Արցախի դարոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2005, «Զանգակ-97» հրատարակչություն:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան (մեթոդական ուղեցույց): ..... 3
2. Հայրենագիտական նյութերի օգտագործման մեթոդները և եղանակները: ..... 8
3. Արցախի բնաշխարհը: ..... 11
4. Նախնադարյան հասարակությունը Արցախում: ..... 13
5. Արցախը Վանի և մյուս թագավորությունների կազմում: ..... 19
6. Քրիստոնեության տարածումը Արցախում: ..... 25
7. Արցախցիք Ավարայրի ճակատամարտում: ..... 29
8. Ինքնապաշտպանական կռիվները միջնադարյան Արցախում: ..... 33
9. Արցախը սելջուկ-թուրքերի տիրապետության շրջանում: ..... 37
10. Զաքարյանների փրկարար ձեռքը Արցախին: ..... 38
11. Իսրայել Օրին Արցախի ազատագրական պայքարի կիզակետում: ..... 44
12. Ազատագրական պայքարը Արցախում 18-րդ դարի 1-ին քառորդում: ..... 48
13. Խամսայի մելիքությունները: ..... 54
14. Խանության առաջացումը Ղարաբաղում և նրա ճակատագիրը: ..... 62
15. Արցախցիների քաջագործությունները Արցախը Ռուսաստանին միանալու ճանապարհին: ..... 68
16. Արցախի տնտեսությունը ռուսական կայսրության կազմում: ..... 73
17. Արցախը հայ-թաթարական ընդհարումների տարիներին: ..... 77
18. Ղարաբաղի հայերի հերոսական դիմադրությունը 1918-1920թթ.: ..... 81
19. Ղարաբաղը խորհրդայնացման որոգայթներում: ..... 93
20. Խորհրդային Ղարաբաղի տնտեսությունը 1921-88թթ.: ..... 100
21. Արցախահայության մասնակցությունը 2-րդ աշխարհամարտին: ..... 106
22. Արցախյան գոյամարտը: ..... 121
23. Արցախի մշակույթը վաղ ժամանակներից մինչև նորօրյա շրջանը (4-20-րդ դար): ..... 136
24. Հավելվածներ ..... 147

ՄԻՔԱՅԵԼ ԲԵԳԼԱՐՅԱՆ
МИКАЕЛ БЕГЛАРЯН

# ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ

*(Հայրենագիտական նյութերի օգտագործումը պատմության դասերին)*

# КРАЕВЕДЕНИЕ УЧАЩИМСЯ

*(ИСПОЛЬЗОВАНИЕ КРАЕВЕДЧЕСКИХ МАТЕРИАЛОВ НА УРОКАХ ИСТОРИИ)*

*Խմբագիր՝* Լ. Մարտիրոսյան

*Համակարգչային շարվածքը՝* Վ. Հասրաթյանի

*Համակարգչային էջադրումը եւ ձեւավորումը՝* Ալինա Հովսեփյանի

Հանձնված է շարվածքի՝ 20.05.2006, հանձնված է տպագրության՝ 10.08.2007թ.: Տառատեսակ՝ «Arial LatArm», «Bodoni», «Arik Armenian» «Arm Scool»: Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Ծավալը՝ 12 տպագրական մամուլ:

«ԳԻՔԱՆԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ
Հ.Հակոբյան, 25

Մանկավարժ Միքայել Գրիգորի Բեգլարյանը, որ այս պահին ապրում է իր կյանքի 81-րդ տարին, ծնվել է 1926թ. ԼՂՄ /այժմ՝ ԼՂՀ/ Մարտունու շրջանի Քարահունջ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի տարրական դպրոցում, իսկ 1943թ.՝ ավարտել Սոս գյուղի միջն. դպրոցը, ապա Շուշիի ուսուցչական ինստիտուտը, այնուհետև՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

Նա շուրջ 60 տարի մանկավարժական աշխատանք է կատարել Մարտունու շրջանի Խերխան, Մուշկապատ, Մաճկալաշեն, Հերհեր, Սխտորաշեն, Սոս, Քերթ և Քարահունջ գյուղերի դպրոցներում՝ տնօրենի և փոխտնօրենի պաշտոններում: Աշխատել է նաև ժողկրթբաժնում որպես դպրոցական տեսուչ: Արժանացել է «Ժողկրթության գերազանցիկ» և «Արցախի 20-րդ դարի լավագույն մանկավարժ», «ԼՂՀ Լրագրողների միության անդամ» կոչումներին:

Մանկավարժական գործունեությանը զուգընթաց հանդես է եկել հանրապետության պարբերականներում՝ գլխավորապես անդրադառնալով դպրոցին, որի արդյունքում 1998թ. հրատարակել է «Իմ սերնդի ճակատագիրը» հուշագիրքը, որը ներկայացնում է 2-րդ աշխարհամարտից հետո Ղարաբաղի կեսդարյա մանկավարժության պատմությունը, իսկ արցախյան գոյամարտի տարիներին՝ ազգային-ազատագրական պայքարին առնչվող հարցերին, որի առհավատչյան 2002թ. լույս ընծայված նրա «Ղարաբաղը պատմության զուգահեռներում» գիրքն է:

Ունենալով պատմա-մշակութային բնագավառի լայն մտահորիզոն և ազգագրագետի ունակություններ՝ 2004 թվականին ընթերցողի սեղանին դրեց իր ծննդավայր Քարահունջ գյուղի ծավալուն պատմությունը՝ «Ղարաբաղի մեր Քարահունջը» վերտառությամբ գիրքը:

Մանկավարժի 4-րդ գիրքը, որ գիտական պատմաբանի գրչի արդյունք է, ներկայացնում է սույն աշխատությունը՝ նպատակ ունենալով իր բազմամյա փորձով օգնելու պատմության երիտասարդ ուսուցիչներին՝ աշակերտներին հրամցնելու Արցախ աշխարհի պատմության հարուստ նյութերը՝ շաղկապված հայ ժողովրդի պատմությանը:

Պատմաբանի բոլոր գրքերի միջով կարմիր թելի պես անցնում է հայրենասիրության գաղափարը, որի մարմնավորումն է նաև ինքը: Լավագույն մանկավարժի գործունեությանը զուգակցվում է նաև իր ժամանակին նրա շինարար-տնօրեն լինելը և մի շարք 8-ամյա դպրոցներ միջնակարգ դարձնելու նախաձեռնությունները:

«Դիզակ պլյուս» տպագրատուն